

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

«ՊԻՈՆԵԱՆ»

Գրադարան

№ 97

ՀԱՅ
ՄԱՅԵ
ՆԱԳԻՐ
ՆԵՐ

Մ
ՆՈՎՍԵՍ
ԿԱՂԱՆԿԱՏՎԱՉԻ

63.3(2h)

3/17

Հ Ա Յ
Մ Ա Տ Ե
Ն Ա Չ Ի Ր
Ն Ե Ր

ՆԻՐԱՏՈՒԹՅՈՒՆ
ԿԻՒՆԵՆԻԱՆ ՉԼՍՏՆՈՒԹՅԱՆ
DONATION
of
GULBENKIAN FOUNDATION

Մ Ո Վ Ա Ս Ե Ս
Կ Ա Ղ Ա Ն Կ Ա Տ Վ Ա Յ Ի
Պ Ա Տ Մ ՈՒԹ Յ ՈՒ Է
Ա Ղ Վ Ա Ն Ի Յ
Ա Շ Խ Ա Ր Ն Ի

Թարգմանությունը, առաջաբանը
և ծանոթագրությունները
վարագ Առաքելյանի

48,508

ԱՐՄՈՒՄ ԴԵՑԱԿԱՆ
2000 ՎԱՐՈՒՄ ԳՆԱՅԱԿԱՆ



ՆԱՅՍՏԱՆ

Իրապարակությունը կրկնվում է
1969

Խմբագրական կոլեգիա՝

ԱՐՐԱՀԱՄՅԱՆ Ա. Ա., ԱՐՐԱՀԱՄՅԱՆ Ա. Գ., ԱՐԱՔԵԼՅԱՆ Վ. Դ.,
ԲԱՐՍԵՂՅԱՆ Խ. Հ., ԽԱՉԻԿՅԱՆ Լ. Ս., ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա. Կ.,
ՄԵԼԻՔ-ՓՆԱՆՋԱՆՅԱՆ Կ. Ա., ՄԻՐԻՋԱՆՅԱՆ Լ. Վ., ՈՒԹՄԱՋՅԱՆ Հ. Մ.

Բնագրի հետ համեմատեց և խմբագրեց

Ա. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆԸ

МОВСЕС КАГАНКАТВАЦІИ

ИСТОРИЯ АГВАНА

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван 1969

Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Սովետական կառավարություն «Աղվանից աշխարհի պատմություն»-ը ոչխար՝ արար թարգմանություն արարին անգամն է ներկայացվում ընթերցող լույն հասարակությունը: Գիրքը, իբրև ամբողջություն ու պատմական ուղիղություն, ձևավորվել է մի քանի դարի ընթացքում: Նրա սկիզբը դրվել է 10-րդ դարի վերջում: Այս գիրքը ծանոթ է հայ հին մատենագրությունը՝ սկսած 10-րդ դարից: «Աղվանից աշխարհի պատմություն»-ը 8-րդ դարում ծանոթ է եղել Մարենացիների վանքի վանահայր Սողոմոնին, իսկ 9-րդ դարում՝ Մաշտոց կաթողիկոսին: 10-րդ դարի առաջին քառորդում Հովհ. Կրասնիստակերտցի պատմագիրը օգտվել է «Աղվանից աշխարհի պատմություն»-ից, բայց թե՛ այս վերջինը և թե՛ նախորդները ոչ մի հիշատակություն չեն նշում: Առաջին անգամ «Աղվանից աշխարհի պատմություն»-ը հիշատակում է Մոկացի Անանիա կաթողիկոսը (943—967) իր թղթերի մեջ: Ինչպես Անանիա Մոկացի կաթողիկոսը, այնպես էլ Ռիստանեսը, որը նույնպես օգտվել է «Աղվանից աշխարհի պատմություն»-ից, չեն տվել պատճենի անունը:

Հաջորդ հեղինակը 12-րդ դարի պատմիչ Մխիթար Անեցին է, որ իր ժամանակագրության սկզբում նշում է ձեռքի տակ գտնված օտար և հայ պատմական աղբյուրները: Մխիթար Անեցին «Աղվանից աշխարհի պատմություն» հեղինակի անունը չի հիշատակում: Իսկ գիրքը տեղադրում է Աերեսոսի հետև և Ղևոնդ Երեցիցի առաջ: Սերեոսը 7-րդ դարի հեղինակ է, իսկ Ղևոնդը անցնում է 8-րդը: Մխիթար Անեցին Կաղանկատվացուն 8-րդ դարից առաջ է տեղադրում:

«Աղվանից աշխարհի պատմություն» երկը ավելի ընդարձակ շարված գրություն է 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը իր «Պատմություն հասանդին Սիուական» երկի մեջ: Օրբելյանը քանիցս հիշատակում է Կաղանկատվացու գիրքը, բայց առանց հեղինակի անվան:

Առաջին հեղինակը, որ նշում է հիշյալ երկի գրողի անունը, Մխիթար Կոչն է: Սա 10-րդ դարի երկրորդ կեսից սկսած լրացրել է աղվանից կաթողիկոսների ցանկը և հասցրել է մինչև իր ժամանակը: Մխիթար

Գողթ Եկզվանից աշխարհի պատմութիւնս ճնդինակ է համարում Մովսէս Գասխտարացուն: Այս անունը հիշատակվում է նաև Գողթ աշակերտ Վահան Վարդապետի կողմից: Վերջին երեք գրողները 13-րդ դարի հեղինակներ են և ժամանակով ու ծննդավայրերով սերտ կապված են միմյանց հետ, եթե շատե՞ք, որ Վանական Վարդապետը եղել է նաև Մխիթար Գողթի աշակերտը: Իսկ արևելից անմիջապես հետո նույն դարի մատենագիր Գողթի ու Վանականի աշակերտ Կիրակոս Գանձակեցին՝ հայ մատենագրությանը լավատեղյակ մի մարդ, մտանում է իր երկու ուսուցիչների հիշատակած անունը և Եկզվանից աշխարհի պատմութիւնս՝ ճնդինակին կոչում է Մովսէս Կաղանկատվացի: Ամենայն հավանականութեամբ Կիրակոսը Կաղանկատվացի մականունն է ավել Գրասխտարացու փոխարեն՝ նկատի ունենալով հիշյալ պատմութիւնի երկրորդ գրքի 11-րդ գլուխը, որտեղ հեղինակը, խոսելով Ուտիքի Կաղանկատուցը գլուխ մասին, ասում է. «որտեղից ես եմ»:

Ահա Կիրակոս Գանձակեցուց հետո Եկզվանից աշխարհի պատմութիւնս ճնդինակ է ճանաչվում Մովսէս Կաղանկատվացին:

Եկզվանից աշխարհի պատմութիւնս»-ը հիշատակվում է նաև Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսի, Վարդան Քաղիշեցու, Եսայի կաթողիկոսի (Աղվանից), Կազար Զահեկեցու և Խաչատուր Զուլայեցու կողմից:

Կաղանկատվացին յոթերորդ դարի հայ պատմիչ է, որի Եկզվանից աշխարհի պատմութիւնս»-ը մեղ է հասել լրացված ու խմբագրված վիճակում: Պատմութիւնը բաղկացած է երեք գրքից: Առաջին և երկրորդ գրքերի հիմնական նյութը վերաբերում է յոթերորդ դարի պատմական իրադարձութիւններին, որոնցից մի մասին պատմիչը ականատես է եղել:

Առաջին գրքի սկզբում պատմված իրողութիւնները վերաբերում են սկզբնական շրջանի՝ հատկապես 4-րդ և 5-րդ դարի դեպքերին: Այդ պատմութիւնները բաղված են Բուզանդից, Եղիշեցից, Խորենացուց, Ագաթանգեղոսից, Գիրք թղթոցներից և հայկական այլ աղբյուրներից, որոնք կարող էին անել նաև շատ ուշ շրջանի մատենագիրներ, բայց ինչ վերաբերում է այնպիսի դեպքերի, որոնց ժամանակը հայտնի է, և ականատես հեղինակն է պատմում ու ասում, թե ինքը աղբյուր տեսել է այս կամ այն եղելութիւնը, ապա դրանց պետք է նայել իրեն արժանահավատ պատմական իրողութիւններին, օրինակ՝ երկրորդ գրքի 14-րդ գլուխը վերաբերում է Եսայի՝ Աղվանք կատարած արշավանքին, որը տեղի է ունեցել 628 թվականին:

Պատմիչը այնպես է նկարագրում, որ պարզ երևում է, թե դա պատմութիւն է և ոչ թուղթ կամ մի այլ բնույթի գրութիւն՝ անկախ ինչ-որ ամբողջութիւնից: Հնդհակառակն, դա ամբողջութիւն մի մաս է, և, մանավանդ, ամբողջ գլուխը վերաբերում է կաթողիկոս Վիրոյին, որից անմիջապես հետո պատմիչը օգտագործում է Վիրոյի թուղթը սովի և ժանտախտի մասին:

Հաջորդ՝ 16-րդ գլուխը այն հարկահավաքման մասին է, որ պիտի կատարեր Եսայի Զորպան-Քարթանի առաջնորդութեամբ, ապա Զակատամարտը պարսիկների դեմ, պարսիկների պարտութիւնը և հետո խաբանի ետ կանչումը:

Պատմիչի՝ 7-րդ դարում ապրած լինելու վերաբերյալ ստույգ տվյալներ երբ գտնում երկրորդ գրքի 28-րդ գլխում, ուր նա ասում է, թե հարավի րոնակալի մոտից Զվանշիրը վերագրանում է մեծ շուքով ու ընծաներով: Զվանշիրը այցելում է իր շինած եկեղեցին, որ գտնվում էր Գարդմանում, ապա այդտեղ լինում է ընդհանուր ժողով, ուր պատմիչը երան տեսնում է արվելի պճնված ու զարդարված: Ընդհատ է, որ ժամանակագրութիւն մեղ կան հակասութիւններ, սակայն որքան էլ հակասութիւններ լինեն, մենք չենք կարող այսպիսի նկարագրութիւնները երևակայութիւն արդունք համարել: Պատմիչը Զվանշիրի ստացած նվերները՝ թուփակն ու փիղը, նկարագրում է այնպես, ինչպես որ նրանք կան և նա չէր կարող դրանք հնարել: Երկ-րի համար փիղն ու թուփակը եղել են հեքիաթային կենդանիներ, այդ է պատճառը, որ պատմիչը տեսածը նկարագրում է զարմացած, բայց և նկարագրական ճշտութեամբ: Բացի դրանից, ինչպես վերը նշվեց, Եկզվանից աշխարհի պատմութիւնս»-ը 8-րդ դարում ծանոթ է եղել Մաքենացիների վանքի վահանայր Սողոմոնին, 9-րդ դարի Մաշտոց կաթողիկոսին:

Որեմն Եկզվանից աշխարհի պատմութիւնս»-ը իր հիմնական մասով կազմվել է 7-րդ դարում: Սակայն 10-րդ դարում, գուցե և 11-րդ դարի սկզբում մի այլ հեղինակ՝ Մովսէս Գասխտարացին, այն վերջնականապես լրացրել, խմբագրել է, և գիրքը, իբրև մեկ ամբողջութիւն, արտագրվել, ստացել է իր վերջնական տեսքը ու այդպես էլ մեղ է հասել: Շատ ավելի ուշ այդ պատմութիւնը կցվել են Աղվանից աշխարհի հայ կաթողիկոսների անվանացանկերը մինչև 18-րդ դարը, գրվել է Արցախի և Ռուսիքի պատմութիւնը: Կուր և Արաքս գետերի միջև ընկած այդ երկու նահանգները հայերը կոչում էին «Հայոց արևելից կողմանք», «Ծովկիր արևելից», «Աղվանից աշխարհ»:

Երեք գրքի բովանդակութիւնն ու աղբյուրների քննութիւնը պարզ ցույց է տալիս, որ պատմիչի աղբյուրը իր մայրենի լեզվով գրված կամ թարգմանված գրականութիւնն է: Կաղանկատվացին լայնորեն է օգտագործել Առողի տակ եղած մայրենի հայ գրականութիւնը, այդ է պատճառը, որ նրա երկու գրքերը իրենց բովանդակութեամբ ավելի շուտ այլևայլ նյութերի հավաքածուի տպավորութիւնն են թողնում, քան մի հետևողականորեն շարադրված պատմական աշխատութիւն:

Ինչ՞ու է պատմիչը այդքան զանազանաձև նյութերը հավաքել մի աշխատութիւն մեղ:

Նա ցանկացել է Հայոց արևելից կողմանց պատմութիւնը գրել, ինչպես որ նույն ձևով Հովհան Մամիկոնյանը գրել է Տարսնի պատմութիւնը: Որքան էլ Հայաստանի առանձին նահանգներ լեզվով, կրոնով և մշակութիւնի այլ դրսևորումներով կապված էին միմյանց հետ իբրև մի ընդհանուր երկրի մասեր, այնուամենայնիվ ավատական հասարակարգին հատուկ էին կենտրոնախույս տրամագրութիւնները, երկրի ընդհանուր թագավորի գերիշխանութիւնից դուրս գալու և ինքնուրույն թագավորութիւն կազմելու միտումները, մի բան, որ բուռն կերպարանք էր ստանում մանավանդ այն ժամանակ, երբ երկրի ընդհանուր իշխանութիւնը թուլանում էր:

Կենտրոնախույս այլ տրամադրությունները, որ ունենին տնտեսական ու քաղաքական հիմնավորում, դառնում էին տվյալ նահանգի ու գավառի համար քեղհանուր արմատավորված հոգեբանություն:

Ազատական տնտեսական ու քաղաքական կյանքում ամեն գավառ կամ վարչատարածական այլ միավոր իր առանձնություն մեջ առաջնորդվում էր տարրեր շահերով ու շահագրգռություններով և նույնիսկ հաճախ թշնամական հարաբերությունների մեջ էր գտնվում հարևան նույնանման դավառների ու նահանգների հետ: Այդ թշնամությունները, որ առաջնում էին տնտեսական ու քաղաքական հողի վրա, հաճախ վերաճում էին եզրայրապան պատերազմների, տարածությունների հափշտակման, մեկը մյուսի ներկասամար գերիշխանության նվաճման: Տնտեսական ու քաղաքական այս հակամարտությունը արտահայտվում էր նաև պատմագրության մեջ: Ամեն իշխույ նախարարական տուն ձգտում էր իր տոհմի ու քնակված երկրի պորձերը լուսավոր գույներով ներկայացնել, իսկ երբեմն հակառակորդներին սևադեղն: Արժրանի նախարարությունը Վասպուրականում ի հեճուկս Մամիկոնյանների, որոնք Հայաստանում ինքնուրույն պետականություն էին ըստանալով զենու 9-րդ դարից և շատ տարածություններ նվաճել իրենց գայիտանի տակ, կազմակերպում է անջատ թագավորություն, և հրամայում է թովմա Արժրանի պատմիչին գրելու Արժրանի տոհմի ու նրա երկրի՝ Վասպուրականի պատմությունը: Իսկ Հովհ. Մամիկոնյանը փառաբանում է Մամիկոնյանների տոհմային բարեմասնությունները, վեր է հանում Տալոսի ու հատկապես Սուրբ Կարապետի վանքի դերն ու նշանակությունը համահայրական պատմության մեջ: Ստեփանոս Օրբելյանը նույն ելակետով գովերդում է Սյունիքի իշխանների ու սրանց աշխարհը: Այս առումով նաև հետ չի մնում Կաղանկատվացին: Նա Աղվանից աշխարհի իշխան Զվանձիրին ներկայացնում է այնպիսի կերպարանքով, հերոսական այնպիսի սիրազոր-ծություններով, որոնց առջև գլուխ են խոնարհում արքաները: Ամենուրեք նա պատվի ու մեծարման է արժանանում թագավորների կողմից և ամեն մի հակառակմարտում հաղթանակով է դուրս գալիս՝ շարժելով մյուս իշխանների նախանձը: Նա տրաքական միապետից հեքիաթային նվերներ է ըստանում, բոլոր թագավորները իրենց աղչիկներն են առաջարկում նրան: Կաղանկատվացին, տեղական մտայնությանը տուրք տալով, աղվանից իշխաններին ազգակցական կապերով շղթայում է թագավորների հետ:

Կաղանկատվացու ժամանակ Հայոց արևելից կողմանքի քաղաքական ձիճակը այլ էր: Վաղուց ի վեր հայրական երկու շատ կարևոր նահանգներ՝ Ուտիքն ու Արցախը, պոկված էին Հայաստանից և մասն էին կազմում աղվանից մարզպանության: Թվում է, թե Հայաստանից բռնի անջատած այս երկու նահանգները պետք է իրենց տնտեսական ու քաղաքական շատ ծանր վիճակում զգային՝ հայրենի երկրից կտրված լինելու և մի այլ երկրի կազմի մեջ տնտես պատճառով: Սակայն պատմական իրադրությունն այստեղ բոլորովին այլ կերպարանքով է հանգես գալիս: Անենալով մշակութային ու եկեղեցական որոշ ինքնուրույնություն՝ տեղացի կառավարիչները և երկրորդ իրենց որոշ շահով ազատ էին զգում: Աղվանից աշխարհում

էր պրկում հայոց գրականության մի մասը, այստեղ կենտրոնացած էին գրքերը, աշխույ խոսվող հայերենը պաշտենական, կրոնական արարությունների և դպրոցների լեզուն էր: Կիրակոս Գանձակեցին, խոսելով Աղվանից աշխարհի մասին, ասում է՝ թե ինչ վերաբերում է Աղվանքին, այնտեղ սպորդները արշունակից հայեր են, արևտեղի թագավորներն ու իշխանները խոսում են հայերեն: Գանձակեցու խոսքը, իհարկե, հիմնականում Կուրի այսրկողմյան տարածությունների մասին է: Հատկապես մշակութային տեսակետից ինքնուրույնությունը, վարչաքաղաքական տեսակետից գերիշխան դիրքը մնացած ողջ երկրի նկատմամբ բավարարում էին տեղական մտայնությանը. անհրաժեշտ էր այդ կարևոր երևույթը նաև պատմա-դրամատիկ վարչաքաղաքական հեղինակությունը ոչ միայն այնտեղի քնակ-ություն, այլև ողջ Հայաստանի աշխույ:

Աղվանից աշխարհի պատմությունն՝ գրող հեղինակը պրկում է իր մայրնի հայ գրականությունը և ինչ որ գտել է այդ աշխարհի վերաբերյալ, քաղել ու օգտագործել է իր պատմության մեջ: Նրան առանձնապես նետոքրեր է իր երկրամասի եկեղեցու պատմությունը, մանավանդ որ այդ եկեղեցին, լինելով Հայաստանի եկեղեցու մի մասը, ուներ իր առանձին նույն պետք, որ կրում էր արքեպիսկոպոս-կաթողիկոս տիտղոսը: Եկեղեցին միջնադարյան պատմիչի աշքում երկրի ամենահեղինակավոր հաստատությունն էր, ուստի և նրա պատմությանը չէր կարող դուրս մնալ պատմությունն գրող քրիստոնյա հեղինակի տեսադաշտից: Անհրաժեշտ էր հաստատել այդ եկեղեցու առաջնապետությունը, լուսավորչականությունը, նույնությունը, հրաշագործ զորությունը, որպեսզի երկրի եկեղեցու հեղինակությունը բարձրացվեր, և նրա որոշ անկախ դիրքը իրավականորեն հաստատվեր ու արգարացվեր: Եվ որովհետև քրիստոնեությունն՝ Աղվանք մուսուլմանություն, նրա քնույթի, տարածման, հետագա զարգացման մասին պատմող պատմիչը շատ նյութ չի գտել, այդ պատճառով գիրքը լցրել է սրբերի նշխարների գլուխների մանրամասն պատմություններով, տեսիլքների հրաշապատում նկարագրություններով, վարքարանական նյութերով, դավանաբանական վեճերի մեջբերումներով, նամականերով, որոնք իր՝ հեղինակի և տվյալ ժամանակի հասարակության մտայնության տեսակետից հակառակ նշանակություն ունենին եկեղեցու հեղինակության բարձրացման ու նրա գոյության իրավական հիմնավորման համար:

Սրբերի մատենքների՝ որևէ վայրում տեղագրելու փաստը հակառակն իրավական ու բարոյական հիմունք էր այդ վայրի եկեղեցու գոյության, նորություն և իշխող դիրքի:

Պատմության I-ին գրքի 30 գլխից 7—8 գլուխ վերաբերում է նահատակված սրբերին, նրանք մատուցների որոնմանն ու հայտնաբերմանը և կամ զրուք Աղվանք տեղափոխելուն: Այդպիսի նյութեր ավելի շատ ունի նաև 2-րդ գիրքը:

Այս նկարագրությունները, անշուշտ, բխում են պատմիչի քրիստոնեական հավատի նկատմամբ տածած շքեղանակությունից, բայց դրանից

դուրս պատմիչի հիմնական նկատակն է Աղվանից աշխարհը ներկայացնել իբրև քրիստոնեության տարածման օրրաններից շատ կարևոր մի երկրամաս, որտեղ դեռ վաղուց այցելել են այդ կրոնի նշանավոր տարածիչները, բարազել են քրիստոնեական ուսմունքը և շատերն էլ հենց այնտեղ են նահատակվել ու թաղվել: Սրանց նշխարների գլուխքը, հանդիսավոր թափոններով փոխադրելը, երկրի այլևայլ հեկեղեցիներում ու վանքերում զբոսնելը տեղավորելը, մասնավանդ հայ ժողովրդի այն մասի համար, որ դեռևս չէր ընդունել քրիստոնեությունը և կամ չէր հավատում, Աղվանից հեկեղեցիների հեղինակության բարձրացման, քրիստոնեության արմատավորման, վանքեր ու հեկեղեցիներ այցելելու, նրանց նկատմամբ ժողովրդի պարտավորությունների կատարման առնչությամբ հսկայական նշանակություն ունենի:

Որպեսզի պատմիչը իր երկրամասի հեկեղեցու հեղինակությունը բարձրացնի և ապացույցի նրա առաքելական, լուսավորչական ծագումն ու էությունը, պատմում է, թե ինչպես Աղվանքի իշխան Վարազ-Տրդատը Իսրայել եպիսկոպոսին առաքում է Այրարատյան աշխարհը, որպեսզի նա այնտեղից սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքներից բերի Աղվանք: Սվ Իսրայել եպիսկոպոսի երկար թախանձանքներից ու Հեզիեն մեծ տիկնոջ (որ Աղվանքի Զվանշիր իշխանի բույրն էր) բազմաթիվ միջնորդություններից հետո Այրարատյան աշխարհի իշխանն ու հայոց կաթողիկոսը վերջապես Գրիգոր Լուսավորչի ծննդից մի մաս են տալիս, որ եպիսկոպոսը տանում ու հանդիսավորությամբ տեղադրում է աղվանից Գլխավանդում: Պատմիչը այստեղ միաժամանակ նշում է, որ Լուսավորչի մասունքների բաժանումը արգելված էր, բայց Աղվանքի հեկեղեցու համար արվեցին այդպիսի մեծ շնորհ ու բացառություն:

Աղվանքի հեկեղեցու առաքելական ծագման մասին պատմիչը մտահոգվել է դեռևս պատմության սկզբում: Առաջին գրքի 6-րդ գլխում պատմում է, որ Հայաստանում քրիստոնեությունը տարածեց Թադեոս առաքյալը, որի աշակերտ Նյվրան Նրուսաղեմում վարդապետ օժվելուց հետո անցավ Աղվանք, Գիս ավանում կառուցեց հեկեղեցի և տարածեց քրիստոնեությունը: Կաղանկատվացու պատմության մեջ հետազայում նույնիսկ թափանցել է մի մտայնություն, որ ցույց տա, թե Հայոց արևելից երկիրը ավելի վաղ է ընդունել քրիստոնեությունը, քան կենտրոնական Հայաստանը:

Ահա թե ինչու Կաղանկատվացու դիրքը հարուստ է պատմության հետ կապ չունեցող վերոհիշյալ նյութերով: Պետք է նշենք, որ երկի լուրջ թեթևությունը այդ նյութերով խճողված լինելն է:

Սրբերի նշխարների գլուխքի նկարագրությունները, դավանաբանական վեճերի մեղքերումը, հրաշագործությունների պատմությունները և պատմության հետ կապ չունեցող այլ նյութեր խաթարել են Կաղանկատվացու պատմական աշխատության բնույթը՝ դարձնելով այն մի քաղաքություն, մասնավանդ հիմնական առնենք, որ հաճախ պատմության բուն շարադրանքի հետ շունչվող այդ գրությունները խախտում են պատմության ընթացքը, ընդմիջարկում են այն՝ գրկելով ընթերցողին պատմական

անցքերի հետևողական շղթան ընկալելու հնարավորությունից: Բավական է միայն մի օրինակ, որպեսզի ընթերցողը պատկերացնի, թե այդ կողմնակի նյութերն ի՛նչ բացասական նշանակություն ունեն պատմական ուղյակ երկի հետևողական շարադրանքի համար: Երկրորդ գրքի 34, 35-րդ գլուխները, որ շարունակությունն են 28-րդ գլխի, ընդմիջարկվել են 29, 30, 31-րդ գլուխներով, ուր բեկված են տեսիլներ, նշխարների գլուխքի պատմություններ ու համակներ: Այդ կողմնակի նյութերը ողջ գրքի մեջ այնպիսի կրկնություն են առաջ բերել, որ մեր բանասիրության մեջ առարկվել է դիրքը բանդել և վերագասավորել ըստ պատմական անցուղարձների ժամանակագրության:

Հարց է առաջ գալիս. պատմություն գրող հեղինակը մի՞թե չի նկատել, որ այդպիսի նյութերի խճողումը վնասում է գրքի շարագրանքին: Անկարելի է, որ դա շնկատվեր հեղինակի կողմից, բայց այն ժամանակ այդ նյութերին շատ մեծ կարևորություն է տրվել: Զի բացատրում նաև այն պատճառն, որ հեղինակի մահից հետո այդ նյութերը գրքի մեջ տեղադրված կարող են լինել Աղվանքի հեկեղեցու հոգևոր հայրերի ձեռքով, որոնց համար հեկեղեցու հեղինակության բարձրացումն ու պահպանումը շատ էին անհրաժեշտ ազանդավորների, անհավատության ու հեկեղեցու այլ թշնամիների զեմ պայքարելու համար: Այդ կողմնակի նյութերի անկարգ միջարկումը թելադրում է մտածել, որ դրանց մի մասը գրքի մեջ մտցվել է ուրիշ ձեռքերով: Այդպիսի միջարկումները հաստատված են: Ապացուցված է, որ սովի և ժանտախտի նկարագրությունը գրել է կաթողիկոս Վիրեն, իսկ երբորդ գիրքը և երկի վերջնական խմբագրումը ուրիշ հեղինակի ձեռքի գործ են և վերաբերում են 10-րդ դարին, մինչդեռ գիրքը ձևնարկվել է 7-րդ դարում:

Նվ շնայած այդպիսի նյութերի անկարևորության, այնուամենայնիվ Կաղանկատվացու գրքի պատմական արժեքը շատ բարձր է հենց այսօրվա գնահատությամբ: Հայոց արևելից կողմանց պատմությունը, իբրև հայոց ընդհանուր պատմության մի մաս, մանրամասն ու բազմակողմանի չի լուսարանված խորհնացու, Փարպեցու և հայոց մյուս պատմիչների կողմից: Կաղանկատվացին լրացնում է այդ թերին. օրինակ՝ առաջին գրքի 5-րդ գլխում, որ դժբախտաբար շատ է համառոտ, նկարագրված են Հայոց արևելից կողմանց բարեբերությունը, հանքային հարստությունները, բուսական փարթամությունը: Եթե այս հատվածը ընդարձակ վերջվեր, կդառնար երկրամասի բնության ու բնական հարստությունների մի հիասքանչ նկարագրություն՝ համահավասար Փարպեցու՝ Արարատյան դաշտի նկարագրության: Այս փոքրիկ հատվածի մեջ իսկ զգացվում է Կաղանկատվացու նկարագրելու ձիրքը և բուռն սերը իր երկրամասի նկատմամբ:

Առաջին գրքի 16-րդ գլխում պատմիչը ցույց է տալիս, որ Վաչեց միևի Բարեպաշտ Վաչագանը՝ մոտ երեսնամյա մի ժամանակաշրջան, Աղվանից աշխարհը շունքի իր թագավորը: Նա այս գլխում մեղկացնում է պարսից Պերոզ արքայի նվաճողական քաղաքականությունը իր հայրենի երկրամասի վերաբերմամբ: Ցասունով նկարագրում է, թե ինչպես նա քանդում

էր եկեղեցիները, հալածում, արտոյում ու կոտորում էր քրիստոնէականներին և ձգտում էր հրով ու սրով տարածել մոգութեան դիվապաշտական կրօնը: Պատմիչը վշտով է հայտնում Հայաստանի, Արաստանի ու Արվանջի բազմաթիվ նախարարների բռնի կամ շքեղ խոստումներով կատարված կրօնափոխութիւնը, ասորւանների կատուցումը: Այս հատվածը, որ Պերոզի նվաճողական քաղաքականութեան մերկացումն է, պատմական առումով շատ կարևոր է, որովհետև շարունակութեանն ու ընդօրինակութեանն էր Հաղկերթի վարած նվաճողական, ծուլման և Հայաստանի, Արաստանի ու Արվանջի մարզպանութիւնների որոշ ինքնուրույնութեան խոպառ վերացման քաղաքականութեան: Ընդամենը ութ տարի էր անցել Ավարայրի ճակատամարտից, որից հետո, թվում էր, թե պետք է փոխվեր քաղաքականութիւնը Անդրկովկասի մարզպանութիւնների նկատմամբ, բայց Կաղանկատվացիին փաստերով հաղորդում է, թե այդ քաղաքականութիւնը, նույն խնդրոթիւնում շարունակվում էր այնքան ժամանակ, մինչև որ հեփթաղները հյուսիսից խուժում և չարդում են պարսիկներին ու ոչնչացնում հենց իրեն՝ Պերոզ թագավորին:

Այնուհետև Կաղանկատվացիին 17-րդ դիւսում մանրամասն պատմում է Ռտիրում և հասկապես Արցախում քրիստոնէութեան վերատարածման, ազանդների և մաղղիզական կրօնի վերացման մասին: Վաշազանը վերականգնում է նախարարական տները իշխանութիւնը, բոլոր փոխած իշխաններին փո է դարձնում և հաստատում իրենց կալվածքներում՝ նախկին իրավունքներով ու արտոնութիւններով, և երկիրը մտնում է իր դարգանման բնականոն պայմաններին մեջ՝ վերականգնելով թագավորութիւնը:

Պատմիչի հաղորդած տեղեկութիւնները Պերոզի մահից հետո Վաղարշի նոր քաղաքականութեան, Վաշազան Բարեպաշտի՝ երկրում իշխանական տները վերահաստատելու, քրիստոնէութիւնը մասամբ բռնի վերատարածելու, աղանդները վերացնելու, կախարդներին, քուրմերին ոչնչացնելու, երկիրը քարեկարգելու մասին պատմական արժանահավատ հաղորդումներ են, որոնք խոշոր նշանակութիւն ունեն հայոց պատմութեան՝ Վարդանանց պատերազմին հաջորդող շրջանի համար:

Իսկ ինչ վերաբերում է երկրի մշակութային պատմութեանը, ապա այդ կողմից հաղորդ՝ 18-րդ դուսիսը բացառիկ մի հատված է, որ պատմիչը ներկարագրում է, թե ինչպես Բարեպաշտ Վաշազանը վերացված ու ոչնչացված կախարդների, դոլմաբանների, քուրմերի, մատնահատների, զեղատուների մատնակներին հավաքում է իր Ռուսակ գլուղում, տեղավորում է դպրոցներում, գրել-կարգել և քրիստոնէական կարգ ու կանոն է ուսուցանել տալիս, մինչև իսկ երբ ինքը դուր էր գնում, այցելում էր դպրոց և աշակերտներին իր շուրջ հավաքում ու միաբերան կարգով էր տալիս:

Այս գլխում նկարագրվում է, թե ինչպես է թագավորը հայանաբերում և վերացնում մատնահատների ու զեղատուների աղանդները, որոնք մեծ շարիքներ էին գործում երկրում: Քրիստոնէութեան տարածման, Հայաստանում տարբեր աղանդների գործունեութեան, նրանց ծագման ու գոյութեան, մասնավոր դպրոցական գործի կազմակերպման համար այս գլխում պատ-

միչը շատ զննատեսի տեղեկութիւններ է հաղորդում, որպիսիք շատ սակավ են հայոց մշուս պատմագրքերում:

Կաղանկատվացու երկի առաջին գրքի 26-րդ գլուխը նույնպես պատմական խոշոր նշանակութիւն ունեցող կանոնական վավերագիր է, որ կազմվել է 5-րդ դարի վերջում Արցախի Աղվեն վայրում Վաշազան Բարեպաշտի: Շուրհաղի կաթողիկոսի կազմակերպած եկեղեցական ժողովի կողմից: Աղվենի ժողովի այս կանոնները արժեքավոր են այն տեսակետից, որ բացահայտում են 5-րդ դարի Հայաստանում գոյութիւն ունեցող եկեղեցիների ու վանքերի տները իրավունքները, եկեղեցուն տրվող տուրքերի տեսակներն ու չափը, գործված հանցանքների դիմաց տրվող պատիժների չափը, ժողովրդի ու հոգևորականութեան իրավունքների սահմանները և այլ նորոգել: Այս կանոնները վերջիվերջ խորսված են հայկական ընդհանուր եկեղեցու կանոնների վրա, բայց արտացոլում են նաև տեղական աստնականատկութիւններ՝ կապված երկրի տնտեսական ընդհանուր կյանքի ու ավանդութիւնների հետ: Աղվենի ժողովի կանոնները ցույց են տալիս, որ Վաշազան Բարեպաշտը մի խոշոր ու տաղանդավոր թագավոր է եղել, և ամենից ասաջ նրան հետաքրքրել է երկրի մշակութային կյանքի զարգացումը, իրավական նորմաների ստեղծումը, հայ եկեղեցու հզորացումը, որը խոշոր ազդակ էր մարդկանց կիսավայրենական վիճակից դուրս բերելու, պետութեան ու երկրի իսկական քաղաքացիներ գարծնելու ճանապարհին: Ըստ այդ կանոնների՝ արգելվում էին կնաթողութիւնը, մեռելների վրա հեփթաղական ողբն ու կոծը, կախարդների դիմելը և այլն, որոնք այն ժամանակվա համար հակայական քաղաքակրթի նշանակութիւն ունեին:

Աղվանից աշխարհի պատմութեան մեջ ավանդաբար կամ զուցե գրավոր հիշատակարանների միջոցով անցած, նկարագրվում է Մեսրոպ Մաշտոցի աստեղծական գործունեութիւնը Արցախում, Ռտիրում: Մեր պատմութեան համար այս տեղեկութիւնները, որ արձանագրված են առաջին գրքի 27 և 28-րդ գլուխներում, շատ թանկագին հիշատակներ են, որոնք ցույց են տալիս, թե Մեսրոպ Մաշտոցը որքան էր տենչում իր ժողովրդին, հատկապես նրա ծայրամասային հատվածներին, դուրս բերելու հեթանոսական խափարի և հաղորդակից դարձնելու հայ գրի, գրականութեան և ուսման նորմածք լուսին: Ի՞նչ այս փաստերը Կաղանկատվացու գրքի մեջ են անցնել գրավոր աղբյուրներից, ապա զրանք պատմական ճշմարտութիւններ են և շատ արժեքավոր են հայ գրի, գրականութեան տարածման ու զարգացման կողմակերպման նախնական պատմութեան և Մեսրոպի գործունեութեան համար: Իսկ եթե Կաղանկատվացիին որանք բերում է իբրև ժողովրդական ավանդութիւն, որ 5-րդ դարի սկզբից եկել-հասել է մինչև 7-րդ դարը, ապա ցույց է տալիս, թե Հայաստանի ծայրամասի ժողովուրդը ինչ սեր ու հարգանք է տածել մեծ լուսավորչի գործունեութեան հանդեպ:

Կաղանկատվացու երկր թանկագին աղբյուր է հայոց ու ողջ Անդրկովկասի ոյստմութեան համար, հյուսիսային ցեղերի ու Անդրկովկասի, սրանց, Պարսկաստանի ու Քուզանդիայի պատմական փոխարարներութիւնների ուսումնասիրութեան տեսակետով:

Խաղաղների արշավանքների և դրանց բազաբազական ու տնտեսական շրջապատաճանների համար Կաղանկատվացու գիրքը մնում է իբրև սպասարկական անփոխարինելի աղբյուր. 7-րդ դարի առաջին կեսում պարսկա-բյուզանդական պատերազմները լավ առիթ են ծառայում, որ խաղաղները (ըստ Կաղանկատվացու՝ խաղիր) շարժվեն դեպի Անդրկովկաս՝ Դերբենդի վրայով, Բյուզանդիան դաշնակից է դառնում խաղաղների հետ ընդդեմ Պարսկաստանի և նրանց հրապուրում է զեպի Անդրկովկաս: Խաղաղները մինչև այդ չէին կարող Դերբենդից այս կողմ անցնել, հոր Պարսկաստանը զուպում էր նրանց անորոշակը: Այժմ Պարսկաստանը դրազված էր Բյուզանդիայի դեմ ընդարձակ պատերազմական գործողություններով, իսկ Հերակիլ խաղաղների հրավիրում էր իբրև դաշնակիցների, և նրանք իրենց Ջերու խաբանի գլխավորությունում բանակներով հեղեղում են Հայոց արևելքից կողմանքը և գնում-սալարում են Տիգրիսը, որ իր հարստություններով հռչակված էր: Կաղանկատվացին վիպական մանրամասնություններով է նկարագրում պաշարված քաղաքի ժողովրդական ծաղրածանակը՝ պաշարող խաբանի նկատմամբ, որ անզոր կատաղության վրիժառուության երդումով վերադառնում է իր երկիրը: Մի տարի հետո, 628 թ. Ջերու խաբանը, ըստ Հերակիլի հետ ունեցած դաշնագրի, Անդրկովկաս է ուղարկում իր որդի Եթիբին: Եթիբի այս արշավանքը ահավոր աղետ էր Անդրկովկասի, մասնավորապես Մուսիսի համար: Տիգրիսի երկրորդ անգամ պաշարումից և գրավումից հետո Եթիբը վերադառնում է Ուարի և Արցախ: Սկսվում են անասելի կոտորածն ու թալանը: Պատմիչը զարհուրելի գույներով է ներկայագրում խաղաղների զորքը, սրանց կերպարանքն ու անզորությունը:

Կաղանկատվացու նկարագրած այս արշավանքները Աղվանից աշխարհից դուրս են գալիս, հասնում են մինչև Ատրպատական ու Սևանի օփերը, խաղաղների արշավանքը առայժմ հեռուներ չեն գնում. նրանք ճանապարհ էին բանում հետագա մոնղոլական ցեղերի հորդանների առջև: Կաղանկատվացին իբրև պատմիչ նախակարգապետն է այդ ցեղերի ռազմատեսչության, վալարագության, նրանց կյանքի, կենցաղի ու սովորությունների նկարագրություն: Բնաբանական էություն, ուստի այդ առումով պատմիչի երկը խաղաղների պատմության համար անզնահատելի նշանակություն է ստանում, մասնավորապես հին նկատի առնենք, որ պատմիչը բավական մանրամասն է պատմում նրանց ռազմական գործողությունների, կենցաղավարության, զենքերի, ձիերի, մինչև իսկ նրանց արտաքինի, հագուստների և ուտելիքների մասին: Խաղաղների մասին Կաղանկատվացու պատմությունները ստուգապատում են և եզակի արժեք են ներկայացնում մեր պատմության համար:

Կաղանկատվացին պատմական արժեքավոր տեղեկություններ է տալիս նաև արարական արշավանքների մասին: Այդ տեղեկությունները վերաբերում են ոչ միայն արարների մասին գործելուն, այլև Հայաստանում նրանց կրոնիկներին ու շահատակություններին: Այս իմաստով Կաղանկատվացին արարական շրջանի մյուս պատմիչներին մեծ լրացումներ է անում: Կաղանկատվացին է նկարագրում Մուսասենդի Իբն Մրվանի գործունեությունը Հայաստանում ու Աղվանքում 7-րդ դարի վերջում և 8-ի սկզբում:

Ես գրում է, թե ինչպես Իբն Մրվանը 696 թ. զորքերի մի մասը թողնելով Դվինում շարժվում է զեպի Դերբենդ՝ խաղաղներին ու հոներին զսպելու, որ տեղից նրանք մուտք էին գործում Անդրկովկաս: Հայերը, օգտվելով նրա ժամանակավոր բացակայությունից, ապստամբվում են և շարդում Դվինում կանգնած արարական զորքերին: Այս պատմության մանրամասների, Իբն Մրվանի՝ Հայաստան վերադառնալու, նրա վրիժառուության՝ նախարարների կոտորածի, ամրոցների գրավման, հրով ու սրով երկրի նվաճման նկարագրությունը և նույնիսկ արաբ այդ դահճի մահվան մասին տեղեկատու աղբյուրը Կաղանկատվացու պատմությունն է: Կաղանկատվացու երկը աղբյուր է նաև Հերակիլի ու Խոսրով Փարվեզի մղած պատերազմների, այս վերջինիս կործանման ու Կավատ Բ-ի գահակալության համար: Խոսրով Փարվեզի թագավորության և նրա անկման մասին Կաղանկատվացին պատմում է վիպական մանրամասնություններով ու շքեղ գույներով, առանձնապես ոգևորությամբ է նկարագրված համաժողովրդական ապստամբությունը, Անհուլ բերդի դաների բացումը և շղթայակապ կալանավորների մոլեգնած երկր Խոսրովի դեմ: Հեղինակը ծաղրական երանգներով է նկարագրում գրածան ընկալների մենակությունն ու լքվածությունը, վախկոտությունը, թաքուտը այգու թփերի մեջ, որպեսզի մի քանի բույսով երկարաձգվի իր շահահալ գոյությունը: Նա Կավատին ներկայացնում է իբրև բարի թագավոր, բայց մոռանում է, որ նույն Կավատը սպանում է հորը, անդամահատում է իր բոլոր եղբայրներին և հետո դա էլ քիչ համարելով՝ կոտորում է բոլորին:

Կաղանկատվացին երկրորդ գրքի քսանմեկերորդ գլխում հիշատակում է նաև պատմական մի շատ կարևոր իրադարձություն, մի եզակի տեղեկություն, որ ոչ մի հայ պատմիչ երկում արձանագրված չենք գտնում: Դա վերաբերում է երեք հազար հոգուց բաղկացած ուսական մի զորամասի առաջին անգամ Անդրկովկասի սահմանները մուտք գործելուն: Կաղանկատվացին չի բացահայտում, թե ինչպե՞ս էր այդ զորամասը Դերբենդ անցել, ի՞նչ բնդարումներ էր ունեցել հյուսիսային ցեղերի հետ, որտեղից էր եկել, նույնիսկ չի հիշատակում այդ զորամասի գալու թվականը, բայց արձանագրում է այդ փաստը իբրև պատմական իրողություն: Ռուսաստանի ու Անդրկովկասի միջև գոյություն ունեցող երկարամյա հարաբերությունների առաջին տեղեկատվությունն է, որ պատմիչը՝ արձանագրել է իբրև ստույգ իրողություն: Բանասիրական քննությունները ցույց են տվել, որ պատմական այդ իրողությունը տեղի է ունեցել 944 թվականին, որի մասին արար պատմիչները նույնպես հիշատակում են: Մեր պատմիչը ասում է՝ մրբկի նման ընթանալով համատարած Կասպից աշխարհածովի ելքով՝ հանկարծ հասն Աղվանքի Պարտով մայրաքաղաքը:

Կաղանկատվացին միակ աղբյուրն է Միհրական ու Նոանշահիկների հարստության ծագումն ու պատմությունը ուսումնասիրելու համար. այդ տեղիները կարևոր գեթ են կատարել Հայաստանի պատմության մեջ: Կարևոր աղբյուր է ժողովրդի հավատալիքների, կենցաղի ու այլ սովորությունների նկարագրության առումով:

Նա հազվագյուտ տեղեկություններ է հաղորդում երկրում տիրող շարագործ աղանղների մասին, որոնք քրիստոնեության մուտքով և հայերեն գիր ու գրականության տարածումով վերացվեցին: Այդպիսի մի ազանդի էտիվան և ապա սնչնացման մասին է պատմում պատմիչը իր առաջին գրքի 18-րդ գլխում: Դա կոչվում է մասնահատների աղանդ: Նկարագրվում են նաև թանավորողների, կտրուցողների և այլ աղանդներ:

Վերջապես չիչներ նաև, որ Կաղանկատվացուն ևնք պարասկան Գավթակի գեղեցիկ ողբի համար, որը հայոց ուղբերգների կարգով գրված առաջին ուղիարհիկ քերթվածն է մեր գրականության մեջ:

Նյութերի պակասի, կողմնակի լրացումների, հեղինակի մոռացության, չափազանցումների և այլ պատճառներով «Աղվանից աշխարհի պատմություն»-ը ունի մի շարք թերություններ, որոնք շատ հասկանալի են այն հեռավոր մամանակներում պատմություն գրող հեղինակի առնչությամբ:

Կաղանկատվացին Ռոնայրին վերաբերող նյութը վերցրել է խորենացուց, բայց խորենացին չի առել, թե Ռոնայրը Շապուհի քրոջ ամուսինն է: Հավանորեն դա ավանդություն է, որ պատմիչը ընդունել է իբրև ճշմարտություն: Բայց կա նաև մի այլ հանգամանք: Պատմիչը սիրում է Աղվանքի թագավորների սերնդ տալ ավելի բարձր ու զորեղ արքաներից կամ խնամխացին: Նրանց հետ:

Կաթողիկոսների ու թագավորների ժամանակագրական շարքի մեջ խախտումներ կան. ինչպես երևում է, պատմիչը ուշագիթ, կամ ավելի նիշտ, հմուտ չի եղել պատմական որոշ իրադարձությունների վերլուծման մեջ:

Պատմիչը չի առել, թե ինչո՞ւ Ջվանշիրը ընդունեց արարների տիրապետությունը և ինչո՞ւ էր նրա հայրը կողմնակից այդ տիրապետությանը, իսկ հետո դիմում է Կոստանդինին, որպեսզի ընդունի նրա իշխանությունը: Կայսրը նրան շնորհում է մեծամեծ պարգևներ և դարձնում պրոտոն պատրիկ ու թույլ է տալիս, որ նա հազար երկու հարյուր մարդու պատիվներ շնորհի: Այդ աստիճաններն են՝ պատրիկություն, հյուպատոսություն, հյուպարխոսություն, ստրատելատություն, էլիտություն: Պատմիչը բերում է կաշանի հրովարտակը, որտեղ նվերները մասին ոչ մի խոսք չկա: Ըստ պատմարան Աղոնցի՝ այդ հրովարտակը վավերական չէ, և ոչ էլ վավերական է Ջվանշիրի թուղթը: Առասպելական են նաև կոյսերական ընծաները, 1200 մարդու հատկացվելիք պատիվները:

Կայսրը Ջվանշիրին նվիրում է նաև կենաց փայտից, որը ոչ որի չէր նվիրել: 660 թվականին Կոստանդինը Պարսկաստան կամ արևելք չի գնացել: Նա Հայաստան եկավ իր թագավորություն 12-րդ տարում՝ 652 թվականին: 659 թվականին ու ոչ էլ գրանից Հեռա Կոստանդինը Հայաստանում չի եղել և չէր կարող Աղվանքի իշխանին ընդունել Վաղարշապատում: Կոստանդինը չի եղել մարաց Քուսնք գյուղում և չէր կարող այնտեղ Ջվանշիրին կենդանու խաչից մաս տալ: Նա չէր կարող Ջվանշիրին իշխան նշանակել Վրաստանի սահմաններից մինչև հունների սրանքը: Մուավին այդ տարածությունները մինչև հարա պահակը հանձնել էր Թեոփոս Ռշուտուն և ոչ թե Ջվանշիրին:

Կաղանկատվացու երկր օտոկ պրամություն չէ, որովհետև հեղինակը

չառ անգամ առանց ընտրություն կատարելու օգտվել է բազմաթիվ գլխերից: Պատմության հետ խառն են վարքագրություն, վկայարանություն, հերոսապատում, սովորույթների ու կենցաղի նկարագրություն և այլն:

Կաղանկատվացին իր գոյացումներով, աշխարհայեցողությամբ, նրպատակներով ու ձգտումներով հայրենասեր հայ է: Նրա ամբողջ մտանվելու մեջ ուղղված է այն բանին, որ հյուսիսային ժողովուրդները քրիստոնյա դառնան և միավորվեն հայ եկեղեցու հովանու ներքո: Հայաստանը Մովսես Կաղանկատվացու համար տիեզերական աշխարհ է, իսկ սուրբ Գրիգորի մատուցները բաղձալի այն սրբություններն են, որոնց համար Խրաչիւ եպիսկոպոսը ամեն շանք զործադրում է մի մաս ձեռք բերելու Աղվանքի համար:

Մովսես Կաղանկատվացին ցնծություն մը է դիմավորում Տրդատի հաղթանակը հյուսիսայինների դեմ, որոնց Տրդատը թշուժ է մինչև հունների երկիրը: Հոնաստանում թաղավորող Սանատրուկը, որ հան էր մասրոկների ցեղից, ոմն է Կաղանկատվացու համար, որովհետև այդ Սանատրուկը թըշնամի է Հայաստանին: Եվ երբ Սանատրուկը հարձար ժամ է գտնում Հայաստան արշավելու, դալիս է Օշականի առապարը: Այդտեղ նրա հակաանպարտելի զորապետներից մեկին Վահան Ամատունին նիզակահարում է և «Լեղ դառակ ձիոյն յերկիր կործանէր դահալին վիրազն», — ցնծությամբ բացականչում է Կաղանկատվացին¹:

Կաղանկատվացին Վաչագան Բարեպաշտին համեմատում է Կոստանդինու կայսեր կամ Մեծ Հայքի Տրդատոս Արշակունու հետ, որ «Հայոց փրկությունը գտնողը և մեզ՝ արևելյաններս համար լուստ դուռ ու բազմազան բարիքների օրինակ եղավ», — ասում է Կաղանկատվացին սիրով ու պատկառանքով:

Մասքոթների Սանեան թագավորը հետապնդելով Կիլիկիայ լեռան վրա նահատակում է բաղմաթիվ քրիստոնյաների: Կաղանկատվացին, հաղորդելով այս տեղեկությունը, սրտաբախ բացականչում է. «Նրանց բարխոսություն մտը աստված միշտ գիտ Աղվանից աշխարհին ու Հայաստանյայց երկրին»²:

897 թվականն է. մեռնում են հայոց մեծ հայրապետ Գեորգը և Սյունիքի Աշոտ իշխանը, արարների կողմից խաչվում է հայոց Սմբատ թագավորը: Պատմիչը լալահատաչ ասում է, թե աղետավոր ձայն է գոմում Թուրքոմի տանը (Հայաստանում) և առհասարակ ավերանք էր հասնում երկրին: Եվ պատմիչը խոր գոհունակությամբ է նշում արարների հեռացումը Հայաստանից: Այս արգեն Աղվանից պատմությունը շարունակող Գաթիստունցն է, որը նույն ոգով է ապրում, ինչ ոգով ներշնչված էր Կաղանկատվացին:

Ողջ պատմությունը շնչում է հայ մշակույթի, հայ եկեղեցու, հայ պատկանությունների գաղափարներով: Պատմիչը ամբողջ խոն է Հայաստանը ա-

¹ Գիրք 1-ին, գլուխ 12:

² Գիրք 2-րդ, գլուխ 5-րդ:

զատ տեսնել օտար տիրոջներէց ու բարբարոսներէց, որոքոքի երկրում ժողովն դարձնենքը, շենանան եկեղեցիները, և հայ մարդը ապրի ալաւ, ինքնօրնն ու չի:

Կաղանկատվացու այս աշխատութիւնը մենք թարգմանել ենք 1958 թվականին. մեր ձեռքի տակ էր գտնվում միայն Ք. Պատկանյանի ռուսերեն թարգմանութիւնը, որ կատարված էր 1860 թվականի էմինի հրատարակութիւնից: Այս հրատարակութիւնը պակասավոր կտորներ շատ ունի, որ արտացոլվել է ռուսերեն թարգմանության մեջ: Մինչև թարգմանելը մենք մեր Մատենադարանի բոլոր ձեռագրերի ու հրատարակի վրա եղած տպագրերի հիման վրա կազմեցինք համեմատական-քննական բնագիր, որտեղ հավաքվեցին բաց մնացած հատվածներն ու պակասները, և հայկական այդ կարևոր սկզբնաղբյուրը ամբողջացավ, լրացավ: Ապա այդ քննական բնագրից թարգմանեցինք սույն աշխարհարար հրատարակութիւնը:

1961 թվականին լույս տեսավ Կաղանկատվացու երկի անգլիացի հայագետ Բովսեթի ձեռքով կատարված անգլերեն թարգմանութիւնը՝ առաջաբանով ու ծանոթագրութիւններով հանդերձ:

Քանի որ մեր թարգմանութիւնը ավելի վաղ էր կատարված, քան հիշյալ անգլերեն թարգմանութիւնը հրատարակութիւնը, և ծանավանդ երկու թարգմանութիւնների բնագրական հիմքերը տարբեր են, ուստի այդ թարգմանութիւնը մենք հետագայում չենք համեմատել մեր թարգմանության հետ՝ երկուդիցով հնարավոր թյուրիմացութիւններէց: Պետք է նշենք, որ հակառակ դրան օգտվել ենք անգլերեն հրատարակության առաջաբանից և գիտական ծանոթագրութիւններից, որոնք թարգմանչի գիտական մեծ ջանքի ու հմտության արդյունքն են:

Հայ անվանի պատմիչ Կաղանկատվացու սույն երկը առաջին անգամն է թարգմանվում աշխարհարար: Մեր պատմական սկզբնաղբյուրները մեզ են հասել բազմաթիվ արտադրութիւններից հետո և իրենց վրա կրում են այդ արտադրութիւնների անխուսափելի սխալանքները: Մենք ձգտել ենք, որքան մեր կարողութիւնը թույլ է տվել, ընթերցողին հանձնել նշգրիտ թարգմանութիւն:

ՎԱՐՄԿ ԿԱՌՔԱՆԱԿ

Գ Լ Ո Ւ Խ Ա

ՆՆՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՎԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Աստծու ստեղծած առաջին մարդը՝ մեր հայր Ադամը, ապրեց երկու հարյուր երեսուն տարի ու սերեց Սեթին: Սեթը ապրեց երկու հարյուր հինգ տարի ու սերեց Ենոփին: Ենոփը ապրեց հարյուր ինսուն տարի ու սերեց Կայնանին: Կայնանը ապրեց հարյուր յոթանասուն տարի ու սերեց Մադադայնիին: Մադադայնիը ապրեց հարյուր վաթսունյոթ տարի ու սերեց Հարեթին: Հարեթը ապրեց հարյուր վաթսուներկու տարի ու սերեց Ենոփին: Ենոփը ապրեց հարյուր վաթսունհինգ տարի ու սերեց Մաթուսաղային: Մաթուսաղան ապրեց հարյուր վաթսունյոթ տարի ու սերեց Լամեթին: Լամեթը ապրեց հարյուր ութսուն տարի ու սերեց Նոյին, իսկ Նոյը ապրեց հինգ հարյուր տարի և սերեց երեք որդի՝ Սեմին, Ժամին ու Հարեթին:

Սեմի ծնունդից հարյուր տարի հետո տեղի ունեցավ ջրհեղեղը՝ Նոյի կյանքի վեցհարյուրերորդ տարում: Ադամից մինչև ջրհեղեղը լինում է երկու հազար երկու հարյուր քառասուներկու տարի և տասը ցեղ:

Այստեղ տրվում է տեղեկություն Հաբեթի սահմանների մասին, իսկ նրա ծագումնաբանությունը կգտնես իր տեղում: Հաբեթի սահմանները հետևյալներն են, որ Նոյը բաժին տվեց և միաժամանակ երգում պահանջեց եզրայրների միջև, որպեսզի եզրայրները միմյանց չըրկեն, Մարաստանից¹ մինչև Գաղիբոնի² հյուսիսային կողմը և մինչև Դկլաթ³ գետը, որ հոսում է Մարաստանի ու Բաբելոնի միջով: Իսկ Հաբեթի որդիներն են՝ Գամբը, որի անունից առաջացել են գամբրները⁴, Մագոգը, որից՝ կելտերը⁵ և գալաթները⁶: Մադան, իսկ սրանից՝ մարերը⁷: Հունանը, իսկ սրանից՝ հելլենները և հույները: Քոբելը, իսկ սրանից՝ թեսալացիները⁸: Մոսոքը, իսկ սրանից՝ լուրիկիացիները⁹: Քիրամը, իսկ սրանից՝ թրակացիները: Քևտինը, իսկ սրանից՝ մակեդոնացիները: Իսկ Քիրասի որդիներն են՝ Ասքանազը, որից և առաջացել են սարմատները¹⁰: Նրիփատը, որից՝ սավրոմատները¹¹: Քորգոմը, իսկ սրանից էլ՝ հայերը:

Հունանի որդիներն են՝ Նդիսան, որից էլ առաջացել են սիկիլիացիները¹² և աթենացիները: Քարշիշը, իսկ սրանից՝ վրացիները և տյուրենացիներն¹³ ու Կիտրիսը, որից էլ և՛ հոմեացիները*, և՛ լատինները, և՛ հոմոլդացիները¹⁴: Բոլորը միասին կազմում են տասնհինգ ժողովուրդներ, սրոնցից անշատվեցին և հեռացան հեթանոս կղզեցիները, այսինքն՝ կիպրացիները, որ կիտիացիներից¹⁵ են, Հաբեթի որդիները:

Իսկ նրանք որ հյուսիսային կողմն են գտնվում, ցեղակից են կիտիացիներին¹⁶, որոնցից առաջացան ազվանները: Նրանցից կան ժողովուրդներ, որ գտնվում են Հեզա¹⁷ երկրում, ուր հետո տեղափոխվեցին, ինչպես օրինակ՝ սայետացիները¹⁸, որոնք բնակվում են Հունաստանի հյուսիսայ Աթենք քաղաքում: Իսկ թեբեացիներից¹⁹, որոնք ծագել են Ագենուլրի որդի

* Բնագրում՝ հոմոմ, մենք Քարգամանցիքը հոմոմեացիները», որովհետև Կազանկատվացին նկատի ունի ոչ թե բյուզանդացիներին, այլ հոմեացիներին:

կազմուսից, բաժանվեցին սիդոնացիները²⁰ և գաղթեցին, իսկ կարգեզոնացիներն²¹ էլ եկվորներ են հյուսիսից²²: Իսկ երբ որ լեզուները խառնվեցին, Հաբեթից ծագեցին տասնհինգ ժողովուրդներ և Մարաստանից տարածվեցին մինչև Սպարիոն*, որ ձգվում է մինչև օվկիանոս²³ և ուղղվում է դեպի հյուսիս: Նրանց երկրները հետևյալներն են՝ Ասարպատական, Աղվանք, Ամաղոնիա²⁴, Մեծ և Փոքր Հայք²⁵, Կապադովկիա²⁶, Գալաթիա, Կոլքիս²⁷, Հնդկաստան, Բոսփորիա²⁸, Մեովտիս²⁹, Դեոբս³⁰, Սարմատիա³¹, Տավրիսիա³², Սավրոմատես, Սկլութիա³³, Թրակիա, Մակեդոնիա, Դալմատիա, Մովդիս³⁴, Թեսալիա³⁵, Լոկրիս³⁶, Բիովտիա³⁷, Հեսալիա³⁸, Ատտիկե³⁹, Աքաիա⁴⁰, Պեղեներիս⁴¹, Ակարնես⁴², Հեպիրոսիս⁴³, Իլյուրի⁴⁴, Լիքնիտիս⁴⁵, Ագրիակե⁴⁶, որից Ագրիատիկ ծովը: Գալիսիա⁴⁷, Սպանո-Գալիսիա⁴⁸, Իրերիա⁴⁹, Սպանիա մեծ⁵⁰: Այստեղ վերջանում են Հաբեթի սահմանները մինչև Բրիտանական կղզիները: Եվ բոլորն էլ ուղղված են դեպի հյուսիս:

Գ լ ու խ Գ

Թ Ե ՈՐ ԺՈՂՈՎՈՒԹՅՆԵՐՆ ԲԻՆԵՆ ԳԻՐ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՆԵՐԸ

Վերոհիշյալներից գիր ու գրականություն ունեն հրեաները, լատինները, որոնց գիրը օգտագործում են նաև հոմեացիները, իսպանացիները, հույները, մարերը, հայերը, աղվանները: Մարաստանի հյուսիսային կողմից մինչև Գաղիբոնի սահմանը, որ տարածվում է Պարզամիդոս⁵¹ գետից մինչև Մատուսիա, որն Իլիոնն⁵² է: Իսկ Սիկիլիա, Նվրիա⁵³, Ռոդոս⁵⁴, Քրոս⁵⁵, Լեմնոս⁵⁶, Կիթերա⁵⁷, Չակինթոս⁵⁸, Կեփաղենիս⁵⁹, Իթակե⁶⁰, Կորկյուրիա⁶¹, Կելագեմ⁶² կղզիները և Ասիայի մի մասը, որ կոչվում է Հովանիա, և Դկլաթ գետը,

* Սպարիոն երկիր զի: Անանուն ժամանակագրության հեղինակը հունարեն ἑσπερίων արևմուտք բառը հատուկ անուն է կարծել, և Կազանկատվացի նույնաբովանդակ վերցրել է: Տե՛ս «Բանբեր Մատենադարանի» № 8, Հրաչ Բարթիկյանի հոդվածը, էջ 75:

որք հոսում է Մարաստանի ու Բաքելունի միջով: Սրանք ևն
Հաբեթի սահմանները:

Սեմը գրավեց երկրի արևելյան կողմը, Քամը՝ հարավա-
յինը, իսկ Հաբեթը՝ արևմտյանն ու հյուսիսայինը, որտեղ
գտնվում են Աղվանքը և Կասպից ծովը: Աշխարհի ծայրը
արևելքն է. այս ժողովուրդները ձգվում հասնում են արևմտյան
կողմը՝ մինչև Տրապիզոնս⁶³:

Իսկ Հաբեթից մինչև Տիգրան եղել են քառասունչորս
թագավորներ, բայց Պարսկաստանի կողմերի թագավորները
Արշակից մինչև Արտավան տասնչորս են, իսկ տարիները
(այդ ժամանակաշրջանում) չորս հարյուր հիսուն են:

Արտավանին սպանեց Սասանյան Ստահրացի Արտաշիրը
և վերացրեց պարթևների թագավորությունը, որոնք տիրեցին
Պարսկաստանին ու Ասորիքին մեր կենարար Քրիստոսի գա-
լուց երկու հարյուր հիսուներկու տարի առաջ և հրեաների՝
Բաբելոնի գերությունից վերադառնալուց երկու հարյուր յո-
թանասուն տարի հետո:

Նույն պարթևներից նրանք, որոնք (թագավորեցին) Վա-
ղարշակից մինչև Վոամշապուհի որդի Արտաշիրը, եղել են
քսանվեց հայոց թագավորներ, իսկ տարիները կազմում են
վեց հարյուր քսան:

Այս ժամանակ վերացան Արշակունիների թագավորու-
թյունը և սուրբ Գրիգորի տոհմի հայրապետությունը: Իսկ
եթե կամենում ես Բագրատունիների մասին իմանալ, ապա
Պարույրը՝ Սկայորդու որդին, կոչվում էր Հրաչյա*, սա հալոք
թագավոր էր՝ Հալիի որդին, որ Բաբելոնի թագավորից ինդրեց
հրեա գերյալներից Շամբաթ անունով մեկին, որին բերելով
մեծ պատվով բնակեցրեց Հայաստանում: Սրանից սերվեց
Բագրատունիների տոհմը, երբ սպառվում էր հաբեթական մեծ
ցեղը:

Այստեղ է սկսվում Աղվանքի իշխանությունը, քանի որ
մարդկային աշխարհաստեղծման սկզբում Կովկասյան մեծ
լեռան շուրջը բնակվածների վերաբերյալ որևէ ստույգ բան
չենք կարող ասել լսողներին մինչև հայոց Վաղարշակ արքան,
որ իրեն սեփականելով հյուսիսային կողմը, կոչ է անում վայ-
րենի եկվոր ժողովուրդներին, որոնք բնակվում էին սկսած
հյուսիսային դաշտից, կա՛մ Կովկասի ստորոտում, կա՛մ հո-
վիտներում, կա՛մ խորածորներում՝ հարավային կողմով մինչև
դաշտի մուտքը, և պատվիրում է վերջ տալ ավազակու-
թյանն ու զողոթյանը ու հնազանդվել արքունի հարկատը-
վություն: Հետո նրանց համար նշանակում է առաջնորդներ
ու պետեր, որոնցից Վաղարշակի հրամանով գլխավոր է կարգ-
վում Հաբեթի սերունդներից՝ Սիսակի տոհմից Առան անունով
մեկը, որ ժառանգեց Աղվանքի դաշտերն ու լեռները՝ Արաքս
գետից մինչև Հնարակերտ⁶⁴ ամրոցը: Եվ այդ երկիրը նրա
քաղցր բնավորության պատճառով կոչվեց Աղվանք, որով-
հետև նրան աղու էին անվանում իր քաղցր բնավորության
համար:

Այս Առանի ժառանգներից, ասում են, անվանի և քաջ
բազմաթիվ կուսակալներ նշանակվեցին Վաղարշակ Պարթևի
կողմից: Նաև ասում են, թե սրա տոհմից են սերվել ուտիա-
ցիների, գարդմանացիների, ծավդեացիների և գարգարացի-
ների իշխանությունների ցեղերը:

Այս մինչև այստեղ ծանոթություն է ծագումնաբանության
վերաբերյալ:

* Ըստ ավանդական պատմության՝ Հալիազն թագավոր Ալստրուդու
որդին և հաջորդը Պարույրն էր, իսկ այս վերջինի որդին՝ ու հաջորդը՝ Հրաչյան:

Գ լ ու խ Ե

ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ ԱՂՎԱՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱՐԳԱՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԱՅՍԻՆՔԵ՝ ԻՆՉ ՈՒՆԻ
ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գեղեցկատես և համեմի է Աղվանքը՝ ամեն տեսակ բարիք-
ներով և Կովկասի բարձրաբերձ լեռնային վտակներով: Մեծ
Կուր գետը մեղմահոս ընթացքով իր մեջ բերում է մեծամեծ
ու մանր ձկներ, հոսելով գալիս-անցնում ու թափվում է Կաս-
պից ծովը:

Նրա շուրջը գտնվող դաշտերից ստացվում են առատ հաց
ու գինի, նավթ ու աղ, մետաքս ու բամբակ. այնտեղ աճում
են անքավ ձիթենիներ, իսկ լեռներից պեղվում են ոսկի, ար-
ծաթ, պղինձ և գեղնախուռնի: Վայրի կենդանիներից կան առ-
յուծ, ինձ, հովազ, վայրի էջ, իսկ բազմաթիվ թռչուններից՝
արծիվներ, բազեններ և սրանց նման ուրիշներ: Իսկ մայրա-
քաղաքը մեծ Պարտավն⁶⁵ է:

Գ լ ու խ Զ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՉ՝ ԱՐԵՎԵԼՅԻՆԵՐԻՄ, ՄԵՐ ԱՍՏՄՈՒ
ՏԻՆՎԱԼՈՒ ԻՄԱՍԻՆ. ՃԵՄԱՐԻՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վաղարշակի կողմից Առանին Աղվանքի վրա առաջին թա-
գավոր նշանակելուց բացի, մինչև քաջ Վաչագանը, որ կատա-
րելատյես տիրեց Աղվանքին, ոչ մի այլ բան չդատանք:

Իսկ երբ հասավ արդարության արեգակի հրևալու ժամա-
նակը, այցի Եկավ մեզ մեր փրկության անքննելի էութունը,
փառքի լույսը և հոր էության ծագումը՝ ամբողջովին գլուխ
բերելով մարմնանալը, նստեց աստծու փառքի մեջ, որից
բաժանված չէր: Իր սուրբ և սիրելի աշակերտներին ուղարկեց
իբրև բարոյիչներ տիեզերքի համար, բստ որում և մեզ՝ արևել-
ցիներին, վիճակվեց սուրբ Թագեոս առաքյալը: Սա եկավ

Հայաստանի Արտազ⁶⁶ գավառը, որտեղ և հայոց Սանատրուկ
թագավորի ձեռքով մարտիրոսվեց:

Նրա աշակերտ սուրբ Եղիշան վերադառնում է Երուսաղեմ
և պատմում է նրա առաքելակիցների սքանչելի նահատակու-
թյունը: Այնտեղ սուրբ հոգու ներշնչումով Եղիշան ձեռնադր-
վում է սուրբ Հակոբի՝ տիրոջ եղբոր կողմից, որ Երուսաղեմի
առաջին հայրապետն էր: Իր համար վիճակ ընտրելով արևել-
քը՝ Երուսաղեմից նանապարհվում է Պարսկաստանի միջով,
մտնում է մասքութների⁶⁷ մեջ՝ խուսափելով հայերից: Քարո-
զությունն սկսում է Չոզում⁶⁸ և բազմաթիվ ակեղերում՝ շա-
տերին աշակերտ դարձնելով, նանաչել է սալիս փրկությունը
(քրիստոնեությունը):

Այնտեղից երեք աշակերտող մարդկանցով գալիս է Աւտի
գավառի Սահառ⁶⁹ քաղաքը. նրանց անհավատ հարազատնե-
րից ոմանք հետապնդում են, և աշակերտողներից մեկը նրանց
կողմից նահատակվում է: Իսկ մնացած երկուսը թողնում են
երանելի Եղիշային և գնում են անօրեն մարդասպանների
ետևից: Իսկ սուրբ հայրապետը, գալով Գիս⁷⁰, կառուցում է
եկեղեցի և մատուցում է անարյուն պատարագ: Արևելցիների
եկեղեցիների սկիզբը այս տեղում եղավ, որը դարձավ մայրա-
քաղաք և լուսավորության տեղ: Այնտեղից անցավ Զեր-
գունի⁷¹ դաշտակը, որը դիցամուկոսապաշտների գահագործում-
ների տեղն էր: Այդտեղ էլ նահատակվեց: Ինչ-որ անհայտ է,
թե ո՞ւմ կողմից կատարվեց այդ գործը: Եվ հենց այնտեղ մահա-
պարտների մի փոսի մեջ նետվեց դիակը ու երկաշ ժամանակ
ծածկվեց այդ տեղում, որ կոչվում է Հոմենք⁷²:

Գ լ ու խ Է

ԱՐԵՎԵԼՔԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՍՈՒՐԲ ԵՂԻՇՍԵՆ ԵՆԿԱՐՆԵՐԻ
ՀԱՅՏԱՍԵՐՈՒՄԸ

Ճշմարտությունը չէր կարող ծածկված մնալ, և լույսը փակի
տակ լինել: Երկար ժամանակից հետո աստվածավախ մարդիկ
տեսիլքով համախմբվեցին փոսի տեղում. այնտեղ տեսան

շեղջակուտված շատ ոսկորներ. բոլորն էլ ընդհանրապես տարակուսեցին, սակայն հանեցին, դիզեցին և այդ գիշերը աղոթքներով հսկեցին: Առավոտյան տեղի ունեցավ այնպիսի մեծ երկրաշարժ, որ այնտեղ գտնվողները ընկան գետին: Անապատից սաստիկ հողմ փչեց և անսուրբ մարդկանց ոսկորները ամբողջ դաշտով մեկ ցաք ու ցրիվ դարձրեց. այդ տեղում մնացին միայն առաքելական նշխարները: Միայն թե գլուխը Ուտեկան⁷³ գլուխի մեծահավատ ոմն Ստեփանոս քահանան հափշտակեց ոսկորների միջից և աճապարելով նստեց իր հրիվարն ու հեռացավ: Եվ բազմութունը նրա ետևից շարժվեց, սակայն մթամած մառախուղը, փայլատակումներով դրանց մեջտեղը երևալով, սարսափեցրեց նրանց, որոնք վերադարձան հավաքատեղը:

Սուրբ Եղիշայի տեսիլքով հայտնաբերված նշխարները տարան, թաղեցին Ուտեկան ավանում, ուր սուրբ քահանա Ստեփանոսի ձեռքով ամփոփված էր գլուխը: Ապա այնտեղից փոխադրեցին Ներսիսի⁷⁴ սուրբ միաբանութունը, որ այժմ կոչվում է Զրվշտիկ՝ ի փառս տեր ամենակալ աստծու: Երկար ժամանակ անցնելուց հետո Աղվանքի բարեպաշտ Վաչագան թագավորը Եղիշայի նահատակության փոսի վրա հուշասյուն կանգնեցրեց: Իսկ թագավորի սենեկապանը, առանձնանալով այնտեղ, իր կյանքը վերջացրեց այդ հուշասյան վրա:

Գ Լ Ո Ւ Խ Ը

(ԹԵ ԻՆՉՊԵՍ) ԱՌԱՆԵՑ ՄԻՆՉԵՎ ԱՂՎԱՆՔԻ ԹԱԳԱՎՈՐ ՈՒՌՆԱՅԲԸ ԵՎ ՉԱՅՈՑ ԱՐՔԱ ՏՐԴԱՏԸ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՏՆՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԳՏՆԵԼՈՎ՝ ՀԱՐԵՎԱՆՑԻ ԳՐԵՑԻՆՔ ԱՅՆ, ԻՆՉԻՆ ԱՆՇՐԱԺԵՏ ԷՐ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼ

Չափազանց ցանկալի էր ժամանակագրական կարգով իմանալ այն պատմութունն ու գործերը, ինչ որ Առանի սկզբնական թագավորութունից մինչև այսօր կատարվել են: Բայց արևելյանների բազմազգ լինելը առաջ է բերում խռովություն-

ներ և գրքերի ու հիշատակարանների հրկիզումներ: Սակայն այստեղ մեզ օգնում է քերթողահայր Մովսեսը, որը նկարագրում է Արտավազդի պատերազմելը հռոմեացիների դեմ: Նա Ատրպատականի բազմաթիվ գորքերը հավեթելիս՝ այնտեղ կանչեց Կովկասի լեռնական հզոր ցեղերին, Աղվանքի ու Վրաստանի գորքերը, շարժվեց Միջագետք և սրանց ուժով հալածեց հռոմեացիներին:

Իսկ երբ Արտաշեսը հարձակվեց Երվանդի վրա, սա գտնվում էր Աղվանքի սահմաններում՝ Ուտի գավառում: Սա այնտեղ է թողնում իր զորքը և ինքը գնում է իր մայրաքաղաքը: Արտաշեսը, գալով Աղվանք, Աղվանքի զորքը միացնում է իր զորքին և դուրս է գալիս Գեղամա ծովակի ափը. այս զորքերով հալածում է Երվանդին և ինքը տիրում հայերին:

Այս ժամանակներում աղվանները միաբանվում են բոլոր լեռնականների հետ, որոնց միանում են մասամբ նաև վրացիներ ու մեծ բազմությամբ շարժվում են դեպի Հայաստան: Արտաշեսը նրանց դեմ համախմբում է իր զորքերը և բանակ է դարկում Կուր գետի մոտերքը: Բորբոքվում է պատերազմը, և Աղվանքի արքայորդին գերի է ընկնում Արտաշեսի ձեռքը: Այս պատճառով Արտաշեսը օրիորդ Սաթենիկին կնություն է առնում և վերադառնում է խաղաղություն հաստատած: Վախճանվում է Սաթենիկի հայրը, և ինչ-որ մեկը բռնի կերպով թագավոր է դառնում ու սկսում է հալածել Սաթենիկի եղբորը: Արտաշեսի դաստիարակ Մմբատը մեծ զորքով գալիս, դուրս է շարտում բռնի տիրացողին, Սաթենիկի եղբորը տեր է դարձնում հայրենի գահին և Հայաստան է վերադառնում մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով: Արտազ գավառից գերվածներին բնակեցնում է Շավարշանում⁷⁵:

Առավելյան տոհմի նախարարութունը Սաթենիկի ազգականներից է նշանակված, որը Տրդատի հոր՝ Մեծ Խոսրովի ժամանակներում Բասիլից⁷⁶ եկած մի քաջ մարդու հետ խնամիացավ:

ՌԻՌԱՅՐԻ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՂԱՌՆԱԼՆ ՈՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՐԻ
ՁԵՌՔՈՎ ՄԿՐՏՎԵԼԸ ԵՎ ՀԱՄԵՅՆ ԱՂՎԱՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐԳԵԼԸ
(ՔՐԻՍՏՈՆՆՈՒԹՅՈՒՆ ԸՆԳՈՒՆԵԼԸ) ՈՒՌԱՅՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔՈ

Որովհետև Երանելի Եղիշան քրիստոնեության տարածու-
մը սկսեց երկրի ժայրամասերից, ուստի լուսավորեց հյուսիս-
արևելյան որոշ մասեր միայն և ոչ թե ամբողջը. ինքն էլ, այդ
օգտակար պայքարը մղելով իր ժողովրդի համար, շարշարվեց,
տանջամահ արվեց: Բայց այն ժամանակ, երբ աստված այցե-
լեց մարդկային ցեղին, Կոստանդիանոս մեծ կայսեր միջոցով
ժողկեցրեց ամբողջ արևմուտքը և երանելի Տրդատի ձեռքով
լուսավորեց նաև Մեծ Հայքը: Հավատի բերեց և արևելքը⁷⁷,
որ մասնավոր կերպով ծանոթացել էր ճշմարիտ արեգակի
փրկական ծագմանը: Ուռնայրի միջոցով կրկնակի ու կատար-
յալ կերպով լուսավորվեցին: Եվ այս հրաշագործություննե-
րը աստծու կողմից միաժամանակ կատարվեցին:

Աղվանից Ուռնայր արքան պարսից Շապուհ թագավորի
քրոջ ամուսինն էր, մի քաջ և զորեղ տղամարդ, որ մեծամեծ
պատերազմներում հոյակապ անուն վաստակեց՝ հայերի մեջ
հաղթության դրոշ կանգնեցնելով: Նա կրկին ծնունդ է ստա-
նում հայոց լուսավորիչ սուրբ Գրիգորից և դալիս է (Աղվանք)⁷⁸
սուրբ հոգու կողմից լուսազգեստավորված, ավելի է լուսավո-
րում Աղվանքը և շարունակում է մնալ միշտ տիրող լուսի
որդի՝ վերջացնելով երկրային կյանքը: Իսկ սրա մահվանից
հետո աղվանների կողմից իրենց կաթողիկոսության համար
խնդրվեց պատանի Գրիգորիսը, քանի որ մեր Ուռնայր արքան
սուրբ Գրիգորից խնդրեց նրա սուրբ ձեռնադրությունը լինել
իր երկրի եպիսկոպոս: Հայաստանը և Աղվանքը այս կանոնով
մնացին համակամ եղբայրությունը և անքակտելի դաշինքով
մինչև այսօր:

ԱՂՎԱՆԻՑ ԱՐՔԱ ՎԱՋԵԻ ՄԱՍԻՆ, ՔԵ ԻՆՉՊԵՍ ՀԻՄՈՒՐՎԵՑ
ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՄՈՒՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ՀԱՎԱՏԱՑ ԿԵՆԳԱՆԻ
ԱՍՏՈՒՆ, ՊԱՏԵՐԱԶՄԵՑ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԳԵՄ ԵՎ ՍՈՒՐԲ
ԿՅԱՆՔՈՎ ՄԻԱՆ ԶՆԱՑԱՎ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Հազկերտի թագավորության տասնիններորդ տարում
մահը վրա է հասնում նրան: Սրա որդիները, միմյանց հակառա-
կորդ լինելով, կռվում էին իշխանության համար: Նրանք այս
հակառակության մեջ էին, երբ ապստամբվում է նաև աղվա-
նից արքա Վաչեն. բայց քանի որ Վաչեն նրանց քեռորդին էր
ու առաջ ըստ հայրենի ավանդույթի, որ Ուռնայրն էր հաստա-
տել, քրիստոնյա էր եղել, անօրին Հազկերտը բռնի ուժով նրան
մոզ դարձրեց: Իսկ այս ժամանակ, նա, հարմար պահ գտնե-
լով իր համար, բարվոք համարեց պատերազմով մեռնել, քան
ուրացությունը իր թագավորությունը պահել:

Պարսկական զորքի այս երկար խռովության ընթացքում
Միհրյան տոհմից Ռահատ անունով մեկը, որ Հազկերտի
կրտսեր որդու դաստիարակն էր, անթիվ զորքով եկավ թագա-
վորի ավագ որդու վրա: Զարկեց, շարդեց վերջինիս զորքը,
ձերբակալեց թագավորի որդուն և հենց այնտեղ տեղնուտեղը
սպանեց. իսկ մնացած զորքը հաշտեցրեց և համախմբեց պարս-
կական բանակի մեջ: Սա թագավորեցրեց իր սանին, որի անունն
էր Պերոզ: Իսկ աղվանից արքան չկամեցավ նորից նվաճվել
ու ենթարկվել, այլ քանդեց Չողա լեռնանցքը⁷⁹ և մասբուլթ-
ների զորքը անցկացրեց այն կողմը: Իր հետ միավորեց տասն-
մեկ լեռնականների թագավորներ, պատերազմեց պարսկական
բանակի դեմ և մեծ ջարդ տվեց արքունի զորքերին: Երկու-
երեք անգամ խնդրագրեր գրեց (Պերոզը), բայց չկարողացավ
նրան (աղվանից արքային) համոզել. այլ երկու-երեք անգամ
գրած նամակով և պատգամավորի միջոցով հանդիմանում էր
նրան՝ Հայաստանը զուր տեղը տվերիլու համար. հիշեցնում
էր նախարարների մահը, գերիներին շարշարելը, «որոնց հա-
վատարմության և վաստակի համար կյանք շնորհելու փոխա-

րեն արեից զրկում էք: Ես բարվար եմ համարում տանջանքներով մեռնել, քան ուրացող լինելով ապրել:»

Եվ երբ իմացան, որ ոչ բռնությունը, ոչ էլ սիրալիրությունը կարող են նրան համոզել, մեծ գանձ ուղարկեցին խաչվանդուրներին⁷⁹ երկիրը: Ապա բաց արին Ալանաց լեռնանքը⁸⁰ և դուրս բերին մեծ քանակութեամբ հոնական զորք ու մի տարի կռվեցին աղվանից թագավորի դեմ: Չնայած որ սլակասեցին և ցար ու ցրիվ եղան նրա (աղվանից թագավորի) զորքերը, սակայն շխարհացան համաձայնութեան բերել, այլ, ընդհակառակն, մեծ հարվածներ հասան նրանց: Շատերը կռվի մեջ ոչնչացան, շատերն էլ տանջալից հիվանդություններից հյուծվեցին: Պաշարման երկարելուց երկրի մեծ մասը ավերվեց, բայց ոչ ոք այնտեղից չհեռացավ:

Ապա Պերոզ թագավորը նամակ է ուղարկում Վաչեին. «Իմ քրոջը, — ասում է, — և քեռորդուս ուղարկիր, որովհետև նրանք ծագումով մոզուլթյան էին պատկանում, բայց դու քրիստոնյա դարձրիր. իսկ քո երկիրը թող բեզ մնա»:

Իսկ այդ երանելի տղամարդը, ոչ թե իշխանութեան համար էր կռվում, այլ աստվածապաշտութեան պատճառով էր մարտնչում: Մորը և կնոջը ուղարկեց, իսկ ամբողջ երկիրը թողեց և ինքը ավետարանն առավ, կամենում էր հեռանալ: Այս բանը լսելով պարսից Պերոզ թագավորը՝ զզջաց, ամբողջ հանցանքը իր հոր վրա գցեց. անսուտ երդմանգիր կնքեց և ուղարկեց նրան՝ առաջարկելով, թե ձխայն մի՛ հեռանա երկրից, և ինչ որ պահանջես, կկատարեմ»:

Իսկ սա ցանկացավ վերցնել միայն իր սեփական բաժինը՝ հազար ծուխ, որ հորից էր ժառանգել: Այն առավ թագավորից և բնակվեց երկրում՝ միայնակյացներով հանդերձ. և այդպես անզվարճ կյանք էր վարում ըստ աստվածային պատգամի: Նա ամենևին չհիշեց, թե մի ժամանակ թագավոր է եղել. Այսպես անցավ նրա կյանքը:

ԳՅՈՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱԿԱԿ ԿՈՒՐՄ ԿԱԶԵՆՆ

Աստուծու երկնավոր շնորհներով ողջույն: Քո առաքինի սուրբ սիրտ խոսքերով և իմ կամքով երկնավոր զորութեան շնորհիվ հորդեցին իմ մտքերը, ուստի մտադրվեցի խոսքով պատմող լինել:

Մեծ ու սարսափելի ահ ընկավ իմ սիրտը, որը ավելի բարձր է, քան երկինքների երկինքը և ավելի խոր է, քան վարի կիսագունդը: Այն ինձ պաշարեց ամեն կողմից՝ վերից ու վարից, ետևից ու առաջից, աջից ու ձախից: Փախչել չեմ կարողանում, իսկ խորամուխ լինել՝ վախենում եմ: Գուցե խորասուզվեմ՝ ինչպես Պետրոս առաքյալը*, անհատակ ծովում, բայց արդյո՞ք տեր Հիսուսը կմեկնի ձեռքը օգնելու համար: Արանով մի փոքր կբաջալերվեմ և խորամուխ կլինեմ անխորամուխ լինելի մեջ: Որովհետև խոսք ունեմ, այսինքն՝ լեզու, միայն գտնեմ քաջ մարդկանց առաքինութեան մեջ հոգեկիր Նյութ, մարդիկ, որոնք հրեշտակներին հիացրին, անգիր օրենքներով իրենք իրենց համար օրենքներ եղան, առանց օրենքների վերում տիրոջը ճանաչեցին, եղածները ընդունեցին իբրև օրենքների տակ ընկած և առանց որևէ առաջնորդ մարգարեի կամ հրեշտակի աստվածատեսներ դարձան:

Արդ ահա՛ ինչից երկյուզ ունեի, սիրով մոտենում եմ, հույսով մերձենում, հավատով ամբանում և սկսում եմ, որ տեղից պետք է սկսել: Ինչպես հենց սկզբում Քրիստոսի նկատմամբ սերը տեղ գտավ քո նախնի Ուռնայրի մեջ, որ երկնավոր նախանձով լցվեց հայոց թագավոր Տրդատի հետ: Երբ սրանք իմացան աստուծու մեծամեծ հրաշքների, սքանչելիքների, հրաշագործութունների մասին, որոնք սուրբ Գրիգորի ձեռքով կատարվեցին Հայաստանում, անմիջապես մուլար ճանապարհի բազմաթիվ շավիղներից ետ դարձան դեպի ճշմարիտ աստված: Ծանոթութեամբ ու բարեկամութեամբ նրանք դեն նետեցին հեթանոսական ճնշող լուծը և թեթևա-

* Տե՛ս Մատթ, ԺԳ, 29:

ցան, թոթափվեցին, թևածեցին, թռան, երկնքում ճախրեցին:

Քաջ Ուռնայրը այս լսելով՝ այլևս հանգիստ ու դադար չունեցավ և ոչ էլ սուրհանդակի ծառայութիւնն էր օգտվեց, այլ հենց ինքը՝ մեծ թագավորը, մեծամեծ նախարարներով, բազմաթանակ զորքով եկավ-հասավ Հայաստան և հանդիպեց հակայազոր թագավորին: Իսկ նա (Տրդատը) եղբայրուն, սիրով ու բարեկամութեամբ ընդունեց, ամեն բան հայտնեց նրան, իր ներքին ու արտաքին գաղտնիքները բացահայտեց սուրբ Գրիգորի ու հայոց բազմաթիվ զորքերի ներկայութեամբ: Խոնարհվում էր ձեր թագավորը, ընկնում էր գետին, փաթաթվում էր ոտքերն ու ձեռքերը և պատմում էր հեթանոսական ամբողջ մոլորութեան մասին, ինքը ևս խոստովանում էր անգիտութեամբ կատարած իր անցած մեղքերի մասին:

Քաջալերում էր նրան սուրբ Գրիգորը աստծու որդու մարմնավոր գալուստով, որը թողութեան համար եկավ և ոչ թե դատապարտելու, եկավ ապրեցնելու և ոչ թե մեռցնելու, իսկ նախապէս մեռածներին խոստացավ հողից կյանքի գարձնել: Երբ ձեր թագավորը այս ամբողջը լսում է, ինքը և իր հետ նշած ամբողջ զորքը քառասուն օր իրենց պահքի են նվիրում (պաս են պահում) և հրաժարվում են նախկին դատապարտելի գործողութիւններից: Հիսուներորդ օրը, երբ հրաժարվեցին սատանայից և սրա բոլոր գործերից ու ընդունեցին սուրբ երրորդութիւնը, մկրտվեց թագավորը ամբողջ զորքի հետ միասին: Սուրբ երկնավոր երրորդութեամբ քահանայապետը կրկին վերածնեց նրանց կրկնային որդեգրութեամբ. նրանք բոլորը ելան՝ լցված սուրբ հոգով: Նույն ժամանակ նրանց շնորհվեց մի երանելի մարդ, որ եպիսկոպոս էր ձեռնադրված Հոռմ քաղաքի կողմից. սա եկել էր Տրդատ թագավորի հետ այս երկնավոր բարիքներով:

Ուռնայր արքան նկավ մուտք գործեց աղվանից երկիրը, սովորեցրեց և մկրտեց նրանց առաքելական կանոններով: Բոլորը ընդունեցին երկնավոր օծումը և գրվեցին կյանքի գրքի մեջ: Հայաժվեցին այդ երկրի դեերը, վերացան զոհագործւմներն ու ճենձերահոտութիւնը, ամթով մնաց մոլորութիւնը, բարձրացավ ճշմարտութիւնը, թագավորեց աներևույթ լուսւր,

մերժվեց կամայական խավարը, հաստատվեցին եկեղեցու առաջին պաղինները, տասնապատկվեցին կալերի, հնձանների ու շտեմարանների բերքերը և բոլոր ընտանի անասունները: Նաև երկրի հողը նրան ժառանգութիւն տվեց և հաստատվեց ու տիրեց ուղիղ կարգ ու կանոն ձեր նախնիների՝ քո հոր և մեծամեծ երանելի պապերի ու տատերի օրոք մինչև քո սքանչելի տերութեան ժամանակները: Վիշապը, որ հին էր, գոյութիւն ուներ առաջին մարդու օրերից, տեսավ քո էութեան շքեազ ծնունդը՝ ա) հայրենի հավատից, բ) ահեղ վիճակից:

Չարակամ թշնամու սիրտը խիստ կասկած ընկավ, թե գուցե ինչպես որ կյանքը մուտք գործեց Աղվանք, այնպես էլ ճշմարտութեան ծնունդը և մուտքը տեղի կունենան արևելքում (Պարսկաստան): Եփոթվեց (թշնամին), տագնապահար եղավ, տարակուսութեան մեջ ընկավ ավելի, քան արգար Հորի օրերում: Հավաքեց, ի մի գումարեց իր խավարային զորքերը, հայտնեց նրանց իրեն տանող շար մուլցքը: Բոլորը սարսափեցին ու դողացին և համաձայնութեան գալով՝ ելք որոնեցին: «Աղպես տագնապահար մի՛ լինիր ինքդ քո մեջ, — ասում են, — ով քաջ. մեր մոլորութիւնը ավելի վաղ է, քան նրա ճշմարտութիւնը. տկար գազանով առաջին մարդուն հողթեցիր, այս մեծ թագավորով չե՛ս կարող երեխաներին դիմադրել»: Այս ասացին և համատարած ծովը շարժեցին քո վրա: Մրկաբեր քամիներ իջան նրա վրա, շարժեցին և փոթորկեցին նրա բազմաթիվ ալիքները: Սկսեց մոռուլ, ելնել, տարածվել, ոչնչացնել դաշտերը և լեռները: Ահավոր գազաններով, գանազանակերպ դրոշակներով, բազմաձայն փողերով, գալարափողերի գոչունով, անտառացած նիզակներով, ճառագայթող սուսերներով, ոսկյա կումբ ունեցող վահաններով, խոշոր ու հաստ մկունդներով եկան և միահամուռ քեզ վրա հարձակվեցին բազմաթիվ հեթանոս ցեղեր: Երկրայինները երկնայիններին սարսափեցնում էին, մահկանացուները կամենում էին անմահներին կորցնել, և անաստվածները ցանկանում էին քեզ՝ աստվածային շառավիղիդ, արմատից կտրել. Երկակի և եռակի անգամ պարտվեցին, բայց չամաչեցին:

Իսկ նա, որ նստում է երկինքների երկնքում և տեսնում է ամբողջ աշխարհը՝ դիտելով ու կշռադատելով բարի օրենք-

ները և նրանց, որոնք ընդդեմ են, քեզ միայն օրինական համարեց, թույլ տվեց, որ բարկ հնոցը շրջապատի քեզ: Վառվեցին, բորբոքվեցին և այրվեցին այնպես, ինչպես փշերը կրակի մեջ: Նմանվեցիր երեք մանուկներին*, հնոցի մեջ կրակի բոցը մարեցիր, կայծակների գորուծությունը վարդի փափուկության փոխեցիր, ծխի հեղձունակությունը շուշանի սպիտակության դարձրիր, կրակի այրող էությունը վերածեցիր ստեղծող ուժի, երրորդ աստծուն երկնքից վար բերիր երկիր՝ իբրև քեզ օգնական: Նրանց իմաստունները հիմարացան, նրանց քաջերը վախկոտ դարձան, նրանց սպառնալիքները դադարեցին, նրանց հերոսները թաքնվեցին, նրանց բազմությունները քաղցան:


Երանի քեզ և երանի նրանց, որ մտ են քեզ, թվով քիչ էիր, բայց բազմությունք անթիվ դարձար, սակավ էիր հայտնիներով, բայց ոչ հայտնիներով անթիվ դարձար: Քո նիզակը Հեսուի⁸¹ նիզակն է, իսկ քո սպառազինությունները աստծու սպարապետի սպառազինություններն են, քո փողի ձայնը այնպես է, ինչպես աստծու հրեշտակապետի փողի ձայնը. աստծու, որ իջնում է նրա հետ հարություն օրը: Նրա ձայնը, որ աշխարհը ցնցում է, քարերը դողացնում, գերեզմանները ավերում, մեռելներին հարություն տալիս, հնացածներին նորոգում, դատ ու դատաստան է կտրում՝ առանձնացնելով ոմանց ձախակողմը, ոմանց՝ աշակողմը: Սա աստծուն է միայն հատուկ և վայել է նրան: Իսկ քեզ, իբրև հավատարիմ ծառայի և սիրելիի ու արքայություն ժառանգորդի, տվեց երկնային շնորհներ, որ նմանվում է հարություն օրվան: Նա, որ շարով պարծենում էր, տագնապահար եղավ. նա, որ մոլորությունք էր խիզախում, հիմարացավ: Քո զորքի ամեն ինչը կրկնակի է: Եթե զրահները մարմինը պահպանելու համար էին, ապա միաժամանակ դրանք հավատի զրահներ էին. եթե սաղավարտը օգտագործվում էր սուսերից պաշտպանվելու համար, դրա հետ այն նաև փրկության սաղավարտ էր. եթե վահան ունեիր այրական լանջքը ապահովելու, նրա հետ ունեիր նաև համբերության ու հավատքի վահան. երբ նետը քո աղեղից ուղիղ թռչում էր, նրա հետ քո սուրբ աղաչանքի աղոթքները շուտ և ավելի

վեր էին գտնվում, քան երկինքը աստու առաջ. երբ քո առևական բազուկների մեջ սուսերը շողում էր, քո հավատքի լույսը հրեշտակների մեջ ցուրքեր էր արձակում: Քո դրոշակները երկնավոր դրոշակներ են և քո նիզակը ճառագայթավոր է, ինչպես արեգակի արծաթյա շողքերը:

Սա է, որ ինձ այս պատմության հենց սկզբից վախով պաշարել է, թե ինչպես կկարողանամ խոսքով պատմել այն բանի մասին, որ ավելի բարձր է, քան խոսքը: Խոսքը ի վիճակի չէ շորս նյութից կազմված աշխարհը ներկայացնելու, եվ այս ամենքին չի վիճակվում, այլ նրանց է բաժին ընկնում, որոնք ջանասիրտաբար զբաղվեցին գիտություններով, այսինքն՝ թվաբանությունք, երկրաչափությունք, աստղաբաշխությունք, բժշկությունք և այլա հասան ծայրագույն գիտություններին՝ մարգարեականին, առաքելականին, ավետարանականին, որը սկիզբն է ու ծլարձակումը: Եվ թեպետ ես ունեի նյութական երևույթները պատմող այս բոլոր արվեստները, իսկ դու մի ժամանակ նյութական էիր, բայց այժմ աննյութականներին ես նմանվում: Եթե քեզ արուսյակի հետ համեմատեմ, բայց չէ՞ որ դու ավելի պայծառ շողիր ես արձակում, քան արուսյակը: Արուսյակը վեց ամիս արուսյակություն է անում (լուսաստղի գեր է կատարում), իսկ վեց ամիս գիշերավար է (գիշերն է լույս տալիս). դու երբեմն արուսյակ ես, բայց ավելի բարձր ես, քան արուսյակը: Արուսյակը այգաբացին է միայն երևում, իսկ դու ամբողջ քսանչորս ժամ՝ տիվ ու գիշեր: Իսկ եթե լուսինը վերցնեմ իբրև քեզ օրինակ, շափազանց ծիծաղելի կլինի իմաստուններին. տարվա մեջ տասներկու անգամ վիժած, խիստ ժանգոտ, մանդաղաձև, կիսադուռ, խոնավալի, կիսալույս, հիվանդոտ, գիշերընթաց, խավարասեր, լուսաստաց, շղչանման, ընթացքի մեջ պակասավոր, կրակով տանջված, բազմաթիվ անգամ թաքնվող, իսկ դու լիալայն, բարձր, լուսանման, ավետաբեր, հրեշտակակերպ, ուրախարար, քաջալիրող, պայծառ, ավելի գեղեցիկ, քան քո բոլոր հասակակից ընկերները: Քեզ ոչ մի բան հավասար չէ. բավական է ասեմ, որ արեգակից բարձր ես գտնվում և սրանով ոչ նրան կնախատեմ և ոչ էլ քեզ կզովարանեմ, այլ նրա (արեգակի) էությունը կպատմեմ քեզ, որը շեղազնաց է, թյուրընթաց, միակողմանի:

48 208

* Տե՛ս Դան., 9, Եբբ., ԺԱ, 34:



ստվերատու, հարստացին կողմում գտնվող, ձմռանը տանջվող, քամանք կիզվող, գարնանը անձրևոտ, իսկ աշնանը երաշտա-
յին, գիշերը մտնող, առափնամածին, ծաղիկները թարշամեց-
նող, կանաչները շորացնող, միջօրեին կենդանիներին զեպի
ստվերները հալածող, ամբողջ օրը երկու մասի բաժանվող.
հուլիսը իրավացիորեն սրան Ապոլոն կոչեցին: Իսկ եթե մի
չնչին ճառագայթ մտքովդ անցկացնես, ապա դրա հետ իմացիր
և այն, որ գիշերը ծածկվում է, ամպերում թաքնվում է, փոշով
մշուշապատվում է, մրրիկներով պեկոծվում է: Դու նմանվե-
ցիր արեգակին, հորից զորացար, որդուց քաջալիրվեցիր,
սուրբ հոգուց լուսավորվեցիր, գիշերը տեսնվում ես, իսկ
ցերեկը քո հավատքի ճառագայթները թափանցում են:

Քո վերաբերյալ համեմատավոր խոսք կասեմ. ամեն կող-
մից աչք կտրեցիր. արծվից ավելի սրատես ես և ավելի արագ
լսող, քան խաղաղ անասուններից մեկը: Ոչ միայն երկիրը
տեսար, այլև՝ երկինքների մեծը. փոքրերը թողեցիր, անցա-
վորները տվեցիր, իսկ անանցը առար, դեմ նետեցիր ոսկեկուռ
թագավորությունը, և ահա քեզ համար կա և ապահովվում է
անձեռագործ պսակը, որ ընդունելու ես քրիստոսի ամենատուրք
ձեռքերից: Նա, որ ավետարանի համար թողնի հորը, մորը,
քույրերին, եղբայրներին և իր ամբողջ ունեցվածքը, այստեղ
հարյուրապատիկը և հավիտենական աշխարհի կյանքը կընդունի,
որ անանց է: Որևէ աղքատ մարդ այդ բանը դյուրություն
կարող է անել, իսկ թագավոր մարդու համար, որպիսին դու
ես, անհնարին է: Իսկ եթե որևէ մեկը անի այնպես, ինչպես դու
ինքդ արեցիր, այն է՝ մարդկանց անհավատալի, հրեշտակե-
րին զարմանալի, աստծուն նմանելի, ինչպես որ նա թողեց
հրեշտակների անհաշիվ զորքերը և առավ մարդկային փուշ
կերպարանք. քո գործը նմանվեց նրան. նաև ամբողջ աշխարհի
համար եղավ կյանք ու փրկություն, դու ևս ամբողջ աշխարհին
բացեցիր կյանքի ու փրկության դուռ: Քո բուն երկրի հավատ-
քը պահպանվեց, եկեղեցիները շեն մնացին, մատուռները խա-
ղաղության մեջ ընկան, քահանաները քահանալուծյամբ ըզ-
բաղվեցին, պատարագները տեղի ունեցան սեղանների վրա,
մարգարեները թաղվեցին ընթերցանության մեջ, առաքյալ-
ները զբաղվեցին մխիթարության մեջ, սաղմոսերգուները՝ օրհ-

նությամբ, կույտերը մնացին կուսության մեջ, եկեղեցիական-
ները՝ սրբության մեջ, և ամեն մեկը գտնվում էր իր գործի մեջ:
Քո գործունեության լուրը հասավ արևելքից մինչև Գադրոն,
հարավից մինչև հյուսիս:

Քո մարտիրոսական անունը առաքյալների և առաջին նա-
հատակների, հայրապետների և եպիսկոպոսապետների (ա-
նունների) հետ գրվեց ոսկի տախտակների վրա, միաժամանակ
նաև կյանքի գրքի մեջ՝ երկնքում: Զգո՛ւյ՛շ եղիր, ո՛վ դու սքան-
չելի, որ արժանացար այսքան մեծամեծների և բարձրացար
հասար այսքան բարձրությունների, հաստատուն պահիր
հույսի խարխիսը, անբաժան եղիր սիրուց, համբերող եղիր
ճշմարիտ հավատի մեջ, որպեսզի մեռած վիշապը պուշը շար-
ժի մեր կյանքի վրա:

Որովհետև մինչդեռ մանուկ էիր, հաղթեցիր նրան, չափահաս
դարձած, գիտեմ, որ ոտնակոխ կանես նրա շարության բուրբ
մեքենայությունները: Բայց թե ես ինչքան եմ սիրում քեզ,
եթե նարավոր լինեիր խոսքերով գրի առնել այդ, մազադաթի
համար խոշոր ծախքեր անհրաժեշտ կլինեին: Քեզ սիրելու
պատճառով շատ անգամ պատրաստվել եմ քեզ մոտ գալ, իսկ
այժմ մեր և եկեղեցու սուրբ ուխտի բարխտությունում քեզ
հանձնարարում ենք սուրբ հոգուն. տերը քեզ հետ, ամեն:

Քրիստոսի համար նահատակ, խաչին շարշարակից, հրեշ-
տակների կողմից փառատու պատմունձանով զարդարված,
դու չաբշող որդյակ իմ Վայն՝ Աղվանքի արքա, Գլուս եպիս-
կոպոսը տիրոջ միջոցով ողջունում է:

Ամոթալի ծուլության պատճառով չենք կարողանում հա-
մարձակվել մխիթարության խոսքեր ասել քեզ՝ այս աներևույթ
պատերազմի մեջ հաղթողիդ, որ ոչ թե մարդկանցից քաջա-
լիրվեցիր, այլ՝ Քրիստոսի հույժ ահավոր զորությունը քեզ
օգնության կանչելով՝ գերազանցեցիր ամբողջ աշխարհին
և ավելի բարձր երևացիր:

Բայց արդ՝ քեզ քո համեստությունով համաձայնեցնելով,
աղաչում եմ, որպեսզի իմ ողջունը հաճելի և քաղցր լիվա քեզ.
Բայց զո՛հ լինելով քո բարձրացումից, ո՛վ Քրիստոսի զորական,
ես՝ աղքատ ագետս, չունեմ գիտություն ու պատրաստություն

և ոչ էլ իմ իմացութեամբ կկարողանամ նյութ հավաքել, մի-
մյանց կցել՝ քո ազնվական գովութեան համար զգեստ հյուսե-
լու: Եթե նույնիսկ Հունաստանի բոլոր հոռետոր փիլիսոփաները
միատեղ գումարվեն, դարձյալ չեն կարողանա քո ոգեկից հաղ-
թութեանը արժանի գովասանք ասել: Որովհետև դու ասածուն
ճանաչեցիր ամբողջ սրտով սիրելով, անձով ու զորութեամբ,
ամեն ունեցվածք ու մեծություն փոխանակեցիր բոլորի միակ
տիրոջ հետ. և նրան քեզ հետ հաշտ ունենալով՝ ոչ միայն եր-
կիրք, այլև երկնքի մեծությունը առնելով՝ վայելեցիր: Հրա-
ժարվեցիր դիվամուկ հեթանոսների ճնճերահոտ զոհերից և
ահա անուշ բուրմունք դարձար Քրիստոսով, որ հասնելով
մինչև արևմուտք՝ հռչակվելով տարածվեց և ուրախացնելով
ցնծություն բերեց բոլորի հոգիներին: Քողեցիր երկրային մե-
ծությունը, որ պատճառ է դառնում մեղքերի, ժառանգեցիր
արգարությունը՝ երկնային մեծությունը հանդերձ. բոլորովին
հեռացար երկրային զվարճություններից, մերձեցար Քրիստո-
սին, որ խաղաղության նավահանգիստն է: Արդ՝ իմ խոսքերը
ամփոփելով՝ կասեմ, որ եթե մարդ էիր, այժմ եղար հրեշտակ,
ազգականներ ունեիր երկրի վրա, այժմ Քրիստոսի եղբայր
դարձար երկնքում. մահկանացու էիր, այժմ եղար անմահ:
Ոչ միայն դու ես անմահ, այլ որովհետև համարձակ ես Քրիստո-
սի մոտ, բազմաթիվ մահկանացուների կարող ես օգնություն
հասցնել:

Ցանկալի ես հրեշտակներին, փափագելի ես մարդկանց, էլ
ավելի կարոտալի ես ինձ՝ հեռացածիս, ամենաչար սատանա-
յի դեմ աներևույթ պատերազմում քեզ մարտակից շեղածիս:

Բայց ահա փոխանակ ասելու՝ աղաչում եմ քեզ, որ շար բան
չունենաս մտքումդ, չհիշես իմ ծուլությունը: Փարատի՛ր իմ
տիրությունը քո ողջունաբեր թղթով: Դու եղար Քրիստո-
սին շարչարակից, ապա նմանվի՛ր նրան ամեն բանով. որով-
հետև եթե նա իրեն խաշ հանողների վերաբերյալ աղաչում էր՝
չհիշել նրանց մեղքերը, որքան ավելի վայել է քեզ ներել իմ
ծուլությունը: Նա, որ քեզ հոգով ողջ ստեղծեց ու մարմնով՝
առողջ և արժանի դարձրեց իր որդեգրությունը, նույնը շնորհ կա-
նի մեզ՝ քեզ աշխարհում առողջ տեսնելու հոգով ու մարմնով և

վայելք ստանալ քո շնորհալի ու առաքինի կյանքի շնորհով:
Ողջ լինելով Քրիստոսի շնորհով, երկար ժամանակ մեզ համար
կլինես հոգատար և լցված Քրիստոսի սիրով. ամեն:

Ք լ ու լ խ ժ Բ

ՏՐԿԱՏԻ ՊԱՏԵՐԱԶԻՆԸ ԲԱՍԿԱՆՏԻՆՔ՝ ԱՐՔԵՅԻ ԳԵԿ ԱՂՎԱՆՔՈՒՄ,
ՍԱՆԱՏՐՈՒԿԻ՝ ԱՂՎԱՆՔԻ ՎՐԱ ԹԱԳԱՎՈՐ ԳԱՌՆԱԼԸ, ՉԱՅՐԻ
ԳԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԽՈՐՈՂԻ ԾԳՆՈՒԹՅԱՆ ԳԱԼԸ ԶՐԲՈՎ ԵՎ
ԱՂՎԱՆՔԻ ԳՐԱՎՈՒՄՆ ՈՒ ՉԱԲԱԳՐՈՒՄԸ

Հայոց Մեծ Տրդատ թագավորը զորք է հավաքում և իջնում
է Գարգարացիների դաշտը⁸³. այստեղ ծանր պատերազմով
հանդիպում է հյուսիսցիներին: Բասիլենի թագավորը, որ
մարտակից էր եղել նրան, նետում է ճուպանը քաջ Տրդատի
վրա, բայց չի կարողանում ընկճել նրան, ինքն է նրա կողմից
մեջքից շարգվում: Տրդատը նրանց (հյուսիսցիներին) շարդե-
լով բշտում է մինչև հոնների երկիրը⁸⁴. շատերը սպանվում են
հայոց զորքերի կողմից՝ բայց հայոց Արտավազդ Մանգակունի
սպարապետը մեռնում է: Այնտեղ պատանդներ է վերցնում
Տրդատը և, դաշնակցելով հյուսիսցիների հետ, դնում է պարսից
Շապուհ արքայի վրա:

Իսկ երբ Տրդատը վախճանվեց, մի ոմն Սանատրուկ Փայ-
տակարան⁸⁵ քաղաքում դարձավ Աղվանքի թագավոր և ընդդեմ
կանգնեց հայերին: Տրդատի որդի խորովը Անտիոքոսին բե-
րում է հունական զորքերով, Բագարատին՝ արևմտյան բանա-
կով. բերում է նաև վրաց թեղշխ Միհրանին: Այս բոլորի հետ
միանալով՝ խորովը շարժվում է Աղվանքի վրա: Սանատրու-
կը աղվանական զորքով շտապում է և գնում պարսից Շապուհ
արքայի մոտ՝ բազմաքանակ զորք թողնելով Փայտակարան
քաղաքում:

Անտիոքոսը առնում է մեծ ավար և արքունական հարկը,
վերադառնում է կայսեր մոտ: Սանատրուկը, ազատ ու հարմար
ժամանակ գտնելով, Շապուհի հրամանով հավաքում է Աղվան-
քի զորքերը՝ թվով մոտ երեսույն հազար և արշավում է Հայաս-

տանի կենտրոնը: Տեղավորներից մի շատ քաջ և հաղթանդամ
զորապետ զրաճաղարված թաղիքով՝ ճակատամարտում, Օշա-
կանի առաջարի մտա, առաջ է նետվում, երբ դինքով հարվա-
ծում էին, չէր ներգործում, այլ ետ էր թռչում: Այդ ժամանակ
քաջ վահան Ամասունին նայելով կաթողիկեին, ասում է.
« Օգնի՛ր ինձ » և նիզակը ուղղելով ձիու գավակին՝ գետին է
տապալում հսկա գազանին:

Գ Լ Ո Լ Խ Ժ Գ

ՇԱՊՈՒՆԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՐԱՆԵՆ ԹԱԳԱՎՈՐԵՑՆԵԼ ԵՎ
ՀՅՈՒՄԻՍՅՆԵՐԻՑ ՓՐԿԵԼ ԵՎ ԴԱՐ ՁՅԱԼ ՏԵՐԱՆԵՆ ԿՈՒՐԱՑՆԵԼ,
ՀՅՈՒՄԻՍՅՆԵՐԻ ԿՈՒՎՈՐԹՅՈՒՆԵԼ, ԱՐՇԱԿԻ ՄԱՂԸ ԵՎ ՊԱՊԻ
ԹԱԳԱՎՈՐԵԼ, ՄԵՐՈՒԹՅՆԻ ՄԱՂԸ ԵՎ ԱՅԳ ՊԱՏԵՐԱՋՈՒՄ
ՈՒՌԱՍԵՐԻ ՎԵՐԱՎՈՐՎԵԼ

Տիրանը, Հայաստանի վրա թագավոր դառնալով, Պարս-
կաստանի հետ հաշտվում է և դառնում է Եսպուհին դաշնակից
ու ազատում նրան հյուսիսցիների հարձակումից, որոնք, շրք
տարի բնակվելով Աղվանքում, անհանգստացնում էին հայե-
րին: Ապա իր շար բնավորութան պատճառով Տիրանը կուրաց-
վում է Եսպուհի կողմից, և նրա որդի Արշակը ստանձնում է
թագավորությունը: Նույն ժամանակում Եսպուհի դեմ ապրա-
տամբվեցին հյուսիսային ցեղերից (ոմանք): Եսպուհը անցնում
է Բյութանիա և շատ ամիսներ նստում է այնտեղ, բայց ոչինչ
անել չի կարողանում: Ապա ծովափին մի սյուն է կանգնեց-
նում, գլխին դնում է մի քանդակված առյուծ, որը իր թաթերի
տակ պահում է մի էգ կենդանի (մատակ): Դրանով ուզում է
հասկացնել, որ առյուծը Պարսկաստանն է, իսկ մատակը՝
Բյուզանդիան⁸⁶:

Արշակը մեռնում է, թագավոր է դառնում Պապը: Ապստամբ-
վում է Մերուժան Արծրունին՝ իր համար պատրաստելով
Աքիտոփեյի⁸⁶ կորուստը: Մեծ պատերազմ է տեղի ունենում
Պապի և Մերուժանի միջև: Այդ ժամանակ լեկացիների⁸⁷ թա-

ղավոր քաջ Շերդիրը սպանվում է Սպանդարտ Կամսարակա-
նի ձեռքով: Այնտեղ Աղվանքի թագավոր Ուռույրը ծանր վիրա-
վորվում է Վասակի որդի Մուշեղ Մամիկոնյանից: Սատկում է
ևս և Մերուժանը Ամբաստ Բագրատունի սպարապետի ձեռքով,
որը բացավառ երկաթով պսակում է նրա գլուխը՝ սուրբ ներ-
սեսի աղոթքներից:

Գ Լ Ո Լ Խ Ժ Գ

ՀԱՄԱՌԱՑ ՏԵՐԱՎՈՐԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՎՈՐԵԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ
ԵՎ ՆՐԱ ԵՐԱՆԵԼԻ ՈՐԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՄՐԱ ՇԵՏ ՎՐԹԱՆՆԻ ՈՐԴԻ
ՄԵՍ ՍԱՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԹՈՌ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԹԻ՝ ԱՂՎԱՆՔԻ ՈՒ
ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՈՒՆԱԴՐՎԵԼ ԵՎ ՄՐԵ ԱՂՎԱՆՔ ԳՅԼԸ՝
ԵՐԿՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՊԱ ՆՐԱ
ՆԱՀԱՏԱՎՈՐԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ԲԵՐՈՒՄԸ

Տիրոջ աշակերտներից Թադեոս անունով մեկը, որին,
ինչպես վերևում ասացինք, բաժին էր ընկել Հայաստանի մի
մասը, քրիստոնեություն էր տարածում արևելյան երկրի
կողմերում, երբ եկավ հռչակվելու արժանի մարտնչողը և
երիցս երանելի Գրիգորիոսը, սրան հայոց թագավոր Խաչրա-
վին սպանելու ժամանակ, երբ այս վերջինին նենգություն
սպանեց Գրիգորի հայր Անակ Պարթևը, որը և փախչելիս
Արմաշի շրերի մեջ խեղդվեց, խնամածուններից ոմանք փախ-
ցրին Հունաստան և ազատեցին: Եվ այս բանը կատարվեց
մեծ աստուճու նախախնամությունով՝ նախամարգարե Մովսեսի
օրինակով, որը եղեգնյա արկղում, շրերի մեջ ազատվեց ան-
հավատ փարավոնի ձեռքից⁸⁸, որպեսզի փրկի աստուճու ժողո-
վուրդը եգիպտական տառապալից ստրկությունից:

Այսպես էլ ամենասուրբ Գրիգորը ազատվելով հայոց նախա-
բարների սրից՝ պահվեց նույն Հայաստանի և ամբողջ արևել-
յան կողմերի փրկություն համար, նա Հունաստանում պահվեց
իրրև կապարճում թաքցված մի ընտիր նետ, որով խոցոտե-
լով սպանեց աներևույթ թշնամուն: Սրան ընտրեց (աստված)

⁸⁶ Տե՛ս Առաջ., է. 21:

⁸⁷ Բնագրում «ղևորվայցիս» մեծը թարգմանեցինք «Բյուզանդիան»:

իր մոր որովայնից և արգանդում նվիրաբերեց իբրև հաղթող առաջամարտիկ, միաժամանակ և առաքյալ ու իբրև արժանավոր քահանայապետ հանձնեց Քորգոմյան երկրին⁸⁸, Ասքանազի սերնդին:

Եվ ահա երջանիկ Գրիգորիոսը, սնունդ աննելով և ուսանելով քրիստոսական հավատի զորությունը, առաքելական և բաշխելոված համարձակությամբ եկավ ներկայացավ հայոց թագավոր Տրդատին՝ անկեղծ հավատարմությամբ և սիրով ծառայելու նրան՝ համաձայն Պողոսի խոսքի*, ըստ որի ավելի հեզ համբերությամբ պետք է ծառայել մարմնավոր տերերին, որով ծառայում ենք զորությունների տիրոջը և ոչ թե առերես ծառայությամբ ու հնազանդությամբ: Այստեղ նա երկու որդի է ունենում՝ Արիստակես և Վրթանես: Իսկ թագավորը, մոլիզանելով դեերի այլևայլ ու պղծալից պաշտամունքների մեջ, շար վիշապի օժանդակությամբ ձեռք է պցում Քրիստոսի ամենազորեղ առաջամարտիկին՝ կամենալով ծառայեցնել աստվածների աղտեղի պաշտամունքին կորստյան խորխորատում: Բազմաթիվ ու այլևայլ տանջանքներով շարժարեղով սրբին՝ շխարողացավ խախտել երանելու անասան հավատը, այլ օրավո՛ւր քաջարար մարտնչելով՝ հաղթության մրցանակ է շահում աներևույթ և երևացող թշնամու գեմ՝ Երբ ոչ մի հնար չկարողացավ գտնել՝ առաքինի մարդուն Քրիստոսի ուղիղ հավատից շեղելու, այդ ժամանակ շարի խորհրդով թագավորի շար ծառաները սուրբ Գրիգորիոսին տարան և պցեցին Արտաշատ քաղաքի անասելի խորվիրապի մեջ, որտեղ տասներեք տարի օձերի հետ միասին վայրի կյանք վարեց, մինչև որ երանելի կանայք՝ Հռիփսիմեն և Գայանեն, երեսունհինգ ընկերներով միևնույն հայոց թագավորի կողմից նահատակվեցին. և այդ երանելի մարմինները նետվեցին արևի երես:

Դրանից հետո ամենազոր աստված վրեժխնդիր եղավ երանելի Գրիգորիոսի ու երանելի նահատակներ սուրբ Հռիփսիմ-

* Պողոսը ասում է. «Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց ահւ ե զորութեամբ և միաժամութեամբ սրտից ձերոց՝ որպէս և Քրիստոսի: Եփես., 2. 5:

յանների համար և խիստ կիրպով պատուհասեց Հայաստանը: Իայց դա ոչ թե պատուհասի, այլ մեծ ողորմածության նշան էր, ինչպես որ խրատում են սիրելի որդուն և անասն անում օտարացած խորթին: Հենց նույն դեերին, որոնց նվերներով ու մատաղներով մեծարում էին, ինչպես որ թշնամու վրա են ընկնում, կատաղեցնում և կերցնում էին հենց իրենց մարմինները: Նաև նույն թագավորի մարմինն ու էությունը ի տյայնե դարձրեց, և նա փախավ եղեգնուտները: Այդ ժամանակ ահն ու երկյուզը սաստկապես բռնեց բոլորին, այնպես որ արդեն սպասում էին երկրի կյանքի վերացմանը: Մինչդեռ մեծից փոքր այս ահուղողի մեջ էին, դիշերը երազում խորովուլտ անունով մի կնոջ, որ հայոց թագավոր Տրդատի քույրն էր, երևաց ասածու ողորմածության հրեշտակը: «Դուք միայն, — ասաց, — Գրիգորի ձեռքով կարող եք հարվածներից ազատվել, այլ կերպ անկարելի է. գնացե՛ք, նրան հանե՛ք խորվիրապից»: Եվ նա զարթնելով պատմում է երազը, իսկ բոլորը, փակելով նրա բերանը, անարգում են կնոջը և ասում. «Դու նույնպե՛ս դիվահարվում ես, չէ՞ որ այժմ նրա ոսկորներն էլ հնարավոր չէ գտնել»: Եվ երբ երազը կրկնվեց ու երեքկնվեց հարվածների վտանգավոր լինելու պատճառով, թերահավատները մեր կացան և գնացին վիրապի բերանը ու հեգելով խոսեցին ասածու խոսքերով. «Դո՛ւրս եկ, եթե կենդանի ես»: Եվ նա անմիջապես հայտնում է, որ կենդանի ապրում է: Մեծ ուրախությամբ վեր հանելով բերին հայոց արքայի նոր թագավորանիստ քաղաքը: Այնուհետև դեերը ակամայից վերցնում էին մարդկանց, որ կատաղությամբ ուտում էին իրենց մարմինները և ընդառաջ էին տանում մեծ Գրիգորին: Թագավորին էլ նույնպես եղեգնուտից հանում են դեերը և բերում սրբի առջև. նա ծունր է իջնում մեծ սուրբ Գրիգորի առջև, արտասուքներով խնդրում է ամենողորմ աստծուց թշվառացած ժողովրդի համար փրկություն: Եվ հենց այնտեղ սրբի աղաչանքների միջոցով շուտափույթ ընդունում են մարմնական տանջանքների բժշկություն և սրա հետ հոգևոր լուսավորություն:

Չնայած ոչ մի տեղ չէր հայտնված երանելի կանանց, այսինքն՝ Հռիփսիմեի և իր ընկերների մասին, որ նահատակվեցին, ինքն իսկ խորվիրապի մեջ մարգարեական աչքով

տեսալ Քրիստոսի երանելի նահատակների մարտիրոսա-
թյունը և ասաց. «Մ՛ւր են սրբերի մատուցները: Իսկ մարդիկ
դարմապատ ասում էին. «Մ՛ր սրբերի մասին է խոսում»: Եվ
երբ նրանից լսեցին նահատակվածների անունները, ապա
հիշեցին և ցույց տվին ոսկորների թանկագին և ամենասուրբ
մատուցները: Գրիգորը վերցնելով դրանք՝ փաթաթում է
հենց իրենց պատառտված ղզեւտներով: Ոչ ոքի արժանի
չի անում մոտեցնել երանելիների մարմիններին, մինչև որ
մաքրված դուրս շգային փրկության ավազանից: Եվ նշխարները
թաղում է հենց նույն տեղում, որտեղ նահատակվեցին սրբերը:

Իսկ ամբողջ հայ ժողովրդին ուսուցանում, խրատում և
կնքում էր կենսատու խաչով, լուսավորում էր փրկարար ավա-
զանի մկրտությամբ և արժանի դարձնում ընդունելու անճա-
ռելի հոգու շնորհները՝ կենսատու մարմնի և տիրոջ արջան
ճաշակումով: Եվ ինքն իսկ չէր կամենում ստանձնել քահանա-
յապետության աթոռը. աստծու հրեշտակը գալիս է Մեծ
Գրիգորի մոտ և ասում է նրան. «Չպիտք է անհնազանդ լինել
և համառել համեստության պատճառով, այլ որանով պիտք է
քաջալերվել և կրկին ստանալ անանց պատիվը, որ քահանա-
յապետության համար շնորհվում է աստծուց»: Այնուհետև
ստանձնելով նաև քահանայապետությունը՝ գնում և քրիստոս-
յա է դարձնում Վրաստանն ու Աղվանքը: Մեկնում է Հարանգ⁸⁹
գավառը, ուսուցանում և խրատում է՝ պահել աստվածորդու
պատվիրանները, հիմնարկում է Ամարաս⁹⁰ գյուղաքաղաքի
եկեղեցին և նշանակում է շինարարներ ու ղեկավարներ՝ եկե-
ղեցի կառուցելու համար: Մեկնելով Հայաստան՝ իր փոխարին
օծում է Վրթանես որդուն և նստեցնում իր քահանայապետու-
թյան աթոռին: Սա լցված էր հայրատուր շնորհներով և խրատա-
կան խոսքերով: որ ուղիղ ու առաքինասեր կյանք վարելով
պատժում ու խրատում էր նրանց, որոնց բռնում էր դիվա-
պաշտական աղանդի մեջ: Հանդիմանում էր նաև թագուհուն,
նրա այլանդակ պոռնկության պատճառով: Եվ մինչդեռ Տա-
րոն գավառում նա մտած եկեղեցի՝ կատարում էր եկեղեցա-
կան արարողութուն, բազմաթիվ շար ու դիվապաշտ մարդիկ
թագուհու խորհրդով հավաքվել էին երանելի Վրթանեսին
սպանելու դիտումով: Եվ երբ վազեցին եկեղեցու գավիթը,

բարերար աստծու հրամանով դեբրի կողմից ամուր կերպով
կապվեցին ու կաշկանդվեցին, և բոլորը ոլորված վզերով
շղթայված անմոռնչ կանգնեցին, մինչև որ երանելին կատա-
րեց աստվածային խորհուրդը ու դուրս գալով՝ զարմացավ,
եվ երբ հարցրեց պատճառը, խոստովանեցին իրենց շար
մտադրությունը և թագուհու ցանկությունը: Եվ նա աղոթելով
ձեռքը դնում է բոլորի վրա, բուժում ու խրատում է, որպիսզի
այլևս չարիք չզործեն, այլ ապաշխարությամբ գտնեն ողոր-
մածութուն:

Սա ունեի երկու որդի. մեկի անունը Հուսիկ էր, որն առա-
քինասեր էր և վարքով մաքուր: Սա նույնպիսի բարեպաշտ
վարքով չավարտեց իր կյանքը: Որովհետև ստանձնելով հոր
քահանայապետական աթոռը՝ հանդիմանում էր թագավորին
նրա մեղաստիքության ու չարագործության համար. իսկ թա-
գավորը հրամայում է հենց այնտեղ, եկեղեցու մեջ քրածեծ
անելով սպանել նրան: Մյուսի անունը իր պապի անունով
Գրիգորիս էր, որն իր առաքինի կյանքով համանման և հավա-
սար էր նրան (պապին): Սա շամունացավ, ինչպես աշխարհի
կարգն է, այլ փափագում ու քաղնում էր ձեռք բերել հայրական
հոգևոր ժառանգությունը. ուստի դեռ մանուկ հասակից հրմ-
տանում էր աստվածաշնչական դրքերի ընթերցանությամբ և
մարմնական ցանկությունները մեղմում էր սլասերով ու
աղոթքներով, հոգին սիրո հավատքով լուսավորում և արա-
գորեն իր պապի՝ Մեծ Գրիգորի երկու գերաշխարհիկ բարձր
տասիճանները ստանալով կարգավորում է քահանայապետա-
կան աստիճանն ու աթոռը և կրում է մարտիրոսության բազ-
մապատիկ բարձր պսակը:

Որովհետև տասնհինգ տարեկան հասկում մանուկ Գրի-
գորիսին ձեռնադրում են Վրաստանի և Աղվանքի եպիսկոպոս,
ուր մեկնելով՝ լուսավորում է երկու երկրներն էլ ու նրանց
քրիստոնյա դարձնում: Եկեղեցիներ է կառուցում համապա-
տասխան շեների՝ ու քաղաքների, ձեռնադրում է քահանա-

* Բնագրում գրված է «քոս կարգաց և քաղաքաց»: «Նաղագաց» ձևը տեղին
չէ, ենթադրում ենք աղավաղված «աղարակաց» ձևից ու ըստ այնմ էլ թարգ-
մանում:

ներ, հորդորում է սուրբ պաշտամունքի՝ միշտ տոնելով սրբերի հիշատակը: Բարի նախանձով լցվում էր առաքելական ճշմարտության հանդեպ և կատարում էր մարմին առած աստվածորդու հրամանը, այսինքն՝ շրջում էր բոլոր հեթանոսների մեջ և մկրտում էր հանուն հոր, որդու և սուրբ հոգու: Ուսուցանում էր պահել տերունական բոլոր պատվիրաններ՝ իրենց հետ շվեբցիները ոսկի, արծաթ, պղինձ և պարկ ու ցուպ անգամ: Այդ ամենից խուսափելով՝ երանելին իր հետ վերցնում է վայելուչ և շափազանց թանկագին պաշար՝ Հովհաննեսի հոր՝ մեծ քահանայապետ ու նահատակ Զաքարիայի արյունից և մասունքները սուրբ Պանդալիոնի⁹⁰, որ դավանեց Քրիստոսի բարի դավանանքը և նահատակվեց Նիկոմիդիա⁹⁰ քաղաքում:

Ամենասուրբ նահատակների մասունքները տարավ Աղվանքի իշխանության տակ գտնվող Յրի⁹¹ մեծ քաղաքը, շինեց մի փոքրիկ եկեղեցի և մեծ զգուշավորությամբ այնտեղ դրեց Զաքարիայի արյան ու սուրբ Պանդալիոնի մասունքների մի մասը: Այդտեղ թողեց Դանիել անունով մի քահանա, որ պետք է սուրբավորեր եկեղեցուն և ծառայեր նահատակներին: Իսկ ինքը իր հետ վերցրեց Քրիստոսի պատվիրաններին հնազանդ ու բարեսեր աշակերտներին և Սուրբ Զաքարիայի ու երանելի Պանդալիոնի մասունքների մյուս մասը, մեկնեց մասքութենների երկիրը, ուր ներկայացավ մասքութենների Սանեսան թագավորին, որը տոհմակից էր արշակունիներին: Նա քարոզում էր անճառելի հրրորդության մի արարչական զորությունը, միածին որդու մարմնավոր դառնալը, բազմաթիվ և բազմատեսակ հրաշագործությունների աշխարհում կատարելը, խաչվելն ու մեռնելը, երեք օրում հարուստուն առնելը, նույն մարմնով երկինք վերանալը, նույնպես և երկրորդ զայտոյանը երևալը՝ գատելու կենդանիներին ու մեռածներին: Եվ ուրախությամբ ընդունելով՝ հավատում են ավետարանական խոսքին առաջին անգամ:

Իսկ ամենաշար պատանան, թափանցելով նրանց սրտերը, զրգոում է տիրոջ խոսքերի կենսատու պատվիրանին շնագանդվել: Սկսեցին երանելու ճշմարիտ վարդապետական խոսքերի համար մեղադրանքներ հարուցել: որովհետև նա քարո-

զելիս արտահայտում էր բարերար աստծու կամքը, ըստ սրի շպետք է ավարտություն գրավել, շպետք է հափշտակել և ոչ էլ գողանալ, այլ պետք է վաստակել ձեռքերով, վայելել մարդկայնորեն և երանելի դառնալ աստծու համար: Նրանք ասում են. «Այդ հայոց թագավորի խաբեբայությունն է, որ ցանկանում է մեզ զրկել Հայաստանի ավարից, իսկ մենք ինչով պետք է ապրենք, եթե շավարենք ու չհափշտակենք»: Ապա թագավորին ևս թեքեցին իրենց դաժան շարամուսթյանը: Այն ժամանակ բունեցին մանուկ Գրիգորիսին, կապեցին մի կատաղի ձիու պոչից և բաց թողին վատնյան դաշտը⁹², եվ այս ձևով նահատակվեց սուրբը. նրան իր աշակերտները վերցրին, բերեցին Ամարաս գյուղաքաղաքը, որ գտնվում էր Հաբանդ գավառում: Այնտեղ նրան դրեցին եկեղեցում՝ հյուսիսային կողմից բեմի մոտ: Զաքարիայի սուրբ արյունը լցրին մի ապակյա սրվակի մեջ, մի այլ սրվակի մեջ էլ դրին երանելի Պանդալիոնի նշխարները. երկու շշերն էլ տեղավորեցին ամենասուրբ մանուկ Գրիգորիոսի մասունքների հետ, իսկ իրենք փախան և իրենց գեցեցին Հայաստան: Եվ որովհետև Սանեսանը հոների բազմաքանակ ու անթիվ զորքերով արշավում էր Հայաստան, իսկ աստվածային բարերարությունը զորություն տվեց հայոց նախարարներին, որպեսզի սրանք սուրբ մանուկ Գրիգորիսի արյան վրեժը առնեն: Եվ ահա զորքերի ամբողջ բազմությունը սրածվեց իրենց ազգակիցների սրով, շմնաց անգամ մի գուժաբեր, որ գուլժ տաներ մասքութենների երկիրը:

Իսկ այդ ժամանակ Յրի անվանված բերդաքաղաքը ապրտամբվեց Աղվանքի թագավորի զեմ և ձեռք մեկնեց պարսից թագավորին: Արգեսացիները⁹³ եկան, գրավեցին քաղաքը: Այնտեղ գտան Դանիել քահանային, որ սուրբավորում էր սրբերին, որին նշանակել էր սուրբ Գրիգորիսը, և մի ճիղը մանուկ, որին քահանան գտել, քրիստոսական կնուկքով վերածնել էր: Սա ունկնդրում էր Քրիստոսի ուսմունքը և հավատալով մկրտվում է քրիստոսական մկրտությանը ու այնտեղ աշակերտում էր քահանային: Սա էլ էր կամենում խելամուտ լինել քրիստոնեության հուսթյան մեջ:

Սրկուսին էլ բունելով կապանքների ու շարշարանքների մեջ

նետեցին՝ ստիպելով մտորապաշտ դառնալ դեկրի արտեղու-
թյանը: Այժմ քր ձարողացան բոնութեամբ ուղածները անել,
համարում էին ճիշդ՝ տղային և ասում. «Ե՛րև մեր երկրի մարդ
ես, մեր կամքը կատարիր, իսկ ձեռք քեզ կմեծարենք մեր
խշխանութեան մեջ: Իսկ երանելին պատասխանեց. «Այլիկ
լավ կլինի, որ ես Քրիստոսի անվան համար քահանայից ասաց
մեռնեմ, քան թե քնակվեմ մեղավորների հարկի տակ: Ան-
միշտպես երկուսն էլ սրով պիտավեցին և ընդունեցին երա-
նութեան պսակն ու ամենապայելուչ նահատակութեան հազ-
թանակի մրցանակը իրենց հոգևոր հայր և ուսուցիչ սուրբ
հայրապետ Գրիգորիսի հետ: Սրանց ինչ-որ ասորի արեղաներ
վերցնելով տարան Հակոբ անվանված գյուղը, այնտեղ դերեզ-
ման դրեցին, իսկ իրենք նույն տեղում վանք շինեցին: Եվ
ասում են, մինչև այսօր այնտեղ են երանելիների մասունք-
ները:

Այս բանը տեղի ունեցավ Աղվանքի արքա քաջ Վաչեի ժա-
մանակ: Երանելի նահատակների ամենասուրբ մասունքները
ամուր ծածկված մնում էին մինչև երրորդ բարեպաշտ Վաչա-
գանի՝ Աղվանից արքայի թագավորութեան ժամանակները:
Որովհետև քաջ Վաչագանից մինչև Վաչեի Աղվանից թագա-
վորները թվով ինն հոգի էին, որոնց տասներորդը եղավ բարե-
պաշտ և աստվածասեր Աղվանից արքա Վաչագան թագավորը:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե

ԱՆՎԱՆԱՑԱՆԻ՝ ՆՇԱՆԱԿՎԱՅ ԻՇԽԱՆՆԵՐԻ, ՈՐԱՆՔ ՀԱՅՏԵԻ ԵՆ
ՀԱՅԵՐԻ ԵՎ ԱՌԱՆԻ ԺԱՐՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԱՉԱԳԱՆ
ՆՐԱՐՐԻՉ

Հարեթ, Գամեր, Թիրաս, Թորոս, Հայկ, Արամանյակ,
Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա, Արամ, սրա օրոք էր
Արրահամը, — Արա Գեղեցիկ և սրա օրոք Իսահակը, — Անու-
շավան, Պարիտ, Արրակ, Զավան, Փառնակ, Սուր և սրա օրոք
Հեուան, — Հավնակ, Վարտակ, Հայկակ, Ամբակ, Սահակ, Ե-
վարդ, Նորայր, Վատամ, Կար, Գոդակ, Հրանտ, Ընծակ, Դդակ,

Հորո, Զարմայր, Պերն, որի ժամանակ էր Դավիթը, — Արրանե,
Իսղուկ, Հոյ, Հուսակ, Կաշգակ, Սիսյորդի, որը թագ ստացավ
բարեկաշիների թագավորից, — Պարույր, Հրայր, Փանա-
վազ, Պաճուլն, Կոնանի, Փավոս, մյուս Հայկակը, Արվանդ
Սակավակյաց, Տիգրան: Սրանց սերունդներից Աղվանքի իշ-
խան նշանակվեց Առանց, իսկ Առանից մինչև քաջ Վաչագանը,
որ Արշակունյաց մեծ տոհմից էր, անունների թիվը հայանի չէ-
և ստույգ ինչ տոհմից են սրանք, չեմ կարող ասել: Ահա և երանց
անունները, որոնք ըստ հերթականութեան եղան Աղվանից տան
թագավորներ, քաջ Վաչագան, Վաչե, Ունույր, Հոչական,
Մերհավան, Սատո, Ասա, Նավազեն, Վաչե, ապա Աղվանքի
թագավոր բարեպաշտ Վաչագանը: Սրանցից շատերը զբիստո-
սասեր ու բարեպաշտ կյանքով ապրեցին և յուրաքանչյուրը
իր ժամանակը վերջացրեց: Սակայն սրանցից ոչ որի այնպիսի
աստվածային և հոգևոր զանձ հայտնի չեղավ ու չհանձնվեց,
ինչպես Աղվանքի բարեպաշտ արքա վերջին Վաչագանին: Եվ
պարտից արքա Պերուզի հրամանով Վաչեի կողմից շինվեց
Պերողապատ մեծ քաղաքը, որ այժմ Պարապավ է կոչվում:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ

ԱՂՎԱՆՔԻ ԿՑԱՆՔՆ ԸՒ ԿԵՆՅԱԳԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՐԳ ՈՒ
ԿԱՆՈՆԵՐԸ, ՈՐ ՎԱՉԱԳԱՆ ԱՐՔԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀԹԱՆՎԵՑԻՆ
ԵՎ ՍՐՔԵՐԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ԳՑՈՒՄԸ

Վաչեից մինչև բարեպաշտ Վաչագանը երեսուն տարի
Աղվանքը մնաց առանց թագավորի, որովհետև պարսից ա-
մենաշար և անհավատ թագավոր Պերուզը գայրացած մոլեզ-
նում էր ինչպես մի կատաղած շուն ու կամենում էր միանգա-
մայն վերացնել երկրի ամբողջ թագավորությունը, քանզի
եկեղեցիները, ջնջել թրիստոնեությունը և իր իշխանութեան
մեջ կարգել ու հաստատել մոզութեան դիվապաշտությունը,
որի համար նրա պղծակից ձեռքով Քրիստոսի բույր երանելի
և սուրբ նահատակների անմեղ արյուն էր թափվում. անթիվ
ու անքանակ անմեղ մարդիկ յարի սրով խոզխոզվում էին, այլև

կանայք երեւոյնների հետ միասին արտասովահառաջ ձայներով գերվում ու դառն ստրկութեան էին քշվում օտար երկիր: Հայոց, վրաց և աղվանից բազմաթիվ նախարարների դիվապաշտական մոգութեան մեջ քաշելով (Պերոզը) կործանեց. այդ անում էր ոմանց վրա բռնի ուժ գործադրելով, ոմանց պարզներով մեծամեծ իշխանութուն տալով: Զանազան տեղեր ատրուչաններ կանգնեցրեց, որի շնորհիվ ուժեղանում էր աղետի աստվածների կրակավառ պաշտամունքը: Եվ շարամիտ սատանայի տեսակ-տեսակ աղանդներ բազմանալով թըրք-վառացուն էին աղվանից երկրի խեղճ մարդկանց: Ամենապիղծը (պարսից թագավորը) սրանց զոյւարտում էր՝ պատեր-վակ բերելով ապստամբութունը, կապանքներով ու բանտե-րով տանջում և հարկադրաբար մոգութեան մոգում: Թագավորի դաժան և խիստ շարութեան հետևանքով նրանց հետ սկսմա-յից նաև Վաչագանը համաձայնվեց ընդունել մոգութունը, սակայն թաքուն աղօթում, պաս էր բռնում և միշտ կատարում էր Քրիստոսի պատվիրանները, մինչև որ ամենողորմ աստված լուծեց վրեժը Քրիստոսի սուրբ նահատակների արյան հեղու-մի, եկեղեցու ավերման, ծերերի ու երիտասարդների անտեղի խողխողման, կանանց ու երեխաների գերեզմանների, անմեղ հոգիների կորուստն, որ թշվառացան մոգութեամբ: Նա իբրև թաղութեան զավազան պարսից բռնակալ ու արշուներով թագավորի դեմ ուղարկեց հեփթաղներին⁹⁵, որոնք կոտորե-լով ոչնչացրին ու համահավասար ջնջեցին Պարսկաստանի անհավատ իշխաններին՝ հանդերձ խառնիճազանք ուսմիկնե-րով, անթիվ զորքերի բազմութեամբ: Եվ գուցե այս առթիվ էր մարգարեանում երջանիկ Եսային իր տեսիլքով, որ տեսավ Քաբիլոնի վերաբերյալ՝ տղի, ահա ուղղութուն անաժ գալիս են հսկաները հազեցնելու իմ ցասումը, ուրախանում, դալիս են միաժամանակ և թշնամանում: Զորութունների տերը հրա-ման տվեց բազմաթիվ ցեղերի, որ դան հեռավոր երկրից, իսկ տերը հասել է իր սպասազեններով: Ողբացե՛ք զուր՝ բոլոր պիղծ և շար զավակներդ, քանի որ մոտ է տիրոջ օրը, և աստ-ծուց կոտորած է հասել ձեզ վրա: Դրա պատճառով բոլոր ձեռ-

* Տե՛ս Եսայի, ԼԹ, 6-8.

քերը կըլվեն, և երկունքը կբռնի քեզ, ինչպես ծննդկան կանանց է բռնում. ահավասիկ տիրոջ օրը հասել է քեզ վրա, ով դու մարգախողսող, որպեսզի անասելի և անբուժելի բարկութեամբ անսերունդ դարձնի քեզ երկրում և շարութեան մեջ հնացած անձ պարսիցսող տվալաանքով իջեցնի դժոխք, ոչնչացնի քո՝ անօրենիդ հպարտութունը և անբարտավանիդ մեծու-թյունը կորացնելով գետին տապալի: Որովհետև նրանք, որոնք շար զավակի կողմից բռնվեն, կմատնվեն ամբարտա-վանութեան և միատեղ հալաբվելով՝ սրախողսող կլինեն, իսկ նրանց որդիներին նրանց առջև կսպանեն, նրանց տները ավարտութեան կենթարկեն, նրանց կանանց նրանց աչքի առջև կխայտառակեն, և նրանց տները կլցվեն աղաղակով ու զուլժով: Զար ժառանգ, քո որդիներին պատրաստիր սպան-ման քո՝ իրենց հոր մեղքերի պատճառով, որ չվերկինան եր-կիրը ժառանգեն և այն պատերազմներով լցնեն:

Կհարձակվեմ՝ նրանց վրա, — ասում է տեր Սարավովթը⁹⁶, — և երկրից կջնջեմ նրանց անունները, ցեղն ու զավակները: Թող ժողովուրդների բոլոր թագավորները, յուրաքանչյուր մարդ իր տանը պատվով քնի, և նրանց որդիները ժառանգեն նրանց թագավորութունները. իսկ դու ընկնես լեռների վրա որոյես գարշելի մեռելը սրով կտորվածների և դժոխք իջած-ների բազմաթիվ դիակների մեջ, որովհետև դու ոչնչացրիր իմ երկիրը, անողորմ կերպով կտորեցիր իմ ժողովուրդը. արդ՝ այսուհետև հավիտյան չես մնա: Դրա համար ստույգ կրկնվե-լով՝ կատարվեց այս մարգարեութունը պարսից թագավոր ամենաշար Պերոզի վերաբերյալ, որովհետև աստծու հրամա-նով հսկայաբար եկան հեփթաղները⁹⁵, որպեսզի հազեցնեն տիրոջ ցասումը: Քանի որ նախ և առաջ նրա որդիներին իր առաջ սրի բերան տվին, սպանեցին շար զավակներին, երկրի բոլոր նախարարներին, կուսակալներին, որոնց հետ նաև անթիվ զորքերի խառնիճազանք բազմութունը, և հենց իրեն՝ թագավորին, այսինքն՝ ամենաշար Պերոզին, սրով խողխո-

* Թագարում՝ սյարուցիցա:

** Տե՛ս Եսայի, ԺԴ, 22:

դեցին, որ անթիվ դիակների մեջ կորավ. էջի թաղումով անգամ չթաղվեց⁷: Չարությամբ կուտակած անբավ հարստությունը ավարելով տանում էին, նրանց կանանց խայտառակում, անգամ չէին խնայում նրանց մանուկներին և ոչ էլ խղճում էին նրանց որբերին: Եվ իրավացիորեն հագեցրին տիրոջ ցասումը, իսկ այն չարիքները, որ ամեն ժողովրդի հասցնում էր արյունարբու Պերոզը, յոթանասնապատիկ հատուցվեցին, և շարիքը թափվեց հենց իր դիակին:

Այդ ժամանակ աստծու եկեղեցին երանությամբ Կլեյց, որովհետև զայրացնող շար մանուկներին բռնելով ոչ թե քարի խփեցին, այլ թշնամիների սրի բերանին, որոնք (մանուկները) շարաշար մահով կյանքից զրկվեցին: Այլև հենց իրեն՝ պղծին, շար դավակի հետ միատեղ սրախողխող անելով դառն ու դաժան մահով վերացրին երկրից:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է

ՎԱԳԱՐՇԱԿԻ ԹԱԳԱՎՈՐԵԼ ԵՎ ՎԱԳԱՎԱՆԻ՝ ՍՐԱԽԻՑ ԱՂՎԱՆԵՐԻ
ԵՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՍՏԱՆԱԸ

Չար Պերոզի՝ դաժան մահով աշխարհից վերանալուց հետո, նրա փոխարեն թագավորում է նրա հորեղբայր Վաղարշակը: Վաղարշակն արքայի ժամանակ կատարվում է տիրոջ ասված խոսքը, թե՛ ընա, որ գործում է և ուսուցանում, աստծու արքայության մեջ մեծ է կոչվում: Հենց այս արեց աստվածասիր Վաղարշակն թագավորը: Նախ ինքը ետ կանգնեց մեղանշական արաբներից ու շար ճանապարհից, բազմազան ու բազմաքանակ բարեգործությունների կատարեց և շատ երկրորդներ դիվական, շարի հնարած պաշտամունքից ետ դարձրեց սուրբ, ուղիղ աստվածապաշտության պողոտան ու բարի քավությամբ վերջացրեց իր բարի գործունեությունը: Որովհետև իր երկրի նախարարներին, որոնք մի անգամ արդեն մոզու-

թյամբ պղծել էին իրենց հոգու բանակահույթյունը աստվածների գարշելի պաշտամունքով և մարմինները պղծալից պառկեցությամբ ցոփության մեջ էին նեղել, հորդորիչ խրատով մղում էր դեպի Քրիստոսի ճշմարտության խոստովանությունը և Աստվածաշնչի վկայաբերություններով ուսուցանում էր, որ աստվածորդի Հիսուսի հարությամբ հավաստիորեն հարություն են առնելու մեռելները, իսկ ուրացողները, շտատովանողները և անհավատ շարագործները անանց հավիտյանի դառն դատաստանին են ենթարկվելու անշեջ հրով. իսկ անքննելի աստված ճանաչողներին տրվելու են մշտնջենավոր անճառ փառքի պարգևներ և նույն աստծու կամքով հրամայել է հարություն առածներին կարգավորել: Իսկ նրանց, որոնք փրկող ավազանի շնորհը ստանալուց հետո մոլորված էին մոգության մեջ, ապաշխարությամբ վերականգնում էր. նրանց, որոնք նույնիսկ մանուկ հասակում բռնել էին կորսության ճանապարհը, հրամայում էր լուսավորել ավազանի փրկությամբ (մկրտել) և արժանի էր դարձնում աստվածորդու կենդանացնող մարմնի ու արյան ճաշակմանը: Իսկ ինքը անչափ ցնծալով ուրախանում էր ոչ այնքան թագավորության համար, որքան երկրի բոլոր նախարարների միաբանությամբ սուրբ եկեղեցու ուխտին հաղորդակից լինելով. լսում էր կենարար պատվիրանից, թե նա, որ մի ոգի ետ է դարձնում մոլորության շավղից և նրան ուսուցանում է բարեպաշտ կյանք, իր հոգին փրկում է մահից և քավում է յուր բազմաթիվ մեղքերը:

Եվ օրեցօր քաջալերվելով աստվածասեր պաշտամունքի մեջ՝ անձանձրույթ կերպով կատարում էր սրբերի հիշատակը: Այնուհետև հրաման է տալիս իր իշխանության ենթակա Արցախ անառիկ երկրին՝ թողնել և լքել դիցապաշտության օրինքները՝ աղտեղի աստվածների զոհամատուց պաշտամունքը: Չափազանց բարեսիրտ, բարեբար, աշխարհաշեն ու խաղաղասեր լինելով՝ հրաման է հանում իր թագավորության բոլոր կողմերում, ու նրանց, որոնց թագավորութունից զբրկել էր շար Պերոզը և այն իշխաններին, որոնց հայրենի ալ ընդի իշխանությունը վերացել էր, վերստին յուրաքանչյուրին վերադարձնում է նրանց իշխանությունը:

* Տե՛ս Երեմիա. ԻԲ. 18:

Այն ժամանակ, երբ Աղվանքի նախարարներին յուրաքանչյուրը ստանում է իր իշխանութիւնը, նրանք միաբանվում, վերցնում են քաջարի, իմաստուն, խոհականութեամբ հմուտ, հասակով բարձր ու վաշխուշ, Աղվանքի թագավոր Վաչի եղբոր՝ Հազկերտի որդի, իրենց հայրենի թագավորութեան ժառանգ Վաչագանին և տանում թագավոր են դարձնում պարսից Վաղարշ արքայի ձեռքով: Վերադառնալով Աղվանք՝ հարներ ու պատճառներ է որոնում, որոնցով կարողանար աստվածուհաց մոգութեան աղանդը թողնել և բացարձակ կերպով խոստովանեցնել, թե Քրիստոսը ճշմարիտ աստված է: Նաև մեծ աստծու նախախնամութիւնը ազգում է թագավորի մտքի վրա. պարսից Վաղարշակ արքան հրամայում է, որ ամեն կրոն կարող են դավանել ըստ իրենց կամքի ու ցանկութեան. չպետք է ոչ ոքի նեղելով վերադարձնել մոգութեան: Բարեպաշտ ու աստվածասեր Վաչագան արքան այս լսելով անշափ խնդրութեամբ ու բերկրանքով դիմում է աստծու եկեղեցուն և շատ աղոթքներով ու արտասուքներով դավանում է մշտնջեննավոր ու անճառ սուրբ երրորդութիւնը և շատ աղաչանքներով խնդրում է եպիսկոպոսին, քահանաներին, անպատականներին ու եկեղեցու բոլոր կրոնավորներին՝ իրեն ցավակից և աղոթակից լինել, որպէսզի հաշտեցնեն ամենողորմ աստծուն: Եվ ինքը նվիրվում է պահքի ու աղոթքների, ազքատներին առատորեն ողորմութիւն է բաշխում՝ աչք տալով հրանելի Պետրոսին, որ ուրացութիւնից հետո կարողացավ առաքյալների գլխավոր և միաժամանակ փակակալ ու երկնքի արքայութեան իշխան լինել⁶⁰: Եվ հետո՝ տիրոջ աղաչաներից մեկը թերահավատ դարձավ, այնուհետև տեր և աստված պաշտելով՝ անցավ առաքյալների կարգը: Ուրիշ շատ շատերը ծայր աստիճան մեղանշելով, երբ բարեպաշտ դարձան, ժառանգեցին մշտնջեննավոր և վաշխուշի արքայութիւնը: Բարեպաշտ Վաչագան թագավորը հենց դրանց

հետևելով իրեն սրբազործից հավատքի և առ աստված անկեղծ դարձի բարեպաշտութեամբ: Սա նաև այլ երկրների համար դեպի բոլորի աստված Հիսուս Քրիստոսը դարձի բժշկեց եղավ և ազատեց աստանայի ծանր գերութիւնից. որովհետև հենց այն բժիշկն է հմուտ ու ավելի տեղյակ բժշկութեան գործին, որ իր մարմնի վրա ստացել է սրի ծանր վերք ու առողջացել է բժշկական բազմաթիվ դեղամիջոցներ ընդունելով, նույն դեղերով նաև այլ վիրավորների կարող է շուտափույթ առողջացնել: Այսպես էլ, երբ մեղանշած մեկը ամբողջ սրտով ուղղվում է առ աստված, հոգու առողջութեան համար ապաշխարութեան բուժաղեղ է ընդունում նույն կենսաբեր դեղով՝ խոստովանութեամբ ու ապաշխարութեամբ կարող է նաև ուրիշների հոգիները առողջացնող ու նորոգող, մարմինները անմահացնող լինել և դառնալ ամբողջովին սուրբ ու ամենապարկեշտ քրիստոնեութեան պաշտամունքին: Խիստ պատժում և տուգանում էր նրան, ով բազին էր կառուցում ու կախարչութեամբ զբաղվում, և կամ նրան, ով աղտեղի աստվածներ էր պաշտում ու քրիստոնեական օրենքները լրիվ և հաստատուն կերպով չէր պահպանում: Մեկ-երկու անգամ խրատելուց հետո, երբ կախարչները, գյութողներն ու քուրմերը զբաղվում էին միևնույն չար գործով, այդ ժամանակ ծանր տանջանքներով, գանահարութեամբ, կապանքներով պալատ էին հասցվում և ծանր պատիժ կրում: Այնուհետև կախարչներից, գյութութեամբ զբաղվողներից, քուրմից ոմանց անդամալուծ անելով, ոմանց աքսորելով, ոմանց ստրկացնելով, իսկ շատերին էլ խրատելով ու քրիստոնյա դարձնելով՝ աստվածապաշտութեան ճանապարհի համար ուսյալ մարդկանց էր վերածում: Բազմաթիվ տեղերում նշանակում էր եպիսկոպոսներ, քահանաներ, տեսուչներ: Եվ կամբեղում⁶⁰, Աղվանքում միևնույն հրամանն էր տալիս ու հաստատում: Այսպես եպիսկոպոսները, քահանաները, սարկավագները և եկեղեցական ամբողջ միաբանութիւնը մեծարվում ու հարգվում էին բարեպաշտ Վաչագանի թագավորութեան ընթացքում:

⁶⁰ Պետրոսը, ըստ ավետարանի, երեք անգամ ուրացավ քրիստոսին, բայց ներվեց և հետո դարձավ արքայութեան ղեկավար: Տե՛ս Մատթ., 12, 74, 75, Մարկ., 8, 29, Յովհ., 6, 9, 87, 38, ԻԱ, 45—48:

ԿՈՒՆՐԱԿՆԵՐԻ ԶՐԱՄՆՈՒՆՎ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՅՄԱՆԻ
ԿՈՂՄԻՑ ԳՊՐՈՑՆԵՐ ՔԱՆԱԼՈՒ, ՄՈՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՊԻՂՍ
ԱՂԱՆԳԸ ՉՏՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՉ ԱՂԱՆԳԱՊՐԵՐԻ ՎԱՅՄԱՆԻ ՄԱՍԻՆ

Անտժու կողմից փառավորված այդ Վաչագանը հրամայում է՝ հավաքել կախարդների, դուռնիների, քրմերի, մատնահատների, դեղատուների մանուկներին, տեղավորել զբոսայգիներում, ուսուցանել աստվածային գիտությունը, տեղեկացնել քրիստոնեության վարք ու բարքին, սրանց հաստատ պահելու երրորդության հավատքի մեջ և իրենց կոապաշտ հայրական ազգը ուղղելու դեպի քրիստոնեությունը: Մանուկներից շատերին հավաքում է իր սեփական մուտակ⁹⁷ կողմից գյուղը, նշանակում է թոշակներ ու զրանց վրա դայրապետներ. հրամայում է զրանց վարժեցնել և հմուտ դարձնել քրիստոնեական կարգ ու կանոնին: Եվ երբ ինքը գյուղ էր գալիս սրբերի հիշատակը տոնելու համար, նստում էր դասարանում, կախարդների ու քրմերի որդիներին իր շուրջն էր հավաքում: Մեծ բազմությունը հավաքում էր շուրջանակի, որոնցից ոմանք գրքեր, ոմանք պնակիտ* էին ունենում ձեռքներին: Հրամայում էր, որ բոլորը միասին միաձայն կարդան. իսկ ինքը նրանց մեջ ուրախանալով պարծենում էր՝ դա համարելով իր համար սրպես գյուտ, մի ինչ-որ մեծագույն պարգև:

Այլև ձեռնարկում էր քննության ենթարկել մատնահատության և դեղատվության աղանդները, որոնք երկուսն էլ մարդասպանության աղանդներ էին: Մինչդեռ այս քննության մեջ էր, մարդասեր աստված կամեցավ հայտնել սրան և աստվածասեր թագավորի միջոցով երկրից վերացնել շար աղանդը: Որովհետև, ինչպես լսել էր Վաչան, այս շարագործությունը Աղվանքում կատարվում էր երկար ժամանակից ի վեր: Իսկ Աղվանքի նախկին թագավորները շարագանքն քանել և

կամ թե անուշադրության էին մատնել: Իսկ պարսից անիծված ու շար մարդկանները շատ անգամ նրանց բռնում էին. բայց, կաշառքներով կուրացած, աղաս էին արձակում:

Իսկ մի անգամ, երբ Կուր գետի ափին մի ապահով անտառում իրենց մատնահատության շար գործողությունն էին կատարում, այսինքն՝ շորս բթամատերը ամուր կապած շորս ցցերից մի մանուկ կենդանի-կենդանի քերթում էին, այնպես եղավ, որ մի այլ պատանյակ հենց նրանց մոտից ճանապարհով անցնում էր. հառաչանքների վրա ներս է մտնում և տեսնում է մարդախոշոռների ոճիրը. իսկ նրանք հետամտելով տղային՝ կամենում էին նրան ևս բռնել: Բայց նա փախչում է և իրեն նետում Կուր մեծ գետը. այնտեղ՝ գետի մեջտեղում, կղզու վրա մի ծառ է պատահում. լողալով անցնում, բարձրանում է ծառը՝ այնպես անհելով, որ շարագործները չմտնան: Նա, լավ ուշադրություն դարձնելով, ճանաչում է այդ մարդկանց: Այդտեղից դուրս գալով անցնում է Կուր մեծ գետը ու գալիս, շուտափուլթ թագավորին պատմում է:

Թագավորը, այս լսելով, աղոթք է անում, զոհություն հայտնում մարդասեր Քրիստոսին, հրամայում է եկեղեցու միաբանությանը պաս պահել և պաշտամունք կատարել աստված՝ խնդրելով, որպեսզի շար գիվապաշտությունը հայտնաբերվի ու վերացվի երկրի երեսից: Որովհետև սատանան այնպես էր իր շար սպասավորների ուշ ու միտքը առել, որ ոչ մեկը չէր կարողանում շար աղանդի մարդկանց խոստովանեցնել: Այդ ժամանակ թագավորը հրամայում է բռնել այն մարդկանց, որոնց հենց խոզխոզման ընթացքում տեսան և բազմաթիվ այլ մարդկանց, որոնց ըստ լուրերի ճանաչում էին. սարսափելի ծեծով ու դաժան տանջանքներով փորձության ենթարկեցին դրանց, բայց չկարողացան խոստովանեցնել շարագործներին. ապա բարկ քացախ ու բորակ խառնեցին միմյանց, պսակեցրին շարագործներին, ու թագավորը հրամայեց լցնել քթանցքերից այնքան, մինչև որ աչքները ամբողջովին շրջվեցին ու երևացին սպիտակուցները, սակայն այդ դաժան տանջանքների մեջ էլ հրաժարվում էին և ուրանում՝ չխոստովանելով:

* Պնակիտը տախտակ էր, որի մի երեսը պատում էին մսով և սրածար ձողով գրում էին վրան. ապա հարթելով երբից էին գրում և այդպես շարունակ:

Բայց քանի որ աստված նպաստել էր թագավորի միջոցով, ինչպես որ ասվեց, երկրի երեսից վերացնել շար ազանդը, թագավորը մտածեց խոհեմությամբ խոստովանեցնել: Հրամայեց բոլորին բերել գլխատման վայրը. նրանցից մեկին, որ տարիքով ամենից կրտսերն էր, բերել տվեց իր առջև ու ծանր երգում տվեց, թե. «Թույլ չեմ տա քեզ սպանել, եթե ճիշտն ասես ու հավաստի կերպով ցույց տաս եղիութիւնները»: Պատանին գլուխը կախ գցեց ու սկսեց պատմել շար ազանդի էութիւնը: Ասում է. «Ինք երեսութեան մարդու կերպարանք է առնում ու հրամայում է բաժանվել երեք խմբի, յուրաքանչյուր խմբից երեք մարդ բռնել ու ո՛չ վիրավորել, ո՛չ էլ սպանել, այլ կենդանի-կենդանի մաշկել. նախ պետք է կտրել աչ ձեռքի բութ մատը ու քերթելով մորթու հետ տանել կրծքով ու ձախ ճկուլթից հանել, և ապա կտրել ձախ ճկուլթը: Ներքևում նույնպես պետք է անել և ոտքի մատները, քանի դեռ մարդը կենդանի է. ապա պետք է սպանել, մորթին հանել, ծալել ու դնել կողովի մեջ:

Եվ հրք գալիս է շար պաշտամունքի ժամը, շինում են երկաթե ծալածո աթոռ՝ ոտքերը մարդու ոտքերի նման, որը հենց բերեցին, և շատերս տեսանք. աթոռի վրա դնում են ինչ-որ թանկագին հագուստ: Ինք գալով հագնում է այդ հագուստը ու նստում է աթոռին: Վերցնելով մարդկային զոհը՝ մորթին մատների հետ միասին տեսնում է: Իսկ եթե չին կարողանում սահմանված կարգը կատարել, հրամայում է հանել ծառի կեղև, և արջառ կամ ոչխար մորթելով նրա առջև մատող են անում. նա իր շար գործակիցների հետ ուտում խմում է. և մի ձի թամբած, սանձած, կազմ ու պատրաստ պահում են. հեծնում է ձին ու արշավում է այնքան ժամանակ, մինչև որ ձին կանգ է առնում. դրանից հետո ինքը չքանալով անհայտանում է: Այսպես կատարում է ամեն տարի: Ապա նա մատնացույց է անում շար ազանդի անդամ տղամարդկանց ու կանանց, որոնցից ուրիշներն էլ գալով նույն բանը խոստովանում են: Իրանից հետո թագավորը ասում է նույն մարդուն, որ այս ամենը պատմեց, թե «քեզ կյանք կշնորհվի ըստ այն երգումի, որ ես տվեցի, բայց ահա ինչպես որ գրանք ուրիշների վրա

էին կատարում գործողութիւնը, դու նույնպես պետք է գրանց վրա կատարես: Թագավորից հրաման ստանալով՝ խուռն բազմութեան առջև, իրենց օրինակով նրանց վրա կատարում է այդ գործողութիւնը: Եվ ինչպես խոստովանեց, նույնպես կատարեց նրանցից շատերի վրա արքայական բազմաթիվ բանակի առջև, իսկ նրանցից մի մասին՝ յուրաքանչյուրին իր գյուղում, իր ընտանիքի ներկայութեամբ, սպանել տվեց: Բոնեց նաև շատ ղեղատունների ու հրամայեց սպանել, որովհետև կար նաև պաշտամունքի այդպիսի ազանդ, ըստ որի, դեք հրամայում էր տարեկան մի մարդու ղեղ տալ ու մեռցնել. իսկ եթե ղեղատուն ուրիշ մարդու չէր կարողանում ղեղ տալ, դեռ այնքան էր նրան ստիպում, մինչև որ յուրայիններից մեկին էր տալիս մահացու ղեղը:

Կային դիվապաշտութեան այլ ազանդներ ևս: Նրանց, որոնք ծուլանում էին շար պաշտամունքը կատարել, մի դեք կուրացնում, իսկ մյուս դեք բոլոր էր դարձնում: Եթե որեւէ մեկին կախարգութեամբ մատնում էին շար դեերին, կուրութեան, բորոտութեան նույն պատուհասը զրո վրա էին թափում: Թագավորը գրանց ձեռք գցելով դաժան տանջանքներով վերացրեց երկրի երեսից: Թե՛ ավազակներին և թե՛ բոլոր վտանգավոր մարդկանց վերացրեց Աղվանքից ճիշտ այնպես, ինչպես ուժեղ ու արի մշակը չերմ սիրով խնամում է արտերը՝ փուշն ու որոմը քաղհանելով, բարի սերմեր սերմանելով ու տարածելով, որպեսզի երեսնապատիկ, վաթսուհապատիկ և հարյուրապատիկ պտղաբեր դարձնի: Այնժամ կարող, առատածեռն ողորմած աստված նայելով այս մարդու բարքերի անչափ ազնվութեանը ու տեսնելով, թե ինչպես հոգատար է աստվածային կամքի կատարման նկատմամբ, այնուհետև շնորհեց նրան, ուր որ հողոտ և անպատում ծածկված գոնձ կար, այսինքն՝ Քրիստոսի ամենասուրբ նահատակների մատունքները:

ՅՐԿԱՆՎԱԾ ԶԱՂԱՅՐՈՒՄ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ՔԱՂԱՅՐՈՒՄ
ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ԵՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԿԱՎՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՊԵՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՒՅ ԾԱՆՈՒԿ ԳՐԻԳՐԻՍԸ ՏԱՐԵԼ ԷՐ ՃԻՂԵՔ

Յրի անվանված քաղաքում՝ այն տեղում, որտեղ Փրիստոսի երանելի նահատակների մասունքներն էին գտնվում, տեղի էին ունենում բազմաթիվ հրաշագործություններ: Բայց «չ որի հայտնի չէր սրբերի մասունքների տեղը: Եվ չնայած այն երկրի բնակիչները հեթանոսներ էին, բայց և այնպես շիրմոգներն ու հիվանդոսները հող էին վերցնում եկեղեցուց, ուր գտնվում էին սրբերի մասունքները: Կատարվում էին զարմանալի բժշկություններ, թեպետև բարբարոսներ էին: Իսկ պարսկական ամենաչար լուսթյան պաշտամունքը միշտ թշնամի էր աստծու եկեղեցուն. մի պարսիկ մոգ մտնում է եկեղեցին, ուր գտնվում էին այս մասունքները. որպեսզի ծաղր ու ծանակի են թարկի, կամենում է իր բնական պահանջը կատարել. հենց որ վարտիքն արձակում է, աղիքները վայր են թափվում և շարաշար տանջանքներով մեռնում է:

Հոների Հունան եպիսկոպոսը՝ չափազանց ճշմարտամիտ մի մարդ, որ մասքութենների երկրում էր, պատմեց այս հրաշագործությունը, որին հենց ինքը ակնատես էր եղել: Իսկ Հակուում⁹⁷, որտեղ գերդեսացի պարսիկի առչև Յրի քաղաքում նահատակված երանելի վկանների, այսինքն՝ Յրիի գլխատված և Հակու բերված քահանայի ու ճիղք՝ մանկան մասունքներն էին գտնվում, Հակուր անունով վանական մի քահանայի գիշերը երազում հայտնվում են լուսավոր կերպարանքով փառավոր մի այր և մի այլ մանուկ, նույնպես ահազգու կերպարանքով, որանք ասացին. «Գնա՛ Յրի Աղվանքի իշխան, քաղաքի կառավարիչ Խոնկորիկի մոտ. մենք նրան էլ այդ երազը ցույց կտանք: Մենք եկեղեցու մեջ անարատ ենք, հաննք գու և նա»: Քահանան ուշադրություն չի դարձնում. նա

⁹⁷ Բնագրում «Ճիլք» է, բայց ըստ մյուս գործածությունների պարձնում ենք ճիլք:

կրինում, երեքինում է միևնույն երազը, բայց սա հետաձգելով՝ անուշադրություն է մատնում: Եվ նա չի հիշում, մինչև որ մերձիմաս հիվանդանում է: Միևնույն մարդիկ մեծաշուք ու լուսավոր կերպարանքներով եկան և առաջին քահանային. «Ինչո՞ւ ես մեռնում, գիտե՞ս, թե չգիտես»: Նա պատասխանում է, թե՛ տյարբ: չգիտեմ: Իսկ նրանք ասում են. «Քանի որ համաձեռով անուշադրություն մատեցիր ու զգնացիր Յրի Խոնկորիկի մոտ՝ մեր մասունքները այնտեղից վերցնելու, ահա և այդ պատճառով մեռնում ես»:

Եվ քահանան աղաչելով՝ բժշկություն է խնդրում, ասելով. «Շտապ կգնամ և կկատարեմ ձեր հրամայածները»: Նրանք ձեռք դրեցին նրա վրա ու անմիջապես բուժեցին: Առողջանալով՝ վեր կացավ, գնաց Յրի քաղաքը: Այնտեղ գտավ քաղաքի կառավարիչ Խոնկորիկին. սա ոչ մի հարցաքննություն չենթարկեց, այլ ընդունեց որպես աստծու մարդու: Եվ որովհետև երազում ասել էր, թե Խոնկորիկին նույնպես ցույց կտա երազը, քահանան այդ մասին ոչ մի խոսք բաց չարեց: Եվ երբ նա ընթրեց, վեր կացան. քահանան երկու այլ քահանաների հետ, որոնք կառավարիչի մոտ էին, գնաց, եկեղեցու մեջ, իսկ Խոնկորիկը երկու պատասխանների հետ գնաց իր վանքը: Նույն մարդիկ երկու ահավոր կերպարանքներով եկան ու ասացին Խոնկորիկին. «Վե՛ր կաց, գնա՛ եկեղեցի, սրբեք այնտեղ են, գու և քահանան միասին հանեք»: Նա, զարթնելով քնից, ասում է. «Այս նշանակում է, որ վաղաժամ եմ եկել, երազը այդ պատճառով է»: Դարձյալ նեղում է և անմիջապես բուն է լինում, ու կրկին միևնույն տեսիլքը երևում է: Նրանք ասում են. «Ո՛ր թե նրա համար ասացինք, որ վաղաժամ ես եկել, այլ մեր մասունքները եկեղեցում են, գնա՛, գու և քահանան հանեք»: Եվ սոսկալի երկյուղի մեջ զարթնում է, դարձյալ քաղցր բուն է մտնում: Երրորդ անգամ նույն լուսազգեստ մարդիկ գալիս են՝ շատ պայծառ կերպարանքով շքեղացած ու ասում են. «Վե՛ր կաց, գնա՛՝ եկեղեցին և այնտեղ եկեղեցու մեջ կտեսնես մեծ լույս: Նայի՛ր և ուշադիր եղիր լույսի նկատմամբ, ո՛ր տեղում լույսը կենտրոնանա, հենց այնտեղ էլ գտնվում են մեր մասունքները»: Միևնույն երազը նույն ժամին՝ կրիք անգամ երևում է քահանային: Այդ ժամանակ քահանան

վեր է կենում, եկեղեցուց դուրս է գալիս Խոճկորիկի մոտ գնալու, իսկ Խոճկորիկն էլ գալիս է քահանայի մոտ՝ երազը պատմելու նպատակով: Իրար հանդիպելին և երկուսն էլ խոստովանեցին, որ միևնույն նպատակով են եկել, ու երազը պատմեցին միմյանց: Այնուհետև Հակոբ քահանան, Խոճկորիկ անունով իշխանը, կառավարիչի հետ եղած մյուս երկու քահանաները ու իրենք իրենց կենարար խաչի նշանով խաչակնքած պատանիները դիմում են եկեղեցին: Երբ մտան եկեղեցու գավիթը, (տեսան) արտաքին դուռը խաչ ունեւր, այնտեղ երկրպագեցին խաչին ու նայեցին տեսան եկեղեցու մեջ սարսափելի ուժեղ լույս կա: Խիստ վախեցան, խաչի առջև ընկան երեսնիվայր ու չէին կարողանում իրենց գլուխները բարձրացնել և նայել երևացող նորահրաշ լույսին: Մի սաղմոս երգելով՝ կամեցան վեր կենալ, բայց չկարողացան. ասացին երկրորդ սաղմոսը, բայց այս անգամ էլ չկարողացան. իսկ երբ երրորդ սաղմոսը երգեցին, ամենազոր ասածուց օգնութիւն հասավ, կարծես թի մեկը եկավ ու բոլորին ոտքի կանգնեցրեց: Եվ նրանք, բարձրալի շնորհներից զորութիւն աննելով, մտան եկեղեցին, որ լցված էր ամենապայծառ լույսով. մինչև առավոտ պաշտամունք կատարեցին: Իսկ այգաբացին ամբողջ լույսը սկսեց հավաքվել բեմի վրա և գնալով խոսացավ ա՛յն տեղում, ուր Քրիստոսի երանելի նահատակների ամենասուրբ մասունքներն էին: Լույսը նվաղման ընթացքում նրազի նման մերթ վառվում էր, մերթ հանգչում այն տեղում, ուր սուրբ մասունքներն էին գտնվում, մինչև որ նկատեցին տեղը: Ապա բանալով գտան երանելիների մասունքները. և սրբերի մարմինները ամփոփող պարկի վրա կար մի գրութիւն հետևյալ ձևով. «Ծ» Գրիգորիսս, բերեցի այս սրբերին՝ Հովհաննու հայր երջանիկ Զաքարիային, Քրիստոսի մեծ նահատակ երանելի Պանդալիոնին, որ նահատակվեց 'նիկոմիդիա քաղաքում. ես նույնպես հենց այստեղ վախճանվեցի»: Գուրս բերելով լվացին ու անուշահոտ յուղերով օծեցին սրբերի նշխարները: Խոճկորիկը կնքեց իր մատանիով, իսկ ինքը հեծավ մի դիդեցիկ երիվար և շտապեց հասնել բարեպաշտ վաչազանի մոտ, որպեսզի պատմի հրաշալիքների հայտնաբերումը:

Իսկ աստվածասեր թագավորը մեծ ցնծութիւնով ուրախացավ. աղոթքներ էր անում ու բարեբանութիւն մատուցում մեծ աստծուն, գոհութիւն էր հայտնում մեծազուն պարգևները տվողին: Անմիջապես տեղիւնտեղը հավաքում է եպիսկոպոսներին, վանականներին, անապատականներին և տեսում է սրբերի հիշատակը, առատ ողորմութիւն է բաժանում աղքատներին, եպիսկոպոսներին, քահանաներին հագցնում է թանկարժեք հագուստներ: Իսկ իր պալատական քահանա Մանասին, որ մի շափազանց վստահելի մարդ էր, իր սպասավորների հետ ուղարկում է, որպեսզի շուտափուլէ՛ր կերպով իր մոտ բերին նահատակների ամենատուրբ ոսկորները: Եվ երբ սրբերը ժամանում էին, ընդառաջ է ելնում ինքը՝ թագավորը, թագուհու հետ միասին հետիոտն, բազմաթիվ սպասավորներով, տերունական պայծառ խաչով, խունկերով, գունչզուլն ծաղիկներով ու ժողովրդի անթիվ բազմութիւնով՝ հոգևոր երգերով Քրիստոսի առաքինասեր նահատակների առիթով օրհնելու և փառավորելու Հիսուս Քրիստոսին՝ ճշմարիտ աստծուն:

Այնուհետև արքայական տեսակ-տեսակ հանդերձներով փաթաթում է սրբերի անշունասափորը, զարդարում է ոսկով, արծաթով ու թանկագին ակներով: Հրամայում է փայտեց պատրաստել մի ծալովի սենյակ, պատել շիկակարմիր մորթիով և սպիտակ կերպասով, ներսում սրբերի հանգստարանն ու բոլոր ամփոփարանները զրկազարել: Աղվանքի Շուշանիկ թագուհին, որ շափազանց հավատացյալ և բարեսիրտ մի կին էր, հրամայեց իր մեծ վրանը սրբերի շիկակարմիր սենյակի վրա եկեղեցու ձևով խփել, ուր պալատականները, թագավորը և ժողովրդից շատերը ներսում էին լինում: Վրանը շոգ եղանակներին սուրբ սենյակը զով, իսկ խոնավ եղանակներին չոր էր պահում: Վարագուրածև կերպասով մեծ վրանը շրջափակեց, ուր թագավորական բանակը ներս էր մտնում պաշտամունքի ժամին և ամենասուրբ խաչի ու Քրիստոսի երջանիկ նահատակների առաջ երկրպագում էր աստծուն և ունկնդրում աստվածաշնչական գրքերին:

Եվ որովհետև միշտ իր հետ ման էր տալիս երանելիների

մատուցները, հրամայում է սրբերի համար կառք պատրաստել, որը նույնպես շիկակարմիր մորթիներով պատում է, սպիտակագույն թանկագին կերպասով պատտառում, և թանկարժեք քարերով զարդարված մի ոսկե խաչ, որի վրա ոսկեքանդակ տառերով թագավորի անունն էր գրված, կառքի վրա ամրացնում են, և արքունական թագի գույնզգույն կերպասներից պատրաստած խաչվառները փողփողալով շողում էին, իսկ պալատական ախոռից ընտրում է սպիտակ ձիեր, որոնք իրեն խիստ գուր էին դալիս և լավագույնն էին թվում: Ձիերի պոչերը կարմիր ներկով պատրաստել է տալիս և սրբերի կառքի ու ձիերի խնամքի համար սպասավորներ է նշանակում: Կառքի վրա ոչ մի բան չէր լինում, բացի սրբերից ու ավետարանից՝ հանդերձ աստվածաշնչական այլ գրքերով: Հրամայում է պատրաստել նաև սպիտակ եզներով լծված մի սալ, որպեսզի սրբերի վրանը բարձի. պալատում պահում էր բազմաթիվ քահանաներ, սարկավազներ, զրակարդացներ, սաղմոսերգուներ, որոնք միշտ դիշեր-ցերեկ պաշտամունք մատուցելով՝ սպասավորում էին սրբերին: Եվ երբ բանակը շարժվում էր, նախապես սրբերի կառքը առաջ էր ընկնում, որը ծածկված էր սպիտակ կերպասով՝ վրան ոսկե խաչ՝ թագավորական թագով, գույնզգույն մետաքսների փողփողումով, սպիտակ ձիերով, կարմրագույն ընդելուզված կերպասներով: Թագավորական ձիերի գլուխները զարդարված էին պսակներով, բազմաթիվ սպասավորները կառքի առջևից ու հետևից ընկած, խաչերը ձեռքներին, սաղմոսանվագ երգերով միաբերան փառավորում էին երրորդության համագործությունը:

Ապա սրա հետևից զնում էր թագուհու կառքը և նրա հետ կանանց խումբը: Երբ կամենում էին հանգստանալ, նախ պատրաստվում էր ոսկե խաչը՝ վրան սրբերի շիկակարմիր սենյակը, ապա սրա վրա խփվում էր սպիտակ մեծ վրանը, ուր գալով կրոնավորները մեծ զղուշությամբ, ամենաբուրավետ ծուխ արձակող խոտիկներով ու քաղցրաձայն սաղմոսանվագ երգերով մտնում էին հանգստարանը: Դրանից հետո պատրաստում էին թագավորական վրանը և զանազան սպասքներ: Ինքը՝ թագա-

վորը, թագուհու հետ և ամբողջ բանակով գիշեր-ցերեկ աղոթք էին անում ու փառարանում սրբերին: Եվ որովհետև աստվածասեր ու բարեպաշտ Վաչագան թագավորը երեխա չուներ, գտնականների միաբանութունը սրբերի միջնորդությամբ պալատում էր ասածուն, որպեսզի աստված նրան արու զույսկ պարզեի: Եվ մարդասեր աստված, այսինքն՝ բարիքների մատակարարը, լսելով նրանց աղոթքները՝ շնորհեց նրան արու դավակ: Սուրբ նահատակների միջոցով աստծուց խնդրությամբ ընդունեց այդ պարզը: Երեխայի անունը Պանդալիոն դրեց՝ Քրիստոսի պատերազմող նահատակ Պանդալիոնի անունով ու հրամայեց մանկանը դաստիարակել աստծու երկյուղածությամբ ու Քրիստոսի ամենասուրբ նահատակների առջև միշտ երկրպագելով:

Եվ երբ բարեսեր թագավորը ընթրում էր, հրաման էր տալիս արքունական սպանեղենից մի սափոր լցնել արքայի խմելու գինուց ու արքունական սեղանի առջև միշտ զնել երկու արծաթյա շատ մեծ սեղաններ, որոնք լցված լինեին թագավորական հացով: Մի սարկավազ կանգնում էր պալատական սեղանի առջև, և ինչ որ սեղան էր բերվում, բոլոր խորտիկներից վերցնում զնում էր սեղանի վրա: Իսկ երբ թագավորական ընթրիքը վերջանում էր, այդ ժամանակ սարկավազը ամեն ինչ առնում ու բաժանում էր աղքատներին: Երբ ամեն կիրակի պատրաստվում էին աստվածային պատարագ կատարելու ու բազմաթիվ ժողովրդի առջև կարդում էին կենարար ավետարանի խոսքերը, իրավունք չունեին դատարկաձեռն լինել, և ինքը՝ թագավորն էլ դատարկաձեռն չէր գնում ավետարանին ողջունելու: Եվ իսկապես նա միշտ կաշկանդված էր Քրիստոսի երկյուղով ու ջերմեանոց սիրով միշտ պաս էր պահում ու աղոթք կատարում թագուհու և ամբողջ արքունիքի հետ. անձանձորութի կերպով տոնում էր սրբերի հիշատակը՝ հորդորելով բոլորին զեպի Քրիստոսի հավատքը: Ուրախանալով միշտ լցվում էր Քրիստոսի հանդերձյալ հույսով, նախալույս մնայուն անանց բարությամբ:

ԱԶՎԱՆՔԻ ԿԱՔՈՂԻԿՈՍ ԵՐԱՆՏԻ ԳՐԻԳՈՐԻՍԻ ՄԱՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՅՏԵՒՆՔՈՒՄԸ, ՈՐ ՆԱՀԱՏԱԿՎԵՑ ՄԱՍՓՈԹՅՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ՝
ՄԱՍՓՈԹՅՆԵՐԻ ՍԱՆՏՍԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ԶԵՌՔՈՎ

Աղվանքի թագավոր բարեպաշտ Վաչագանը մի շափազանց մեծ տենչ ունեւր, այն է՝ գտնել սուրբ մանուկ Գրիգորիսի մասունքները. նա հին մատենագիրների պատմութիւնից տեղեկացել էր, որ սուրբ Գրիգորիսը նահատակվեց Վատնյան դաշտում, մեծ ծովի Լգիբքին: Նրա աշակերտներից ոմանք նրա մարմինը վերցրին, բերին Ամարաս գյուղը ու թաղեցին եկեղեցու մոտ, որ հիմնարկել էր Մեծ Գրիգորը: Այգտեղ ոչ մի նշան չէին գրել՝ վախենալով, որ գուցե երանելու մասունքները ուրիշ տեղ կիտխաղլեն, կամ ավաղակների հետապնդման պատճառով, կամ թե շատ տարիներ անցնելու հետեւանքով մոռացման կտրվեր սրբի մասունքների տեղը: Թագավորը խորհրդակցում է իր պալատական քահանաների հետ, որպեսզի հնարներ մտածի, որոնցով կարողանա գտնել իր համար խիստ բարի՝ ցանկալին: Կանչում է այդ գյուղի վանական քահանային և հարցնում է, թե որևէ նշան կա՞ եկեղեցու մոտ մեկնումնկի գերեզմանի վրա, թե ոչ: Իսկ նա պատասխանում է. «Այժմ եկեղեցու շուրջը շատ գերեզմաններ կան, որովհետեւ այժուպահների արշավանքների պատճառով ու եկեղեցու կառուցվածքի խիստ մեծ լինելու հետևանքով ոչ ոք չկարողացավ շինել այնպիսին, որ Մեծ Գրիգորը հիմնադրել էր»: Թագավորը ասում է. «Հրամայում եմ այդ տեղի հողը քանդել հեռացնել». և իր մտքում ասում է. «Գուցե գերեզմանների շատութիւնը հետևանքով չկարողանանք կանգ առնել երանելու ամենասուրբ գերեզմանի վրա, գրա համար պետք է ապավինենք պատի ու աղոթքների և բազմաթիվ աղաչանքներով խնդրենք ամենաողորմ աստծուն՝ հիշելով տիրոջ խոսքը, որ ասում է, թե բարի խնդրվածք անմիջապես կարելի է ստանալ առաստաղով աստծուց»:

ՎԱԶԱԳԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՆՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ ՈՒ
ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍՁԻ ՄՐԱՆՔ ԱՂՈՔՔՆԵՐԻ ՈՒ ՊԱՂԱՏԱՆՔՆԵՐԻ
ՄԻՋՈՑՈՎ ԵՐԵՆ ՇՆՈՐՀԵՆ ՊԱՀՎԱՄ ԳԱՆՁԸ

Այդ ժամանակ թագավորը հրամայում է հետևյալ օրինակով հրովարտակներ ուղարկել իր տերութիւնի ամբողջ երկրում ապրող եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավաղներին, անապատականներին ու եկեղեցու բոլոր միաբաններին: «Ողջո՛ւյն. ամենքդ անհապաղ հիշեցե՛ք, որ պետք է պաշտամունք կատարեք, պաս պահեք և աղաչեք մարգասեր աստծուն՝ շնորհելու մեզ երանելի Գրիգորիսի մասունքները, ողջ եղե՞ք»: Գրանից հետո բոլոր եպիսկոպոսները յուրաքանչյուրն իր իշխանութիւն տակ գտնվող քահանաներին, սարկավաղներին ու եկեղեցու ամբողջ միաբանութիւնը առած՝ տիրոջ խաչի նշանով, միասին ու խիստ շատուկ կարգով հովաքվեցին թագավորի սեփական Գյուտական⁹⁹ անվանված գյուղը: Եվ ով որ անհոգ գտնվելով ուշանում էր, հրամայում էր խստօրէն պատժել: Այնտեղ երեք օր փառավոր կիրպով տոնեցին սրբերի հիշատակը, ուր ինքն իսկ թագավորն ըստ իր սովորութիւնի ստքի վրա մնաց ու հարգեց այնտեղ հովաքված եկեղեցական ամբողջ միաբանութիւնը: Նա գտավ Գրիգորի, շափազանց հոշակիւմ շոքիսիմեի ու Գայանեի ամենասուրբ մասունքները, որ գտնվում էին: Արցախ⁹⁹ գավառի Գարահոջ գյուղում, և որ հայոց Հոհան կաթողիկոսից ստացել բերել էր Մատթե անվանված քահանան: Մասունքները կնքված էին կաթողիկոսի կնիքով. թագավորը քահանաներ է ուղարկում Գարահոջ ու այնտեղից բերել է տալիս և վերցնում իր մոտ: Եվ երբ Մեծ Գրիգորը իր մարտակից նահատակներ Հոփսիմեի ու Գայանեի հետ գալիս էր Գյուտականի մեծ ժողովը, թագավորը թաղուհու և բոլոր մեծամեծ իշխանների հետ միասին գյուղից մեծ հեռավորութիւն վրա ընդառայ գնացին: Ընդառայ գնացին նաև բոլոր եպիսկոպոսները՝ յուրաքանչյուրն իր իշխանութիւմը և կրօնավորներով, որոնք կացմել էին բազմաթիվ

դասեր ու խմբեր. իսկ յուրաքանչյուր խումբ ունեն իր խաչվառք, որ ավետարանին հավասար մեծ հարգանքով պաշտվում էր. բազմաթիվ խաչերը ու գուլնեզուլն խաչվառները փողփողում էին, յուրաքանչյուր դասից խնկարկման ծուխը ուժգին բույր էր արձակում, հոգևոր երգերի սաղմոսանվագ ձայնը անուշ հնչում էր անսպառ, որ օրհնաբանում էր մեծագույն պարգևատու աստծուն:

Եվ այսպես թագավորը մեծ բերկրանքով ողջունեց սրբերին ու բազմությանը. ինքը մեծ զգուշությամբ սպասավորում էր այն քահանային, որ վերցրած տանում էր սրբերի մասունքները: Բերելով սրբերի հանգստարանը՝ դնում է երանելի Զաքարիայի և Պանդալիոնի մոտ: Այնուհետև բարեսեր արքան վստահ լինելով իր հաստատուն հավատով որոնելու, առաքինի ժողովրդի բարի հայցման վրա, ասաց. «Հաստատ գիտեմ, որ Մեծ Գրիգորի միջոցով աստված ինձ կտա սուրբ Գրիգորիսի ամենասուրբ մասունքները»: Այնուհետև թագավորը վերցնում է ամենասուրբ ժողովի բազմությունը և հրաման է տալիս բոլոր եպիսկոպոսներին, որպեսզի սրանք քահանաներով, սարկավազներով, անսպասականներով, եկեղեցու ամբողջ միաբանությամբ, յուրաքանչյուրն իր կրոնավորներով, ավետարանով, խաչով, ամեն մեկն իր դասի բազմությամբ ու ծխացող խուկների բուլվառների շատությամբ իրեն հետևել: Իսկ ինքը պալատական քահանայով ու բազմաթիվ պաշտոնյաներով (գնաց), թեպետ (թագավորը) կամեցավ այնտեղ թողնել թագուհուն, որովհետև եղանակը գարնանային էր, և առատ անձրևներ էին տեղում, բայց նա չհամաձայնվեց, այլ մեծ ցանկությամբ տննչում էր, և ինքը նույնպես գնաց սրբերին որոնելու: Քրիստոսի հինգ ամենասուրբ նահատակներին՝ Մեծ Գրիգորիսին, երանելի Զաքարիային, ամենասուրբ Պանդալիոնին և շատ հուշակված, պատերազմում հաղթած Լուսինիսին ու Գայանեին վերցրին բարեխոսելու ամենքի մեծ աստծուն, որպեսզի նրանց միջոցով շնորհվի իր փափագելին: Թագավորական զանազան հանդերձներով պատեցին սրբերի մասունքները, շատ խուկներով ու զանազան անուշաբույր ծաղիկներով զրեց սրբերի կառքի վրա, որը շիկակարմիր մորթով էր պատած և սպիտակ կերպասով պաս-

տտված. թանկագին քարերով քանդակված ոսկի խաչ էր խլվված կառքի վրա, որին լծված էին սպիտակ ձիեր՝ պոչերը կարմիր ներկով զեղեցկացրած. թագավորական ձիերի գլուխներն ու պոչերը պսակներով շքեղացրել էին, իսկ պալատական պաշտոնյաների բազմությունը խաչերը ձեռքներին ընթանում էր կառքի առջևից ու հետևից անվերջ քաղցրաբարբառ պատարաններով, գիշեր ու ցերեկ անդադար օրհնաբանում էին աստծուն, իսկ ինքը՝ թագավորը, ընթանում էր կառքի մոտով և երգակցում էր սաղմոսների օրհնաբանությանը: Եպիսկոպոսների դասը յուրաքանչյուրը ընթանում էր իր մեծախումբ ժողովրդով՝ սրբերի կառքի շորս կողմից սաղմոսելով և օրհնությանելով միածին աստծուն ու խնդրելով բոլորի ցանկալին, այսինքն՝ Գրիգորիսի սուրբ նշխարները: Վաչագան թագավորը հրամայում է, որ բոլորն էլ եպիսկոպոսների հետ մինչև երկիտ ոչ մի րան չճաշակեն, իսկ երեկոյան միայն քիչ հացով սնվեն: Թագավորն ինքն էլ նույնպես էր անցկացնում մինչև սրբերի մասունքների հայտնաբերումը: Իսկ պալատական քահանաները խլիտ շերմոռանդ կերպով պաս էին պահում ու խնդրք անում բարեբար աստծուց. ոմանք նույնիսկ ոչինչ չճաշակեցին մինչև սրբերի մասունքների հայտնաբերումը:

Ամբողջ ժողովուրդը գիշեր-ցերեկ անդադար աղոթում և ուժգին ձայնով խնդրում էր բոլորի ցանկալի Գրիգորիսին: Ապա բարեպաշտ Վաչագան թագավորը խորհրդակցեց ու երանելի Գրիգորիսի մասունքները որոնելու ժամանակը հասած համարեց:

Այդ օրերին թագավորը Գարահոջի¹⁰⁰ Մատթե քահանային բազմաթիվ կրոնավորների հետ ուղարկեց Սուհառ¹⁰¹ հանուն այնտեղ հայտնաբերված սրբերի՝ պաշտամունք կատարելու և պատարագ մատուցելու: Եվ մինչդեռ առավոտյան հոտնկալաց արարողությունն էին կատարում, Մատթե քահանայի վրա ներժ է գալիս. նա մի ուժգին ձայն է լսում, որ ասում էր. «Սուրբ Գրիգորիսին եք որոնում. եկեղեցու արևելյան կողմն է»: Իսկապես այսպես էլ եղավ: Գերեզմանի տեղը բրելիս՝ սխալմամբ բրեցին հյուսիսային կողմը. երբ չգտան, մեծ տիրություն պատեց բոլորին: Ապա երբ աստծու ողոր-

մածուցիամբ բրեցին արևելյան կողմը, ըստ եկած ձայնի հընչման՝ գտան երանելու ամենասուրբ մասունքները:

Իսկ երբ թագավորը Դյուտականից ժողովրդի բազմությամբ, եպիսկոպոսներով, քահանաներով ու ամբողջ կրոնավորների խմբերով մեկնում էր, ինչպես որ ասել էր, առ մարդասեր աստված պաս, աղոթք ու մաղթանք էին կատարում բոլոր հավաքվածները: Երբ հասան Արաժան¹⁰² կոչված գյուղը, Հովել անունով պալատական մի սարկավազ արևածագից առաջ երազում տեսավ, որպես թե ինքը բաճը գրել է ուսին ու որոնում է երանելի Գրիգորիսի մասունքները: Հենց ինքը՝ Գրիգորն էլ երևաց սպիտակ հագուստներով՝ արեգալի կերպարանք առած. նա հարցնում է սարկավագին, թե ի՞նչ էս որոնում, իսկ նա պատասխանում է, թե՝ «թագավորը, բոլոր կրոնավորներն ու Աղվանքի ամբողջ զորքը որոնում ենք Գրիգորիսին և շենք կարողանում գտնել: Իսկ երանելին բռնում է սարկավագի ձեռքից ու խոնարհեցնում է այն տեղի վրա, որտեղ գտնվում էին սրբի մասունքները, ասելով՝ «Յթե Գրիգորիսին եք որոնում, նա այստեղ է»: Եվ հրամայում է այդ տեղը փորել: Գերեզմանին մոտիկ մի թուևր կար, որի վրա խաչ էր տնկված: Երանելին բարձրանում է թմբի վրա ու կանգնում է խաչի մոտ: Իսկ նախան անունով մի քահանա՝ նույն սարկավագի եղբայրը, Գեղեոն անունով մի այլ քահանա փորում են այն տեղը: Հովելը ծունկ իջած առչեում մախաղ էր բռնել: Գտնելով սրբի մասունքները՝ ուրախ-ուրախ գնում էին, երբ նա ձայն տալով նորից ասաց. «Կողերս և զխտերս այստեղ են, վերցրե՛ք ձեզ հետ», և մենք գտանք այն, ինչ որ նա ասաց: Եվ զարթնելով երազը պատմեց թագավորին: Չնայած որ սարկավագը բնավ չէր գնացել Ամարաս, այնուամենայնիվ ասաց՝ «Այն տեղը, որ ցույց տվեց, ճանաչում եմ»:

Արքան շափազանց ուրախացավ, իր պալատական քահանա Մանասին և միևնույն սարկավագին նախքան իր գնալը ուղարկեց Ամարաս: Սարկավագը գնաց ու ցույց տվեց նույն տեղը: Հենց այդտեղ էլ գտան սրբի մասունքները: Արաժանքից մեկնեցին թագավորը, բազմաքանակ ժողովուրդը, եպիսկոպոսները, քահանաները, կրոնավորներն ու պաշտոնյաները՝ իրենց հետ վերցնելով սուրբ Զաքարիային, երանելի Պանդալիտին,

չտփաղանց արժանավոր Գրիգորին, առավել հուշակված մարտիկ Հռիփսիմեին, Գայանեի հետ միասին: Հասնելով Քարվեճ¹⁰³ փոքրիկ գյուղը՝ կատարեցին գիշերային ժամերգություն: Կրկին նույն Հովել սարկավագին երազում ցույց է տալիս նույն տեղում շորս տարեց արեղանների, միևնույն Գրիգորիսին, որ նրանցից ավելի երիտասարդ էր. դրանք ահագուղեղեմքերով խմբով շրջատատել էին այն տեղի սահմանները, որ հրամայեց փորել: Սարկավագը սարսափից բերանքսիվայր է բնկնում և էրբ նորից վեր կենալով կամենում է ինչ-որ բան հարցնել, նրանք աներևութանում են նրա մոտից:

Եվ երբ նույն օրը գիշերային ժամերգությունն սկսվում է, բարեպաշտ թագավորը առանց դադարելու աստծուց խնդրում է սուրբ Գրիգորի հայտնաբերումը և իրեն խաչակնքելով բազմաթիվ աղաչանքներով, սրտի խորքից հայցում է առատասուրբ աստծուց:

Երանելի Վաչագանի տեսիլքը

Մինչդեռ նստած գիշերային պաշտամունքն էր կատարում, մի վայրկեանական նինջ է պատում թագավորին. մի ձայն հնչելով ասում է. «Այն, ինչ զու աղաչանքներով խնդրում ես, այնտեղ հայտնվեց»: Եվ երազում իմացավ, ինչպես ինքը պատմեց, ու ասաց, թե ինքն Ամարաս է գնում, և որ այնտեղ, ասում է, ինչ-որ մի մարդու, հայտնված պետք է լինի: Անմիջապես, շուտափուլթ կերպով իրենից առաջ իր պալատական քահանա Մանասին Ամարաս է ուղարկում և ասում է. «Իմ կրազը ոչ ոքի մի՛ պատմիր»: Եվ հետո թագավորը հարցնում է, թե արդյոք որեէ մեկին չի՞ հայտնել: Իսկ Հովել քահանան, որ մի անապատական էր և արքայի մոտ էր լինում, պատմում է նրան՝ «Ես միևնույն տեղում, որտեղ Հովել սարկավագին հրամայվեց փորել, տեսել եմ, թե ինչպես ակունքից դուրս է գալիս մի խիստ սակավաշուր աղբյուր, բայց առաջ ընթանալով շափազանց հորդանում է: Եվ ես զարմացա, թե առաջ այստեղ աղբյուր չկար, այժմ այս հորդ ջուրը որտեղից է բխում»: Երբ Քարվեճից մեկնում են, կանաչք Ամարաս գյուղաքաղաքից ընդառաջ են դուրս գալիս նրանց:

ԱՐՅԱՆԻ ՊԱՅՎԱՆՔՆԵՐ ԵՍՏ ՄԵԾ ԳԱՎԱԹԷ ԵՐԵՆԵԼԻ ՀՈՔ
ՀԳՆԱՎՈՐԻ ԿՐԿՄԻՑ ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ԳՐԱԶԵՆԻԸ

ինչպես ասվեց, եղանակը գարնանային էր, ուստի հորդա-
նատ անձրևները անդադրում հոսանքով հեղեղում էին գետինը
և բազմաթիվ ձիերը սմբակներով վարել էին ճանապարհը:
Իսկ թագավորն ասում է. «Չպետք է դանդաղել»: Խիստ տե-
ղանքի պատճառով իջնում էր երիվարից, շրջում էր եպիսկո-
պոսների ու քահանաների առանձին դասերի մեջ, կարգա-
վորում նրանց, որպեսզի հարմար ընթանան, մեղմ հորդա-
բուխ ձայնով, սաղմոսանվագ երգերով փառաբանեն կենարար
երրորդութունը: Իսկ ինքը անցնելով մեծ զգուշութամբ
սպասավորում էր Քրիստոսի երանելի նահատակների կառքին:
Այլևայլ լիզվով կատարվող պաշտամունքի ձայներից երկիրը
արձագանք էր տալիս. տիրոջ բազմաթիվ խաչածեղ դրոշակ-
ները, գուլնգուլն դրոշակներ պարզած երանգներով առատ
պատկերների փողփողումը, ոսկու, արծաթի և թանկագին
քարերի փայլատակումը, որոնցով ձուլված ու ընդելուզված
էին բազմաթիվ խաչերը, իբրև լուսավոր ամպ ծածկում էին
հողը:

Իսկ սպիտակազգեստ զարդարանքով, սպիտակ ձիով, ոսկի
ափանակապ խաչը վրան ամրացրած, շափազանց թանկագին
դրոշարձակ խաչապսակը իբրև ամենապայծառ գուլնով աստղ
փայլում էր սրբերի կառքի վրա, որ անասելի շքեղացած փառ-
քով ընթանում էր Քրիստոսի բանակի մեջ: Երբ սուրբ աստվա-
ծասեր թափորը գլուղ էր մտնում, մի փոքրիկ գետակ էր անց-
նում գլուղի միջով, որի կամուրջը արթունական պողոտայի
վրա էր կառուցված, իսկ արքան սրբերին տածվող մեծ սիրուց
չի համաձայնվում սրբերի կառքը որևէ մեկի հսկողության
թողնել, այլ ինքը՝ թագավորական զգեստները հագին, մտնում
է և անցնում է գետով: Գնալով նշանակված տեղը՝ երկար
ծնրադրությամբ եպիսկոպոսներով և ժողովրդի բազմության
հետ միասին թագավորը մաղթանք է կատարում: Եվ թագա-
վորական վրանը խփելով այդ տեղի վրա՝ հրամայում է հսկել
մինչև առափոտ: Բայց այն ժամանակ Ամարասում եպիսկո-
պոս չկար, թագավորը հարցնում է գլուղի վաներեցին և այլ
ծեղերի՝ «Ե՞րև բարդոք որևէ նշան չե՞ք նկատել այդ տեղում»:
Նրանք պատմեցին ինչ որ Հոր ճգնավորից լսել էին:

Վաներեցը պատմում է, ասելով. «Վեկերտի Հոր անունով
մի քահանա, որը ճգնավոր էր և շափազանց առաքինի կյանքով
ապրեց աշխարհի վրա, ուներ առաքելական շնորհներ, որով-
հետև Արցախի Պարսականք կոչված մի մեծ զավառը մոլորու-
թյունից հտ կանգնեցրեց և դարձրեց աստվածաճանաչ, երրոր-
դության անձառելի խորհրդին խորհրդակից և պաշտող: Սա գա-
լով բազմաթիվ անգամ կատարեց սուրբ Գրիգորիսի հիշատակը
և երկու-երեք անգամ բազմության առջև ասաց, թե մի հա-
վատացյալ թագավոր է հանդես գալու Աղվանքում, որոնելու
է տեղն ու Գրիգորիսի սուրբ մատունքները: Դարձյալ մի այլ
անապատական մեզ հյուր եկավ, իսկ մենք ընդառաջ ելնելով
ընդունեցինք նրան միաբանակիցների սովորության համապա-
տասխան: Լվանալով ոտքերը և մի քիչ ճաշակելով՝ ելավ այդ
տեղում քուն մտավ: Ապա շտապ վեր կացավ, տեղնուտեղը
խաչ պատրաստեց և կանգնեցրեց տեղում. մեզ պատվեք
տվեց, ասելով. «Միչ ոք այս խաչը այդ տեղից թող չհանի,
ընդհակառակն, մի ավելի մեծ խաչ խփել տվեք այդ տեղում».
և պետք է առաջադասն ու երեկոյան աղոթքներ աճել, խունկ
ծխել, որովհետև այս տեղում մեծ հրաշքներ եմ տեսնում»:

Մի այլ արեղա հյուր եկավ, ու մենք կարգադրեցինք ճաշ
տալ նրան. մինչդեռ նա հաց էր ուտում, իսկ մի մանուկ գինի
էր մատուցում բաժակով, գլուղում աղմուկ-աղաղակ բարձրա-
ցալ: Մենք բոլորս նրան մենակ թողեցինք ու գնացինք դեպի
աղմուկը: Մեր գնալուց հետո հյուրը վեր է կենում, բաժակն
առնում ու դնում է: Բաժակը տանում վաճառում է, արժեքն
էլ առած դարոց է մտնում ու վարձով սովորում: Այս բաժակա-
դողը երազում տեսնում է, որ սպիտակ հագուստով, խիստ
ահավոր կերպարանքով մի եպիսկոպոս աթոռի վրա նստած է
այն խաչի մոտ, որը կանգնեցրեց վերոհիշյալ անապատակա-
նը, և իբրև (բաժակազողին) մերկ կապած՝ հրամայում է տան-
չել սրբի գերեզմանի վրա: Եվ քնից վեր կենալով, մարմինը

ցույց է տալիս բաղձուխանք, որ սարսափելի տանջանքի հար-
վածներից կապուտակել էր Այապես օրբստօրե հրամայում
է տանջել, իսկ նա տանջանքներից ազատվելու համար ապա-
տանում է սուրբ քաղաք Երուսաղեմում՝ փրկութիւն խնդրե-
լով այն տանջանքներից: Նա կրկին տեսնում է, որ նույն տե-
ղում միեւնույն եպիսկոպոսը հրամայում է ավելի դաժան կեր-
պով ծեծել, ասելով՝ «Դու այլ միջոց չունես այդ տանջանք-
ներից ազատվելու, միայն մնում է գնաս խոստովանես այն
տեղում, որտեղից բաժակը գողացար: Արեղան վեր է կենում,
վերցնում է բաժակի գինը, հեռանում է Երուսաղեմից և գալիս
է Ամարաս: Մտնելով եկեղեցին՝ իր մոտ է կանչում վաներեցին
ու սկսում է լալով խոստովանել իրողութիւնը: Շատ աղա-
չանքներով տալիս է բաժակի արժեքը և տանում, ցույց է տա-
լիս այն տեղը, ուր խաչն էր կանգնած, ասում է. «Այդտեղ
լուսավոր հագուստով ու աճափոր կերպարանքով եպիսկոպոսն
էր նստում»: Այդ ցույց է տալիս գերեզմանի տեղը՝ ասելով,
թե՛ «Հրամայում էր այդտեղ ինձ ծեծել»: Եվ տանջանքներից
ազատվելով՝ խաղաղութեամբ հեռանում է: Ասում են, թե
դուրեկերում շատերը անզավակ լինելով՝ գալիս, ուխտ են անում
և այստեղից հող վերցնելով երեխաներ են ունենում: Նույն-
պես և բոլոր ջերմախոսավորները հող վերցնելով, անմիջապես
բուժվում են: Եվ գեռ այս բոլոր հրաշագործութիւնները
պատմում էին արքայի առջև, և նա լսում էր:

Գ լ ո լ խ Ի Գ

ԱՅՍ ՏԵՍԱԿ ՄԻ ՏԵՍԻՒԷ ԷՆ ԵՐԵՎԱՆԻ Է ԱՂԱՆՔԻ ԹԱԳԱՎՈՐ
ՆՍՂԱԳՆԵԻ ԱՊՕՐԻՆԵ ՈՐԳԻ ԽՈՃԳՈՐԻԿԵՆ, ՈՐ ԿՈՒՍԱԿԱԼ ԷՐ
ՆՇԱՆԱԿՎԱՄ, ԵՎ ՍԱ ՊԱՏՄՈՒՄ Է ԹԱԳԱՎՈՐԻՆ

Նոճկորիկ անաւով այն մարդը, որին Յրիում հայտնվե-
ցին երանելի Զաքարիառը և սուրբ Պանդալիոնը, միջօրեին
քնած լինելով՝ երազում տեսնում է սպիտակ, գարգարուն,
մինչև կրունկները հասնող պարեգստներով յոթ մարդ եկեղե-
ցում. նոճկորիկը, խոսելով արեղաների հետ, ասում է. «Օրհ-

նրված մարդիկ, քանի որ դուք այստեղ եք, ինչո՞ւ սուրբ Գրի-
գորիսի մասունքների տեղը ցույց չեք տալիս, երբ ոմանք
ասում են, թե այստեղ է, ոմանք՝ թե այնտեղ է, իսկ մենք
չարչարանքի ու մտահոգութեան մեջ ենք»: Բոլորը պատասխա-
նում ու ասում են. «Որեւէ հրաշք չտեսա՞րք. նա պատասխա-
նում է՝ ո՛չ: Ի՞նչ արեցիք, առաջնորդելով նոճկորիկին, ասում
է. «Ե՛կ իմ ետևից, և ես քեզ ցույց կտամ նշանակված տեղը»:
Եվ տանում է այն տեղը, որ առաջ ցույց էր տվել: Քնա տեսա, որ
հողը ճեղքված է, իսկ ճեղքի մեջ մի վառված ճրագ է երևում.
ճրագի բոցը երկու մասի բաժանվելով ձգվում էր դեպի վեր»:
Արեղային, որ այդ հրաշքը ցույց տվեց, ասաց, թե՛ «գնա՛մ
արքային պատմեմ այդ հրաշքը, որ ինձ ցույց տվիր»: Նա պա-
տասխանում է. «Գնա՛ և պատմի՛ր»: Այդ մարդը պալատ է
գալիս. նրան թվում է, թե թագավորը քնած է, և ինքը չի հա-
մարձակվում արթնացնել:

Վերադառնալով նույն մարդու մոտ՝ ասում է. «Թա-
գավորը քնած էր, և չհամարձակվեցի արթնացնել»: Երբ այն
մարդը վերադառնում էր, հոյր այնպես ճեղքված մտնում էր,
հրազն էլ վառված էր, իսկ արեղան մոտիկ կանգնած էր նույն
տեղում: Արեղան մարդուն ասում է. «Երբ թագավորը արթնա-
նա, ինչ տեսար, կպատմես նրան»: Դրանից հետո կամեցավ
սաքով ճեղքը ծածկել ու լույսն արգելել: Իսկ նոճկորիկը բռնե-
լով արգելեց, թե՛ «Այդ մի՛ անիր, մինչև որ թագավորն էլ
տեսնի»: Բայց նա չհամաձայնվելով՝ ոտքով խփեց այդ տեղին,
տնհայտացրեց ճեղքվածքը, ասելով. «Երբ թագավորը դարթ-
նի, այս տեսածդ հրաշքը պատմի՛ր նրան»: Երբ թագավորը
արթնացավ քնից, նա եկավ և այս ամենը թագավորին պատմեց:
Բոլոր միաբանների բազմութեանը ժողովրդի ամբողջ բաղձու-
խան հետ ողջ գիշեր անդադար խնդրում-պաղատում էր
ամեն բարութիւններ տվող աստծուն: Իսկ հետևյալ օրը, երբ
տոտավոսյան ժամերգութիւնն էին կատարում, ամբողջ միա-
բանութեանը եկավ հրաշք խաչի տեղը. արքայական վրանը
խփեցին այդ տեղի վրա, վրանի շուրջը հեռվից վարագույր
բաշխեցին. վարագույրից դուրս, վարագույրի շուրջը դաս-դաս
խմբակները եպիսկոպոսները՝ ամեն մեկն իր աշակերտներով,
սովորավագապետները խաչ էին բռնել ձեռքները, քահանա-

ները գրկած ունեին ավետարաններ, իսկ սպասավորները բուրվառները բռնած տեսակ-տեսակ խոունկեր էին ծխում: Եվ անճառելի երրորդութունը միաձայն բարբառելիս, սաղմոսելիս, փառաբանելիս գետինը արձագանքում էր:

Առաքինասեր թագավորը, կիսով մերկացած, բաճը վերցրել և եռանդով փորում էր հողը: Իսկ բարեսեր և շափազանց հավատացյալ թագուհին արքայական զգեստի փեշը պարզած արագ-արագ կրում էր հողը: Այդ ժամանակ հայկակոպոսները, քահանաները, նախարարները, նախարարների կանաչ յուրաքանչյուրն իր զգեստով մեծ եռանդով սկսեցին կրել փորվածքի հողը: Մխավմամբ փորում էին կողքանց, իսկ երանելու նշխարները մնում էին արևելյան կողմում:

Այդ ժամանակ թագավորը և ամբողջ ժողովուրդը տրամուլթյան մեջ ընկան, և թագավորը հուսահատված մեծ մտահոգության մեջ նստեց. իսկ հետո արքան, քաջալիրված ճշմարիտ հավատով, ասում է. «Երոյրին ապրեցնող աստծու խոսքը անսխալ է լինում, և թե նույնիսկ երկու-երեք հոգի հավաքվեն հանուն կենարարի, անմիջապես կգտնեն իրենց բարի որոնելիքը: Իսկ այսքան բաղմութունը հավաքված է ամենքի աստծու ամենասուրբ անունով, ես հաստատ գիտեմ, որ մեզ մերժի ամոթով ու անուշադիր թողնելով: Այնուհետև հրամայում է բերել սուրբ Զաքարիային, ամենասուրբ Պանդալիոնին, մեծ ու շափազանց հռչակավոր Գրիգորիսին և Հռիփսիմեհին Գայաննի հետ միասին զննել փորվածքի առջև: Մի մարդ անմիջապես վերցնում է բաճը, թողնում է նախորդ փորածը, սկսում է դրա արևելյան կողմը բրել և հանդիպում է երանելու ամենասուրբ գերեզմանին: Թագավորը և նրա հետ վրանում գտնված բոլոր մարդիկ շափազանց ուրախանում են:

Սրբի մասունքների հայտնաբերումը հայտարարվում է հավաքված բաղմությանը, և ամբողջ բաղմութունը դիմում է դեպի սրբի մասունքները՝ կամենալով ոտնատակ անել վարագույրն ու վրանը, մինչև որ թագավորը դուրս է գալիս ու հազիվ մի կերպ կանգնեցնում է վրա թափվողներին: Իսկ երբ գերեզմանը բացում են, և երևում են մասունքները, անավոր մի անուշ հոտ է բուրում այնպես, որ բոլորը երկար

ժամանակ թմրության մեջ են ընկնում, և այդ բուլլը չեղոքացնում է բազմաթիվ խնկարյու թյունների հոտը: Դրա վրա շափազանց հիանում է արքան ու նրա հետ այնտեղ գտնված բոլորը, որոնք միարեբան փառք էին տալիս այդպիսի վսեմ բարիքներ տվողին: Թագավորը նստում է գետին, սրբի գերեզմանի մոտ և հրամայում է արքունի թանկագին տեսակ-տեսակ սպասեղեն բերել. և կողովը ղնելով իր ծնկների վրա՝ մեծ երկյուղածությամբ սպասում է: Քահանաները, մասունքները հանելով, հավաքում են այն կողովի մեջ, որ թագավորը գրկել էր: Նաև գտնում են երկու ապակյա սրվակներ նույն մասունքների մոտ. մեկի մեջ գտնվում էր Զաքարիայի արյունից, իսկ մյուսի մեջ՝ սուրբ Պանդալիոնի մասունքներից: Բոլորը դուրս բերելով՝ ամբողջ բաղմութունը մինչև իրիկուն ողջագուրվում էր: Թագավորը կնքում է արքայական մատանիով և հրամայում է զբուրությամբ պահել մինչև առավոտ: Գերեզմանում գտնում են նաև մի ապակյա անոթ, որով նույն Գրիգորիսը խմում էր. այս վերցնելով թագավորը գահանում է ամենակալ աստծուց՝ իրեն բարիքներ տվողից:

Եվ առավոտյան հրամայում է իր իսկ վառ գետին փոել ու անուշ գինով ոսկե սափորներ բերել. հրամայում է մասունքները լվանալ, արևին տալ գետինի փոված չառի վրա:

Հենց այդտեղ Ամարասի վանքից մի արեղա մասունքներից գողացավ: Գրիգորիսը մեծավախելու էր հատքով երազում հայաւից և մեկին երեւելով հայտնեց աբեղայի անունն ու գողանալը. թագավորը հարցրեց նրան, իսկ սա խոստովանելով՝ նրան ներկայացրեց թաքցրած մասը: Քարակիր մի մարդ դժգոհելով սկսեց հայհոյել Քրիստոսի նահատակ Գրիգորիսին, ասելով. «Մեզ համար Նեո գարձավ այդ Գրիգորիսը»: Իսկույն աստծուց պատուհասվեց. նա գետին ընկավ, զեմքը ետ շրջվեց. այսպես շատ օրեր նա տանջվեց, մինչև որ եկավ հող վերցրեց այն տեղից, ուր սրբի գերեզմանն էր: Երկար արտասվեց, ասպա առողջացավ ու հանցանքներին թողութուն գտավ: Այդ ժամանակ սարսափելի ահը բռնեց աշխատողներին և հսկողներին, ուստի շուտափուլ կերպով ու երկյուղով գլուխ բերին սուրբ եկեղեցու կառուցումը:

Այստեղ թագավորը հրամայում է եղիսկոպոսներից յու-

բարանչուրին տալ մի մաս՝ բաշխելու իրենց թեմերի մեջ, և կարգադրում է մասունքների մեծ մասը թողնել Ամարասում, իսկ մնացածը մեծ զգուշությամբ ու տեսակ-տեսակ անոթներով ինքն է սպասավորում ու պահում թագավորական կնիքով կնքված: Հրամայում է գերեզմանի վրա մատուռ հիմնել, շտապ ավարտել ու անվանել սուրբ Գրիգորիսի մատուռ: Այնուհետև ոտքի վրա տքնությամբ ինքն՝ արքան, անձամբ սպասավորելով բոլոր եպիսկոպոսների հետ միասին ցնծալից ուրախությամբ պատվում է ամբողջ համայնաժողովը քաղցր ձայնով սաղմոսների հորդաբուխ երգերով իբրև փառաբանություն ասածուն: Բանակից դուրս է գալիս ու երրորդ գիշերը, երբ շրբորդ ցերեկը լուսանում էր, պաշտամունք կատարելիս, կատարում են տերունական ու կենդանարար վսեմ խորհուրդը:

Դրանից հետո ամբողջ բանակը նախկին կարգով և սրբերի դասերով մեկնում է: Նույն տեղում երախտավոր Վաչագան արքան հոգևոր ու գերերկրային այն գանձը վերցրեց, որ անանցավոր ու անպատմելի բարիքների պատճառ էր և որ իրենից առաջ եղած թագավորներից, իր իսկ նախնիներից ոչ մեկին այսպիսի մեծահարազ պարգևներ չվիճակվեցին: Եվ Քրիստոսի համար հավաքված բանակը բաժինը վերցրեց. նա աստծու ողորմության այդ բարիքը անճառելի կերպով ստացավ քրիստոսազգևատ Վաչագան արքայի միջոցով, որի գովասանքը ավելի պահաս եղած չեմ համարում արևմուտքի վրա իշխող Կոստանդին կայսեր գովասանքից, կամ ոչ էլ Տրդատ Արշակունուց, որը փրկեց մեծ Հայաստանը և մեզ՝ արևելյիներիս: Աստվածապաշտության լույսի դուռ դարձավ և բազմազան բարիքների օրինակ եղավ այն երջանիկը: Սա, մտնելով այս ասպարեզը, վերադառնում է այն տեղով, որով իր գալուստն էր պատրաստել: Նույն ձևով և էլ ավելի տեսանելի պայծառությամբ ճանապարհը հարթեց:

Տեղից շարժվում են հետոտն մնացած թագավորը և ամբողջ բազմությունը՝ հանդարտ ու համընթաց քայլերով. նրանք ընթանում էին խաղաղված ծովի նման: Ե՛վ քաղցրաձայն հնչումներից, և՛ ճառագայթարձակ լույսերի փողփողումից օղբ ցնծում էր, և հրեշտակներն իսկ երգակից էին դարձել:

Թվում էր, թե երկիրը երկնքի էր վերածվել: Եվ հենց ինքը՝ թագավորը, անխոնջ շարշարանքով ինչպես գալիս, նույնպես էլ գնալիս գետը անցկացրեց և հրամայեց սրբերի կառքը կանգնեցնել:

Թագավորն ամբողջ բազմությունը նստեց, իսկ եպիսկոպոսները, օրհնելով խառնիճաղանջ ամբոխը, հրամայեցին, որ յուրաքանչյուրն իր տեղը գնա: Թագավորը եպիսկոպոսների, բաճանանների ու այլ նշանավոր մարդկանց խմբերը սրբերի հետ տարավ մինչև Քարվեճ օթևանը: Այստեղ արքան բոլորին իր գոհունակությունն է հայտնում, երկրպագություն է մատուցում այն բանի համար, որ իր հրամանով եկել և գործակցել են որոնմանը. երկրպագություն մատուցելով նա ասում է. «Նրանց բարեխոսությամբ և ձեր աղոթքներով ցանկային ինձ ու ձեզ շնորհող Քրիստոսին միշտ թող փառք և գոհունություն լինի»: Նրանք միաբերան օրհնում են թագավորին յագուհու և ամբողջ պալատի հետ միասին ու ասում. «Ինչ բարիք որ դու աստծուց խնդրես, թող սուրբ Գրիգորիսի միջոցով առ քեզ, իսկ մեզ և քեզ շնորհի խաղաղասեր ապրել աշխարհում երկար օրեր ի փառավորություն եկեղեցու՝ օրրատօրե էլ ավելի պայծառացնելով այն. իսկ քո վախճանը թող Քրիստոսին խոստովանելով կնքի կենարար Քրիստոսը և նրա երկնավոր հայրը»: Եվ թագավորը իր հետ վերցրեց Շուվհահաղիշի ավագ եպիսկոպոսապետին ու գնաց: Երբ սրբերի կառքը որևէ գյուղի էր հանդիպում, թագավորը իջնում ու հետիտան գնալով սպասավորում էր սրբերին, մինչև որ տանելով անցկացնում էր բնակավայրը: Նա չէր գոռոզանում թագավորներին հատուկ մեղկություններ, այլ, իբրև քրիստոնեական կրոնի կարգ ու կանոնին վարժ ու հմուտ, ժուժկալույթյամբ էր կենցաղավարում փափկակեցություն մեջ և փութաշանությամբ հմտացած հպատակվում էր աստծու պատվի-րաններին:

Այս գնալքերն այսպես ընթանում են, սուրբ Գրիգորիսի մեծ հռչակը տարածվում է ուտիացիների ամբողջ երկրում: Եվ ինչ գյուղ որ սրբերը մանել էին կամենում, ընդառաջ էին գուրս գալիս ծերեր ու մանուկներ, տղամարդիկ ու կանաչքույրեր: Երբ ավարտվեցին գալիս էին խաչերով ու տեսակ-

տեսակ ծաղիկներով, անուշաբույր խնկերով. անհամար բազմությամբ գալիս էին խնդալով ու շղաղարով փառատրությամբ օրհնարանում էին միանական սուրբ երրորդությունը: Այսպես եկան-հասան թագավորական Դյուլտական գյուղը ու այնտեղ հանգստարան գրին սրբերին՝ նրանց հիշատակը փառահեղորեն տոնելով. թագավորը հրամայեց սրբերի մասունքները օծել թանկագին օծանելիքներով:

Թագավորը խնչիկ անունով մի փոքրիկ դուռտը ուներ, որին շափազանց սիրում էր նա և որի անունով կառուցել էր մի դաստակերտ: Սրան է տալիս սրբի մասունքների մի մասը և նույն դաստակերտում շքեղ կերպով ու սխա-պես պատվելներով տոնվում է հիշատակը: Մի մաս էլ ինքն է վերցնում, որ միշտ իր հետ ման է տալիս բանակում: Մասունքներից մնացածը կնքում և մեծ գգուշությամբ պահել է տալիս մի մաքուր ու շքեղ սենյակում, մինչև որ մատուռի կառուցումը գլուխ գա, որ հանուն Պանդալիոսի շինվում էր Դյուլտական գյուղում, և որպեսզի երանելուն այնտեղ փոխադրելով շատ մեծաբրի: Այստեղ է թողնում քահանաներ, սարկավազներ ու կրոնավորների մի մեծ խումբ, իսկ ինքը տարվա մեջ երկու անգամ երեքական օրով տոնում է սրբերի հիշատակը. և միշտ անձանձրուլթ կերպով պաս էր պահում, աղոթում ու ողորմություն տալիս աղքատներին: Իսկ նրանց, որոնց հրամայել էր տալ մասունքներից, պատվիրեց, որ շքեղ կերպով տոնեն սրբերի հիշատակը: Մուլացողներին հիշեցնում էր աստվածային ահավոր դատաստանը, իսկ ջերմևառանգներին՝ նույնի բարեբարությունների անպատմելի պարգևները: Այսպես է փառավորում աստված իր սրբերին:

Գ Լ Ո Լ Ի Ի Գ

ԱՂՎԱՆՔԻ ԱՐՔԱ ՎԱԶԱԳԱՆԻ ՀԱՐՑՈՒՄԸ ԳԻՏՆԱԿԱՆ ՄԱՏՔԻ ՔՕՀԱՆՑՅՆ

Արքան հարցնում է. «Մարմնից դուրս եկած հոգիները զգայուն են, թե անզգա, կամ մենք՝ ապրողներս, ինչպե՞ս կարող ենք մեռածներին օգնել»:

Պատասխան. «Աստծուն պասերով, աղոթքներով, պատարագներով, աղաչելով կամ որե՛է բարի հիշատակ թողնելով, որ կատարվում է նրանց անունով: Ինչպես որ Դավիթը, հագնելով Սափուղի¹⁰⁵ սպառազինությունը, սկսեց կաղալ և գայթեկ, իսկ երբ մերկանալով դեն նետեց ծանր զենքերը և թեթևացած իր նախկին վիճակն ստացավ, այնպես էլ հոգիները: Քանի դեռ հագած են մարմնի սպառազինությունը, ծանրացած են. իսկ երբ սա դեն են նետում, ինչպես ասվեց, սրատես, քաշիմաց և ավելի զգայուն են դառնում: Նրանց, որոնք ասում են, թե հոգին մարմնից դուրս գալով անզգա է դառնում, մենք հակադրվում ենք Աստվածաշնչից բերված վկայությամբ, որ ասում է. «Մովսեսը՝ իմ ծառան, վախճանվեց»^{*}: Իսկ այժմ Մովսեսը չքնադագգեստ փառքով եկել է աստծու առջև՝ ոչ մարմին հագած, որին Պետրոսը բաղձալով՝ տիրոջից սյնակոյի բնակությունն էր խնդրում: Իսկ եթե մարգարեի հոգին մարմնից դուրս գալով անզգա դառնար, ինչպես որ ասում են, ինչպե՞ս զգայուն կդառնար և այս տեսակ վաչելուչ կերպարանքով կիտսեր աստվածորդու հետ: Աստված ասում է. «Ծն կենդանի մարդկանց աստված եմ և ոչ թե մեռելների. չէ՞ որ մեռած մարմինը անզգա է, իսկ անզգայացած հոգին հայտնի է, որ մեռած է: Եվ կրկին ասում է. «Վերակացու կլինեմ այդ քաղաքին (փրկելու այդ) ինձ ու իմ ծառա Դավիթ համար»^{**}: Արդ՝ ասա՛, ասա՛, անզգայացած հոգու համար ի՞նչ մեծաբանքներ կլինեին, որ նրա քաղաքին վերակացու լինեին: Իայց կենդանի հոգու համար մարգարեին շնորհ արեց վերակացու լինել քաղաքին՝ փրկելու նրանց թշնամու սրից: Իսկ Պողոս առաքյալն ասում է. «Լավ եմ համարում մարմնից ազատվել ու Քրիստոսի հետ լինել: Նույն բանն է ասում հորը նաև կենարար խոսքը. «Նրանք, որոնց դու ինձ տվեցիր, կամենում եմ, որ ինձ հետ լինեն և իմ փառքը տեսնեն»:

Արդ՝ համաձայն քո խոսքի, անզգա հոգիները ինչպե՞ս կարող են տիրոջ հետ լինել կամ անճառելի փառքը տեսնել. կամ մեռած մեծատան հոգին տանջանքից ինչպե՞ս կարող էր

^{*} Յեսու Ա, 2:
^{**} Գ թագ., ԺԹ, 34:

հեռավոր, սրատես աչքերով Աբրահամին ու Ղազարին տեսնել, կա՛մ գիտենալ, թե որտեղից էին: Որովհետև փրկչի ձայնը պարզորեն ցույց է տալիս ճշմարիտ այն առակով, թե երբ հոգին մարմնից դուրս է գալիս, ավելի քաջատես ու ավելի իմաստուն է լինում, քան մարմնի մեջ եղած ժամանակ: Ոչ միայն սրբերի և վայելչության արժանացածների հոգիներն են զգում և լցվում իմաստությամբ, այլև մեղավորների հոգիները: Ինչպես որ մեծատունը քաջատես եղավ, և շնայած որ մեծ վիճ կար մեջտեղում, այնուամենայնիվ կարողացավ ձանաչել Աբրահամին: Եվ մեզ սովորեցրեց ճշմարիտ հավատը, այսինքն՝ այն, որ աստված դժսխք իջավ նրանց փրկելու, որ ցույց տա, թե արդար և զգայուն ու ավելի իմաստուն են մարմնից ազատված հոգիները: Եվ նրանք, որոնք տոնում են սրբերի հիշատակը, պատարագներով մեծարում ու խնդրում են նրանց հոգիները, որոնցով և հայցում են առատատուր աստծու ողորմությունը: Իսկապես կարող են բարեխոսել սրբերի հոգիները, իսկ աստված անմիջապես ընդունում է նրանց խնդիրքը և մեղքերին թողություն է շնորհում:

Գ լ ու խ ԻԵ

ՄԱՍԿՈՆՅԱՆ ԵՊԻՍԿՈՍ ԵՐԱՆԵՆԻ ԱՐԲՈՂԱՄԻ՝
 ՆՆՋԵՑՑԱԼՆԵՐԻՆ ՎԵՐՈՔԵՐՈՂ ԿԱՄՈՒԿԸ ԱՂՎԱՆՔԻ ՈՐՔԸ
 Վ Խ Չ Ա Գ Ա Ն Ի Ն

Ուշադրություն դարձրու, ով սիրելի, եթե գիտենալը և անգիտությունը ննջեցյալների հոգիների վերաբերյալ ենք ասում, ապա նրանք բոլորովին էլ այնպես տխմար չեն, ինչպես մեռածները: Բայց աստված, որ պատարագները ընդունող և բաղձանքներ կատարող է, լսում է կենդանի մնացածների աղոթքներին, ընդունում է նրանց պատարագները և թեթևացնում է մեռյալների հոգիների բեռը՝ մեռյալների ակնկալությամբ: Այդ մեզ սովորեցնում է նաև Սուրբ գիրքը, ինչպես որ Եղիսեն ոչ թե մեռած մանկանք լսեց, այլ մոր աղա-

չանքները լսելով՝ կենդանացրեց մանկանք և հանձնեց մորը՝, նաև մեր տերը՝ աստված, գթալով այրուն, հարուժյուն տվեց նրա միակ որդուն. իսկ առաքյալները այրիների արտասուքներն ու ողբերը տեսնելով՝ հարուժյուն տվին Տարիթային և նրան հանձնեցին նրանց: Արդ՝ եթե հարազատների աղոթքները մեռածներին կարող են կենդանացնել, ապա աստվածային զորությունը առավել ևս, եվ մենք պետք է հավատանք, որ ննջեցյալները մեղքերի թողություն կատանան հույսով, երբ մենք՝ կենդանի մնացածներս, նրանց մեղքերի համար աստծու ներողամտությունից թողություն խնդրենք:

Գ լ ու խ ԻԶ

ԱՂՎԱՆՔՆ ԵՐՔԸ ՎԱԶԱԳԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՍՈՇՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
 ՀԱՅՏՈՏՎԱԾ ԱՂՎԱՆՈՒՄ ՏՆՂԻ ՈՒՆԵՑԱՄ ԺՈՂՈՎՈՒՄ

Աղվանից արքա Վաչագանի տարիներին աշխարհականների ու եպիսկոպոսների, քահանաների ու քորեպիսկոպոսների, ազնվականների ու ռամիկների միջև բազմաթիվ հակառակություններ էին լինում: Արքան կամեցավ մի բազմամարդ ժողով գումարել Աղվենում¹⁰⁶, որ կայացավ մարերի ամսի տասներեքին:

Ես Վաչագան՝ Աղվանից արքաս, Շուփաղիշոն՝ Պարտավի արքեպիսկոպոսը, Մանասեն՝ Կապաղակի¹⁰⁷ եպիսկոպոսը, Հուսանը՝ Հաշուի¹⁰⁸ եպիսկոպոսը, Անանիան ու Սահակը, և Ուտիթի Փող¹⁰⁹ եպիսկոպոսները, Հովսեփը՝ Կաղանկատուքի¹¹⁰ քահանան, Մատթեն՝ Պարտավի քահանան, Թոման՝ թագավորի պալատական քահանան, Պողոսը՝ Կայնզուհի¹¹¹ քահանան, Շմավոնը՝ Յրիթի¹¹² քորեպիսկոպոսը, Մատթեն՝ Դարահոջի¹¹³ քահանան, Աբրիկազը՝ Բեթի¹¹⁴ քահանան, Ուրբաթայրը՝ Մանուշեի¹¹⁵ քահանան, Հովել, Պարպ, Միդի, Հակոբ քահանաները, ազնվական մարդիկ և Արցախի նահապետները, Կաղանկատուքի Բակուր նահապետը և այլ բազ-

¹⁰⁶ Գ թագ., Գ., 20—37:

մաթիվ մարդիկ, որոնք միաբան ինձ մոտ ներկայացան՝ ամա-
ռանոցային վայր Աղվինու: Որոշեցինք հետևյալը:

Ա. Այն քահանաները, որոնք գյուղերում են լինում, տա-
րեկան երկու անգամ երկրպագում են եպիսկոպոսին և հոգևոր
կարգ ու կանոն են սովորում նրանից՝ ըստ Աստվածաշնչի.
և ինչպես կարգն է, տարվա մեջ եպիսկոպոսին ընծա պետք է
տարվի:

Բ. Երբ քահանա և սարկավագ են ձեռնադրում, շորս դրամ
քահանային, իսկ երկու դրամ սարկավագին պետք է տան:

Գ. Ազնվական կամ թագավորական ցեղին պատկանող
որևէ մեկը կենդանության ժամանակ իր ձեռքով հոգու բաժին
պետք է տա. ասենք՝ ձի թամբով ու սանձով և կամ ինչ հարբա-
տուկներն որ ունի, դրանից պետք է տա. եթե կենդանության
օրոք չտա, ապա նրա մահից հետո ընտանիքն է պարտավոր
տալ:

Դ. Քահանային ժողովրդի կողմից յայտու կարգը այսպես է
լինելու. ունևորը պետք է տա շորս գրիմ¹¹⁰ ցորեն, վեց գրիմ
զարի, տասնվեց փան¹¹² քաղցու. իսկ նա, որ հացասակավ է,
դրա կեսը պետք է տա. ինչ վերաբերում է գինուն, թող տա
այնքան, որ շափ կարող է: Վար ու ցանք և այգի չունեցողից
չպետք է առնեն. իսկ նա, որ իր հոգու համար սրանցից ավելին
կտա, բարիք կանի: Ինչպես Պողոսն է ասում. «նա, որ առատու-
թյամբ է սերմանում, առատությամբ էլ կհնձի»: Իսկ նա, ով
ոչխար ունի, պետք է տանից մի ոչխար տա, երեք գզաթ բուրդ
ու մի զլուխ պանիր. ով ձիեր ունի տանը, պետք է տա մի քու-
ռակ, իսկ խոշոր եղջերավոր անասուն ունեցողը՝ մի
հորթ:

Ե. Աշխարհականներից ոչ ոք՝ ազնվական, շինական կամ
մեկ ուրիշը, տարվա ընթացքում պատարագը բաց չպետք է
թողնի, այսինքն՝ մեռելների հիշատակը պետք է կատարի,
ինչպես որ կարող է. իրենց վաստակից մեռելներին անմաս
չպետք է թողնեն. մեռած մարդու համար մի ձի, եթե ձի կա,
մի խոշոր եղջերավոր անասուն՝ արջառ, եթե կա. մեռելի
տեղը եկեղեցուն պետք է տա, դրանցից որ մեկը կամենա:
Զ. Եթե վաներիցը կամ որևէ վանական վանքին վնաս է

հասցնում* (գողանում է) և վրան հաստատվում է, պետք է
անարգեն ու տեղից հեռացնեն, իսկ գողացածը** գրավեն
եկեղեցու համար:

Է. Եթե մի վանքի քահանաները շատ են, իսկ ժողովուրդը՝
քիչ, և մի այլ վանքի ժողովուրդն է շատ, բայց քահանաները
քիչ են, շատ ժողովուրդ ունեցող վանքից ժողովրդի մի մասը
վերցնում և հանձնում են այն վանքին, որի քահանաներն են
շատ:

Ը. Եթե քրիստոնյա մարդը կռվում և արյուն է թափում.
ներկայացնում են եպիսկոպոսին ու ըստ օրենքների պատժում:

Թ. Այն քահանան, որ հովվում է մեծ գյուղի վրա, մի այլ
գյուղ ևս չպետք է սահի. իսկ եթե երկու գյուղեր միմյանց մոտ
են, կարող է հովվել մի քահանա և առհասարակ քահանան
սպասարկում է այնքան, որքան կարողանում է կուտավարել:

Փ. Ոչ մի տղամարդ երրորդ պորտի ազգակցուհի կին չպետք
է առնի և եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանա:

ՓԱ. Ով առանց պատճառի կնոջը բաց է թողնում ու
առանց սյակի կին է առնում, ով անօրեն ու մարդասպան է և
կամ կախարդահարցությամբ է զբաղվում, նրան կապելով
պետք է թագավորի մոտ տանել ու շարաշար կերպով սպանել:

ՓԲ. Նրանց, որոնք լացուկոծում են տան գլխավորին,
գուսանների հետ պետք է կապել, տանել թագավորի դուռը և
պատժել. իսկ հարազատները չպետք է համարձակվեն նրանց
հետևից լաց լինել:

ՓԳ. Նրան, որ գեղ է ուտում, և նրան, որ քառասունքին
միս է ուտում, կիրակի օրը աշխատում է ու եկեղեցի չի գնում,
քահանան, ժողովրդի հետ միացած, պատժում է:

ՓԴ. Նա, որ շորեքշարթի կամ ուրբաթ աղուհացից առաջ
միս է ուտում, մի շաքաթ պաս պետք է պահի. իսկ եթե մեկը
գա ու քահանայի մոտ այդ մասին վիպուկություն տա, թե պասը

* Գալթանք առնել, թարգմանեցինք վնաս հասցնել (ղողանալ, թալա-
նել): Գովեթը թարգմանում է վատ վարք ունենալ:

** Եկոտաթք բառը թարգմանեցինք, ըստ Ն. Բյուզանդացու՝ մանուկ,
սղա: Մենք ընդունեցինք Անաույանի բացատրությունը (տե՛ս «Հայերեն նոր
բառեր հին մատենագրության մեջ», էջ 9):

չի պահել, գյուղի տանուտերը նրանից պետք է մի եզ անի ու տա քահանային:

ԺԾ. Եթե որևէ մի աշխարհական մարդ բամբասի քահանայի կամ սարկավազի և խոստովանի, թե իրոք այդպես է, եպիսկոպոսը կարգ է սահմանում նրա վրա, ու այդպիսին անապատում ապաշխարում է: Իսկ եթե ճիշտը չի խոստովանում, այլ ուրիշներն են հայտնում ճշտությամբ, և այդ պարզվում է, ինչպես որ կանոնների մեջ գրված է, պետք է պատժեն ու գյուղից հեռացնեն. իսկ եթե հանցանքը չի պարզվում, պետք է կտրգադրեն, որ քահանային նվեր տա, և այդ երդում է լինում նրա համար:

ԺԶ. Եթե մի որևէ քահանայի ընկերներն ու աշակերտները մեկը են բարդում այդ քահանայի վրա, իսկ իրենք անմեղ են, քահանան պետք է կանգնի սուրբ սեղանի, իսկ ամբաստանողները՝ ժողովրդի առաջ, ապա պետք է բեմից իջեցնեն և գյուղից արտաքսեն: Իսկ եթե նրա ընկերները և աշակերտները վրեժով լցված են, և ժողովուրդը գիտի, որ նրանք առաջ խոով են եղել, քահանան պատարագ պետք է մատուցի, և ժողովուրդը անեծքով նրանց դուրս քշի: Իսկ եթե խոստովանում են, որ սուտ են ասել, պետք է ապաշխարանք դնեն դրանց վրա և վանքից չհանեն. բայց եթե դրանից հետո էլ հանցանք են գործում, պետք է դատվեն կանոններով:

ԺԷ. Գարձյալ՝ եթե եպիսկոպոսներն ու քահանաները թագավորի մոտ զանգատվեն ազնվականների դեմ, թե դրանք գյուղում երկու կամ երեք եկեղեցի վանք են դարձնում, և եթե թագավորի ներկայությամբ ազնվական մարդիկ պայմանավորվեցին, և թագավորին, եպիսկոպոսին, ազնվականներին այդպես հաճելի թվաց, թե վանք դարձված եկեղեցիները կթողնեն նույն վիճակում, իսկ եկեղեցու պաղլին ու տուրքը կտան մայր եկեղեցուն*:

* Քնադիտ է շեթել գարաբեայ եկեղեցին թուրքն և զպտուղ և զհաս եկեղեցու: Ի վսամ եկեղեցույն տացնես: Կորայր թուրքանդացին կարծում է: Թե վսամ նշանակում է եկեղեցի, իսկ Գովեսթը կարծում է, թե դա հատուկ անուն է: Վսամ դորձածված է երեք անգամ և երկը տեղն էլ նշանակում է մայր, զլիսավար:

ԺԸ. Եթե ազնվականները տասանորդ են տալիս, պետք է մի մասը բուն գլխավոր եկեղեցուն տան, մյուս մասը՝ իրենց եկեղեցուն:

ԺԹ. Կիրակի օրը տերն ու ծառան պետք է զնան մայր եկեղեցի, աղոթքներ ու հիշատակ կատարեն եկեղեցում, իսկ կրոնավորը հոգեբաժինը եկեղեցուն պետք է տա:

Ի. Ազնվականները առանց եպիսկոպոսի իրավունք չունեն քահանային հեռացնել կամ նշանակել՝ չնայած որ իրենց դատակերտն է. եպիսկոպոսն էլ չպետք է առանց նրանց ազատի կամ նշանակի: Եթե ազնվականից կամ ժողովրդից քահանային վստանգ է սպառնում, քահանան էլ իրավունք չունի հեռանալու առանց եպիսկոպոսի թույլտվության:

ԻԱ. Եթե որևէ ազնվական ցանկանում է իր եկեղեցում սեղան կառուցել, կա՛մ ինչ-որ մասունքներ բերել, կա՛մ պատարագ անել, պետք է կատարի եպիսկոպոսի հրամանով, սրբան էլ ինքը կարողություն ունենա: Եթե կատարում է ինույնտիպությամբ, կօրհնվի, իսկ եթե այդպես չի անում, թող եկեղեցուց հեռու մնա, այլապես ըստ իր կարողության տուգանք պետք է վճարի եպիսկոպոսին: Իսկ դրանից հետո ինչ-քան տուգանք տա այդ մարդը ըստ կանոնների, թող օրհնությամբ կատարի:

ԻԲ. Այս պայմանները թագավորի ներկայությամբ գրեցին եպիսկոպոսներ, քահանաներ, ազնվականներ: Թող մեր եպիսկոպոսների, քահանաների ու եկեղեցու կողմից օրհնվի թագավորը թագուհով, իր գավախով ու ամբողջ երկրով հանդերձ. թող օրհնվեն նաև այս ժողովին մասնակցողները: Այս հրամանը մատանիներով կըրեցին արքայի հրամանակատար Մուծիկր, պալատի վերակացու Միրհորիկը և տոհմապետներ Մարութը, Տիրազը, Սպարակոսը, Ղաման, Բակուրը, Ռատանը, Արշեսը, Գարգմանա տեր քաջ Վարդանը, Խուրսը, Գերմանոսանը, Խոսկենը, Փիրոզը, Նահապետը, Աղվանքի բոլոր ազնվատաները և գրության ավելի վավերական լինելու համար կիրվեց նաև Աղվանքի թագավոր Վաչագանի մատանիով:

Գ լ ու ի ի Ի Է

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՒԻՐ ՄԵՍՐՈՊԻ ԵՎ ՆՐԱ
ԸՆԳԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այնպես եղավ, որ Աղվանքի կաթողիկոս Գրիգորիսի նա-
հատակությունից հետո արևելյան կողմերի ժողովուրդները
վերստին թաղվեցին դիցազար կռամոլության մեջ. և հաճա-
խակի ուխտագնաց լինելով ասորւշաններին՝ քրիստոնյա-
ների դեմ հալածանքներ սկսեցին: Մեկը, որ առաջ վարդապետ
էր եղել և որ սուրբ հոգու հովանավորությամբ երեք ժողո-
վուրդների՝ հայերի, աղվանների ու վրացիների համար տառեր
էր ստեղծել, դրանից հետո գնաց սուրբ Երուսաղեմ՝ ուխտա-
դրության: Այնտեղից աշակերտներով վերադարձավ՝ իր հետ
արծաթյա մի խաչ ունենալով, որը տեղ-տեղ ոսկուց էր պատ-
րաստված, և որի մեջ Քրիստոսի խաչից մաս էր ձուլված:
Անցնելով Հայաստանի միջով՝ ճանապարհովում և համուում է
արևելքի սահմանները՝ Ուտի գավառը: Գալով այդտեղ՝ բնակ-
վում են ճախճախտ տեղերում, լուսարույսեր աճած ճահճե-
ներում՝ մոտիկ Գիս կոչված վայրին: Այդ ժամանակ նա նորո-
գելով վերականգնում է եկեղեցու հավատը: Ավետարանի
քարոզը տարածում է Ուտիքում, Աղվանքում, Լիփնքում,
Կասպքում և Ճորա կիրճում: Այլազգի այն ցեղերին, որոնց
Ալեքսանդր Մակեդոնացին գերեվարելով բերել բնակեցրել էր
կովկասի մեծ լեռան շուրջը, այսինքն՝ պարզարներին, կամի-
ճիկներին¹²⁸, հեփթաղներին, նորից քրիստոնյա է դարձնում,
աստվածապաշտության կարգ ու կանոն է ուսուցանում, որ
շատ վաղուց սովորել ու մտացել էին: Միաժամանակ քարո-
զիչ ու առաքյալ լինելով վայրենաբարո սարոստայններին¹²⁹,
իրենց լեզվով զիր ու գրականության էր ծանոթացնում: Այն-
տեղից վերադառնալով ճահճեները՝ բնակութուն է հաստա-
տում. բայց թաքնված է մնում նրանց շար իշխանների սպառ-
նալիքներից. չբռնվելով ու թաքուն ապրելով, այնտեղից
օրրստորե հաստատում է աստու եկեղեցիները:

Եվ հենց այնտեղ մոլորության ոգին գրգռում է գազանացած
քոնակալների միտքը. նրանք, գայրուլթով ու կատաղությամբ

յցված, ամեն շանք թափում են, որպեսզի նրանց սպանեն:
Իսկ երանելի Մաշտոցը սուրբ հոգուց ներգործված շտապում
է մի փոս փորել գործի անհրաժեշտության համար և աստու-
ժային գանձը, այսինքն՝ տիրոջ խաչը, տապան է դնում ու
ծածկում է գեանափոր կայանում:

Այնուհետև հավատարիմ ու կրոնակից աշակերտների հետ
միաբերան աղոթքների ու մաղթանքների առյավինելով՝ մի-
մյանց հետ համաձայնվում և երկու խմբի են բաժանվում:
Մի խումբը մտածում է գնալ գավառները, իսկ մյուսը կտրում-
անցնում է շատ երկրներ ու քրիստոնեություն է քարոզում:
Բայց մնացած խումբը կարճ ժամանակից հետո խաչի կայանի
տեղում նահատակվում է: Դրանց նահատակության վայրում
լուսեղեն հրաշքներ և դարմանալի սքանչելիքներ են երևում,
որը անհավատները շատ անգամ տեսնելով, սովորեցին, թե
այդ հրաշքը մեծ աստու գործն է. ուստի միաբան կերպով
քրիստոնյա դարձան և բոլորը մկրտվեցին:

Իսկ նորահավատներից մեկը, որ բաղմամբով անգամ հիշ-
յալ հրաշքը տեսել էր խաչի գեանափոր կայանի վրա, մի քա-
ռակողմ հողե մատուռ է շինում, տապանը տախտակամածում
է, նահատակների մասունքները ամփոփում է նույն տապանի
մեջ և ամեն տարի ուխտի գնալով տոնում է նրանց հիշատակ-
ները: Այդ տեղում շատերը բժշկվում էին, որի պատճառով
հավատացյալները նվաճվելով ամրապնդվում էին հավատի
մեջ: Ամենից առաջ այնտեղ հիմք դնելով խաչի կայանի վրա
աստու եկեղեցին շինեցին. այդ տեղը, որ Գիս էր կոչվում,
հին եկեղեցի էին անվանում: Այլև՝ երկար ժամանակ անցնե-
լուց հետո վարադ-Փերոժ անունով Առանշահի տոհմից մի
ազնվական իշխան կամեցավ նորոգել հին եկեղեցին, բայց
յեր կարողանում զմբեթի աղյուսաշար զազաթը քանդել,
որովհետև այնտեղ կայան էին գտել տիրոջ խաչն ու նահատակ-
ների մասունքները:

Գ լ ու խ Ի Ը

ՈՍՏ Բ ՄԱՆՏՈ ՅԻ ԱՇԽԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՊԱՏՄԱԿԱՆ
ԱՎԱՆԴՈՒԹՅԱՄԻ

Մաշտոցից հետո կարճ ժամանակ անց նրա աշակերտները, որ գտնվում էին Աղվանքի գավառներում, սուրբ հոգու ներշնչմամբ հավաքվեցին մի վայրում խորհրդակցելու, որպեսզի շտապեն բարի գործեր կատարելու: «Մենք ի՞նչ կարող ենք անել,— ասում են,— որովհետև նա, որ մեր լուսավորությունն ազդական էր, վախճանվեց: Եվ ահա նրանից որք մնացածներս եկեք, եղբայրներ, գնանք աստվածային Երուսաղեմ քաղաքը և այնտեղ նրանցից մեզ համար առաջնորդ ինդրենք, որովհետև արևելյան այս երկրի լուսավորությունը սուրբ Եղիշափ միջոցով Երուսաղեմից է սկիզբ առել:»

Ապա կազմ ու պատրաստ երեք խմբի բաժանվեցին և, զուրս դալով Աղվանքի կողմերից, Ասորեստանի սահմանների մոտով առաջ շարժվեցին. անընդհատ գնալով հասան Երուսաղեմ քաղաքը: Մտնելով աստվածաբնակ եկեղեցին՝ երկրպագեցին ամենքին ասրեցնող կենաց փայտին: Հանդիպեցին հոգի ուրախացնող աստվածադարձ հայրապետին, եկեղեցու կրոնավորներին խոնարհ համբուլքով սղջսնեցին և նրանցից բնզունվեցին: Հայրապետի ներկայությամբ Մաշտոցի ջանքն ու շարշարանքները ամբողջովին պատմեցին. ասացին, թե ի՞նչ տեսակ հրաշքներ էր կատարում բարբարոսների մոտ՝ նրանց ուղղելու համար: Այս լսելով՝ նրանք մեծ ուրախությամբ բնզունեցին նրանց, շատ մեծարանքներ ցույց տվին՝ խնամք տանելով: Երկար ժամանակ այնտեղ գործեցին. իրենց կողմը գրավեցին երեք աստվածասեր քահանաներ, որոնցից առաջինը Աթանասիոսն էր: Նրանց ազաչելով՝ համաձայնեցրին իրենց հետ պալու՝ խոստանալով նրանց առաջնորդությունն արարողությունը, երանությունը ի համբուլքով պազունության արարողությունը, երանությունը ի համբուլքով համբուրեցին սուրբ պատրիարքի ոտքերը: Պատրիարքի հրամանով այնտեղից ձանապարհվեցին ոսկյա ու արծաթի սպասներով, աստծու բոլոր սրբությունների մասունքներով:

մշտախինդ ցնծությամբ բաժանվելով՝ քահանաների հետ միասին ուղևորվեցին-եկան: Գալով քառասունքի սուրբ պապին՝ զատկի պատեքի յոթերորդ շաբաթում, հասան խորածորերով հարուստ, անտառախիտ ու անտառներով առատ Արցախ երկիրը՝ Մեծ Կվյանք¹²⁰ գավառը: Ճանապարհի կիրճերում խումբը երկու մասի բաժանվեց. առաջին մասը խմբով միասին նստեց այն տեղը, որը կոչում են Աստղաբլուր,¹²¹ այսինքն՝ հյուսիսային կողմում. իսկ երկրորդ մասը բանակեց Տրտու¹²² գետի այն կողմը, անտառապատ հովտի հարավային մասում՝ Չղախ անվանված տեղում: Որովհետև նրանք ուխտ էին արել և միմյանց խոսք տվել՝ ամենասուրբ զատիկը կատարել այն տեղում:

Գ լ ու խ Ի Թ

ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԱՐԲՈՂՋ ԱՂՎԱՆՔ, ՀԱՅԱՍՏԱՆ
ՈՒ ՎՐԱՍՏԱՆ. ԻՎ ՄԵՍՐՈՊԻ ԱՇԽԱԿԵՐՏՆԵՐԻ ՆԱ ՀԱՍՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այդ ժամանակներում Ռոմանոսքյան¹²³ թագավորը իր զորքերն ու Թորեկյան¹²³ բանակը միացրեց, հավաքեց նաև հոների բոլոր զորքերը և անցավ Կուր գետի այս կողմը՝ տարածվելով Ուտիք գավառում: Իր բանակը բերեց, բանակեցրեց հաղխադ¹²⁴ քաղաքի մոտ: Այդտեղ երեք զորավարներ ընտրելով՝ նշանակեց մեծ բանակի հրամանատարներ ու նրանց հրամանատարություն տակ խմբավորեց տասնմեկ զորքերի բազմությունը. և հրամայեց երեք մասի բաժանել, հորձակվել Աղվանքի, Հայաստանի ու Վրաստանի վրա: Իսկ զորքի երրորդ մասը, զատկի սկզբին հասնելով Արցախ, հարձակվում է Մեծ Կվյանքի վրա: Այդ ավազակային հարձակման լուրը լսելով՝ Չղախում բնակություն հաստատած Երուսաղեմից եկած խումբը մեծ սարսափով բռնվեց: Աճապարանքով միատեղ հավաքեցին բոլոր մասունքները, լցրին երկու արծաթյա սափորների մեջ ու թաղեցին հողում:

Ընկ անմիջապես վրա հասավ այն զուժակոխնչ օրհասական իրարանցումը, տեղատարափ անձրևի նման տարածվեց անխուսափելի տարակուսանքը: Հարձակվողները ծովի ալիք-

ների նման նախ և առաջ հասան Աստղաբուր վայրը: Քնակիշ-
ները, անտեղյակ լինելով կատարվող դեպքերին, անակնկալ
մի ժամի բուրբ միասին ենթարկվեցին սրածուխի: Ոսկյա
ու արծաթյա սպասները ավարեցին, իսկ սրբութունները բու-
րով մեկ ցաք ու ցրիվ տվին: Գլխավոր քահանա երանելի Աթա-
նասին տեղնուտեղը նահատակեցին, իսկ մնացած բնակչու-
թյանը գերեցին ու այնտեղ շրջապատման մեջ առան:

Քայց այդտեղ էր նաև Ուտի¹²⁵ զավառից, բուն տեղացի
ազնվականներից Քազինք գյուղացի Քազուհի անունով մի
կին, որը շատ հարուստ էր և հաճախ երուսաղեմացիների հետ
էր լինում: Երբ հոների զորավարը գերվածների մեջ տեսնում
է սրան, դիվագրդիտ. ցանկասիրական կրքով լցված՝ տոփանք
է տածում դեպի նա, որովհետև նա անշափ գեղեցիկ էր:
Հրամայում է, որ նրան մեծ զուշությամբ պահեն. կամենում
էր նրան կին առնել: Իրենք իրենց առօրյա արշավանքները
վերջացրին, գտվառի ամբողջ ավարն ու գերիների համախումբ
բախտակիցներին բերին, հավաքեցին մի տեղ: Նրանցից շա-
տերին սպանեցին. իսկ մնացածներին գերեվարելով քերեցին
Աստղաբուր:

Գերվածների մեջ բռնել էին Աթանասինու նահատակի երկու
քահանա ընկերներին: Քանի որ հոների մեծ զորավարը այն
գիշեր իր զորքով այնտեղ էր բանակել, ուստի օրվա երեկո-
յան պահին թորելյան բանակի զորապետին հրամայում է
երանելի Քազուհուն իր մոտ բերել, որպեսզի նրա հետ իր
վավաշտ կամքը կատարի: Իսկ նա, տիրոջ զննքի զորությամբ
գոտեպնդված, անարգում է նրան, չի լսում, չի համաձայն-
վում, մինչև անգամ ծաղր ու ծանակի է ենթարկում լկտի
բարբարոսին: Նա ասում է. «Աստված չանի, որ ես իմ պար-
կեշտութունն ու ողջախոհութունը հանձնեմ շնազգի ու
խողարբար հեթանոսներին, կամ մինչև մահ հասցնող տան-
ջանքներից վախենամ և այս չնչին կյանքը փոխանակեմ այն
կյանքի հետ, որ անանց է»: Եվ ձեռքերը առ աստված բարձրա-
ցրած՝ խոսում էր, ասելով. «Տերանց տեր և թագավորաց
թագավոր, ինձ՝ քեզ հուսացողիս, ամոթով մի՛ թողնիր. ան-
բիծ ու անմեղ պահիր ժամանակավոր այս փորձանքից: Ինչ-
պես որ նորոգող լույս ավազանի մկրտութունը ինձ շնոր-

հեցիր՝ քեզ ճանաչելու համար, այնպես էլ արա այժմ, որպես-
զի հավատով ու մաքրությամբ մեղքերից զերծ մնամ:
Քո ճշմարտության լույսը կաթեցրո՛ւ անզգա բարբարոսների
սիրտը, որպեսզի սրանք էլ քեզ ճանաչեն, ո՛վ դու միայն
ճշմարիտ աստված»:

Իսկ երբ անօրենների խուճբը այս լսեց, զնացին, իրենց
իշխանին հայտնեցին, որովհետև թարգման կար նրանց մեջ,
որ լսում էր նրանց ամբողջ խոսակցությունը: Այն ժամանակ
բռնավորը աուցվեց կատաղի ցատուձով, կրծոտող ու մռչա-
ցող իր գազանության համապատասխան զայրագնեց և հրա-
ման արձակեց, որ եթե շա շուքով ու պատվով, անասելի
տանջանքներով շարամահ անեն նրան: Սպասավորները գնա-
ցին ու պարտագրեցին, որ իշխանի կամքը կատարի, իսկ երբ
չկարողացան համաձայնեցնել շհրապուրվող Քազուհուն, ձեռ-
քերը կապեցին ետևը, մազերից քաշ տվին, անապատային
սուր-սուր փշերով ձեծեցին նրա դեմքը, առհասարակ սրբի
մարմինը քարշ տվին ու բզկտեցին և հետո սրով կտրեցին
երանելու գլուխը: Այս մարտը սուրբ Հոսիսիմն կույսի մարտի
նման եղավ, և աստվածահաղթ պսակներով Քրիստոսի պսա-
կով պսակվեց այն մեծ Քազուհին:

Դրանից հետո, հենց նույն գիշերը, մինչդեռ այլազգի իշ-
խանր և իր զորականները զբաղված էին անքուն խնջույքով,
ծիծաղում ու խնդում էին, հանկարծակի տիրոջից մի զարմա-
նալի հրաշք երևաց նրանց: Բոլորը ահնհայտորեն տեսան, որ
մի պայծառ լույս է ծագել այն տեղում, ուր սուրբ Քազուհին
ուահատակվեց, և ուր ցրված էին նրա շորերի ծվենները, որ
սփռված ու տարածված էին անտառով մեկ, փայլում էին
ինչպես աստղեր: Երկար ժամանակ աստղանման լույսը ծա-
ցիլ էր այն տեղում և սփռված էր սուրբ նահատակների վրա:
Մարդկանց բազմութունը այս բանը տեսնելով՝ տեղը կոչեց
Աստղաբուր, որ մնում է մինչև այսօր: Այս պատճառով ավե-
տող և սրանչելի հրաշքով հիանում է իշխանը ու, մեծ երկյու-
ղի մեջ ընկնելով, հրամայում է իր մոտ կանչել տիրոջ քահա-
նաներին: Եվ նրանցից սովորելով փրկության ուղին՝ հավա-
տաց կենդանի աստծուն: Հրամայեց սրբերի մատուց-
ները հավաքել, մաքուր կերպաններով փաթաթել ու թաղել

բլուրում: Եվ հենց այնտեղ ոչխարներից ու այծերից օրհնության պատարագ են մատուցում ու Քրիստոսի տոնը փառավոր տոնախմբությամբ կատարում են՝ հենց նույն նահատակվածների հիշատակներով:

Գ լ ու լ Ս

ՔՈՐԻՆՏԻԱՆ ՄԵՍ ԶՈՐԱՎԱՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻՆ, ՈՐՊԵՍ ԱՍՏՈՒՒ, ՀԱՎԱՏԱՐԱԸ ԵՎ ԵՐ ՔԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՂՎԱՆՔՈՒՄ ԿՐԹԱՆԱՏԻԿՆԵՐԸ՝ ԶՈՐ ՔՆՐՈՎ, ՈՐԳԻՆԵՐՈՎ, ՔՍՀԱՆԱՅՈՒՄԻՆ ԴԱՍԵՐՈՎ ԶԱՆԳԵՐ Չ

Երբ լույսի ճշմարտությունը հասավ սուրբ իշխան Թեոփիլոսի սիրտը, հրամայեց բաց թողնել գերիներին, իսկ ինքը զատիկ առավոտյան սուրբ քահանաների ու բազմաթիվ հավատացյալների հետ միասին ագիտոսական բանակով շարժվեց, զնայ ու հասավ Ուտի գավառը: Իշան բանակեցին Կուր գետի ափին՝ Զոմաքատակ՝ կամուրջի նավահանգստի մոտ: Իսկ ինքը՝ Ռոսմասթյան մեծ թագավորը, վերադարձել ու իր ամբողջ զորքով ասպատակում էր: Բազմախումբ գերիներով, մեծ ավարով անցավ Կուր գետը և արևելյան կողմից բանակ զարկեց գետի այն կողմում՝ նրանց զեմդիմաց: Այդ ժամանակ կռույտական մոլորությունը հրաման տվեց մեհենական խնջուկներով զոհանվածներ ձսնել իր աստվածներին: Քրիստոսի զարդ եղած Թեոփիլոսն ու Թորեյան բանակն այս տեսնելով և քրիստոնեական կրոնի կարգ ու կանոնի համաձայն սուրբ քահանաների օրհնություն միջոցով պատարագներ են մատուցում աստծուն և իրենց խաչազարդ դրոշակներ են պատրաստում: Իսկ բարբարոսների դազանաբարո ու անօրեն թագավորը, իր այս տեսավ, դիվագրգիռ կատաղությունը զայրացած՝ հրամայեց իր մոտ կանչել Թեոփիլոս սուրբ զորավարին երեսուն մարդու հետ: Նախ աղաչանքով, ապա

* Զում նշանակում է կամուրջ, Բառակ՝ նման, պեռ: Հավանական ենք գտնում այլպիսի կաղմություններ:

բարկություններ խոսել սկսեց նրա հետ և ասաց՝ «Միրելի լինելով մեր թագավորությունը՝ քաջությունը հայտնի դարձար, նաև խիստ շատ մեծարվեցիր մեր խնամակալությունից, ուստի և բոլորից նախապատիվ ես, ո՛վ դու եռամաս՝ զորավարությունը փառավորվածդ: Ինչո՞ւ դու թողեցիր մեր ցեղի տոհմական աստվածներին, որոնք մեզ արշավանքներում հաղթություն են տվել, և դու ինձանից ապստամբվեցիր քո զորականներով, և պաշտում եք այն աստծուն, որին մենք չենք հանաչում: Այդ պատճառով, եթե դու զոհեր շատուցես մեր աստվածներին, մահվան ենթակա եք դու և քո զորականները միասին»:

Քրիստոսին հավատացող քաջ զորավար Թեոփիլոսը պատասխանում է թագավորին ու ասում. «Մարդու կյանքի իմաստությունը առաքինությունն է, իսկ առաքինությունը աստվածապաշտության ամենալավ բարի մայրն է: Արդ՝ եթե Քրիստոսի փառքի ավելանալով մեր էություն մեջ ծնունդը միավորվեց, այսինքն՝ շնորհիվ լույսի իմացանք, ճանաչեցինք աստծուն՝ երկնքի և երկրի արարիչին, միահասակ ու սուրբ երրորդությունը, որն իր բարեբարությունը կամեցավ մեզ հեռացնել շնչին կուռքերի վնասակարությունից: Արդ՝ մի՞թե դու կկարողանաս մեզանից արգելված ոչանել երկնային բնությունը, կամ ձեր վայրկենական պատիվը կամենում ես համեմատել աստվածային պատվի հետ, կամ թե քո սպանալիքներով կարծում ես կվախեցնես մեզ, որ մենք թողնենք աստծուն, առժամանակյա կյանք ընտրենք ու անմոռուններին ուղարկենք: Այդ ժամանակ սաստիկ բարկությունը քո ցուցանեց մեզ ընկնելով՝ մոնչում է թագավորը և հրամայում սուրբ զորավար Թեոփիլոսին իր երեսուն ընկերներով ու սուրբ քահանաներով տանջալից մահվամբ սպանել: Այս վերջինները բոլոր նահատակություններ արիաբար գլուխ բերին նահատակության մարտը և ըստ նահատակության հանդեսի Քրիստոսից հաղթության պսակ ընդունեցին, այսինքն՝ սուրբ հավատացյալ Թեոփիլոսը քահանայական դասով ու երեսուն զորականներով փոխադրվեց երկնային տաճարները:

Հասկանալի չէ: ճեռամանեայ զորավարությունը փառաբանալով Գույն ակնարկում է երեք զորամասի հրամանատար լինելը:

Իսկ հրանելի Մովսեսը և Աներոյոգիսը՝ սուրբ զորավար Քենոփիլոսի որդիները, ագիտորոյան¹²⁶ գնդով և այլ հավատացյալներով երբ այս տեսան, աճապարանքով հեծան իրենց երիվարները ու փախան անօրին թագավորից՝ լավ համարելով Քրիստոսի համար հալածվել, քան հանցավոր կյանքով անհավատ ապրել. գերադասում էին Քրիստոսի համար նախատինքներ կրել, քան հայրենական գանձերի առատութլուներ: Այդ ժամանակ նրանք մեկնեցին հարավային կողմերը, զնացին-հասան բարձրաբերձ կատարը մի մեծ լեռան, որ իր մեջ առած շրջապատում է այդ երկրի բազմաթիվ գավառներ:

Այս անողորմ թագավորի հրամանով գնդերի են բաժանվում, և հոների զորքը հետապնդում է նրանց: Սրանք, հանելուվ լեռան կատարը, շանում են շատ աղաչանքներով նրանց դարձի բերել կուռքերի երկրպագութլան ու թագավորի հնազանդութլան: Բայց շկարողանալով նրանց համոզել՝ նույն տեղում նրանց սրի են քաշում: Նրանք՝ սուրբ Մովսեսը երշանիկ եղբայրներով ամբողջ քրիստոսազգեստ ագիտորոյան բանակով այսպես վերջացրին իրենց կյանքը. սրանք, Քրիստոսից նահատակութլան պսակն ընդունելով, փայլում են անաղոտ փայլով. հյուսիսի ծայրից անմահ առազաստի համիշտակողներ դարձան բոլոր սրբերի հետ միասին. ամեն:

Վերջացավ «Աղվանից պատմութլան» առաջին գիրքը:

Գ Ի Ո Ւ Խ Ա

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ՊԱՏՆԱՃ Է ԱՅՍ ԿՐՔԻՆ՝

Ինչքան պայծառ է երկինքը աստղերով ու երկիրը բուսականութլամբ, այդպես էլ պատմիչի աշխատանքն է, որ ուրիշների նյութերով բոլորազարգվում է: Արևելքի կողմերը շատ գլուցյներ ունեն. դրանք բովանդակում են այլևայլ նյութեր, որոնք շին մտել հնագիւ պատմագիրների գրքերի մեջ. մենք նպատակահարմար գտանք դրանք հիշատակել մեր գրքի մեջ: Այստեղ խոսեցինք Որմզդյան Շապուհ թագավորի մասին, որը, իր թագավորութլամբ հպարտացած, ամբարտաժանութլամբ կամեցավ քննութլուեն կատարել, որ իմանա, թե ո՞ր ազգն ու լեզուն ունեն բարձ ու պատիվ: Շքեղ ճաշկերույթ կազմակերպեց պարսից ազնվատոհմ իշխանների Չամենի տոհմերի համար և ըստ նրանց իշխանութլան նախապատվեց բաժակով ու դալար ճյուղով** իր առջև. ամեն մեկին մեծարլած էր ցուցց տալիս: Իսկ մովսէսան մովսէստին*** տրբայական սեղանի շուրջը մեծ պատիվ էր տալիս:

* Պատկանյանք թարգմանել է սգրքի բովանդակութլան շարդրանքը. Մանանդյանք թարգմանել է «պատմութլուն ըստ իմ գրքերի» «Պատմութլուն ի գեպ զրոցս» մենք թարգմանեցինք, ինչպես որ այստեղ է:

** Ըստ Գովսեթի խոզոզի որթ:

*** Արաղաշտական կրոնի գլխավորը

խորհրդակցելով իր մեծամեծներին հետ, ասում է. «Պարսից ու պարթևների բուն պահլավիկ լինելը և ազնվական մարդկանց ծագումը շատ լավ գիտեմ, իսկ հայերի ազնվատոհմությունը ու նրանց նախապատիվ լինելը չկարողացանք իմանալ, ո՛չ մեր թագավոր հայրերից և ո՛չ էլ մատենագիրներից: Արդ, ձեր՝ հայոց նախարարներին առջև երկուսից մի ընտրություն կա, այն է՝ ցույց տալ ձեր հնագույն պատմության գիրքը, յուրաքանչյուր տոհմի աստիճանն ու պատիվը և կրկին մեր կողմից բարձր ու շքեղաշուք մեծարանքներով հարգվել: Իսկ եթե չեք կարող արհեստի այս բազմությունը ցույց տալ, ապա ձեր առաջվա բարձր, պատիվը, տունը, հողը, շուրքը և ամբողջ կարողությունը կնվիրենք արյաց ազնվականներին, իսկ ձեզ շնորհազրկված ետ կուզարկենք»: Նույն ժամին մեծ Հայաստանի իշխանները խորհուրդ արին ու թագավորին ներկայացրին Ագաթանգեղոսի բաղձալի պատմությունը: Թագավորը հրամայեց կարդալ ու թարգմանել պարսկերենի: Եվ երբ իմացավ, որ գիրքը սկսվում է իր նախնի Արտաշիից, ավելի ուրախացավ ու գիրքը դրվատելով խանդաղատալից դրեց իր աշքերի վրա: Նրա մեջ գտնելով տասնյոթ բարձի նկարագրությունը՝ սկսեց ըստ այդմ յուրաքանչյուրի տեղը արքայական սեղանի շուրջը կարգավորել: Երբ հասավ Սյունիքի տեր Անդուկին պատկանող տասնչորսերորդ բարձին, սա վերավորվեց, ոչինչ չճանաչեց ու զգացրեց արքային. բայց թագավորը դրան ուշադրություն չդարձրեց: Այդ ժամանակ լուր հասավ պալատ, թե խազիրները մեծ զորքով դուրս ելան Ճորա դռներից ու մտան մեր երկիրը: Շապուհը մեծ զորահավաք արեց. հավաքեց ասորիներ, խորասանցիներ, խորազմներ, էլ ավելի Ասորպատականի պարսից քաջերին, հայեր, վրացիներ, աղվաններ և Կովկաս լեռան տասներկու լեզվով խուժարուժ ցեղեր: Անհամար զորքերով վեր կացավ-գնաց նրանց դիմագրավելու:

Իսկ Անդուկը շարիք նյութեց իր և իր երկրի համար: Դարանամուտ եղավ արքայական տան դեմ՝ դավաճանելու իր զորքով: Հազար յոթ հարյուր մարդով, կատաղի ու արագընթաց երկվարներով գնաց-հասավ Տիգրոս քաղաքը, զորքը թաքցրեց քաղաքից դուրս, իսկ ինքը մի փոքրիկ զորամասով մտավ

քաղաք և անմեղ ձևանալով հայտնեց, թե եկել է Շապուհի մոտ: Բաղաքացիները մեծ պատիվներ տվին նրան: Իսկ երբ լույսը բացվեց, զորքը ներս մտավ, խլեցին ոսկու և արծաթի անհամար գանձեր, թանկագին ակնեղեն գոհարներ, մեծազինավար և ինչ որ կարողացան վերցնել, վերցրին թագավորական տնից ու մեծամեծ մարդկանց տներից, ավարեցին անչափ շատ և ամբողջը հավաքեցին Բաղաբերդում¹²⁷, իր բոլոր գավառների անասնակերը այրել հրամայեց, իսկ ինչ անդամները կար մարդկանց համար, հավաքեց, լցրեց բերդը. այդտեղ ժողովեց նաև զենքերը, հագուստեղենը և հեծյալների կարգ ու սարքը: Անդուկը հրաման արձակեց, որ բոլոր սյունեցիները փախչեն և իրենց տներն ու պաշարեղենները այրեն: Իսկ երկրի եկեղեցական սպասքներն ու զարդերը հավաքեց, բերեց Շաղատի եկեղեցին. հավաքեցին նաև սրբերի մասունքները. բոլորը լալով համբուրեց: Ութ օր գիշերային ժամերգություն կատարելուց հետո եկեղեցին հողաբլուրով ծածկեցին, իսկ իրենք ցրվեցին ամբողջ երկրով մեկ: Ոչ ոք չէր հանդգնում Սյունիքի անունը բերան բերել. քսանհինգ տարի ամբողջ երկիրը մնաց անմարդաբնակ ու անմշակ:

Իսկ երբ Շապուհ թագավորը պատերազմը վերջանալուց հետո եկավ ու տեսավ պատահած աղետը, ցասումնալից հրաման տվեց, որ իր բոլոր զորքերը մտնեն Սյունիք և գերեն ասուն ու անասուն: Բայց եկան, ոչինչ չգտան. շրջելով հասան Շապուհի¹²⁸ եկեղեցաբլուրը ու բարձրացան վեր. մեծ երկրաշարժ եղավ, ուստի պարսից զորքը վախենալով իր զորապետ Աթաշխոդայի հետ հեռացավ այդտեղից: Այդտեղից հեռանալով՝ ճակատամարտ են տալիս բերդի դեմ, որտեղից քարեր էին գլորում զառիվայրով և բոլորին ոչնչացնում: Կրկին, երրորդ անգամ ավելի ուժեղ ճակատամարտ տվեցին, բայց ոչինչ չկարողացան անել. ընդհակառակն, շատերը կոտորվեցին: Թագավորը զայրանալով կամեցավ մարտը է՛լ ավելի սաստկացնել: Այդ ժամանակ բոլոր մեծամեծները ընկան նրա ոտքերն ու աղաչեցին, որ այլևս ճակատամարտ չտան, այլ ամբողջ շուրջը քանդեն:

Այդ ժամանակ Անդուկը, հարմար պահ ընտրելով, թողնում է բիրդը ու մեծ հարստությունք անցնում Բյուզանդիա: Մեծ

պատիվների արժանանալով՝ հենց այնտեղ էլ մեռնում է։ Իսկ նրա որդի Բարեկը կարատում է հայրենի հողին. ինչպես որ քաղցր են ծնողները, այնպես էլ քաղցր է ծննդավայրը։ Բարեկը գնում է Պարսից թագավոր Շապուհի պալատը, այնտեղ հանդիպում է մի ինչ-որ զորականի ու տեղավորվում է նրա մոտ։ Պարսից օրինակական մրցությունների մեջ շատ մեծ շնորհք ու արիություն է ցույց տալիս, որին ոչ ոք չի ճանաչում։

Այդ ժամանակ հոների երկրից Հոնագուր* անունով մի հոն դուրս է գալիս, ուղարկում է Պարսկաստանը և մարդ ուղարկելով Շապուհի մոտ, ասում է. «Ինչի՞ համար է այս արյունահեղությունը, ե՛կ ես ու գու մենամարտենք»։

Ինքը՝ հոնը, զրահավորված էր հիսուն նյութից բաղկացած զրահներով, բարձրահասակ էր ու լայնաթիկուկը, գամերով ամրացված սաղավարտ կրող տհառին գլխով երեքթղյա ճակատը պղնձյա զրահով պատած, փայտյա երկարակոթ ունեցող հսկա նիզակով և կայծակնացույտ առեսերը բռնած՝ տեսնողներին ահաբեկում էր։

Այստեղ է, որ Բարեկի անունը հայտնի է դառնում թագավորին. ասում են, թե այս գործը նրա միջոցով կկատարվի։ Ընդ որում արքան Բարեկին իր մոտ է կանչում ու վարազագիր¹²⁹ մատանիով կնքված արքայական մի որոշում է հանձնում ու ասում է նրան. «Եթե այս մեծ վրեժը լուծես, իմ կողմից մեծ խոստումների կարժանանալու։ Նա հանձն է առնում կատարել այդ խնդիրը։ Նույն ժամին ապավինելով վերին օդնականությունը, ասում է. «Մյուսների կեղեցիկներ, օդնակն էր ինձու։ Ընդ վերջնում է իր պորտուգ գնեքերը, ձառանչավոր մարգարտազարդ արքայական զրահներով զարդարում է իր վայելուչ մարմինը, վագրակերպ սաղավարտով պատում դեղնեղի գլուխը, առևտրը կապում մեջքից, ոսկեհուռ վահանը պցում ձախ ուսը, իսկ արագամուխ նիզակը՝ աջ քաղաչը, հեծնում է սև երիվարը ու հենում է հակառակորդի դեմ։ Հարձակվում են միմյանց վրա՝ նիզակների հարվածներից ու հակահարվածներից որոտմունք է բարձրանում առաժուտից մինչև

(երեկոյան) ժամի իննը։ Անասելի հսկան պարտվում է, հաղթող է դուրս գալիս քաջ Բարեկը. նա շտապ դիմում է միջատարի սրին, որով տեղնուտեղը սայանում է մարգախոսող գազանին։

Շապուհը, մեծ ուրախությամբ լցված, կանչում է Բարեկին, որպեսզի կատարի նրան տված խոստումները։ Նա խոսք խնդրելով ասում է. «Թող պղնձյա սանդը քո գունից վերցվի»։ Իսկ սանդը լցված էր հնոցի մոխիրով, ովքեր գալիս էին այդտեղ, խփում էին սանդին և ասում. «Մյուսների իշխանությունը այս մոխիրի հետ թող վայր թափվի՝ կյանքով ու մտազրություններով»։ Թագավորը մեծ զարմանքով հրամայում է սանդը իր տեղից վերցնել։ Այս Բարեկը արքայից խնդրում է, որ իր քնիկ հայրենական երկիրը իրեն վերադարձնի։ Արքան շնորհում է նրան այն, և սա մեծ պատվով ուղարկվում է իր երկիրը։ Թագավորը սրան իրավունք է տալիս Բագրատունիների ու Մամիկոնյանների հետ համահավասար պատիվ ու աստիճան ունենալ։

Սա գալիս, անցնում է Արաքս գետը և Ակորդ¹³⁰ անունով մի գյուղ է կառուցում, որ նշանակում է առաջինն է կորզված հայրենիքից։ Իր իշխանության առաջին տարին որտեղ ելնելով՝ շրջում և տեսնում է անմարգաթնակ ու անմշակ երկիրը։ Հասնելով Շաղատ՝ բարձրանում է մի բլուր. այստեղից փախչում է մի եղջերու և ուղղվում է դեպի կեղեցարուրը. Բարեկը հետամտում է, իսկ եղջերուն բլրում աներևութանում է։ Երիվարի ոտքերը խրվում են բլրի մեջ։ Բարեկը իջնում է ձիուց ու հազիվ կարողանում է քաշել ձին։ Բուրբ սարսափահար են լինում. հողը ետ են տալիս բլրից և գտնում են գեղեցկաշեն կեղեցիկներ, որ չի էր աստվածային գանձերով, և որից անուշ հոտ էր բուրում։ Այդ օրը հոսի¹³¹ ամսի մեկն էր։

Նույն օրը շքեղ տոնակատարություն արին. Բազմություն էր հավաքված այնտեղ, և ինչ հիվանդ որ այդ ժամին այնտեղ եղավ, բուժվեց։ Անհավատները այս տեսնելով քրիստոնեություն ընդունեցին։ Միրովեցիները երկու հարուստ եղբայրներ՝ Կորր և Գազանը, որոնք մեծ զորքով եկել էին Բարեկի ետևից։ Կրանց համար Բարեկը վիճակ է պցում. Գորին հասնում է

* Համ Դոսեթի Հեռագուր ոչ թե անձանուն է, այլ ցեղանուն։

խոտ¹⁵² ավանք, իսկ կրտսերին՝ Գաղանին, վիճակվում է քաղձալի Շաղատ գյուղը:

Այս բանը տեղի ունեցավ շար Հազկերտի թագավորելուց քսան տարի առաջ, որը կամեցավ վերացնել քրիստոնեությունը և մեզ հնազանդեցնել Մազեզանց կրոնին: Այդ պատճառով նույն Հազկերտի կողմից նահատակվեցին սուրբ Վարդանանք՝ հազար վաթսուհինգ ընտիր տղամարդիկ: Այդ ժամանակից մինչև հայոց թվականի սկիզբը լինում է հարյուր* քսան տարի: Այսպես կատարվեցին դեպքերը:

Գ Լ Ի Ք

ԱՆՕՐԵՆ ՉԱԶԿԵՐՏԻ ԿՈՂՄԻՑ ԱՂՎԱՆՔԻ ՎՏԱՆԳՎԵԼԸ ԵՎ ՉԱՅՈՑ
ՁՈՐԱՎԱՐ ՎԱՐԴԱՆԵՑ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ԳՏԵՆԸ

Անհավատ Հազկերտի ժամանակներում սատանան բորբորում, գրգռում էր նրան՝ վերացնելու քրիստոնեությունը: Խստազույն հրաման եկավ Աղվանից աշխարհը, որով պահանջվում էր թողնել քրիստոնեությունը և հնազանդվել մոզական աղանդին՝ կրակապաշտությունը: Նույն աղետները միևնույն թագավորի կողմից նյութվեցին նաև Հայաստանում: Բայց Աղվանքի հազարապետը և այս երկրի սուրբ եպիսկոպոսապետը միաբանված զիմում են հայերի հետ դաշինքի. դալիս, պատմում են աղետալից դեպքերը ու խնդրում, որ հայերը մեծ աճապարանքով շատպեցնեն իրենց զորքերը. ասում են. «Պարսից զորքը, որ հոների երկրում էր, վերադարձավ ու եկավ-մտավ մեր երկիրը. նաև մեծ քանակություն մալ աշրուձի եկավ (պարսից) արքունիքից: Բացի այս երկուսից, երեք հարյուր էլ կրոնուսուլցներ են բերել իրենց հետ ու պառակտում են երկիրը: Ոմանց իրենց կողմն են քաշել և կամենում են եկեղեցին ձեռք գցել: Արքայի հրամանով բոլորի վրա ճնշում են գործադրում՝ ասելով, եթե կամավոր կերպով ընդունեք մեր

կրոնը, պարգևների ու պատիվների կարծանանաք արքայի կողմից, և պետական հարկը ձեզ կզիջվի: Իսկ եթե կամավոր կերպով չանեք այդ բանը, հրա ման ունենք գյուղերում, կալվածքներում ատրուշաններ շինելու, վաճառական կրակը ներս դնելու և մոգեր ու մոգախոսներ նշանակելու իբրև այս երկրի օրենսդիրներ: Իսկ եթե մեկնումեկը չեն թարկվի, մահվան կգատապարտվի, և այդպիսինի կինն ու որդիները կտարազրբվեն երկրից»:

Հայոց զորքերը այս բանը իմանալով չհուսալքվեցին, այլ քնդակառակին, այդ գույժի պատճառով ավելի համախմբվեցին. և նրանց քաշվերելով ուղարկեցին Աղվանք, որպեսզի մ'առժամանակ խաբելով գրավեն նրանց (պարսիկներին), որ եկեղեցու միաբանությունը իրենց ձեռքը չգցեն, մինչև որ մի կը կգտնեն: Այդ ժամանակ հայոց զորքը նամակ գրեց Քեդոզուս կայսրին, որ այս մեծ վտանգի մեջ օգնի նրանց: Քեդոզուս այդ ժամանակ խսկույն մեռնում է, իսկ անօրեն Մարկիանոսը թագավորելով գրժում է դաշինքը և իր ցանկությունները համապատասխան է դառնում հեթանոսների հետ: Հայ քաջերը, ոչ մի տեղից օգնություն չգտնելով, ալալվինում են բարձրալի վերին ամենակալ գործությունը, հայոց զորքը բաժանում են երեք մասի. առաջին մասը հանձնում են Ներշապուհ Ռաբոսյանին, որ պահպանի Ստրպատականը. երկրորդ մասը տալիս են հայոց Վարդան զորավարի ձեռքը, որպեսզի Վրաստանով տեղնի, զնա ճորա մարզպանի վրա, որը եկել, ավերել էր Աղվանքի եկեղեցիները:

Իսկ երանելի Վարդանը չգիտեր անիծված ուրացող Վասակի գարտնադործության մասին. Վասակը հայոց զորքի՝ Աղվանք գալուց առաջ պարսից մարզպան Մերսեբուխտին հայտնում է, որ հայոց զորքը բաժանել են մասերի և Վարդանին քիչ զորքով ուղարկել են այդ կողմը: «Արդ՝ պատրաստ եղիք զուրս գալու դրանց դեմ, որպեսզի խապառ ոչնչացնես»: Այս էր այդ անօրենի խորհուրդը: Մերսեբուխտը, հաշվի առնելով Վասակի բացալիրանքները, չի մնում ճորա կողմերը, այլ հավարում է երկրորդ ամբողջ բազմությունը, արագություն բալիս, անձնում է Կուր մեծ գետը և հանդիպում է Վարդանին՝ Վրաստանի սահմանների վրա՝ Նաղիտալ քաղաքի դիմաց, որը Աղ-

* «Եւ անոր մինչև ցհայ թիւն ճի՛ ամ լինէր: Պետք է լիներ ճ, որովհետև այդ ժամանակամիջոցը ոչ թե հարյուր քսան տարի է, այլ՝ հարյուր:

վանքի թագավորների ձմեռանոցն էր: Բանակելով ամբողջ դաշտի մեծութունը ներփակում է. գինավառված հայոց գորամասի դեմ ճակատամարտի է պատրաստվում: Իսկ քաջ Վարդանը և իր զորամասը, երբ տեսան հեթանոսների բազմությունը ու հայեցին իրենց սակավությունը, և շնայած որ խիստ քիչ էին նրանց համեմատությամբ, այնուամենայնիվ չվախեցան նրանց խիստ շատ լինելուց, այլ բոլորը միաբանված իրենց ձայնը երկինք բարձրացրին և ասացին. «Տե՛ք, դատի՛ր դու նրանց, որոնք մեզ են դատում, մարտնչի՛ր նրանց դեմ, որոնք մեր դեմ են մարտնչում. քո զենքով ու ասպարով օգնի՛ր մեզ, սասանի՛ր ու դողացրո՛ւ անօրենների զորքը»¹³²:

Այսպես ազդեցիվ ու խմբավորվելով՝ հայոց քաջերը հարձակվում ու աջ թևը շարժելով շարժում են ձախ կողմը և բոլորին սքի քաշելով փոռում են դաշտի երեսը: Մի մասին էլ փախուստի մտանում, դցում են անտառային սպառնով վայրեր՝ Լուրնաս¹³³ գետի հեռավոր դարուփոս գետեզեքքների մոտ, որտեղ հտ են դառնում քաղաքական թագավորազնեքից ումանք. այգտեզ ձիուց ցած են դցում Գրմաքսյանների գնդից հայոց նախարարներից մեկին, սպանում են Մուշին և վիրավորում Գաղթիկին: Այդ նույն տեղում դիտում էր Արշարունի Արշավիրը, առյուծաբար գտնում ու հարձակվում է վարադառնման. նա սպանում է կփինքի¹³⁴ թագավորի եղբայր քաջ Վուրկին և ուրիշ շատերի, որոնց հենց այստեղ է սպանում: Եվ այսպես ամեն մարդ իր դիմաց ելած թշնամուն ոչնչացնում է. իսկ շափազանց հանդուգն հարձակման պատճառով գետառույզ եղածները ավելի շատ էին, քան ցամաքում սրով ընկածները: Եսա սպանվածներից գետի վճիտ ջուրը տքունի է փոխվում: Նրանցից ոչ ոք չի ազատվում, միայն անտառախիտ թավուտներում թշնամու զորականներից մեկը զենքով բարձրանում է ձիու վրա և մազապուրծ եղած գուլժ է տանում գլխավոր քանակը, որ փախչում, ապաստանում է մեծ մայրաքաղաքում:

Հայոց զորքը, պատերազմական այդ մեծ գործը կատարե-

լով, հավաքում է մեծ քանակությամբ ավար, կուտակում ջատ ոսկի ու արծաթ, արի ու քաջ այրուձիի զենքն ու զարդը: Նաև քաջաբար հարձակվում են այն բերդերի ու քաղաքների վրա, որոնք Աղվանքում պարսիկները գրավել էին: Զորեզ մարտնչում էին, այրում նրանց ապաստարանների ամբուսությունները և խուճը-խուճը գայթակող մոզերին ուր էլ գտնում, սրի էին քաշում և նրանց դիակները երկնքի թռչուններին ու երկրի գաշաններին էին նետում: Մաքրեցին տեղերը պիղծ կերպով կատարված բոլոր զոհերից և եկեղեցիները աղատեցին անասելի փորձությունից:

Աղվանքի իշխաններից ու շինականներից բազմաթիվ մարդիկ, որոնք աստծու անվան համար ցրվել ու տարածվել էին Կապիոհ¹³⁵ լեռների թաքստարաններում, երբ տեսան հայոց զորքի մեծ հաղթությունը, եկան-հավաքվեցին. նրանք էլ էին միանում հայոց զորքի հետ և մասնակից դառնում նրանց հերոսությունը: Այնուհետև շարժվում, գնում են հոների լեռնանցքի վրա, որը պարսիկները բռնի ուժով գրավել էին: Գրավում ու քանդում են լեռնանցքի ամբուսությունները, կտտրում են ներսում գտնվող զորքերը և ելքը հանձնում են Աղվանքի թագավորների ցեղից Վահան անունով մեկին: Այս ամբողջ քաղաքործությունների ընթացքում նրանցից ոչ ոք չընկավ, բացի միայն (Մուշից), որ նահատակվեց:

Եվ անմիջապես նույն մարդուն, որին հանձնեցին լեռնանցքը, իբրև բանազնացի ուղարկեցին հոների երկիրը, որպեսզի բանակցի նրանց հետ, դաշինք կնքի և անխզելի միաբանություն հաստատի: Իսկ երբ նրանք լեռցին, իսկույն ժամանեցին այնտեղ և սկանառես եղան հաջողությունը: Ըստ իրենց կրոնի՝ երզումով դաշինք կապեցին, ընդունեցին նաև քրիստոնեական երզումը և պարտավորվեցին նրանց հետ հաստատուն միաբանություն պահպանել: Այս ամենը արեցին իրենց կամքով: Մինչդեռ այդ տեղում էին, գուժկան եկավ Հայաստանիդ՝ ուրացող Վասակի վերաբերյալ ասելով, թե ավերեց Հայաստանի շատ գավառներ: Վարդանը մեծ ավարով շարժվեց և ուրախություն, աստծուց զոհ, նրա հույսին ապավինած՝ երեսուն օրվա ընթացքում հասավ Հայաստան: Վասակը

* Սաղմ., 17, 1:

իմանում է քաջ Վարդանի հաղթական վերագարծի, հոնների ու աղվանների դաշինքի մասին, փախչում է Վարդանի երեսից-իր շար էության և շարագործությունների պատճառով աստծու, նույնպես ողորմածություն չի գտնում:

Հայաստանի ու Աղվանքի միջև վերինի օգնականության պառտեղի ունեցավ Հուզկերտ թագավորի ժամանակ:

Գ լ ո խ Գ

ՄԵՐՈՊ ՎԵՐԵՊԵՏՈՒ ԱՅՅԸ ԱՂՎԱՆԻՑ ԵՎ ԱՂՆ ԵՐՔԱՅԻՆ. ԳՐԵՐ ԱՏԵՂՍԵԼԸ ԵՎ ՎԵՐՍՏԻՆ ԳՐԱՐՑՆԵՐ ԸՆԹՐՈՍՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆ շԱՍՏԱՏԵԼԸ ԱՂՎԱՆՔՈՒՄ, ԿԱՆՎ ՄՆԱՑԱԾ ԱՂՆԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՅՈՒՄԸ

Այն ժամանակ, երբ Թեոդոս Փոքրը հույների կայսր էր, իսկ Վասմշապուհը՝ հայոց թագավորը, Հազկերտը՝ պարսից և Եսպարհներ՝ աղվանների, մեծալատակ, սուրբ հոգու ընտիր անոթ Մեսրոպ երանելին Աղվանք եկավ մեր Երեմիա հայրապետի ու Եսպարհն թագավորի մոտ: Մրանք կամավոր կերպով ընդունեցին նրա ուսուցչութունը ըստ սասածուց նրան շնորհված այն պարզևի, որ սուրբ հոգին նրա միջոցով հայերին ու վրացիներին տառեր սովեց: Համաձայնվեցին և նրա մոտ ուսման ավին ընտիր մանուկներ. թարգմանիչ Բենիամինին Այսնիքից կանչեցին, որին Վասակ Մանուկը Անանիա եպիսկոպոսի միջոցով ուղարկեց: Նրանք եկան Մեսրոպի մոտ. Մեսրոպը նրանց հետ զարգարացիների կոկորդահունչ, կոշտ ու կոպիտ խժական լեզվի համար տառեր հնարեց: Այստեղ վերանսկիչ թողեց իր աշակերտ Հովնաթանին, քահանաներ նշանակեց պալատում ու վերագարծավ Հայաստան: Այդտեղից անցավ Բյուզանդիա՝ Թեոդոս թագավորի մոտ և այնտեղից վերադառնալով աշակերտների հետ շրջում էր: Կեկուզ, որ Գարգմանում¹³⁶ հեթանոսական աղանդ է մնացել, Այունիքից անցնում, գալիս է Գարգմանի իշխան խուրի մոտ և նրա միջոցով հեթանոսական կրոնի հետևողներին ուղղության է

բերում, իսկ ինքը վրաց Աշուշա Բդեշիի հրավերով գնում է Վրաստան նույն գործով:

Նույն ժամանակ հայտնվեց անիծված նեստորը, որը Եփեսոսում երկու հարյուրի կողմից նդովվեց: Հազկերտ երկրորդ թագավորի առաջին տարում, նավասարդի վերջում վախճանվում է սուրբ Սահակը, իսկ գրանից վեց ամիս անց Վաղարշապատ քաղաքում մեռնում է նաև երանելի Մեսրոպ վարդապետը՝ միանալով սրբերին:

Գարգմանի իշխաններից խոսքով անունով մեկը գնում է Հայաստան: Այնպես պատահեց, որ նա եղավ անարի Շապուհ թագավորի մոտ: Խնջուլքում գինովցած շնաբար տոհմանք տառում մի կնոջ նկատմամբ. այս պատճառով Շապուհը զայրանում և հրամայում է զնգան նետել նրան. սակայն նա, սպալինած իր սրին, դուրս է գալիս ու հեռանում, և ոչ ոք չի հանդգնում ձեռք տալ նրան:

Գ լ ո խ Գ

ԱՂՎԱՆՔԻ շԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԻԵԸ ԵՍԶԻՐՆԵՐԻ ԱՂԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԶՈՂԻՑ ՊԱՐՏԱՎ ՄԵԾ ՔԱՂԱՔԸ ՓՈՆԱԳՐԵԼԸ ԵՎ ԱՌՈՒՈՆԱԼԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՏՆԵՂ շԱՍՏԱՏԵԼԸ, ՈՐԸ ԱՎԵՐԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԵՐԵՄԻԱՅԻՆ ԺԱՐԱՆԱԿ

Իրանից հետո Աղվանքը գրավվեց խազիքների կողմից. հրկիզվեցին եկեղեցիներն ու կաթալարանները: Այդ արքայից արքա խոսքովի երկրորդ տարում, երբ հայոց թվականության սիկորր գրեցին, Քրիստոսի խաչի թշնամիների ավազակային արշավանքների պատճառով Աղվանքի հայրապետական ախոռը Չոյ քաղաքից փոխադրեցին Պարտավ մայրաքաղաքը: Իրև հայրապետ աթոռը նստեցրին տեղ Աբասին, որ Մեծիրանից գավառից էր. սա աթոռակալեց քառասունչորս տարի և, սուրբ կյանք վարելով, փոխադրվեց դեպի անմահ կյանքը:

Չ ի ու խ Ե

ԳԻՋԱՓՈՅՏ ԼԵՈՍԸ ՎՐԱ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՅՏՆՎՈՂ ԾՎ ՄԻԱԾ
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԱՆՑ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏՆԱՐՔԵՐԻՄԸ

Աղվանքի վրա տեղ Արասի հովվելուց առաջ թշնամիների կողմից հրդեհվեցին վկայարանները. վաչազան արքայի և Ամարասի Դանիկ եպիսկոպոսի ժամանակ Գիզափայտ¹³⁷ լեռան Կատարու վանքում մարդիկ հայտնվեցին, որոնց անուններն են՝ սուրբ Մովսես, սուրբ Դանիել, սուրբ Սդիա: Արանք մաաքութների Սանեսան արքայի որդիներն էին, որոնք աշակերտել էին սուրբ Գրիգորիսին. սրանց հետ էին նաև երեք հազար ութ հարյուր յոթանասուն տղամարդիկ: Արանք բոլորը անապարեցին Գիզափայտ լեռը՝ խոտաճարակ կյանքով ապրելու: Արանց ետևից գալով՝ արշուևարբու Սանեսանը բոլորին սրի քաշեց, որ տեղի ունեցավ նախասարդ ամսի իննին: Դրանց բարեխոսությամբ թող աստված գթա Աղվանքին ու Հայաստանին:

Չ ի ու խ Զ

ՎԵՆԵՆԻՆՑ ՏՅՈՒՎ ՔՐԸ

«Այս ան հայրապետության առաջին տարին ես՝ անարժան վեհիկս, երազում մի անապատական մարդ տեսա, որը գրկել էր աստվածային խաչվառը. նա ինձ առաջ իմ անունը, իսկ ես հարցրի. «Բու ո՞վ ես, տե՛րս: Նա փնձ պատասխանեց. «Ես Պողոսիկն եմ. այժմ եկ երկրպագիր այս խաչին, բայց մի՛ մոտենա սրան», և ես քնից զարթնեցի, բայց այս բանի վրա ուշադրություն չգարձրի: Երկու տարուց հետո երազում տեսա, թե ինչպես սուրբ Վարդաբ արքայի կերպարանը առած ինձ առաջ. «Մենք մասունքներ ենք՝ ծածկված Արցախ գավառում, Մխանց տոհմին պատկանող Կաղսեռ կոչված վայրում: Սոաջին նահատակ տեղ Ստեփանոսն է, նահատակ Թեոդորոսը, սուրբ Վարդաբ, Մամասը, Մարը, Սարգիսը, Գրիգորիս»

նահատակը, Կոզմասը, Գամջանոսը և սուրբ քառասուն նահատակների մի մասը»: Նույն ձևով մի մարդ ևս երևաց, որ ասաց ինձ: «Ես Բրիտանոսի ծառա Բասիրան եմ, որ շարշարվեցի խաչի վրա և փրկչից խնդրեցի, որպեսզի չկորչեն իմ մասունքները: Եվ ովքեր այս սուրբ խաչից մաս են ցանկանում, թող վերցնեն. մի մասը այն խաչից է, իսկ մյուս մասը աստծու կողմից ընդունված խաչվառից»: Իսկ ես՝ վեհիկս, մոտ յոթ տարի իմ մտքում գարմացած էի մնացել՝ խնդրելով ամենքին ողորմացող աստծուց և միևնույն նահատակներից, որպեսզի ինձ իսկույթյամբ բացահայտեն այդ տեսիլքի իմաստը:

Եվ անընդհատ կրկնվում էր այդ տեսիլքը ու շտապեցնում մասունքների զուրս բերումը, որովհետև ասում էր՝ դեռ մենք ստնջվում ենք: Ապա ես՝ վեհիկս, վեր կացա-գնացի սուրբ Հայրապետ Աբասի մոտ և նրան պատմեցի մեծապայծառ նահատակների հավաքման մասին: Նա լսեց իմ կողմից տեսածների մասին, թաղմապատիկ գոհությամբ փառք տվեց կենդանի աստծուն և նույն ժամին Տրիի խոտահավատ քահանա Դանիելին ուղարկեց, որպեսզի սա մեծաքանակ զալտնիքին տեղակ դառնա: Այդ արդարամիտ մարդը Բոհ քահանայի ու Եղեկիել գյուրի հետ արագությամբ ընթացավ և անմիշտպես հասավ Կաղսեռ վայրը, ինձ՝ վեհիկս մոտ: Այդ հանդիսավայրը եկան նաև ուրիշները իրրև մեզ գործակիցներ: Դրանք էին՝ Մոմհարյայքի քահանա Աբասը իր ծխերով, Մարկոս քահանան իր կղբայրներով, Հովհաննավանի հայր Տիրիթը Քարմեղիների անապատից և զերմնաանդ հավատացյալների այլ բազմություն:

Արանց հետ միասին աղոթեցինք պաղատապին մաղթանքով ու սկսեցինք գետինը փորել մի մարդու հասակաչափի Հանկարծ այդ տեղում մի անուշ հոտ բարձրացավ, և թաղված դանձր հայտնվեց ըստ փրկչի այն խոսքի, թե՛ «լույսը չի կարող թաքչել և զբվանի՞ տակ դրվել»: Աստված իր սուրբ ծառաներին այսպես ներկայացրեց ճրագը և նրանց լույս փափազող

* Լույսը գրվանի տակ շրվել գրաբարյան արտահայտություն է, որ նշանակում է, թե լույսը ամանով լես կարող ծածկել: Մատթ., Ե, 15: Մարկ., Գ, 21—23:

արտերին ավելի չաղտոտացող ճառագայթ: Գրանց հայտնությամբ աստված ողորմություն արեց Աղվանքին և բարիք շնորհեց Կաղսեա առողջարար վայրին: Նույն ժամին թափորը մեծապես օրհնաբանեց աստծուն, գովաբանեց սրբերին, ու մասունքները ամփոփեցին թանկագին անոթների մեջ, և յուրաքանչյուրը վերցրեց իր մասը: Մեծագույն մասը Գանիել քահանան տեղավորեց և թանկագին ընծայով շտապ գնաց Աբաս Հայրապետի մոտ: Գրանով նա շատ ուրախացավ, և երբ սուրբ նշխարները տեղ հասան, նա տոնախմբություն արեց նրանց հիշատակին ու տեղավորեց շատ մաքուր գանձանակների մեջ:

Գ լ ու լ ի Է

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՍՍ ՉՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԱՄԱԿ ԸՆԴՂՎԱԾ ԱՂՎԱՆՔԻ
ԿԱԹՈՂԻԿՍՍ ՏԵՄՔԱՍԻՆ՝ ՀԱՎԱՏԸ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՆՈՒԹ
ՎԵՐԱՌԵՐՅԱԼ

«Բարիներին, արդարամիտներին, աստվածասերներին, իմ սիրելի եղբորն ու աթոռակցին՝ Աղվանքի կաթողիկոս տեր Աբասին, Բաղասատի¹³⁸ եպիսկոպոս Մովսեսին, Կապաղակի եպիսկոպոս Գրիգորին, Ամարասի եպիսկոպոս Հոռմիկին, Բաղասահանի¹³⁹ եպիսկոպոս Տիմոթեոսին, Եաթիի եպիսկոպոս Աբրահամին, Գարգմանա եպիսկոպոս Հոհանիկին, Մեծկողմանի¹⁴⁰ եպիսկոպոս Առնոյին:

Հայոց կաթողիկոս Հովհաննեսից, Տարոնի եպիսկոպոս Աբրահամից, մարդպետական եպիսկոպոս Գրիգորից, Տաթի եպիսկոպոս Ստեփանոսից, Խորխոռունյաց եպիսկոպոս Մաշտոցից, Վանանդի եպիսկոպոս Գյուտից, Ասորիքի եպիսկոպոս Աբդիշից, Ամատունյաց եպիսկոպոս Պապից, Ռշտունյաց եպիսկոպոս Քրիստափորից, Մոկաց եպիսկոպոս Սեկունդոսից և Հայաստանի մյուս բոլոր եպիսկոպոսներից օրհնությամբ ողջո՛ւյն:

Մեղ սոսկալի լուր է հասել, թե կան մարդիկ, որոնք հափշտակող գայլեր են ոչխարների մորթով և ձեր երկիրն են եկել

պիղծ Պետրոսի վանքից. որ դրանք անունով աղքատասերներ են կոչվում, բայց գործերով քրիստոսատյաց են և սուրբ երրորդությունն ուրացող, ու եկել են անիծված նեստորի շայրորմը և Քաղկեդոնի ժողովը անարգել կերպով սերմանելու անանդների հոգիներում՝ շեղելով նրանց ուղղափառ հավատից, որպեսզի նրանց դատապարտեն հավիտենական կորստի: Նրանց մասին լսել ենք, որ հոգու և մարմնի համար դարձել են վտանգավոր ու անբուժելի հիվանդություններ: Գրա համար ամենայն պատրաստակամությունը շտապեցինք ձեզ կարեկից լինել ու գրել՝ հիշեցնելով ձեզ սուրբ առաքյալի խոսքերը՝ զգուշանալ ձեր անձերի ու հոտի համար, որին սուրբ հոգին ձեզ տեսուչ և ուսուցիչ է նշանակել, որպեսզի հաստատուե պահեք ուղղափառ հավատը, որը մեր հայրերը ընդունեցին Սուրբ գրքից՝ Հին և Նոր կտակարաններից Սուրբ Գրիգորի, Նիկիայի երեք հարյուր տասնութի, Կոստանդնուպոլսի հարյուր հիսուների ու Եփեսոսի երկու հարյուրի երիցս երանելի ժողովների միջոցով (այս ժողովների բոլոր հայրապետների գումարը կազմում է վեց հարյուր վաթսուներեք մարդ), որոնց մենք համաձայնվեցինք և նրանց ուղղափառ հավատի ժառանգորդը կզանք, մենք, այսինքն՝ Քրիստոս աստծու բոլոր եկեղեցիները:

Մենք ճանաչում ենք միակ ամենակալ հայր աստծուն, ամենքի ստեղծողին, մի տեր Հիսուս Քրիստոսին՝ աստծու որդուն, որ ծնվեց հորից, և որը ճշմարիտ աստված է՝ առաջացած ճշմարիտ աստծուց, որով բոլորը կան: Մենք հորից էլաժ սուրբ հոգուն երկրպագում ու փառավորում ենք հոր և որդու հետ, որոնք արարչակից ու հավասար երրորդությունը կատար-

¹ Փակագծում գրվածը գրչագրական ներմուծում է: Այստեղ զամարտսի փոխարեն ջումլա է գործածված: Հյուրժմանը չգիտե, որ այդ տողը ներմուծում է, ուստի համարում է արարական ամենահին փոխառություն: Աճառյանը կասկածում է, որովհետև «Գիրք թղթոց»-ի այս հատվածում այդ բառը չկա: Աճառյանը ճիշտ կասեցնելով այդ կասկածում է՝ նշելով, որ Կաղանկատվացին 10-րդ դարի խմբագրություն է: Աճառյանին հետևում է նաև Գովսեթը՝ նշելով, թե այդ բառը 6-րդ դարում չէր կարող կիրառվել:

յալ են միեկնույն էությամբ, փառքով ու զորությամբ՝ նախա-
խնամելով բոլոր եղածներին:

Իսկ անչափ երկար ժամանակի վերջում աստուծու մշտնջե-
նավոր խոսքը աստված դառնալով՝ եղավ կատարյալ մարդ
անփոփոխ կերպով, սուրբ կույսից մարմնավորվեց անպատ-
մելիորեն, չհեռացավ իր էությունից և ոչ էլ քայքայվեց մարմ-
նավորությամբ, այլ մնաց այնպես, ինչպես որ նա է: Նույն
անփոփոխելի աստված մարմնացավ ոչ թե մի մասով, այլ
ամբողջովին. ոչ թե երկու մաս եղավ, այլ անբաժանելի ամ-
բողջություն. նա մարմնավորված հայր չէ, այլ որդի. ոչ թե
սուրբ հոգին շոշափելի մարմնավորվեց, այլ միաձինը եղավ
հորից, սակայն իր կամքով, հոր և սուրբ հոգու զորությամբ.
բայց գոյությամբ է միայն Բանն աստված: Այսպես էլ սուրբ
ծնունդն է ընդունվում:

Նա ինքը՝ անբովանդակելին, խանձարուրով պատվեց, որ-
պեսզի մենք անմահությամբ հանդերձավորենք. դրվեց մտու-
րը, որպեսզի մենք մեր անասնական բարքերը դեն նետենք.
հրեշտակներից փառավորվեց, որպեսզի մենք երգակցենք նը-
րանց. մոգերի կողմից ընծայաբերվեց, որպեսզի մենք հավատը
բարգավաճենք. կաթով սնվեց, որպեսզի անմեղ դառնանք.
մարմնապես դարձավ ամենակատարյալը, որպեսզի մենք հաս-
նենք Քրիստոսի լրիվ հասակի չափին, կամավոր կերպով
չարչարանքի ենթարկվեց, որպեսզի մեղքերի տանջանքներից
ազատվենք: Խաչվեց, որպեսզի կյանքի պտղից վայելենք.
մեռավ, որպեսզի մահով մահը մեռցնի. զերեզման դրվեց,
որպեսզի դժոխքի փակաքնները խորտակի. երրորդ օրվա մեջ
հարություն առավ, որ մեզ կենդանացնի. համբարձվեց եր-
կինք, նստեց հոր աջ կողքը, որ մենք ևս դասվենք նրա աջում:
Գալու է մշուս անգամ դատելու ողջերին ու մեռածներին, և
նրա թագավորությունը վախճան չունի:

Այսպես հավատում, երկրպագում և փառավորելով ասում
ենք. «Սուրբ աստված, սուրբ և հզոր, սուրբ և անմահ, որ խաչ-
վեցիր մեզ համար, ողորմի՛ր մեզ»: Իսկ այսպես շքնադոնդ-
ներին սուրբ հայրերը նզովեցին, նզովում ենք և մենք նմանա-
պես բոլոր եղած հին հերձվածողներին ու նորերին, այսինքն՝
Արիոսին, Պողոս Սամոսացուն, Մանիին ու Մարկիոնին,

Նևատորին ու Թեոդորիտոսին, Քաղիեզոնի սին ու շար ժո-
ղովրդ և Աևոնի հրեական տոմարը, որոնք լրբաբար հանդգնե-
ցին տեսլ, թե երկու էություն և երկու դեմք կա մի Քրիստոս
աստուծու վրա, և թե սուրբ կույսը ոչ թե աստված է ծնել, այլ՝
մարդ, որը մեզ նման աստուծու խոսքի տաճար է:

Կան նաև ուրիշ այնպիսիները, որ ասում են՝ երբ տեր
Քրիստոսը երկրում էր, երկնքում չէր և երբ խաչի վրա էր,
փառքի աթոռում չէր. երբ գերեզմանում էր, հոր աջ կողմում
չէր: Այսպես մտածողներին աստված նզովում է, իսկ մենք
նզովում ենք այն բոլորին, որոնք սրան համաձայնվեցին կամ
համաձայնվում են: Ահա մեր միաբանությունից ձեզ մոտ
ուզարկեցինք փտաճեղի Մատթեոս քահանային՝ ձեզ բերելու
մեր այդ նամակը: Միաժամանակ հրչեցնում ենք Հովհաննեսի
այնտարանի խոսքը, որ ասում է. «Եթե որե՛կ մեկը ձեզ մոտ
գա, բայց չունենա մեր տեր Հիսուս Քրիստոսի վարդապետու-
թյունը, նրան տուն մի՛ ընդունեք ու խոսքով մի՛ ողջունեք:
Եթե որե՛կ մեկը այդպիսինին ողջունի տա, մասնակից կդառնա
նրա շար գործերին. որովհետև ով չի ընդունում, որ տեր Հիսու-
սը մարմնով է եկել, նա իսկ և իսկ մոլորեցնող նեռն է: Այդ-
պիսինին ձեր սահմաններից հալածեցե՛ք և նրա մահաբեր
վարդապետությունը ամենեկին մի՛ լսեք»: Արդ՝ բանի որ ձեր
հայրերը հավատակից էին մեր հայրերին, իսկ դուք՝ մեզ,
հաճելի թվաց, որ ձեր կողմից եկան այս երեք կամ ավելի
կոխոկոպոսները՝ մեզանից դեմ հանդիման լսելու ճշմարիտ
վարդապետությունը, որպեսզի հովիվներից կամ հոտից ոչ
որ չկորչի, այլ ձեր բարի գյուտի առթիվ հրեշտակները երկրն-
քում ուրախանան, իսկ մենք՝ մեր Քրիստոս աստուծու ծնու-
ներս ու երկրպագուներս՝ երկրում: Ո՛ղջ եղեք տիրոջով»:

* Թուղթ ԵպՏ. Թ, Գ, Թուղթ ԵպՏ. Ա, Ծ:

Գ յ ու յ Ը

ԱՂԱՆԳԱՎՈՐՆԵՐԻ ՀԱԼՍՄՈՒՄԸ ԱՂՎԱՆՔԻՑ, ՈՐՈՆՑ ԱՂՎԱՆՔԻ
ԿԱՔՈՂԴԿՈՍ ՏԵՐ ԱՐԱՍԸ ԱՐՏԱՔՍԵՑ, ԵՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ
ՆԱՄԱԿԸ ԵՎԱԸ

Այն խառն ու ազմկայից շրջանում երկրի շորս կողմում
Քաղկեդոնի ժողովի կողմից և սնտոի, դատարկամիտ շարա-
փառների պղտորման հետևանքով տարածվեց աղանդավոր-
ների սուտ վարդապետությունը, ասածու ներսումով սեծեղա-
ցավ, և քաղցրալուր խոսքերով շատ ցեղերի հոգիները ազա-
վազվելով մշտնջենական խավարի կորստյան մատնվեցին:
Որո՞ւմ բուսցնող արմատները հասան Աղվանից այս երկիրը:
Նույն ժամանակ Աղվանքի կաթողիկոս տեր Աբասը իր եղիս-
կոպոսների հետ միասին, որոնք վերը գրքուս հիշատակված
են, խիստ քննություն կատարելով հալածեց Աղվանքից այն
աղանդի պիղծ վարդապետներին՝ կեղծավոր Քոմմասին, սաղ-
մոսերգու Սելիային, Բնոտին, Իբասին ու սրանց նմանվող
ուրիշների նրանց հետ տարազրեցին հեռավոր վայրեր: Սրա-
նով այն ժամանակ եկեղեցու միաբանությունը խաղաղվեց
ամենակալ տիրոջ ողորմություններով, բայց մարմնազոր պատե-
րազմները խիստ շատացան:

Գ յ ու յ Թ

ՏԵՎԵՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԲԱՐՈՍ ՏԵՂԵՐԻ ԳԼԻԿԵ ԲԱՐՉԱՐԱՆՆԵՐՈՒ
ԵՎ ՏԵՆՁԵՐԱԶԵՄ ԳԺԱԼԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՍԿ-ՏԵՍԱԿ ԱՆՑ ՔԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՑԱԸ, ԵՐ ՊՕՏԱԶԵՑԻՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ

Մ'ով զարմանահրաշ պատմություն, որ պատրաստ եմ
հելեցնելու տիեզերքի, մոտավորների ու հեռավորների լսե-
լիքներին, դրան շին կարող համեմատվել առաջին դարերի
մատյանները, որոնք նկարագրում են զանազան պատերազմ-
ներն ու խռովությունները, որոնք պատրաստվեցին այլևայլ
տեղերում, տարբեր աղբերի մեջ և սուրբ հոգու կողմից բաղմա-
թիվ մասերով ու շատ օրինակներով նախապես գրվեցին:

Սրան շին կարող հարմարվել նաև երկրավոր ու շնչավոր մար-
մինների վերաբերող հեթանոսական հարտարարան, առա-
պելյաստեղծ փիլիսոփայական գրվածքները:

Որովհետև միանգամից մեր զլխին թափվեց և կատարվեց
այն, ինչ որ մեր փրկիչը կենսարեք Ավետարանում շարշարան-
քի ժամանակ համաձայն բնորոշալ տասներկուսի լսելիքի հան-
գուրծողություն մարդկայնորեն հարմարվելով խոսեց, ասում է.
«Տեսնելու եր պատերազմներ և լսելու պատերազմների լուրեր.
յինելու և հաճախակի սովեր, սրածուծություններ, ևրկաշարժ-
ներ, հրաշքներ արեզակի, լուսնի, աստղերի մեջ և ժողովուրդ-
ների այնպիսի խռովություններ, ինչպես փոթորկված ծովի
ալիքներն են*»: Նույն ինքը՝ տերը, զգուշացնում էր, թե ար-
վուճ ևզեր, սրովհետև չգիտեր օրն ու ժամը**:

Եվ արգ՝ քանի որ իմ մտքերը ընկզմվեցին և մտածումներս
սուղվեցին տիեզերական հարվածների մեջ, ուստի մոռացա
շարտորանքը, որ պատրաստվել էի հիմք ու սկիզբ դնել
ժամանակների ու այն անցքերի, որոնք պատահեցին Աղվան-
քում, բայց մարդարեի խոսքի, թե՛ «Իմ հեծեծանքների ձայնի
պատհասով մոռացա ուստի իմ հացը***, Սակայն և այժմ մի
տեղում էլ մոռանանք ահն ու երկուղը, որ դեռևս պատել է
մեզ, վերադառնանք պատմության ընթացքին, որովհետև
ստանում ենք՝ կան շատերը, որ կամենում են լսել, թե ինչը
սուղյոք կարող է վերջ տալ մեզ շրջապատող բարբարոս թշնա-
միների անթիվ հարվածներին: Ապա դրա հետ միասին կամե-
նում են իմանալ այն մեծամեծ ու զարմանալի հրաշքները,
որոնցով մեր թշնամուճ պատմեց ասածու հզոր ու մարդասեր
աչր, և նրանք գեանատարած բնկան մեր աշրերի առջև: Եվ
սրովհետև անցյալ ժամանակը պահա՛ջում է մեզինից իր զեպ-
րիքը պատմել իրար ետևից, ուստի կսկսեմ մեր տեր Հիսուս
Բրիտոսոսի տաանութ VII նահանգից, որ եղավ մեհեհան ամ-
սին Որմիզդյան արքայից արքա խոսրովի երեսունհինգերորդ
տարուց⁽¹⁾:

* Մատկ., ԺԳ, 7—9:
** Մատք., ԻԾ 13:
*** Մատկ., ԿԱ, 6:

ԱՌՈՒՋԻՆ ՏԱՆՈՒՄԻՅ ԶՈՔ ԵՆԱՆԱՆՔԻՆ ԵՎ ԵՎԵՐԵՆ ԿԱՌԱՐԱՐՈՒՄՆԵՐ

Երբ Երուսաղեմի գրավման ժամանակը հասավ իր ավարտին, որ Փլազիս Հերակլ քրիստոսաւեր կայսրի օրերում էր, ինչպես երբեմն Կյուրոս պարսկի օրոք յոթնամասունամյա պատերազմներում աստված հանդիմանեց պարսից գոռոզ թագավոր մեծ Խոսրովին, որը երկար ժամանակ հաղթելով, հալածելով գրավեց թագավորութունը նրա օգոստոսական մեծ երկրով, Հոռմով և նշանավոր պաղեստինյան քաղաքով (Նրուսաղեմ):

Արդ՝ երբ նա տեսավ, թե հաջող կլք ունեցավ պատերազմը, որն սկսել էր հունաց թագավորի հետ, արևմուտքի դեմ կազմված զորքի հրամանատար նշանակված իր Խոռյան անունով զորավարի միջոցով: Նրա ճակատամարտ մղելու, պատերազմական ճակատ կազմելու և ըստ պարսկական խորամտության հաղթութուն տանելու պատճառով թագավորը նրան հորջորջում է այլևայլ պնդող անուններով. երբեմն կոչում է Ռոզմի-Ուզան, երբեմն՝ Շահ-Վարազ*:

Սա գրավեց ու հրդեհեց սուրբ քաղաք Երուսաղեմը և գերի տարավ կենաց փայտը՝ տիեզերքի լուսատու սուրբ խաչը, որով դժոխքը գերվեց. տարավ նաև այն կողմերի ոսկյա, արծաթյա, թանկագին քարերի բոլոր սուրբ սպասները, մեծարժեք մարգարիտներով ընդելուզված ծիրանի հանդերձանք, նաև մինչև իսկ զարմանալի, հոյակապ մայրաքաղաքների կառուցվածքների զարդարանքները՝ կնյա սյուներն ու խոյակները, այլև շորքոտանիներն ու մեծամեծ թուղունները, որոնց անուններն անգամ արևելքի կողմերում լաված չէին: Բայց ես չեմ երկարելու խոսքս, որովհետև նրա կատարած գործը իմ նկարագրության սահմանից անցնելով անցնում է: Այսպիսի վերջրած գանձերի կույտերը ուղարկեց պարսից թագավորի պալատը: Սակայն չկշտացավ ու գոհ չմնաց անթիվ հարստությամբ և երգիչ, զանազան արվեստադեմ զմարճարար, փափ-

կատուն աղջիկներով ու պատանիներով, այլ էլ ավելի մարտնչուն էր ծովի ու ցամաքի դեմ և հոռմեացիների գեղեցկաշեն քաղաքները իրենց բնակիչների հետ միասին քշում էր Պարսկաստան իր տենչանքներին հագուրդ տալու համար: Ճարտարապետների միջոցով նույն ձևով քաղաքներ կառուցեց. դրանցից մեկը անվանեց Անտիոք քաղաքից առավել*, բոլոր մյուսները կոչեց նույն իր անունով՝ առավել բառը վրանները ավելացնելով:

Արդ՝ երբ բոլոր ժողովուրդների ու թագավորութունների նկատմամբ հաղթութուն տարավ և իր տենչանքներին հագուրդ տվեց, այնքան զորացավ ու հպարտացավ, որ կարծեաթե իր անձնական քաջությամբ է գրավել իր ահավոր և զարմանալի թագավորութունը. ու չմտաբերեց, որ մարդկանց թագավորության տերը բարձրայն է և ում կամենա, նրան էլ կհանձնի այն:

Այսպես սատիճանաբար թուլանալ ու տկարանալ հունաց (Բյուզանդիայի) թագավորի համեմատությամբ և չէր կարողանում գլուխ բարձրացնել ըստ իր նախկին հզորության: Հանկարծ կայսրը հայտարարեց իր բոլոր զորավարներին ու զորապետներին աստժու՝ իրեն հաջողութուն շնորհելու մասին. հրամայեց շուտափույթ մի վայրում հավաքվել իրենց տրամադրության տակ գտնվող բոլոր ուժերով: Եվ հայտնի եղավ բոլորին բանակի ժամադրավայրը: Ընկերը ընկերուջը չէր այցելում, այլ առանց ձգձգելու շուտափույթ կերպով իրենց խփերը վերածնցին սրերի, իսկ գերանդիները՝ նիզակների: Թուլերը և հանդարտաբար մարդիկ խրախուսվում էին, ասելով՝ թե մենք հզոր և պատերազմողներ ենք: Եվ վեր կացավ իր բոլոր ուժերով, ինքն էլ զարմավ իր զորքերի զսրավար ու առաջնորդ: Պալատը հանձնեց իր որդու իշխանությանը, թագադրեց նրան և նստեցրեց իր թագավորական աթոռին:

* Խոսրով Ա Անուշիրվանը բյուզանդիայից ժողովուրդ զավթեցրեց և մի նոր քաղաք շինեց ու անվանեց Վեհ Անշատոք (Պատմութիւն Սեբեոսի, Քրիստ. 1813, էջ 44), այսինքն՝ վեհ աչ Անտոք-Անտիոքից բարձր. առավել քան Անտիոքը: Այս է Անտիոք քաղաքից առավելը: Կազանկատագին Խոսրով Ա-ի գործը վերագրել է Խոսրով Բ-ին:

Նա պատերազմական գործողություններ չսկսեց այն պար-
սիկ զորքերի դեմ, որոնք պատել, պաշարել և հնազանդեցր-
էին իր երկիրն ու քաղաքները: մինչև անգամ նրանց մտու-
լանցամբ և նրանց չհրահրեց պատերազմական գործողություն-
ների, այլ նրանց թողեց այնտեղ իր երկրում, ինքը շարժվե-
լու էրս եկավ ծովը՝ ճանապարհ ընտրելով Եգիպտոսի երկ-
րով, եկավ Հայաստանով, անցավ Արաքս գետը և մտածե-
հանկարծակիի բերել մեծ թագավոր Խոսրովին:

Եվ երբ հայտնվեց Խոսրովին, սա իր մտքում հիացավ և
ասաց. «Մա նա չէ՞», որ իմ ահից խորխորատներում էր անց-
կացնում, իսկ այժմ այս ի՞նչ է»: Եվ խուսափելով նրանից՝
հեռացավ մարերի սահմանների ամրոցներից, գնաց Ասորես-
տան: Շտապ արագընթաց սուբհանդակներ ուղարկեց և գրեց
իր մեծ զորավար Շահվարազին խիստ երդումներ ու սպառ-
նալիքներ, թե՛ «իմ նկատմամբ եղած սոսկալի նախատինքը
և իմ ցասումը իր հատուցումը կատանա, եթե այսպես շտա-
պես հասնել և կենդանի թողնես որևէ մարդ, մինչև անգամ
անասուն, որոնք հանդգնելու են իմ դեմ ելնել»: Եվ զորավարը,
իր ձեռքն առնելով հրամանն ու կարգալով սոսկալի լուրը,
շտապ կարգով պարսկական բոլոր զորքերի զորահանդես է
կազմում, և, քաղաքները հանձնելով հոռմեական ու պողես-
տինյան գումարտակների ձեռքը, որոնք հնազանդվել և մտել
էին ծառայության, պատվիրում է զգուշությունը հսկել, մինչև
որ ինքը ետ կդառնա վրա հասած դեպքերից: Ինքը զորքերը
շարժում է ընտիր սպառազեններով ու արագընթաց երկվար-
ներով և աճապարում է հասնել թագավորի հրամանի կատար-
մանը:

Իսկ Հերակլես մեծ կայսրը երբ տեսավ, որ պարսից թագա-
վորը խույս տվեց իրենից, դադարեց նրան հետապնդելուց:
Աստուտակից Ատրպատականի կողմերը մինչև այն տեղը, որ
կոչվում է Գայը Ավան¹⁴², ուր ամրոցներ կային և շոգ ամիս-
ներին պարսից թագավորների կողմից ընտրված էր իբրև
հովասուն ու առողջարար վայր և գտնվում էր Մարաստանի
սահմաններում: Ավերում, քանդում ու գերեվարում է ամրոց
երկիրը և այնտեղից վերադառնալով կամենում է ձմեռել
Աղվանքի, Վրաստանի ու Հայաստանի կողմերում: Այստեղից

գրություն է գրում այդ երկրների իշխաններին ու առաջնորդ-
ներին, որպեսզի իրենց կամքով ընդառաջ ելնեն իրեն, ընդու-
հեն և ձմեռել իր ու իր զորքի կարիքները հուգան: Այլպես
իր առջև կհամարվեն հեթանոսներ, կգրավվեն: նրանց ամրոց-
ները, և իր զորքերի ձեռքով կգերեվարվեն այդ երկրները: Երբ
Աղվանքի պիտերն ու իշխանները այս լսեցին, հենց իր՝ Խոս-
րովի հրամանով թողեցին Պարտավ մեծ քաղաքը և դուրս գա-
լով գնացին, ամրացան գանազան տեղեր: Իսկ քաղաքի քրիս-
տոնյա և հեթանոս բնակիչներից արհեստավորները, սրուք
իրենց անկարողության և հնարավորություններից զուրկ լի-
նելու պատճառով չկարողացան փախչել-ազատվել նրանցից,
մնացին հենց այնտեղ՝ քաղաքում:

Չաքարիա անունով մի ինչ-որ քահանա, մի սուրբ մարդ,
որ Պարտավի եկեղեցու վանական էր, հեղ ու հանդարտաբար մի
մարդ, իր անձը նվիրեց նրանց և երդումներով, տեսակ-սեռակ
հնարամտություններով քրիստոնյա շատ մարդկանց փրկեց՝
իր սող թքներով երաշխավորելով նրանց: Փրկեց նաև հրեա-
ներ ու հեթանոսներ, այդ պատճառով հետո նրա արարքը
գովաբանվեց, և բոլորի կողմից վկայվելով նշանակվեց Աղ-
վանքի աթոռի եպիսկոպոսապետ:

Իսկ երբ հոռմեական անթիվ բազմությունը զորքը եկավ-
հասավ ու բանակեց Ուտի գավառում, Կաղանկատուք գյուղի
սահմաններում գտնվող հեղեղատի մոտ, տրորեց, քանդեց այն
այլ լեռի ու գյուղերի բերքերը, որտեղից անցավ: Այնտեղից
մեկնելով բանակեցին Տրաուի հեղեղատին մոտիկ, որ Դյու-
ստանյան գյուղի մոտ է:

Այս պահից հուսից եկավ հասավ պարսից զորքը, որին
կոչում էին նոր զորք: Այս զորքի զորապետն էր Շահարապա-
կանը՝ թագավորին հավատարիմ նախարարներից նրանց
մեջ կար վերակացու և հրամանատար մի մարդ, որին Գրանիկ
սուղար էին անվանում, սա եկավ, իջավ ընդդեմ Հերակլի: Իսկ
պարսից մյուս զորավարը եկավ Հոռմից: Հերակլեսին ետ

¹⁴² Թագրում «Շահապղակ», ուղղում ենք ըստ Ագոնցի ցուցման Թեո-
փանոս անվանում է Մարաբլազան (տե՛ս «Անահիտ», 1935 թ., Մ. 4—5—6,
էջ 25):

գարձրին և քշեցին (Սյունյաց) երկրով: Չնայած պարսից զորքերն էլ ծանր հարվածներ ստացան, սակայն նրան հանեցին տարան գեցեցին իր երկիրը և նորից գրավեցին այն քաղաքները, որոնք բռնի խլել էին նրանից:

Գ յ ու խ Ժ Ա

ԲՅՈՒՋԱՆԳԻՆՅԻ ԲԱԳԱՎՈՐԻ ԳԵՄ ԽՈՍՐՈՎԻ ԿԻՎԵՆՈՒ, ՆՐԱՆ
ՀԱՎԹԵՆՈՒ ԵՎ ԻՐԿԵՐ ՏԱՐԻՆԵՐ ԲՅՈՒՋԱՆԳԱՅԻՆՆԵՐԻ ԵՐԿԻՐԸ
ՍՐՈՎ ՈՒ ԳԵՐՈՒԹՅԱՄՐ ՏԻՐԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Հերակլի հրամանով խաղիքները անհամար բազմությամբ գյուխ բարձրացրին՝ ասպատակելու մեր երկիրը: Պարսից արքա Խոսրովի պատգամատարները գնում են նրանց մոտ և նրանց տալիս են պատգամ, ուր ասված էր. «Դուք ո՛ւմ հրամանով մտաք իմ երկիրը, նրա՞, որ թափառական ու փախառական ընկած իմ երեսից շրջում է արևմտյան ծովի կղզիներում: Եթե կարոտել եք նրա ոսկուն, արծաթին, թանկագին քարերին կամ ոսկեհյուս, մարգարտազարդ հագուստներին, բեհեզներին ու ծիրանիներին, ես կարող էի նրանից բազմապատիկ շատով գահացնել քեզ: Դրա համար քեզ ասում եմ. մի՛ շարունակիր իմ նկատմամբ դրա դատարկ պահանջով, ապա թե ոչ, թող քո կամքը լինի: Բայց ահա նախապես քեզ ասում եմ այն, ինչ որ անելու եմ անաշխկայում: Համաձայն քո խոսքի՝ նրան իմ թուլլ տալուց հետո, նրա երկրից կհանչեմ իմ հաղթական մեծ զորավար Շահվարազին իմ երկու քաչ զորականներ Շահենի և Քրտեկարինի¹⁴⁸ հետ միասին, նաև իմ բյուրավար զորքը, հազարավոր ընտիր սպառազենները, որոնց ես պատրաստեցի արևմուտքի դեմ քշելու ու շնչելու իմ երկրից: Արդ՝ ահա նրանց երասանակները կզարձենեմ արևելքի դեմ ու իմ ամբողջ ուժով կշարժվեմ քո վրա և բաց չեմ թողնի քեզ, հանդիստ ու գաղար չեմ տա, մինչև երկրագնդի ծայրերը բեռ չբշեմ: Ապա պետք է դիտենաւ ու հիշեաւ այդ անխոր հ քեզ վիշտ ու նեղութուն պատճառող պահանջը, որ զու անում ես: Բայց ո՛ւր պետք է տանեմ, հանդիստ տամ, երբ ես այնտեղից

հանեմ այս մեծաքանակ բազմութունը, և կամ ո՛ւր կա տեսլիսի երկիր, որ բավականացնի նրանց, եթե ըստ այս պատգամի չգործեն: Եվ այսպես՝ համաձայն սպառնալից պատգամի, այդ տարի դադարեցրին արշավանքը ու վերադարձան նույն լեռնանցքով:

Բայց երբ նրանց տեր իշխանը տեսավ ավարների, մարդկանց ու անասունների, ոսկեղեն անոթների, թանկագին հագուստների այն ամբողջ գրավված ու գերված հարստութունը, իր մտքում խորհեց, որ ինքն իսկ գա ելնի այս կողմը: Այնուհետև այն ամենքին, որ իրեն էին ենթարկվում՝ տոհմերին, ցեղերին, շեռնականներին ու դաշտայիններին, հաստատուն ընակութուն ունեցողներին ու քոչվորներին, ծովագնացներին ու ցամաքայիններին, գյուխները խուզածներին ու մազավորներին, հայտարարեց, որ ականակելու պարագային ամբողջ ու զատրաստ գումակն:

Եվ ահա երեսուներեքորդ տարում, որ Խոսրովի սպանման, նեղության ու աղետի տարի էր, եկավ վերևում հիշատակված նույն ինքը՝ Ջերու փառանը,^{*} որդուն իր հետ ունենալով: Նրա զորքի քանակը ոչ ոք չէր կարող հաշվել: Երբ ահա՛ որ դուշը հասավ Աղվանք, կամեցան մեր երկրի բնակչությունը ամբացնել մեծ մայրաքաղաք Պարտավի բերդի մեջ: Այս բանը կատարվեց Գայշաք անունով մի մարդու հրամանով, որը Խոսրովի կողմից ուղարկված էր իբրև այս երկրի պետ ու իշխան: Սա շրջակա գավառների բազմութունը լցրեց ներս ու կամեցավ ուժեղանալ այս երկրի մեծամեծների ու բնակիչների միաբանությունը և դիմադրել նրանց: Բայց նա տեսավ, թե ինչ աղետների ենթարկվեցին Չոր մեծ քաղաքի պահպանները և գումարտակները սքանչելի պարիսպների, որոնց համար պարսկական թագավորները հսկայական ծախսերով փակել էին իրենց երկիրը՝ հավաքելով ճարտարապետներ, հասրելով տեսակ-տեսակ շինանյութեր մեծաքանչ կառուցման համար, որ ներփակեցին կովկաս լեռան և Արևելյան մեծ ծովի¹⁴⁹ միջև:

Արդ՝ երբ մոտեցավ տիեզերական ցասումը, որ մեր ամե-

* Խաման-թագավորաց թագավոր, կայսր:

նիս առջևն էր գտնվում, նախ ծովի ծավալված ալիքները հարվածեցին նրան (Չոր քաղաքին) և հիմնահատակ տապալեցին: Որովհետև տեսնելով սաստկացած սարսափը ժանտատեսք, հանդուգն երեսով, լայնազեմ, անարտևանունք քաղմուխան, որոնք կանացի կերպարանքով, դիսարձակ վրա էին տալիս հարձակվողներին դեմ-դիմաց, սարսափը պատեց նրանց: Մանավանդ երբ տեսան ուժեղ քաշված ազեղների նետերը, որոնք կարիւտտի նման տեղում էին նրանց վրա:

Իրոք լիտիացած գիշակներ գայլեր հարձակվեցին նրանց վրա և առանց խնայելու կոտորեցին քաղաքի անցուղիներում ու փողոցներում. նրանց աչքը մինչև անգամ չէր խնայում գեղեցկատես, պայծառագեղ, սլատանի տղայի կամ աղջկա և ոչ էլ անպետքներին ու անօգտակարներին: Չէին թողնում հաշմանդամներին ու ծերերին և ոչ էլ գուժ էին տածում, կամ գալարվում էին նրանց աղիքները երեխաների խանդաղատանքի նկատմամբ, որոնք փարվում էին սպանված մայրերին և իբրև կաթ ծծում էին նրանց սափնքների արյունը: Այլ, իբրև եղեգնուտում բոցալառված հուր, մի դռնից մտնում, մյուսից դուրս էին գալիս՝ այնտեղ թողնելով միայն երկրի զազանների ու երկնքի թռչունների արարք: Իրանից հետո աստիճանաբար ալիքները շարժվում էին մեր դեմ:

Արդ՝ երբ այս ամենը լսեց մեր զեկավար իշխանը, որ իր ձեռքն ատել և սպանանում էր Պարսավ քաղաքը, կամեցավ մեյ բերդում հավաքած ամրացած բազմությանը սաստկացող սարսափի վերաբերյալ խոսք ասել, այն, թե ինչ պետք է անել: Բերանը բաց արեց, բայց մեծ երկյուղի պատճառով նորից խոսքը կրկնել չկարողացավ, որովհետև նրա սիրտը թուլացավ ու զոդ թռնեց նրան ոտքերից մինչև գլուխ, և ծունկերը սկսեցին բախվել միմյանց: Երբ ամբոխը դրաց մարդու անչափ թուլասրտությունը, ազազակ բարձրացրեց ու ասաց, «Ինչո՞ւ մեզ բոլորովին կաշկանդեցիր, այս ժամի համար պահելո՞ւ, մեզ մեր կանանցով ու սրղիներով արյունաբուր գազանների ձեռքը տալո՞ւ եմ ալժմ՝ ինչպե՞ս կարող ենք մենք՝ քաղաքի այսքան խառնիճաղանջ բազմությունս, նրանց ներկայությամբ դուրս գալ փախչել, երբ ոչնչացնող թշնամին մեզնից հետո է գտնվում երեք մղոնի շափով: Ապա մեկմեկու

ասում են. «Ինչո՞ւ ենք հապաղում. այս քաղաքը դերեզմա՞ն պետք է դարձնենք մեզ համար. թողնենք մեր կահկարասին, դուրս գանք, գնանք, թերևս ազատվել կարողանանք: Եվ դիտելով միաժամանակ դեպի քաղաքի չորս դարպասները՝ տճալարում էին իրենց գցելու լեռնային Արցախ դավառը:

Երբ թշնամիները վերահասու եղան տեղի ունեցածին, հետապնդեցին փախստականներին և մի մասին, հասան այն լեռան ստորոտի մոտերքը, որ գտնվում է Կաղանկատուր մեծ գյուղի հանդեպ, որը (Կաղանկատուրը) նույն Ուտի դավառում է, ուսկից և ես եմ: Սրբ մթնելու հետևանքով մեծ վնաս չկարողացան հասցնել, այլ փոքր ի շատե ձեռք ընկածներից մի մասին կոտորեցին, մի մասին էլ գրավված սայլերի և գրաստների հետ վերադարձրին իրենց բանակը: Աստուծո խնամակալությամբ այլևս կրկին չհետապնդեցին փախստական բազմությանը: Եվ այն գիշեր բոլորը անցան, ինչպես երբեմն երբայեցիք անցան Կարմիր ծովով, և հասան Արցախ անառիկ գավառը: Գայլաք անուկով այն իշխանը նույնպես ազատվեց իր ամբողջ տնով և իրեն գցեց Պարսկաստանի կողմերը, բայց այլևս չկարողացավ նույն իշխանությունը ձեռք բերել:

Այս բոլորից հետո հորդացած հեղեղը, հորձանուտ գետը դիմեցին դեպի Վրաստան և շրջապատեցին պաշարեցին փափկատուն, վաճառաշահ, հռչակավոր մեծ Տփլիս քաղաքը: Լայտնի է դառնում նաև մեծ կայսր Հերակլիտսին: Նա հավատում է իր դորքի բոլոր ուժերը, գալիս շտապ հասնում է իր հիպակակից օգնականին. և երբ նա մատուցում է թագավորական քնծաներ ու նվերներ, (թագավորն) լնդունում է. շափականց ուրախանում են միմյանց տեսնելով: Ապա այնուհետև տրտեղ պետք էր տեսնել ազետը թշվառ մարդկանց, որոնք վաղված էին բերդում: Թշվառություն թշվառության ետևից նրանց վրա էր գալիս, բայց սպասելի ժամանակը դեռևս չէր հասել: Այնպես եղավ, որ խոսքով իմացավ երկու մեծ թագավորների հանդիպման մասին: Նախքան այն քաղաքը սլաշուրելու շտապ կարգով ուղարկում է նրանց օգնելու և քաղաքը պահպանելու զորք՝ սրտտ ու քաշ պատերազմող իր զորասլետ հարձառողին, սրա հետ իր թիկնապահներից ու դռնապահ-

ներից ընտիր հեծյալներ՝ մոտ հազար մարդու: Երբ քաղաքի
մնակիչները տեսան ուղարկված օգնականին հաղթանդամ և
վարժ զինակիցներով, շափազանց ոգևորվեցին ու սկսեցին
ժողովել երկու թագավորներին, շնայած տեսնում էին հյուսիս-
սի ու արևմուտքի զորքերի անթիվ բազմությունը, որ լեռների
նման ճակատ էին կազմել քաղաքի շուրջը. երկիրը թնդում ու
ցնցվում էր բազմությունից. սրա հետ մեքենաները, քառա-
նիվները և հումնական ճարտարագործների ձեռքով պատրաստ-
ված տեսակ-տեսակ այլ գործիքներ, որոնցով նրանք ան-
վրեպ կերպով մեծամեծ քարեր էին նետում փլուզելու պարիս-
պը: Նաև տեսնում էին մեծամեծ, քարալից, ավազալից ուռու-
ցիկ տիկերը, որոնցով մեծ կուր գետը, որ հոսում է քաղաքի
մի կողմով, ետ դարձնելով՝ հոսանքը պարսպի դեմ էին ուղղում:
Բայց նրանք ոչ մի բանից չթուլացան, այլ քաջալերում էին
միմյանց և նրանց քանդածները տեղնուտեղը շինում ու վե-
րականգնում էին:

Իսկ երբ երկու թագավորների զորքերն էլ լքվեցին, տկարա-
ցան, հոգևեցին, նաև քիչ չէր մարտում ընկած հետևակների
թիվը, թագավորները միմյանց հետ խորհրդակցեցին ու ա-
սացին. «Ինչի՞ համար է մեր զորքերի այսպիսի կորուստը.
չէ՞ որ երբ հզորին կապենք, ինչպես կամենանք, նրա տունը
կողոպտատի կենթարկենք: Այնժամ նախանձախնդիր մեծ կայսր
Հերակլեսը մտածեց և կարգավորեց, թե ի՞նչ է պետք անել:
Իրեն օգնելու եկած մարդուն ասաց. «Իարձի՛ր դու և քո զոր-
քով խաղաղություն միայն այս տարի գնա՛ քո տեղը, որովհետև
մենք տեսնում ենք, որ դուք զով երկրի բնակիչ եք և չեք կա-
րող դիմանալ, երբ Ասորեստանի ամառային տապախառ
շոգերը վրա հասնեն, ուր Տիգրիս մեծ գետի ափին պարսից
մտրաքաղաքն է: Մյուս տարին, երբ շոգ ամիսները կանցնեն,
կշտապես վերադառնալ այստեղ, որպեսզի կատարենք մեր
մտադրությունը. իսկ ես չեմ դադարի մարտնչել պարսից
թագավորի դեմ և վտանգի ենթարկելով՝ նեղություն կպատ-
ճառեմ նրա երկրին ու բնակիչներին: Եվ խելամուռությամբ
այնպիսի հնարներ կգործադրեմ. մինչև որ իրենց միջոցով
կատարվի:

Եվ երբ քաղաքի բնակիչները իմացան նրանց լքումի ու

տկարանալու մասին, ավելի հպարտացան իրենք իրենց մեջ
ու սկսեցին իրենց կորստյան պատճառ հանդիսացող խաղը
խաղալ: Բերեցին մի մեծ դրում, դրա վրա նկարեցին հունքի
խոզավորի պատկերը՝ մի կանգուն երկայնություն մը և մի
կանգուն լայնություն մը. աչքերի արտևանունքների փոխարեն
նշողեր գծեցին, որ ոչ ոք չէր կարող նշմարել: Նույնպես արե-
րին մորուքի լերկ ու այլանդակ տեղը, իսկ մի թիզ լայն քթի
տեղը բեղեր գծեցին այնպես, որ ամեն ոք կարող էր ճանաչել:
Քերին, դրեցին նրանց հանդիման պարսպի վրա ու գոռալով
գործերին, ասում էին. «Ահապատիկ ձեր կայսր թագավորը.
գարձե՛ք, երկրպագեցե՛ք սրան. սա Ջեբու խաքանն է»: Եվ
նիզակները վերցնելով ձեռքները՝ նրանց աչքի առաջ ծակո-
տում էին նրա պատկերին նմանեցրած դրումը: Նույնպես խաչ-
տառակում, ծաղր ու ծանակի ենթարկում, անարգում էին նաև
մյուս թագավորին՝ պիղծ ու արվամուլ կոչելով: Այս տեսնելով
ու լսելով՝ թագավորները քենով լցվում, փքվում, ռիսակալ-
վում, շարժում էին իրենց գլուխները և իրենք իրենց նզովում
էին, որ դրանց թագավորության ենթակա բնակիչներից ոչ
սք չազատվի, մինչև որ նախատինքների վրեժը չլուծվի,
սրունցով իրենք ծաղրվեցին նրանց կողմից: Եվ իրենց երևա-
ները դարձնելով նույն սպառնալիքներով գնացին:

Գ Լ Ո Լ Խ Ժ Բ

ՉՏՈՒՄԻՍ ԶՈՐՔԵՐԻ՝ ՆԵՐԱՎԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԱԼԸ

Այս այնուհետև Խոսրովի երեսունվեցերորդ տարում օ-
գոստոսական կայսրը մտադրվեց հնարքներ ստեղծել, թե
ինչպե՛ս արդյոք կարողանա բուժվել անասելի վշտից ու նա-
խատինքներից: Նաև իր ամբողջ թագավորության ցնթաց-
քում իրեն էր միաբանել հոռմեական արքունիքը, որին
պիսոթյան կոչեց՝ ճեղքելու Կովկաս մեծ լեռը, որ փակում է
հյուսիս արևելյան կողմը, բանալու Չորա գարպասները,
հանելու բարբարոսների բոլոր ցեղերը և նրանց միջոցով ետ
մղելու պարսից թագավոր դոռող Խոսրովին: Այնժամ պատրաս-

տում է իր իշխաններից Անդրե անունով մեկին, որ մի խելոք ու իմաստուն մարդ էր, և ուղարկում է նրան անհաշիվ հարստութեան խոստումներով, հանձնարարելով ասել, թե՛ Քնոզ միայն օգնեն ինձ իմ վրեժխնդրություն մեջ, ես էլ հանձն եմ առնում լիացնել գազանաբարձ, սուկեսեր, վարսավոր ցեղի ծարավը»:

Արդ՝ հյուսիսի արքայի հաջորդը, երբ այս լսեց, որ նրա թագավորության երկրորդն էր՝ Չեբու խաբան անունով, և լսեց մեծ պարգևների խոստումները, սրա հետ նաև պարսից արքային ենթակա բոլոր երկրները ասպատակելով ավարի առնելը, ապա լրիվ համաձայնությունը պատասխան տվեց, ասելով. «Ես վրեժխնդիր կլինեմ թշնամու նկատմամբ. ես կգամ անձամբ իմ քաջ զորքով, նրան օգնության կհասնեմ և կգոհացնեմ նրա սիրտը պատերազմական գործողությունների մեջ իմ սրով ու ազեղով, ինչպես որ ինքը ցանկանա»:

Այդ ժամանակ այն իշխանի հետ ուղարկում է թվով մոտ հազար ընտիր հեծյալ՝ զորեղ, կորովաձիգ, աղեղնավոր մարդիկ, որպիսով հաստատեն այն քննված պայմանները: Գրանք հանկարծակի՝ խուժեցին Չորս լեռնանցքով՝ բանի տեղ շնեցելով քաղաքապահներին ու պարսից արքայի զուժարտակները, որոնք տեղավորված էին լեռնանցքում, այլ սլացան ինչպես արծիվներ Բոառ¹⁴⁵ մեծ գետի մոտով, իրենց դեմ դուրս եկողներից ոչ ոքի շինայելով: Ճանապարհ ընկան վրաստանով և նշերացիների¹⁴⁶ երկրով, կտրեցին անցան ծովով ու հասան արքայական պալատը: Եվ տեսակցելով մեծ կայսր Հերակլի հետ, միմյանց միջև հաստատեցին երզումները ըստ յուրաքանչյուրի օրենքների: Նրանից թույլտվություն ստանալով իրենց ելքի վերաբերյալ, այլևս ոչ ոքից չէին վախենում:

Իսկ երբ ոտք գրին խոսքովի երեսունթերթորդ տարվա մեջ, հյուսիսի թագավորը ուղարկեց իր խոստացած զորքը, որին գորավար նշանակեց իր եղբորորդուն. ի պատիվ սրան իրենց իշխանությունը Շաթ¹⁴⁷ էին անվանում: Սա եկավ ասպատակեց ամբողջ Ալվանքը ու Ատրպատականի մի որոշ մասը, սրի քաշեց քրիստոնյա, նաև հեթանոս բազմաթիվ մարդկանց: Իսկ նրանց կողմից գերվածների թիվը ո՛վ կամող է իմանալ ու գրի առնել:

Նրանք բանակեցին Արաքս գետի մոտերքը: (Շաթը) նամակ ուղարկեց մեծ թագավոր Խոսրովին ու հայտնեց, որ իրենք միացել են կայսեր հետ և եկել են նրան օգնության: Միմյանց ուղարկված նամակների պատճենը այս է. «Եթե չհեռանաս հոմեական թագավորից, ամբողջ երկիրն ու քաղաքները, որ բռնի կերպով խլել ես նրանից, շթողես նրան, նրա երկրից բոլոր գերվածներին, որ այժմ պահում ես քո իշխանություն տակ, խաչափայտի հետ միասին շուղարկես, որին երկրպագում ու փառաբանում են բոլոր քրիստոնյա ժողովուրդները, և նրա սահմաններից դուրս չբերես քո բոլոր զորքերը, — այսպես է ասում հյուսիսի արքան՝ ամբողջ աշխարհի տերը, քո ու բոլոր թագավորների թագավորը, — ես էլ կուղղվեմ քեզ վրա, ո՛վ դու կուսակալ Ատրեսաստի. նրա վրա քո կողմից հասցված մի շարիքի զիմաց կրկին կհասուցեմ քեզ իմ սրով կշարժվեմ քո ամբողջ երկրով, ինչպես որ դու շարժվեցիր նրա երկրով: Հանգիստ չեմ տա քեզ և չեմ դանդաղի քո նկատմամբ կատարել ըստ այս խոսքի, որ քեզ հետ խոսեցի»:

Երբ այս ամբողջը լսեց Խոսրով մեծ թագավորը, այնժամ վեր կացավ իբրև անհուն հեղեղ կամ որպես որսորդների դեմ խոյացող առյուծ և կամ ինչպես ձողակոտոր արջ. այսպես էլ նա: Թեպետ և ինքը տեսնում էր, որ միաբանված իր դեմ են դուրս եկել, սակայն ըստ իր խորամտությունից ցույց չէր տալիս, որ երկնչում ու թաքնվում է նրա երեսից. այլ հպարտությունը և խիստ սպառնալիքով է պատասխան տալիս. «Գնա՛, քո թագավորին և իմ եղբայր խաբանին ասա՛, որ ի վաղուց անտի իմ նախնիներից ու իմ կողմից մեծարված ու հարգված է ձեր տունը՝ իբրև մեր սիրելի ելբոր տուն. դրա համար ուստիբրով ու դուստրերով միմյանց հետ կապված ենք ինքնամիությունը: Արդ քեզ հարկ ու արժան չէր թողնել քո հարազատներին ու նուաճալ իմ ծառայի՝ հոմեական կտրիճի խոսքերով»:

Պատգամավորը* վերադարձավ իր երկիրը:

* Բնագրի տարեկան բառը թարգմանեցինք պատգամավոր: Աճառյուղը կարծում է, թե սա պարսկերենից փոխառյալ ۱۰۰۰۰۰ ուղեցույց բառն է: Սրանից համարում է հայերեն տարեկան աճանցավոր բառ, ինչպես ուզեցան, այսինքն՝ նամակ, նվեր և այլն տվող, պատգամատու:

Իսկ կայսրը, վերցնելով իր զորքերը, ուղղվեց Պարսկաստանի կողմերը, և համառորեն ճգնում, ջանում էր հասնել պարսից թագավորի արքունիքը:

Իսկ երբ պարսից թագավորը տեսնում է, որ զորքը, այնուամենայնիվ, այնպես չկատարվեց, այլ համարձակ ուղղութիւն վերցրած իր վրա է գալիս, փախչում է նրա առջեից, ճգնում ապաստանում է իր իսկական մայրաքաղաք մեծ Տիգրոնում, իր կանանց, հարճերին, զավակներին անցկացնում է Դկլաթ գետի այն կողմը: Առձեռն պատրաստ իր զորքը, որ թվով քիչ էր, իր մոտ է հավաքում, կազմավորում, ուղարկում է կայսեր դեմ: Շատ մեծարանքով ու հարստութիւնք համաձայնեցնում է ինչ-որ մեկին, որ նրա պալատում աչքի էք ընկել քաջութիւնք, փոխում է նրա անունը, անվանում է Թեմալ¹⁴⁶: Հրապուրելով նրան մղում, հրում է ալիքներով դեմ, իր կողմից առաքված զորքին նրան է գորավար նշանակում: Սա նրա հրամանի երկյուղից իր կամքից անկախ համաձայնվում է, բայց ինքը գիտեր, որ հապճեպ հավաքված խոսրովի թուլլ զորքը պարավելու է կայսեր դեմ: Եվ մեկ, երկու, չորս անգամ զգուշ նամակ է ուղարկում իր խոսրով թագավորին ու հայտնում է. «Ո՛չ թի իմ մահվան, այլ քո զորքի սընը լացման համար նախապես տեղյակ եմ պահում քեզ, եթէ շտապ կարգով ի՞նձ օգնական զորք չավելացնես, ես մեռնելուց չեմ վախենում, բայց հետո գու գիտես»:

Եվ նորից թագավորը կարգադրում է պատասխան գրել, թե՛ «մի վախենա նրանցից, կովի՛ր և հաղթի՛ր»:¹⁴⁷ Իսկ վերջին անգամ խիստ ամբարտաճանուրթիւնք գրում է նրան, ասելով. «Եթե հաղթել չկարողանաս, իսկ մեռնել հո կարո՞ղ ես: Տեսնելով նրա այդ խիստ հրամանագիրը՝ ձեռքերը վեր բարձրացրեց իր զորքի հետ դեպի արեգակն ու լուսինը, բարձր ձայնով կանչեց ու ասաց. «Ո՛վ իմ աստվածներ, դատ կարեցեք իմ և իմ անխիղճ թագավորի միջև»:

Եվ միավելով պատերազմի մեջ՝ հույների զորքի դեմ ընկան ինքն ու իր զորքը և դարձան ինչպես փոշի, որ թշում-տանում է մորիկը: Արդ՝ երբ պարսից իշխանները տեսան այդ մեծ կոտորածը ևս, որ վիճակվեց պարսից զորքին, սկսեցին միմյանց մեջ տրտնջալ, ասելով. «Մինչև ե՞րբ բազմաթիվ տեղերում

պատերազմի միջոցով պետք է հոսն արյաց երկրի մարդկանց այս արյան վտակները. մինչև ե՞րբ պետք է լինենք այս արյունահեղ թագավորի ահուգողի մեջ. մինչև ե՞րբ մեր ունեցվածքն ու ստացվածքը պետք է արքունիք տարվին, ոսկին ու արծաթի գնան նրա գանձարանը. մինչև ե՞րբ ամբացված ու փակված պետք է մնան ճանապարհների անցքերը՝ խանգարելու դանազան կողմերի վաճառաշահութիւնը. մինչև ե՞րբ պետք է սարսափեն և հալ ու մաշ լինեն մեր հողիները նրա սոսկալի հրամանից: Զէ՛ որ սպառեց, կուլ տվեց մեր քնտիր-ընտիր ընկերներին, երկրներ յաջնորդներին. չէ՛ որ մեր բազմաթիվ հղբայրները ժամանակ առ ժամանակ, խուճ-խուճ, դասպաս զանազան տանջանքների մեջ ոչնչացան նրա հրամանով, սմանք նույնիսկ շրատույզ արվեցին. չէ՛ որ սղամարդուն՝ կնոջից, հորը՝ որդուց հանեց, բաժանեց, բռնեց հեռավոր ժողովուրդների մեջ ժառայութիւն ու աղախնութիւն և մեծ բազմութիւնք քնակեցրեց ժանտ թշնամու դեմ-դիմաց»:

Այս և սրա նման շատ բան էին շնչում նրա մտքին, բայց ոչ ոք չէր հանդգնում որևէ խոսք համարձակորեն ասել, մինչև որ նրա կյանքի վերջը վրա հասավ: Ապա նրա հարազատ ընտանիքից մի մարդ գլուխ բարձրացրեց, մի իշխան, որ խոսրովի կավատ կոչված ավագ արդու դաստիարակն էր: Սա խորհրդակցեց նրա հետ և խորհուրդ տվեց վերացնել նրա հոր՝ խոսրովի հիշատակը և նրա բազմաթիվ եղբայրներին ու առավ պարսից թագավորութիւնը: Նրա դաստիարակը, հնարներ գտնելով ու գործի գլուխ անցնելով, հրապուրեց (խոստումներով), խոսրովի պալատականների խոտորեն դատավորված կարգուկանոնը տակնուվրա արեց: Հանկարծակի բույրի համակրանքը թեքեց իր սանի՝ կավատի կողմը, որպեսզի նրա հոր փոխարեն նրան թագավորեցնի:

ԽՈՍՐՈՎԻ ԱԳՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Բայց մի փոքրիկ սյահ ինձ լսեցեք, և ես ձեզ հասառոտ կպատմեմ այդ մարդու հնարամտութիւնը, թե ինչպիսի կամ ի՞նչ ձեռով կարողացավ մահվան թակարդի մեջ ներփակել ահեղ որսորդին՝ արևելքի առյուծին, որի գոռալուց միայն հեռավոր ժողովուրդները սարսելով դողում էին, իսկ մոտավորները նրա տեսքից հայլուժմ-սպառփում էին իբրև մոմ։ Այնուամենայնիվ, նա (Կավատի դաստիարակը) հարմար ժամանակին կարողացավ բոլորի համակրանքը շահել և հարձակվեց նրա (Խոսրովի) վրա իբրև մի որդի վրա։ Այս բոլորը անելով՝ նա ոչ մի ուրիշ թագավոր կամ իշխան օգնութեան չկանչեց, ոչ էլ ժողովուրդներ ու ցեղեր պատրաստեց զորավիգ լինելու իր սանին նրա դեմ։ Այլ գաղտնի մարդ ուղարկեց Հերակլիոս կայսեր մոտ, խնդրելով, որ նա մի քանի օրով ամրանա այն տեղում, ուր իր գործով գտնվում էր։

Այս հրամայեց Կավատի անունից հրովարտանքներ գրել պարսից թագավորութեան մեծ արքունիքի գնդերի մեծամեծներին ու առաջնորդներին, թե՛ «մե հոր կողմից վերջվեց ու ինձ տրվեց թագավորական իշխանութիւնը, պատրաստ եղեք սակավ հեծյալներով»։ Ապա նրանց դաստիարեց Տիգրես գետի կամուրջի ելքերում, Վեհարտաշի¹⁴⁹ քաղաքից դուրս, Տիգրոն պալատի դեմ հանդիման, ուր մերձակա զորքով պահպանված գտնվում էր նրա հայր Խոսրովը։ Աջից և ձախից Կավատի մունետիկը բարձրաձայն գոչում և ասում էր. «Ո՛վ որ մարդ է, սիրում է կյանքը ու կամենում է երջանիկ օրեր տեսնել, թող շտապի ընդառաջ ելնել Կավատի այս նորոգ թագավորութեանը, որովհետև սա է արքայից արքան»։ Եվ բաց արին Անհուշ բերդի դռները, համարձակ դուրս կանչեցին արքայի բոլոր կալանավորներին, որոնք հույժ անթիվ բազմութեամբ ներկայված էին մահվան ստվերների մեջ երկար ժամանակից ի վեր։ Նրանց ասում էր. «Խոսրովի կողմից դադարած թշվառականներ, եկե՛ք, դո՛ւրս ելեք, որովհետև նորընծա թագավորի՝ նրա որդի Կավատի ձեռքով ձեզ համար կյանքի դռներ բացվեցին»։

Եվ ահա լուրաքանչյուրը փշրելով իր շղթաները, միատեղ դիմեցին զեպի դուրս։ Որոնք օրհնում էին Կավատին և ասում. «Արքա՛, հավիտյան ապրիր»։ Նրանց օրհնանքի ձայնը երկինք էր բարձրանում։ Եվ թուշելով Խոսրովի ախտների ընտիր-ընտիր երիվարների վրա՝ սլանում էին Խոսրովի դեմ երեսն շղթաները իրենց ձեռքերում. հեծած արշավում էին այս ու այն կողմ՝ անարգելով Խոսրովին։

Այս Խոսրովի պալատի դռնապանների, թիկնապահների, անվանակիր գնդերից շատերը, աննելով իրենց դրոշանիշները, անցան նրա որդի Կավատի կողմը։ Իսկ որոնք մնացին այնտեղ սլալատում, Կավատի պատգամավորները նրանց հորդորում էին զգուշութեամբ բռնել, պահել Խոսրովին, այլապես մահ կգանձեն։

Արդ՝ երբ Խոսրովը լսում է այդ աղաղակը, իր մոտ գտնվողներին ասում է. «Այս ի՞նչ աղմուկ-աղաղակ է»։ Իսկ նրանք լսեցին, որովհետև վախենում էին պատմել նրան։ Փողերի խառնիխառն ձայնները ավելի ու ավելի էին անհանգստացնում։ Գարձայ հարցնում է մտտիկ գտնվածներին. «Այս ի՞նչ անկարգ աղմուկ-աղաղակ է»։ Իսկ նրանք պատասխանում են. «Քանի որ քո որդի Կավատն է կամենում քո փոխարեն խաղավորել, ապա բոլոր ընթանում են նրա մոտ, և ահա նախտ է կազմել քաղաքի դիմաց, գետեղերի մոտ։ Նաև սրտեց մեծ բանախ բոլոր կալանավորներին, որոնք բանտարկված էին քո հրամանով. բոլորը ցնծալով օրհնում են նրան՝ ապրտ անվանելով»։

Երբ այս ամբողջ աղետավոր գուշժը լսեց, մանավանդ կալանավորների ազատումը, սկսեց հառաչել, վայ տալ, վարանքի մեջ քնկնել. նստելը չէր հասկանում, վերկենալն էլ բոլորովին չէր զգում, որովհետև տեսավ, որ ահագին գորբը իր վրա է հասնում։ Ութով մտավ իր պարտեզի դռնով, գնաց-թաքնվեց սղոտ ծառերի տակ և մնաց սյահ մտած։ Հանկարծ սիրտը սպրտափից թուլացավ, քանի որ նրա աչքերը դիտում էին, թե իբր անողորմ սուրբ իր վրա է բարձրանում։ Ապա ամբողջ գունդը եկավ նրա վրա և շրջապատեց ապարանքը։ Խուզարկու-նոր հետամուտելով գտան նրան այն տեղում, ուր նստած էր մարանքի մեջ։ Ապա նրան դուրս բերին ապարանքից, մտցրին

մի դահլիճ, որն անվանում են Քատակի Տեղուկան մարտապանդ¹⁵⁰ ապարանք: Երբ մտավ, տեղեկացավ տեղի ու տանտիրոջ վերաբերյալ, կուրծքը ծծեց և հեծեծանքով ասաց. «Վա՛յ ինձ, ողբալի եմ ես. ինչպե՛ս խարվեցի կախարդներից, որոնք գուշակում էին, որ ես Հնդկաստանի Մարասպանդ տեղում կբռնվեմ: Արդ՝ ըստ նրանց գուշակութան դժբախտությունը ինձ հասավ բանդագուշակությամբ և ոչ թե արգարությամբ»:

Այդ օրը պահեցին նրան, մյուս օրը գլուխը կտրեցին, և շարը մեղտեղից վերացավ: Կավատը իր եղբայրներին ոտքերից ու ձեռքերից խեղանդամ դարձրեց՝ կամենալով խեղությամբ նրանց կյանք շնորհել, բայց շատերի ամբաստանության հետևանքով նրանք ևս սրով սպանվեցին:

Ինքը խոսրովի՝ իր հոր, թագավորության տեղը բռնեց: Նա, խոհեմ ու բարեսիրտ լինելով, ողորմած էր ամբողջ երկրի և իր սպասավորների նկատմամբ: Նա հաշտություն առաջարկեց իր ժամանակակից թագավորներին: Այն բոլոր կալանավորներին, որոնք գտնվում էին իր հոր պալատի բանտում, ուղարկեց յուրաքանչյուրին իր տեղը: Հրովարտակներ զրեց իր թագավորության բոլոր սահմաններում, որ ամենքը ցընծությամբ և ուրախությամբ ապրեն. արքունական բոլոր հարկերն ու մաքսերը իր տերության բոլոր վայրերում երեքամյա ժամկետով զիջեց ամենքին: Չանք էր թափում նաև այնպես անել, որ ոչ ոք իր թագավորության ընթացքում սուր շկապի վրան: Բայց քանի որ հալածելու էին մեզ մեր մեղքերը անտեր ու անկարգ ժամանակներում, ընդունայն կորան նրա մտադրությունները: Նրա կյանքի վախճանակետը կարճվեց, տևելով միայն յոթ ամիս. այն հայրասպանը գնաց միացավ իր նախնիներին, որովհետև պետք է թագավորությունը վերանար Սասանյան տանից և հանձնվեր Իսմայելի¹⁵¹ սերունդների ձեռքը:

ԱՂՎԱՆՔԻ ԱՔՈՒԱԿԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԻՐՈՅԻ, ՆՐԱ ՔԱԶՄԱԹԻՎ ՏԱՌԱԳՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՍՏՄՈՒ ԵՆԱՄԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Իրանից հետո, Էրբ բոլորը իրենց հանցանքների համար ներում ստացան նորընծա թագավոր Կավատի կողմից, որը շնորհեց նաև այլ այնպիսի սյարգևներ, ինչպիսիք ամենից հաճելի էին թվում կալանավորներին և նրանց, որոնք միայն պահված էին մեծ արքունիքի նախնական կալանատանը և որոնք արդեն հույս չունեին, թե ամեն մեկը կվերադառնա իր երկիրը կամ ծննդապարտը, — նրանք նրա հրամանով անմիջապես ուղարկվեցին և մեծ կարտով մեկնեցին հայրենի տունը:

Հայրենիք վերադարձողների հետ էր նաև Աղվանքի տերության մեծ կաթողիկոսը, որի անունն էր Վիրու: Սո հանձարեղ, խելոք, իմաստուն, խոսքի մեջ ուժեղ մի մարդ էր. նրա լեզուն բանավոր հոնտորական խոսքի և թագավորներին ու մեծամեծներին գովելու մտավարժության մեջ արագազիբ զրոզի էր նմանվում, իսկ պարզախոսությամբ հաճելի էր ուսմիկներին ու հասարակ ժողովրդին: Նա իր խոսքը ընդարձակում էր՝ նմանեցնելով իմաստունների ճառերին և նրանց իմաստալից խոսքերին. իր բանավոր խոսքը առաջ էր տանում և հորինում ինչպես որ մեկը մարգարիտը ոսկուն է ընդելուզում: Մանավանդ պարսկերենի թարգմանության մեջ քսանհինգ տարի վարժվել էր խոսրովի պալատի նախնական կալանատանը, որտեղ նրան կալանավորել էին՝ մեղսակից համարելով Աղվանքի ապստամբված մեծամեծ իշխաններին: Արանք ապստամբվեցին պարսից թագավորի դեմ և նրանցից շատերը սյնաջան՝ մի մասը սրով, մի մասը խեղանդամվելով, իսկ մյուս մասը հեռավոր երկրներ տարագրվելով: Իսկ կաթողիկոսը վախավ և ապաստան գտավ պալատում: Եվ այդ հաջողից նրան, որովհետև նրա սուրբ խաչի շնորհները նրա համար ճանապարհ հարթեցին դեպի թագուհու պալատը, որը մեծ ցանքով նրա կյանքը թագավորից պարգև ստացավ: Բայց թագավորը մեծ երդումով ինքն իր մեջ որոշեց նրա մասին, որ նա կենդանության ժամանակ իր երկիրը չպետք է վերա:

դառնա, այլ կմնա պայտառի նախնական կալանատանը: Քա-
զավորը շխեց նրանից նրա աթոռի իշխանութեան եկամուտը
և ոչ էլ զրկեց կաթողիկոսական տիտղոսից: Այլ նրան պահում
էր որպես մի թանկագին անոթ և խնայում իբրև արագընթաց
մի երկվար մինչև մարտի ու պատերազմի օրը. և սա մնաց
այնքան ժամանակ, մինչև որ նրա պանդխտութեան վերջը
մոտեցավ, և մերձեցան Աղվանքի շար թշնամիների ձեռքով
անողորմ տանջանքների ցավեր ու հարվածներ: Եվ աստված
ուղարկում է նրան, ինչպես մի ժամանակ Մովսեսին Մադիա-
մից*, որպեսզի զա՛կորզի, հանի արվասպան և կանանց լիկող
ցեղի ձեռքից՝ որպեսզի խնամի երկրի վրա կենդանի մնացած
սակավ սերունդը՝ մեկը ցեղից, իսկ երկուսը քաղաքից**:

Արդ՝ երբ նա արքունիքից զուրս ելավ և եկավ իր ծննդա-
վայրի սահմանները, ամենուրեք գետին էր ընկնում ու փար-
վում իր թեմի եկեղեցիների դռներին ու հատակներին, թափում
էր հորդառատ արտասուք և երբ կրկնում էր ծնրադրուխու-
նը, գետինը թրջում էր: Վեր կենալիս քաջաչիտում էր իրեն և
մխիթարում նրանց, որոնք իր հետ էին, գոհանալով աստ-
ծուց, որը խեց իրեն առյուծի ժանիքներից և շնորհ արեց
երկրորդ անգամ տեսնելու սուրբ եկեղեցիների կամարները:
Մտադրություն ուներ առժամանակ հանգստանալ և քաղմա-
ժամանակյա օտարություն մեջ առաջացած իր սիրո և խան-
դազատանքի կարտուր առնել: Քայց դեռ նրան անասելի սուգ
էր սպասում, ջանք ու տառապանք, տեսնելու էր կործանումը,
որ շուտով լինելու էր:

Եվ մինչդեռ նա իր հայրենիքի գանազան վայրերում կարոտ
ու սեր էր սփռում, հանկարծակի կրկին ոռնաց հյուսիսային
հողմը և կոծեց Արևելյան մեծ ծովը: Եկավ վրա հասավ ոչնչաց-
նող մեծ դազանը Շաթ¹⁶² կոչված իր արյունարբու որդու
հետ: Նախ նա ուղղվեց Վրաստանի դեմ, դիմեց Տիդղիս քաղաքի

* Ելք. Գ, 19—20:

** Թնազիրն է՝ ամի յազգէ, երկու ի քաղաքէս: Երեմիա Գ, 14-ում գրված է,
«Պարձք ինձ մոտ, հեռացալ որդիներ, ասում է տերը, որովհետև ես տիրե-
ցի ձեզ. և կառնեմ ձեզ մեկական քաղաքից, երկուական ազգից և ձեզ Սին
կտանեմ»:

վրա. առաջվա քաջ տղամարդկանցից քաղաքի ներսում ոչ
որի չդանելով, տեղին համարեց կուտակված վրեժը լուծել
նրանց կողմից հասցված նախկին նախատինքների համար:
Եվ երբ քաղաքը պաշարեց ու սկսեց մարտնչել ու նեղել նրա
մէջ գտնվող բնակիչներին, վերջիններս էլ զուրս եկան նրա
դեմ: Մոտ երկու ամիս ծանր պայքարեցին, իզուր ջանալով
իրենց վախճանի ձևկատաղիքը փոխել: Իրենց արյան թափ-
վելու ահը, որ այդտեղ լինելու էր շուտով, տագնապահար էր
անում նրանց:

Այնժամ նրանց վրա մոռնաց սարսափելի գաղանը, բավա-
կանաչափ մարդկանց իր կորյունների համար որսաց և խեղդեց,
որչեքը լցրեց որսով և իր զորքերը լիացրեց հափշտակությամբ:
Բուրբ միասին իրենց սրերը բարձրացրին ու դիմեցին դեպի
պարիսպները. այդքան քաղմություն միմյանց վրա դիզվե-
լով, ավելի բարձր դարձան, քան պարիսպները: Մութ ստվեր
բնակավ քաղաքի ողորմելի բնակիչների վրա: Նրանց անդամ-
ները հողերը խախտվեցին, բազուկները թուլացան, պարտու-
թյան մատնվեցին, ետ նետվեցին պարսպից և խուճապի
մատնվեցին, ինչպես որսորդների ծուղակների մեջ բռնված
ձեռնուկներ: Ոչ ոք չկարողացավ հասնել իր տունը՝ սարսա-
փելի գուլջը հաղորդելու, իր սիրելի ամուսնուն պատվեր
տալու, իր արդանդից ծնվածին սիրելու կամ ծնողների ծնողա-
կան սերը մտաբերելու, այլ սարսափահար եղած ջանում էին
թաքնվելու՝ ոմանք տանիքների վրա, ոմանք խողովակների
մեջ. իսկ շատերն էլ լցվեցին եկեղեցիները և բռնեցին սեղանի
սակյուններից:

Նրանց գոռում-գոշումները, հառաչանքները նմանվում էին
մաքիների մեծաքանակ հոտի մաշունին, գառների կամ մայ-
րերի ողբին՝ իրենց ձագերի համար: Նրանց ետևից ընկած էին
անողորմ հնձողները, որոնց ձեռքերը արյան վտակներ էին
հոսեցնում, ոտքերը արորում էին դիակները, իսկ աչքերը
տեսնում էին կարկուտի տեղատարափի շափ դիակների կույ-
տերը: Երբ ողբերի ու վայնասունների ձայները դադարեցին,
ու ոչ մի մարդ չազատվեց, ապա կոտորողները նույնպես
հասկացան, որ իրենց սրերը հազեցան: Բռնած բերեցին նաև
երկու իշխաններին. դրանցից մեկը պարսից թագավորական

կուսակալ էր, իսկ մյուսը քաղաքի բուն բնակիչներից՝ Վրաստանի իշխանական տոհմից էր: Երբ դրանք ձեռքարկված ներկայացվեցին թագավորին, վերջինս հրամայեց փորել-հանել դրանց աչքերը իբրև հատուցում այն բանի, որ իր պատկերը կույր նկարեցին՝ իրեն անարգելիս: Դաժան շարչարանքներով խեղդամահ արին նրանց՝ ողջ-ողջ հանելով մաշկը նրանց անդամներից: Ապա ձգեցին, հարմարեցրին, խոտով լցրին դրանք ու կախեցին պարսպի բարձունքից:

Նույն ժամանակ ձեռք բերին հավաքված գանձերի արկղերը և բազմաքանակ ավարներիով՝ ծանրաբեռնված բերում շեղջ առ շեղջ, կույտ առ կույտ լցնում էին իրենց բռնակալի առջև: Այնքան շատ բերեցին ու լցրին նրա առաջ, մինչև որ ձանձրացավ նայել ու դիտել ոսկու և արծաթի անբավ անհամար տաղանդները: Իսկ եկեղեցիների գարգերը, ակնապատ, մարգարտաշար սպասները ո՞վ կարող է նկարագրել:

Արդ՝ երբ կատարեց ըստ իր կամքի և հրամայեց ամբողջ ավարը դուրս բերել այնտեղից, ինքը գանձերով վերադարձավ իր տեղը, իսկ պատերազմող զորքերը հանձնեց իր Շաթ որդուն, որին հրամայեց դատախարակներին, քաջ մարդկանց հետ միասին շարժվել Աղվանքի սահմանները: Նրանց պատվիրեց հետևյալը, ասելով՝ «Եթե նրանց երկրի մեծամեծներն ու առաջնորդները ընդառաջ կգան իմ որդուն, իրենց երկիրը կհանձնեն նրա ձեռքը ի հպարտություն ինձ և իմ զորքերի առջև բաց կանեն իրենց քաղաքները, ամրոցները, շուկաները, դուք էլ թողեք, որ նրանք ապրեն ու ծառայեն ինձ. իսկ եթե ո՛չ, մի՛ խնայեք նրանց տասնհինգ տարեկանից վեր արական բոլոր հասակներին. բայց մանկահասակ տղաներին ու ամբողջ իգական սեռը պահեցեք ինձ ու ձեզ ծառայելու և աղախնություն անելու համար»:

Զորքերը նրանից անջատվելով գործեցին ըստ այն պատվերի. եկան-հասան հրամայված վայրը: Որդին ըստ իր հոր պատվերի պատգամագրեր ուղարկեց պարսից կուսակալ իշխանին, որ Աղվանքի մարզպանն էր և անունն էր Սեմա-

* Քնապիրն է որագծութիւն գորացնս, ուղղել ենք ըստ Ն. Քյուլանդա-ցու «բազմութիւն աւարացն» և ըստ այդմ թարգմանել:

Վշնասպ, և վերևում հիշատակված նույն կաթողիկոս Վիրոյին Պարսիկը շնորհունեց առաջարկությունը. «Մ՛վ ես, — ասում է, — և որտեղից է աղվանից այդ ցեղը, ինչո՞ւ պետք է դրանց համար ես ինձ ենթարկեմ այդ հրամանին»: Եվ ունեցվածքը վերցնելով իր հետ, որի մեծ մասը հափշտակել էր այս երկրից, ոտքս սյրծավ, գնաց, ապաստանեց պարսից կողմերը: Իսկ Աղվանից Վիրո հայրապետը երբ իմացավ, թե ծանր լուծը որլեց միայն իր պարսիցին, վարանքի մեջ ընկավ, կասկածում ու վախենում էր պարսից թագավորից, սրովհետև նա երկուր ժամանակ սարագրված էր օտարություն մեջ հենց նրա դեմ սպասամբված լինելու պատրվակով, բայց միաժամանակ կամենում էր անսալ հրամաններին և ներկայանալ թշնամուն՝ երկիրը կոստորածից ու ոշնացումից փրկելու համար: Ապա ըստ իր խորամտությունից գաղտնի կամակ գրեց պարսից թագավորին՝ հայտնելով թշնամու սպառնալիքները և հարցնելով, թե կների՞ թագավորը իրեն, եթե այս անգամ գոհացնի թշնամու սիրտը՝ նրան ներկայանալով: Իսկ եթե համաձայն չէ, ասլա ինքը կհեռանա երկրի սահմաններից:

Եվ քանի գեռ նա սպասում էր թագավորի պատասխանին, կամենում էր նաև որոշ ժամանակ հրապուրել, սպանել պատգամավորներին, որոնք թշնամու կողմից էին ուղարկված, նրանց աչքերը կապում էր սափավ դրամով: Նրանց տանումբերում էր այլևայլ պատրվակներ հնարելով. մեկ ասում էր. «Կիանչիմ երկրի բոլոր զալառների գեկավարներին ու սասընտրողներին, որպեսզի նրանք էլ ինձ հետ միաբանվեն ձեր թագավորի առաջարկությունը տրվելիք պատասխանի վերաբերյալ»: Մեկ ասում էր. «Բնավ էլ կարիք չիս. որ ես համբերեմ, սպասեմ շատերի խորհրդակցություն, այլ ես ինքս էպատասխանեմ, կպատրաստեմ թագավորին վայել ընծաներ ձեր թագավորին աղջունելու պատվին»:

Այն ժամանակ պատգամավորներն սկսեցին ստիպել նրան և տանել. «Ինչո՞ւ ես սպասում, ինչի՞ համար ես հապաղում, ասա ամբողջ Աղվանքով մեկ ասպատակ սփռելու սահմանված օրը հասավ. մենք քեզ անհ հայտնեցինք մեր իշխաններին ու մեր տեր Շաթի գաղտնի մատուցությունը: Արդ՝ եթե չես կամենում նրա առաջարկություն համաձայն գործել, շտապիր

գուրս սրծնել, փախչել, որովհետև մենք ձեր կողմից մեծա-
բանքների ու նվերների արժանացանք, ուստի երկյուղ ենք
կրում մեր աստծուց և չենք կարող նենգել ու տեսնել, թե
ինչպես մեր բազմաթիվ զորքերի ձեռքերը բարձրանում են
քեզ, այս մոտիկ բանակի և քո ժողովրդի վրա»:

Մինչդեռ նրանք այսպես խոսում էին, հանկարծ մեզ ու
մառախուղ պատեց մեր ամբողջ երկրի երեսը, միաժամանակ
զաշտերը, լեռների գագաթները, բլուրները, ձորերի խորքե-
րը. ոչ մի վայր չմնաց, նույնիսկ ոչ մի ոտքի տեղ մեր երկրի
բոլոր սահմաններում՝ շենքերում, ագարակներում, տներում
և ճանապարհներում: Բոլորի բերանները վա՛յ, վա՛յ էին ազա-
դակում, բարբարոսական գոռում-գոչումը շէր լուում, և չկար
մի վայր, ուր չլսվեր թշնամիների սպանիչ ձայնը: Եվ այս
ամենը միևնույն օրը, միևնույն ժամին: Որովհետև նախա-
պես վիճակով գնդերի վրա բաժանել էին գավառները, շենքերը,
հեղեղատները, գետերը, աղբյուրները, ճահճները, լեռներն
ու գաշտերը, որպեսզի ամենուրեք միասին ու միաժամանակ
բոս սահմանված ժամկետի աշխարհակուլ ասպատակությու-
նը սփռեն: Մեր սահմանները ծայրից ծայր սասանվում էին:

Ապա այնուհետև այնտեղ պետք էր տեսնել մարդարեի
ասածի հմանությամբ կատարվածը. «Եթե, օրինակի համար,
մարդ փախչի առյուծից, բայց նրան արջ հանդիպի և ազատ-
վելով նրանից ապաստանի իր տանը ու ձեռքերը պատին
հենի, բայց նրան օձը խայթի»¹⁵²: Այն օրերը այսպես վրա հասան
մեզ: Քանի որ սրից, ինչպես ահեղ առյուծից, շարդ ու փշուր
անող արջի մագիլների մեջ, այսինքն՝ սովի բերանն էին ընկ-
նում: Եվ այդ պատճառով լքված, թուլացած, սովահար՝ ակա-
մայից գերության էին դիմում, ինչպես որ թշնամու կատաղի
տեսքի ահից փախչում և շարաթույն օձերից խայթվում էին:

Այդ այն ծովային ալիքների մեջ ծածկելու հետ միաժա-
մանակ, սկսեցին հետամտել նաև մեր կաթողիկոսին. հանը-
ցին նրան վիմահատակ լեռների ասպատաժոտ մի գլուղից, որ
կոչվում է Կողթ-ագարակ¹⁵³. Նա թողել էր իր կահկարասի-
ները, դանձերը, ձի էր հեծել և փախել նրանց հետապնդումից:

Նրա սպասավորներից ոչ ոք չկարողացավ նրա հետ դուրս
գալ, բացի մի մարդուց, որ մեր երկրի վերաբնակիչներից էր.
սրա անունն էր Գաղվշնասպ, որ իր ցեղի ղեկավար տոհմից
էր: Միայն սա կարողացավ նրա հետ դուրս գալ: Բայց Արցախ
սնառիկ գավառների լեռների ձորառատ ասպտաժոնները չկա-
սկցրին թշնամու արշավանքները, այլ մեր մեղքերը նրանց
առջև զժվարությունները դյուրին էին դարձնում, և նրանց
երկվարների ընթացքը լեռների գագաթների վրա առանց
խոչընդոտի էր: Թշնամիները հասան կաթողիկոսին, իրենց
սղեղները լարեցին նրա վրա դառնագին վիճակում: Այդ ժա-
մանակ սքանչելի զորությունը սուրբ խաչի, որ կաթողիկոսը
սենի իր հետ, անշրպետ դարձավ նրա ու թշնամիների միջև.
այդ օրը նրան ձեռք չդիպավ: Եվ երբ օրը մթնում էր, ազատված-
ները աղոթքներով ավելի գիշերվա խավարն էին ցանկանում,
բան ցերեկվա լույսը: Եվ այդ գիշեր ընդարձակվեց մեծ հայրա-
պետի ու բոլոր ազատվածների փրկության ճանապարհը:
Նորից հասան թշնամու պատգամավորները, կրկնելով, թե՛
«Այդ արա, դու էլ, քո տունն էլ և քո երկրի բոլոր մնացորդ-
ները կփրկվեք. իսկ եթե չանես, իմ կողմից հրամայվեց քեզ
լռնել ու ինձ մոտ բերել բռնի կերպով»: Կաթողիկոսը իր
մոտ հավաքեց այն բոլոր մեծամեծներին, այս մեծ երկրի
խոզավորությունների որդիներին, գավառապետներին, գյու-
ղապետներին, քահանաներին, սարկավազներին, դպիրներին,
որոնք այդ ժամանակ գտնվում էին այնտեղ՝ Զարաբնոր¹⁵⁴
ամրոցում. նրանց առաց. «Եղբայրնե՛ր, դուք ինքներդ կրիչ
էր այս ծանր հարվածները, անկուշտ ու անողորմ սրի ահն ու
գույր, որ մեր մեղքերի պատճառով մեզ ուղարկվեց և հա-
կործակի խորասուզեց մեզ: Եվ ահա տարակուսանքի մեջ
եմք ընկած ու չգիտենք, ուր գնանք, կամ որտեղ փախչենք
երանց երեսից: Արդ՝ կատարենք նրանց կամքը, թե չկատա-
րենք, մի բան պարզ է, որ մեր մահվան օրը նրանց ձեռքում
է և ամեն ժամ նկարված է մեր աչքերի առջև: Խորհելով շու-
տափուլթ պատասխան տվեք ինձ, որին ես էլ կլսեմ՝ տեսնե-
լով զրա օգտակարությունը, որովհետև եկած պատգամավորը
ստիպում է ինձ. և սա ուսմիկ չէ, այլ թշնամու զորքերի մեջ

* Ամսօր, Ե, 19:

իշխան է ու թագավորորդի Շաթի մտերիմ դաստիարակն է և «առուցիչը»:

Սրբ այս ասաց, բոլորը միասին ձայն բարձրացրին ու ասացին. «Ինչո՞ւ է մեր տերը այսպես խոսում. այդ խոսքերով նա հանդիմանում է մեզ՝ թշվառացածներին. բայց կա՞ արդյոք մեր մեջ մեկը քեզնից ավելի իմաստուն, որ ավելի լավ հասկանա իմաստութիւնն ու խրատը, և կամ ո՞վ կհամարձակվի քո առջև բերան բանալ և իմաստուն խոսքեր խոսել: Արդ՝ եթե մարդասեր աստված ներողամիտ լինի մեր հանդեմ, դու, իբրև լավ հովիվ, մի՛ հապաղիր քո անձը զոհել մեզ համար, այդ պատճառով մենք էլ, ըստ մեր ունակութեան, մեղ կրօնենք քեզ համար»: Այդ ժամանակ հայրապետը ասում է նրանց. «Եթե տիրուք միայն հաճելի լինի, ես նրանց սարսափից շեղ վախենա. սակայն դուք արեք այն, ինչ որ այժմ կասեմ ձեզ: Չեղնից յուրաքանչյուրը ըստ իր կարողութեան թող բերի արծաթ, ոսկի և հազուատներ. ձեր սրտերը թող ազա՞ն շատնւին ձեր ինչքերի հանդեպ, սրպեսզի նվերներով կարողանանք նրանց բարկութիւնը իջեցնել»:

Ամենքը հոժար կամքով բերնցին ներկայացրին նրան, սպա ինքն էլ իր գանձերից վերցրեց բազմաթիվ այնպիսի բաներ, որ վայել էին նրանց համար իբրև պատիվ ու բնծանր: Իր մոտ եկած արքայորդու դաստիարակին հարցրեց և նրա միջոցով ճշտեց մեծամեծների, իշխանների, նախարարների, գորավարների, պետերի, նրանց ամբողջ զորքի տեսակների անունները՝ ըստ նրանց բարձր ու ցածր կոչումների, որպեսզի կարողանա համապատասխան հարստութեամբ նրանց պատվել: Եվ այսպես հավաքված ինչքերը բաժանեց ըստ նրանց տոհմերի անունների, յուրաքանչյուրի վրա առանձին-առանձին դրեց ու կնքեց: Ապա հրամայեց բառնալ բևեռակիրներին ու սայլերին և այնտեղ գանձողներին ասաց. «Բացի հասարակ ժողովրդից, ձեզ բոլորիդ՝ նշանավոր մարդկանցդ, թույլ եմ տալիս գալ օտարի բանակը, որպեսզի իմ երթը ձեզ հետ միասին նրանց աչքին ավելի վատահեղի լինի ու երևա, որ հնազանդվում ենք նրանց»: Սրբ այս լսեցին, մեծ մասը համաձայնվեց նրա հետ գնալ, իսկ մի փոքր մասը վախենալով ետ կանգնեց: Նա բոլորին ազատ էր թողել ու ոչ ոքի չստիպեց,

այլ օրհնեց իր հետ զնացողներին և ասաց. «Քաշալերվեցե՛ք՝ քալակներս, ու մի՛ վախենաք, որովհետև մեր առաջնորդն է ճշմարիտ սուրբ հոգին ու Մովսեսի գավազանը՝ Քրիստոսի սուրբ խաչի շնորհը, որ մեր դեմ արշավող ծովի ալիքները ետ մղեն»: Մեկնելով այնտեղից՝ զնաց նրանց ներկայանալու երբ անցան լեռնաձորերով և իշան Ուտի գավառի գեղեցիկ, չքնաղ, հարթ ու հավասար բերրի դաշտը, Շաթի զորքերի անհաշիվ բազմութեան պատճառով չէին կարողանում ճանաչել ու դիտել այն տեղերը, որոնցով անցնում էին: Այլ ինչպես մի ժամանակ Կարմիր ծովում, նույնպես էլ այժմ, անթիվ րանակի բռնած սահմանները մինչև արքայորդու բնակավայրը հասնելը նրանց աչից ու ձախից պարիսպներ էին կազմում: Նրան բանակած գտան նույն գավառի հյուսիսային կողմում, Պարսավ մեծ քաղաքին մոտ, հորդարուռի ճահճալի մեջտեղում:

Սրբ նրանք հասան, պայտատում նրա մոտ էին մեծամեծներն ու նախարարները: Այնտեղ տեսանք, որ նրանք շքած էին ծանրաբեռն ուղտերի քարավանի նման: Կոնքերը լցված էին անուտելի անասունների մսով. դրանց հետ դրված էին սկուտեղներ, որոնց մեջ աղաջուր թրջում էին իււնց ձևերը՝ ուտելիս: Թե՛ բաժակները, թե՛ բմպանակները սակեցրած բանդակազարդ արծաթից էին, որոնք բերված էին Տփղիսի ավաթից: Այդպես էլ եզջուրե բմպանակները, թասածն՝ փայտե մեծ գդալները, որոնցով արգանակն էին խփշտում և նույն յուրտ-մսոտ, սառած աղտոտութիւններով՝* մի բաժակից երկու կամ երեք-երեք ազահարար, ստանց զգալու բնտիր պիմին կամ ուղտերի ու ձիերի կաթը անհազարար, ինչպես

Նորմա, նշանակում է թաս. տե՛ս «Меро-кавказское языко-ведение», АН рр. ССР, 1946 г. № 1, 399—400:

* Բնագրում ստույց է. № 2646, 6520 ձեռագրերը և էմիի հրատարակութիւնը սենն աղբոյց ձևը, Ըստ Անառյանի, որին հետևում է նաև Գովոսթր, օրստոստակե սաղոյց-ը պէտք է լինի պարստակե անտաղոյց. սաղոյց ձևը իբր թե յաղոստակե սաղ-ից է: Սա ավելորդ ենթադրութիւն է. քննարկ աստույց բառը նշանակում է ստասծ, որպես և թարգմանել ենք մենք: Ինչպես եր կարծում է, որ սաղոյց-ը անվան է նշանակում, մինչպես բնագրում կա նաև սաղ բառը:

ուսած տիկերը, իրենց որովայններն էին շուռ տալիս: Նրանց առջև չկային կանոնավոր մատուցակներ և ոչ էլ ետևներում կանգնած սոյասավորներ: Անդամ թագավորի որդին չունեի սոյասավորներ ու մատուցակներ, բացի զինվորներից, որոնք շուրջանակի, վահանափակ, խիտ նիզակներով զուշուխամբ նրա դուռն էին պահպանում:

Երբ նրանց ներս մտցրին, առաջին դռնապահների միջով անցկացրին մինչև երկրորդ դռնապահները նաև ողջույնի ընծան, որ մերոնք վերցրած իրենց բազուկների վրա տանում էին կաթողիկոսի ետևից. դրանց հետո գուրս եկան նրա առջև և հրամայեցին, որ բոլորը շարժվեն քայլ առ քայլ ու երեք անգամ երկրպագություն մատուցեն. և մյուսներին երկրորդ դռան մոտ կանգնեցրին, նրանց ձեռքերից վերցնելով նվերները իրենց թևերի վրա, միայն կաթողիկոսին տարան ամենաներսի դահլիճը, ուր նստում էր արքայորդին: Գիմավորեյիս կաթողիկոսը երևաի վրա երկրպագեց ու մատուցեց ընծաները. նույն ձևով նվերներ տվեց նաև բոլոր մեծամեծներին: Նրա ձեռքից ընդունեց նվերները և շափազանց ուրախացավ նրան սեռանելով: Բազմություն հետ մոտեցավ նրան ու առաջարկեց իրեն մոտ նստել միևնույն դահլիճում: Մոտ մի ժամ նայելով կաթողիկոսի երեսին, ասաց. «Դու իմ հայրն ես, իսկ քո տեսքը նման է աստծու տեսքին. ինչո՞ւ հապաղեցիր ինձ մոտ գալ: Եթե գայիր, իմ զորքերի կողմից քո երկրին հասած այս դժբախտությունը չէր լինի: Արդ՝ երբ եկել ես, իմ անունից հրաման կուղարկվի իմ բոլոր վիճական ուժերին, որպեսզի կրկին իրենց բանակները վերադառնան և այլևս գուրս չգան՝ ասպատակ սիրելու քո երկրի սահմաններում, և քո հրամանին կհնազանդվեն իմ բոլոր ուժերը: Պայման կկապեմ քեզ հետ իմ հոր՝ Ջիրու խաքանի արևով երդվելով, որ ինչ էլ խնդրես ինձնից, անընդուն կատարեմ: Իսկ դու պատվիրիր քո երկրի բնակիչներին, որպեսզի բոլորը վերադառնան իրենց տները, իրենց վաստակներին և աշխատանքներին: Իսկ ես կապատակեմ քո երկրի շրջակա երկրները և ավարն ու կողոպուտը կբերեմ, կլցնեմ քո սահմաններն ու վնասի փոխարեն կրկնակի կհատուցեմ քեզ այնպես, որ լիանան մարդիկ և անասունները, որովհետև իմ հայրը այս երեք

երկիրը՝ Աղվանքը, Լիփնքը և Չորը ստացավ իբրև հավերժական ժառանգություն: Կաթողիկոսը ոտքի կանգնեց, երկրպագեց նրան և ասաց. «Քո և քո հոր ծառաներն ենք ես ու իմ երկրի բոլոր բնակիչները. այսուհետև խնայի՛ր քո ծառաներին և քո սուրը հեռացրու մեզնից, որպեսզի ծառայենք քեզ և քո հորը այնպես, ինչպես ծառայեցինք սասանյան պետությանը: Հենց որ այս ասաց, սուրբ խաչի գորությունը գազա-նարարո ցեղի բոլոր նախարարների բարկությունը իջավ կաթողիկոսի և ամբողջ զորքի ներկայությունը: Հեղացուն ոչխարների նման, դարձան իբրև աստծուց երկյուղած զինվորներ և մեզ վերաբերվում էին ինչպես սիրելի եղբայրների, համազույակից քաղաքացիների ու դրացիների: Կաթողիկոսի անունը հնչում էր իրենց արքայորդու անվան նման՝ աստված Շաթ և աստված կաթողիկոս, իսկ այնտեղ կաթողիկոսի հետ գնացողներին կանչում էին սիրելի եղբայր:

Ապա նրանց հրամայվեց նստել՝ իրենց հետ ուտելու. նրանց ըստ իրենց սովորույթի շոքեցրին՝ պիղծ մսով լցված ամանները առաջները դնելով. բայց նրանք չցանկացան ճաշակել, որովհետև մեծ պասի օրերն էին: Հնդառաջելով աստծու ծառաների ցանկությունը՝ միայն վերցրին և տապակի վրա թխված մի քիչ բարակ հաց դրին: Գոհանալով աստծուց՝ օրհնեցին ու հացը կտրեցին, կերան՝ գրավելով նրանց համուկրանքը: Երբ ընթրիքից վեր կացան, հրամայեց, որ կաթողիկոսին յուրայիններով հանդերձ մեծ պատվով ուղարկեն, որ գնա քաղաք և իր տանը հանգիստ օթևանի: Այդ օրվանից կաթողիկոսը նրանց հետ էր լինում՝ նրանց բանակում թե՛ երթի, թե՛ հանգստի ժամանակ:

Իսկ երբ նրանք վատահեցին ու համակրեցին նրան, ապա նա սկսեց համարձակորեն իր խնդիրը ներկայացնել. նա արքայորդու ներկայությունը ասաց. «Որովհետև քո ծառաներն ենք, տե՛ր իմ, ուստի քո ներկայությունը կխոսեմ այն, ինչ օգտակար է: Որպեսզի այս երկիրը խոպանանալով անապատի չլեքածվի, քո կողմից վատահելի մարդկանց ուղարկիր իբրև կուսավարիչների բոլոր տեղերը, շեներն ու ազաբակները, բերդերն ու ավանները, որպեսզի, այս երկրի բնակիչները վերադառնան ու աշխատեն առանց երկյուղի և նրանց (կառա-

վարիչներին) միջոցով ասպանվել են քո զորքերի բռնի գործողություններից: Եվ քանի որ դու և քո հայրը այս երկիրը ստացաք ձեզ ի նշան անկեղծ հնազանդության, ապա դու էլ բո մեծամեծներով անսա՝ իմ աղաչանքներին և հրամայի՛ր ազատել քո զորքերի կողմից գերված բոլոր մարդկանց՝ արանց ու կանանց, աղջիկներին ու տղաներին, որոնց ներփակել են իրենց սենյակներում, որպեսզի չզատվեն ու չբաժանվեն հայրերը իրենց որդիներից, մայրերը՝ դուստրներից, և դրանք խրատած երկրից դուրս շփախչեն, ինչպես սիրակարոտ եղնիկները հալածվելով որսորդների կողմից, փախչում են իրենց հորթներից»:

Այսպես մեզմ ու աղաչական խոսքերով ըստ իր աստվածային իմաստություն նրանց սիրաբար գրավեց իր խնդրանքների կողմը: Եվ ահա արքայորդու կողմից իր բոլոր զորքերին ուղղվեց այս հրամանը, որպեսզի ազատվեն բոլոր գերվածները, և ոչ ոք չհանդգնի արգելել կամ թաքցնել, այլապես խիստ պատիժների կենթարկվեն: Արա հետ միաժամանակ նա ուղարկեց իր մերձավորներից նշանավոր մարդկանց, որոնց թնդուններ¹⁵⁵ էին անվանում, կաթողիկոսի սպասավորներով հանդերձ: Արանք, մտնելով նրանց բանակները, նայում և հետախուզում էին նրանց սենյակներն ու վրանները. և կահարասիների տակ թաքցրածներին կամ գրաստների ծածկոցներով փաթաթած, մատողաշ մանուկներին քաշում, դուրս էին բերում, իսկ ոչ ոք չէր հանդգնում բնդդիմանալ նրանց: Հավաքելով խումբ-խումբ բերում էին կաթողիկոսի պալատը: Իսկ նա, իբրև հավթ, որ գուրգուրում է իր ձագին, տկտրների հագցնում էր, քաղցածներին կերակրում և յուրաքանչյուրին իր տունն էր ուղարկում: Աստծու շնորհները ուղեկցում էին նրան, ուստի իր բոլոր ճանապարհներում ու մտադրությունների մեջ հաջողություն էր գտնում: Նրա անունը մեծացավ թշնամի բաղմունքի մեջ մինչև այն օրը, երբ աստված այցելեց՝ նրանց ձեռքից իր ժողովրդին փրկելու:

Գ Լ Ո Ւ Թ Ե

ՄԻԱԺՅՄԱՆՍԿ ՍԱՍԿԱՅԱՍ ՍՈՎԻ, ՄՐԱՏՈՒԹՅԱՆ ՈՒ
ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մենք անհրաժեշտ ու արժանի ենք համարում այսուհետև հիշատակել սովի, նեղ ժամանակի մասին. վրա հասավ սովը, մեր ոտքերի տակ վերացրեց ամեն ինչ ոչնչացնող մուկը. սա կերավ բոլոր բույսերը, սպառեց մեր հանդերի ամբողջ բերքը: Ապա երեք սոսկալի զորավարները՝ սովը, սուրը և մահը, որ զործակից է նախորդներին, միանալով, հավասար էին ընթանում ու միմյանց հետ մրցում. և անխնա կերպով կոտորում էին ու դիակներ սփռում: Ոչ ոք չէր արժանանում հաղորդության՝ քաղվության վերջին կերակուրին, սրովհետև սուրը արգելում էր, սովը՝ խեղդում¹⁵⁶, մահը կոկորդը բռնում: Վայ այս դառը ժամանակիս, ողբալից են աչքերը նրանց, որոնք տեսան այն մեծ խորխորատը: Թշվառացած ազատվածները լեռներին աղերսում էին, թե ընկեք մեզ վրա: Նրանցից ահաբեկվ սծները միայն տերևի խշրտոցից սրտապատառ էին լինում: Եվ այդ նեղ ժամանակ՝ մեծ պատի օրերին հախուռն կերպով, առանց խորթության մոտենում էին անմաքուր սատկածների դիակներին, նաև բանջարների արմատները, ծառերի կեղևներն էին հանում ու ճյուղերի ծայրերը ծամում. բայց դրանք ուտելով ուժ չէին ստանում, իսկ այդ թշվառ մարդկանց ո՞վ կտար նուշնիսկ խաղողի շոր կորիզ, որպեսզի ազալին և ուտեին: Սովյալների բաղմունքում, միատեղ հավաքվելով, հարձակվում էր նրանց վրա, ուժքեր ունեին. հափշտակում էին նրանցից, ինչքի համար մինչև անգամ սուսնում էին նրանց: Եվ այսպես ունևորներն էլ մեռնում էին շքավորների հետ: Նրանց աչքերը միշտ անկուշտ էին ընկերուղ ունեցածը հափշտակելու և խլելու: Ես վստահելի մարդկանցից լսեցի, որ ասում էին, թե՛ «Մենք տեսանք, որ ոմանք ուտում էին մեռածի մարմնի անդամները, այլև անասունների հսամենի

¹⁵⁵ Այիշանը թարգմանում է. «կենթությունը երկար բշկով լարչարեր իւղկները», «Հայագատում», էջ 226, գան. 1:

կաշիները, ծխտոված պարկերը, կոշիկների հին կապիշները եփում ուտում էին:

Մեր փորձություններին համապատասխան օրինակ չեմ կարող գտնել, բացի Վեսպասիանոսի ու Տիտոսի կողմից կատարված Երուսաղեմի ավերը:¹⁵⁶ Քալլեցիիք սովամահների դիակների վրայով, որոնք սեպեղ, ուռել էին դաշտերի երեսին և ճանապարհներին իբրև հեղեղատի քարեր: Կատարվում էր մարգարեի խոսքը, որ ասում է. «էշի թաղումով կթաղվի և հողհնաց շի կիսփի ձեր տանը»¹⁵⁷: Եվ այդ ժամանակ, երբ ուրիշ ուսեղիքներին խառնվեց կոնաչը, ավելի մեծացավ մեծողների թիվը, բան ամբողջ ձմեռվա ընթացքում: Եվ մանավանդ այն, որ ավելի կարևոր է լսելու և հիշելու համար, հետևյալն է: Սովի ժամանակը փերջանալու մոտերքը մի այլ համաճարակ հիվանդություն տարածվեց այս երկրի սահմաններում, որ ըստ էության նման չէր այլ հիվանդությունների: Այդ հիվանդությամբ բռնվածները անզգա էին դառնում մի կամ երկու ամիս, բերանները փակած կրճտում էին իրենց ստամոքսը և շուտ էին սալլիս աչքները. չէին իմանում, թե ինչը կամ որտեղն է ցավում, անզամ ունակ չէին ջուր սրահանջելու: Ոմանք իբրև կատաղի խելացնորություն* հիվանդներ մերկանգամ, խաշատակ կերպով դուրս էին փախչում անկողիններից, պատերի հետ էին խոսում ու օդը ծծում, ուրիշները հիվանդություններին էին բռնցքահարում: Չնայած ծանր հիվանդություն էր, որ անվանեցին խելագարություն ցավ, աչուռամենայնիվ մահացություններ չեղան, բայց հյուսվում, սեանալով հալ ու մաշ էին լինում նրանց մարմինները, թուլանում էին հողերը, թափվում էին դրի մազերն ու մուտքը: Գրանց ողբալով երկար օրեր սզացի բազմատեսակ մահերով մեծողների վրա, աղաչելով ամենուրեք աստծուն, որ վերջ տա անտանելի հարվածներին:

Ես՝ Աղվանքի, կիլիկի և Չորի կաթողիկոս Վիրոս, չեմ ասում մյուս բոլոր զաղբելի բաները՝ մարմնի սեռությունը,

* Արիշանը Վուստամեհատ բառը համարում է պարսկերեն «կեսամբ (երեկ Քերամ), որ նշանակում է կրծքի ցավ: Տե՛ս «Հայագատում», էջ 226. ծան. 6:

գլուխների կնտությունը. այս բանում էլ պարզ է դառնում մարգարեական խոսքը, որ ասում է. «թե բոլոր հասակի մարդկանց գոշ կդարձնեմ, իսկ բոլոր գլուխները կունտ կդարձնեմ և նրա համար իբրև սուղ կատեղծեմ սիրելիի սուղը»¹⁵⁸: Երբ ասված իր ամբողջ կամքը կատարել տվեց, հիշեց ինչպես Նոյին ջրհեղեղից (դուրս բերեց) տապանի մեջ: Գթալով նրանց տվեց իրենց խնդրածները, լիություն սուղարկեց նրանց, լիառաս բարությունը կշտացրեց քաղաքացիներին ու կարոտյալներին, որպեսզի վախելով փառք տան աստծուն:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ձ

ՄԵՄ ԸՐԱԿԵԻ ՄԵՍԻՆ, ՈՐՈՎ ԹԵՆԱԹԵՆԵՐԵՑ ՎՐԵՃ ԼՈՒՄՎԵՑ

Պարսից արքա Կավաթի որդի Արտաշընի երկրորդ սարում, մինչդեռ սա էլ իշխում էր կամայականորեն, հյուսիսի իշխողը¹⁵⁹ բանի կերպով ուժեղանում էր իր բոլոր գործողությունների մեջ: Ահ ու սարսափ տարածեց ամբողջ աշխարհի վրա, գործակալներ սուղարկեց առն բոլոր արհեստավորների մոտ (հաշվառաման), որոնք զիտեին սակեհանություն, արծաթաշաղկան, երկաթաշաղկան, սլանադարձություն արհեստները: Հաշվի սուղ վաճառականություն անցուղիները, Կուր ու Արաքս մեծ գետերի ձկնորսներին: Պահանջում էր նաև ամբողջ երկրամյան¹⁶⁰ հարկը ըստ պարսից աշխարհագրի օրենքի: Երբ սուղեց այդ երկրի բոլոր բարեբեկեր և համոզվեց, որ սշինչ չի թարցված իրենից, մտադրվեց ամառը շարժվել Հայաստան և այն իր սահմանակից երկրներով հնազանդեցնել: Իր զորքերից ընտրեց մոտ երեք հազար զորեղ մարդիկ, և նրանց զեկավար նշանակեց մի հանդուգն ու արյունարբու մարտի, որ կոչվում էր Չորայան-Յարիան: Մրան իրենից առաջ ուղարկեց, որպեսզի իր առջև ճանապարհը անվտանգ դարձնի և տեղեկություններ հավաքի պարսից գոռոզացած զորավարի մասին, որ դեռևս տիրում էր Պարթևստինին: Ինքը զանգաղ

* Ումով, է, 10:

Գ Պատմություն Աղվանից աշխարհի

շարժվեց նրա ետևից, իր բազմաթիվ գորքը ամրակուռ դարձնելուց հետո:

Արդ՝ երբ նրա առաջապատ՝ իշխանը հասավ Հայաստան, այնուհետև իմացավ, որ պարսից զորավարը գալիս է իր դեմ, ինքը իբրև դարանակալ ո՞վ դիմադիր կանգնեց ճանապարհի վրա և նրա առջև պահում էր ճանապարհը: Տեղեկություն է տրվում Շահվարազին, թե ինչ է մտածել թշնամին և կամ թե իրենց գորքի առաջապատները աներկյուղ ուր են շարժվել նրա դեմ: Այդ ժամանակ նա հրտայարակալին ճառ է ասում իր գորքերին և առաջարկում կտրել սասանյան շտաբիկները ու վերացնել նրա թագավորությունը: Նա ասում է. «Տե՛ս ու իմացի՛ր, ով դու Պարսկաստան, որ առանց ինձ ոչինչ ես, որ ես հաղթեցի Հոռմեի՛¹⁶⁰ որդուն, իսկ այժմ շուտ եմ եկել արևելքի դեմ և իմ գորքերին հրամայում եմ երիվարների ոտքերի տակ արտքել հյուսիսից դուրս և կամ գողեստաններին՝, իսկ ինչո՞ւ նրանց չփրկեց իրենց ծովերը, որի հետ հույսեր էին կապել, որի ձեռքը խաղալիք է գրված, և որին զգվում էին իրենց գրկում, ինչպես իրենց ընդո՞ծնի մանկանք: Ընդհակառակը պարտվեցին ընկան սակավաթիվների առջև, իսկ իրենք ձեռք մարդ չհամարելով՝ որոշեցին արյաց երկրի փառքը իրենց ժառանգել»¹⁶¹:

Այս ասելուց հետո հպարտորեն ասում է իր գորքի քաջերից մեկին, որ արաբական ձիեր հեծնող գնդի հրամանատարն էր, և որին անվանում էին Հոնահն. «Վե՛ր կաց, — ասում է, — անցի՛ր գորքի մեջ, ընտրի՛ր քեզ համար գնդեր, մոտ տասը հազար քաջ այրեր և գնա՛ նրանց վրա: Նրանց դեմ ճակատամարտի վայր մի՛ ընտրիր, մի՛ էլ ճակատիր նրանց հետ և քո սուրը իբրև վրեժխնդիր մի՛ հանիր պատլանից, ինչպես որ հանում են թշնամիների վրա, որպեսզի նրանք չպարծենան իրենց ժողովրդի մեջ, թե սրով են սպանվել. այլ քո երիվարների ոտքերով ու լանջքերով կարորես նրանց և կթափես ինչպես փոշին հողմի առջև: Այլև նրանց նկատմամբ կանես հետևյալը. երբ առաջիններին կվերջացնես, կառաջանաս դեպի

Քազավորը՝ միավելու նրա բանակների մեջ և պատերազմը նրա հետ միայն ինքզ կվերջացնես: Եվ էլը բոլորին միատեղ կոչնչացնես, ճակատամարտի տեղը կանվանես «Քշնամյաց դերեզմաններ»: Ահա ինչ որ քեզ ասացի»:

Արդ՝ երբ հպարտներից հպարտը այս լսեց, մեծամտեց իր մեջ. սևափառությունամբ հեռացավ նրանից, գորահանդես կատարեց և ընթացավ թշնամու դեմ: Երբ թշնամին իրազեկ եղավ, նախքան նրա գալը դարանամուտ եղան ճանապարհին, իսկ մի մասը ճակատում էր նրանց դեմ: Միմյանց բախվելիս հյուսիսեցիները իսկույն փախուստի դիմեցին պարսիկների առջև: Իսկ թաքնվածները, այստեղից-այնտեղից դուրս գալով, գտում էին նրանց վրա: Գեղամա ծովի եզերքների մոտ շրջապատելով պարսիկներին, ինչպես որ կրակն է շրջապատում եղեգը, նրանցից ոչ մեկին կենդանի չեն թողնում. ոչ որ չկար, որ գուժկան լիներ այդքան մարդկանց համար: Նրանց պարծենկոտությունը ետ դարձավ նրանց դեմ, որովհետև մարդը զորանում է ոչ թե իր ուժով, այլ տերը հակառակորդներին տկար է դարձնում:

Երբ դիակները կողոպտեցին, հավաքեցին երիվարների սպազարդերը, ոսկեպատ սուսերները, վահանները, թանկագին հագուստները, որոնք ներկվել ու պատրաստվել էին հումեական վարսեանների կողմից, և բոլոր հավաքածները բաժանեցին միմյանց միջև, ըստ իրենց սովորությունների, բոլոր գեղեցիկ երիվարների կրծքերը, շնչափողերը պատռում էին, պարանոցների ու ճակատների մազերը և պոչերը մինչև մի կանգուն մորթի ու սակրի հետ կտրում էին, նրանց տեսքը սղեղացնում, դարձնում էին բեռնակիր էշերի տեսք: Արդ՝ երբ այդ ամբարտաճանը պարտվեց, իր ազդրի վրա սուր կապով ամեն ուղղիկ հասկացավ, որ իրենց առջև ոչինչ են թաղավորների իշխանությունը և զորավարների ուժը: Այնուհետև հյուսիսի կատսան՝ նորից իր երեսը ետ դարձրեց ընդդեմ իր որդիների և սկսեց ինքն իր դեմ ուզորել, իր բարկությունը

¹⁶⁰ Չկարողացանք պարզել գողեստանների ինչ ցիչ լինելը: Աճառյանը կարծում է, թե պետք է այդ բանը հասկանալ գոթիներ, այսինքն՝ բորստներ:

¹⁶¹ Կատասյ բանը անհասկանալի է: Աճառյանը գտնում է, որ դա հիշո զ և պետք է նշանակի իշխան, թագավոր:

թափել իր կորյունների վրա և տուժել մեկի դիմաց հաղարներ, երկուսի փոխարեն բյուրեր:

Որովհետև սկսեցի խոսել այն սոսկալի հատուցման մասին, որ հատուցվեց մեր թշնամիներին, ուստի միտքս որոնում է շատ խոսքերով օրինակներ բերել. մի՞թե դրանք ավելի են, քան Փարավոնի ընկզմվիլը՝ կամ Մովսեսի խաչանման ձեռքերի բարձրացումը՝ հարվածելու Ամադեկին¹⁶², կամ մի՞թե ավելի մեծ է, քան այն, որ Գեդեոնը կոտորեց, կամ Հեսուրի որդու հսկայական քաշությունը, կամ գիշերային սոսկալի ահը, որ հասավ Ասորեստանին, և այնպիսիք, որ նման են սրանց: Բայց մենք դառնանք մեր խոսքի բնթացքին. տերը, մեզ հետ ոտքի հյնելով, մեծ բան արեց. իսկ մենք ուշ չգարձրինք:

Նրանք մտան երեք երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի լեռնային նեղ ճանապարհները: Այդտեղ ընկճվելով Հյուսիսի հողոտող առյուծից՝ Ջերու խաբանից, իր գիշակեր կորյունին՝ Շաթին, հասցնում է սոսկալի բոթը, թե՛ ռնձ վրա ավազակներ են հարձակվել, ու այլևս չես տեսնելու իմ երեսը, ես հանգիստ շնացի ապահով վիճակի մեջ, այլ ձգտեցի այս անկարգ, անպատշաճ թագավորութայնը, որ ինձ շէր հասնում: Իմ ամբարտաւան դառնայու հետևանքով ընկա նաև այս բարձրութայնից: Արդ՝ դու մի՞ դանդաղիր կոտորել քեզ հետ բոլոր ժողովուրդներին և ձգտի՛ր դրանց ձեռքից ազատվել. որովհետև եթե դրանք նախապես լսեն իրողութայնը, կշտապեն (նույնը) քեզ համար պատրաստել, իսկ այդ դեպքում ես կկորչեմ և անժառանգ կմնամ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է

ՄԻԶՐՅԱՆ ՏՈՂՄԻ ՄԱՍԻՆ, ՈՐԸ (ՄԻՉՐԸ) ԱՍՍԱՆՅԱՆ ԽՈՍՐՈՎԻ
ՅԵՂԵՑ ԷՐ ԵՎ ԵՂԱՎ ԱՂՎԱՆՔԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

Ստույգ և իսկական պատմագրութայնների օրինակներից այսպես տեղեկացանք, որ Բնդո և Վստամ եղբայրները՝ պարսից թագավորի ազգականները, գլուխ բարձրացրին խոսրովի

հարձակումը արքայի դեմ և սպանեցին նրան, իսկ իրենք իրենց քնոորդու՝ Որմզդի որդի խոսրովի հետ փախան Վահրամ Զորին կոչված մի մարդու ձեռքից և ապաստանեցին հույների մեջ բյուզանդական Մորիկ թագավորի մոտ: Նա փեսայացնում է խոսրովին, նրա հետ մեծ զորք է դնում, իսկ նա անցնում, գալիս-գրավում է իր թագավորութայնը:

Շատ տարիներ հետո վրեժխնդիր է լինում իր հայր Որմզդի արյան համար, սպանում է իր երկու քեռիներին՝ Բնդոյին ու Վստամին և նույն ցեղից մոտ վաթսուն ազամարդ: Այդ պատճառով խոսրովի ազգական այն Միհրանը փախստական է դառնում, իր հետ միաբան դարձնում երկրի որոշ մասեր և վերցնելով մոտ երեսուն հազար ընտանիք, անցնում է Աղվանքի կողմերը ու հասնում է Ուտի գավառ՝ Պարտավ մեծ քաղաքի մոտ. նա կամենում էր այնտեղից էլ գնալ խազիրների մոտ և միանալ (խոսրովի) թշնամիներին: Իսկ խոսրով արքային իր պալատականները մեղադրում են, թե՛ ռնձ՞ դու չես հոգում քո ազգակից Միհրանի մասին, որ քո երկյուղից միացավ թշնամիներիդ և խոտվություն է գրգռում քո դեմ: Նա իսկույն հաշտութայն նամակ է ուղարկում Միհրանին. ռնձ եղբայր ու հարազատ, դու ինձանից թշնամությամբ մի՛ հեռանա. իսկ եթե չես ցանկանում ինձ հետ միենույն տեղում բնակվել, որտեղ որ իմ այդ հրովարտակը հասնի քեզ, այդ երկիրը թող դառնա քեզ բնակավայր, և վերցրու այնքան, որքան կարող ես ընթանալ քո ոտքերը: Նամակը հասնելու ժամանակ նա գտնվելիս է լինում Գարդման լեռնոտ գավառում: Նամակը վերցնելով կարդում է և լցվում ուրախությամբ: Եվ տեսնելով բարեխառն երկիրը՝ բնականաբար ցանկանում է այդտեղ մնալ: Իր անուկով մի քաղաք է շինում՝ այն անվանելով Միհրավան¹⁶³:

Իսկ երբ գարունը բացվեց, բարձրացավ Գարդման գավառի վերին կողմը, գավազրությամբ իր մոտ կանչեց այդտեղի դիւխավորներից տասներկու մարդ, սրահարեց և տիրեց երկրին: Ապա երկար ժամանակ ապրելով՝ խաղաղ կյանքով հեռացավ այս աշխարհից: Սա Արամայել անունով որդի է ունենում, որ սերում է Վարդին. Վարդը սերում է քաջ Վարդանին, որը երեք տարում կառուցեց Գարդմանի բերդը: Սա իր սրտում

* Սաղմ., ՃԼԵ, 15:

դավ է նյութում հայկադնյան նախնական ցեղի Յոանշահիկներին դեմ, որոնց մասին վերնում հիշատակել ենք. որպես թե ի սեր բարեկամության ճաշի է հրավիրում և նրանց համար կորստյան հաց է պատրաստում, տալիս է ճաշի մեջ ուտելու իրենց արյան գնով: Վաթսուն տղամարդ է գլխատում, որոնցից միայն իր ցեղին փեսայացած Զարմիհր Յոանշահիկին է թողնում կենդանի: Սրանք այսպես տիրեցին Աղվանքին. նաև իրեն հնազանդեցրեց Կովկասի վայրենի ցեղերին:

Սա մեռնում է խաղաղությամբ: Ունենում է Վարդ անունով մի որդի, Վարդը սերում է Վարազմանին, Շուշիի իշխանուհուն և Վարազ-Գրիգորին՝ Ալվանքի առաջին իշխանին, որ մկրտվեց Աղվանքի կաթողիկոս Վիրոյի կողմից: Վարազ-Գրիգորը ունենում է շորս որդի՝ Վարազ-Պերոս, Զվանշիր, Հեզուտ-Խոսրով, Վարազման, սրանք կհիշատակվեն համապատասխան տեղում:

Գ յ ու խ Ժ Ը

ՎԱՐԱԶ-ԳՐԻԳՈՐԻ ԵՐԿՐՈՐԳ ՈՐԳԻ ՄԵՍ ԻՇԽԱՆ ԶՎԱՆՇԻՐԻ
ԳՈՐԾԵՐԵ ՈՒ ՔԱԶԱԳՈՐ ՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐԸ ՊԱՐՍԿԱՍԱՆՈՒՄ
ՄԵՍ ԱՐԻՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏՎԵՑ

Պարսից արքա Մեծ Խոսրովի մահից շորս տարի հետո թագավոր է դառնում նրա որդի Հազկերաբը: Այդ ժամանակ հագարացիների¹⁶⁴ ցեղը, միացնելով մոտ տասը ցեղեր, ուժեղանում է. հանդուգն ու ահավոր բազմությամբ հեռավոր երկրից մրրկի նման ուղղվում, գալիս են անապատով, անցնում Ասորեստանի կողմերով ու արագ թափով հարձակվում են պարսից տերության վրա: Այդ ժամանակ պարսից թագավորության միաժամանակ ենթակա բոլոր կողմերի զորավարները, իշխանները, տերերը և բնիկ ազնվականները զորաժողով են անում՝ ընդդեմ կանգնելու օտարազգի թշնամուն:

Այս դեպքերի ժամանակ Աղվանքի Վարազ-Գրիգոր իշխանը, ըստ իր ծագման լինելով Արտաշի տոհմից, նկատում է, որ իր երկրորդ որդի Զվանշիրը խրոխտ է ու սիզաճեմ և ունի

չքնադագիդ տեսք: Գեռնա նոր պեսք է ծնոտի վրա բուսներ նորածիլ մորուքը. հոր կողմից սիրված՝ նա իբրև լավ սնված արծիվ ի վիճակի էր սպառազինվելու: Հայրը, վստահ լինելով ամեն բանում հաջողակ Զվանշիրի վրա, որոշեց նրան հնարավորութուն ընձեռել, որ աշխարհիկ կյանքում հավասարվի մեծամեծ մարդկանց և թագավորների հետ նատիվեր կենա: Այս պատճառով հարմար համարեց իր փոխարեն որդիներից նրան ուղարկել արքունիք: Սա հորից վերցրեց զորք և Սյունիքի իշխանից ու հայոց սպարապետից առաջ շտապեց հասնել այն համընդհանուր, բյուրավոր զորաժողովին: Ռուստով զորավարը սրան տեսավ, և սա նրա աչքում երևաց իբրև եզրայր կամ որդի. ամենքին էլ նա ցանկալի էր երևում:

Այդտեղ զորավարը իր հետ վերցնում է բազմահազար հեծյալներ, դալիս-հասնում է Տիգրոն քաղաքը՝ Հազկերա թագավորի մոտ և պատանի Զվանշիրին ներկայացնում է նրան: Արքան անմիջապես ձեռքը դնում է նրա գլխին, գոզում և նրան անվանում է Աղվանքի սպարապետ:

Մրանից հետո պարսից զորավարը վերցնում է իր բոլոր զորքերը, իջնում Ասորեստան և, անցնելով Գլխաթ գետը, հասնում է Վեհկավատ գավառը: Պարծենալով իր բազմաթիվ զորքերով՝ մեծախոսում է, թե ստքի տակ տրորելով կշարդի բոլոր հարավցիներին: Եվ Սևոյալ ջրի այն կողմը բանակում է ընդդեմ նրանց: Երբ սրանց կողմից ասպատակներ էին գուրս դալիս, ելնում էր նաև Աղվանքի սպարապետը ու արիաբար հաջողության էր հասնում: Սկզբում ոմանց հարավժում և սրով է՛լ ավելի առաջ էր մղվում, սրովհետև գիտեր, թե տերը իր հետ է: Մի երկու օրից հետո, մեհնկան ամսին, որ Քրիստոսի ծննդյան օրն էր, երեսուն հազար հեծյալներ ու տասը հազար հետևակ նրանց դեմ ճակատամարտ տվին: Կատղանից¹⁶⁵ եկած հազարացիները հեծյալների բազմությամբ ու քսան հազար հետևակով վահանախիտ շարժմամբ առաջ խաղացին. նրանք ցանկանում էին նախաձեռնությունը վերցնել, որպեսզի պարսից զորքը շարդեին:

Իսկ Աղվանքի զորավարը զորեղ մարդկանց հետ միասին մեջ է մտնում և, հակառակորդներից երկու հոգու հարվածելով, գետին է տապալում, ու ինքը վերադառնում է՝ երեք տե-

դից ծանր վիրավորված, և ձին էլ շորս տեղից խոցված: Այնտե-
ղից մինչև Եփրատ գետը թշնամին արագընթաց արշավանքով
հետապնդում է: Սա նույնպես նրանց դեմ կովելով արյունա-
շաղախ գալիս-անցնում է գետից՝ զգեստներն ու զինքերը
արյան մեջ թաթափված: Եվ հրք տեսավ, որ բոլոր մեծամեծ-
ներին ու զորքերին ինչպես խոտ հնձեցին, նա նորից արքու-
նիք շտապեց: Իսկ հրք արքային պատմեցին նրա քաջագործու-
թյունների և ստացած ծանր վիրքերի մասին, անմիջապես
հրամայեց, որ նրան ապարանք տան, պալատական բժիշկները
խնամեն նրան, և երկրի կողմից ընդունելու թյուրեններ կազմա-
կերպեն:

Առողջանալուց հետո ներկայանում է արքային, իսկ արքան
ձեռքը դնում է նրա գլխին և ի լուր ամենքի նրա մասին գովա-
սանքի խոսքեր է ասում: Զորավարական աստիճանի համա-
պատասխան նրան հանձնեց շքանշաններ, բարձրահունչ փո-
ղեր, երկու ոսկյա նիզակներ, երկու ոսկեքանդակ վահաններ,
որոնք միշտ ման էին տալիս նրա առջևից: Բոլորից ավելի
նրան մեծարեցին: Մեջքը կապեցին ոսկե գոտի, որն ընդե-
լուզված էր մարգարտով, և ոսկեդաստակ սուր. ապարանջան
հագցրին բազուկները և փափազելի պսակ դրին նրա գլուխը.
տվեցին նրան մարգարտով բանված զանկապաններ և նույ-
նատիպ մարգարտաշար մանյակ կախեցին պարանոցից. նրան
հագցրին ներքևը շորս քղանցքներով արջնաթուղթ¹⁸⁵ և մետաքս-
առէջ սնդուսյա գրատ՝ ոսկեթեզան երիզներով¹⁸⁶: Իբրև սե-
փակնուլթյուն գլուղեր ու ձկնառատ գետեր հանձնեցին:
Այդտեղ պետք էր տեսնել, ըստ գրված խոսքի, լավ աշխա-
տանքի դիմաց փառավոր արդյունք: Նա, ստանալով այսքան
թագավորական մեծարանքներ, էլ ավելի առաջ գնաց:

Որովհետև Իմա և Ահմադան երկու զորավարները սաստիկ
ցատումով բախվում են միմյանց՝ կուլելու, բոլորի առջև սա
թավալգոր հարվածում է մեկին ու հաշտեցնում: Ինքը, իբրև
խմաստուն մեկը, նրանց խաղաղեցրեց, ուստի խոռագատ¹⁸⁶

զորավարը շատ մեծարական հարգանքներով իր հետ բերեց:
Իսկ Հագկերաի ութերորդ տարում թշնամին նորից հարձակ-
վեց և արքային Տիզրոն քաղաքում վեց ամիս պաշարեց:
Այդ ժամանակ խոռագատ զորավարը և Աղվանից սպարապետը
դիմադրելով զորքերի հետ միասին հեռացրին: Այդտեղ քաջ
Զվանշիրը բարձրագույն էր հազարով նախահարձակ է
լինում թշնամու վրա և որընթաց արշավանքով տանում է
նրանց, զետից այն կողմ է անցկացնում և վեց ամիս թույլ չի
տալիս, որ Դկլաթ գետը անցնեն այս կողմը, մինչև որ թագա-
վորին ահնում բերում են Մեծ Դաստակերտը¹⁸⁷: Ահավոր
բազմությամբ նրա վրա է կուտակվում թշնամին, բայց այն-
տեղից թագավորին տանում են Բեկդաղ¹⁸⁷, իսկ հագարացի-
ները քաղամթիվ ուժերով ծովի ալիքների նման հետապնդե-
լով առաջ են շարժվում: Այդտեղ քիչ ժամանակ լինելով,
Աղվանքի սպարապետը չէր դադարում նրանց դեմ դուրս գա-
լուց և հրապարակով իր քաջությունն էր ցույց տալիս, որը
բազմաթիվ անգամ օտարազգի թշնամիների գլուխները բե-
րելով նետում էր թագավորի առջև:

Իրանից հետո ճակատ առ ճակատ խմբավորվեցին մարտ
տալու, պարսից շար բանակը տիրոջ կողմից ջարդ ու փշուր
կրավ իրենց ժամանակը լրանալու վերջում, և վերևից առաք-
ված վճիռը եկավ, կործանեց նրանց թագավորութունը:

Այսպես՝ յոթ տարի այս պատերազմներում տանջվելով
կովեց քաջ Զվանշիրը՝ մարմնի վրա տասնմեկ ծանր վիրքեր
ստացած. վերջապես բաժանվելով նրանցից եկավ Ատրպատա-
կան գավառը: Պարսից զորապետը, լսելով նրա այդքան հրո-
շակված անունը, ստիպում է նրան, որպեսզի կնության առնի
իր (զորապետի) քրոջը: Բայց սա անօրհններից ոչ ոքի կին
ստնել շքանկանալու պատճառով, ուղեորվում, գալիս է իր
երկրից: Այդ առթիվ շափազանց հոգատար հայրը մեծագույն
հրճվանք է ապրում: Նա նմանվում է Հակոբ նահապետին,
իր պաշտեցիքը տեսնում է Հուսիկի անդրանիկ որդուն, որի
նկատմամբ հոգին կրակվում էր. այսպես է փարվում իր որ-
դուն, որի դեմքի գույնը դարձարև էր սպիտակափառ մորուքը:

* Այս հատվածը շքեղ հագուստի անսովոր նկարագրութուն է, որի բնա-
գիրն է. ձեղուցին նմա արջնաթուղթ ստորս շորի-ք գրոշակօք և դրաստս սքն-
դուսս, մետաքսառնէս ոսկեթեզան փարուազով:

ԶՎԱՆՆԵՐԻ ԵՊԱՐԿՈՒՄՆԻ ԹՅՈՒՆ ԱՆՆԵՐ ԱՆՎԱՆԻՔԻ, ՊԵՐՍԻԿԵՐԻՆ
ՋԱՐԳԵԼԸ, ՀԱԶՆԵՐՏԻ ՄԱՂԸ ԵՎ ԲՅՈՒՋԱՆԳԻՒՅԻ ԿԱՅՐԻՆ
ԱՆՋՆԱՏՈՒՐ ԱՆՆԵՐ

Ամենապայծառ Զվանշիրը մեծ ու պանծալի անվամբ պարսիկների կռիվներից վերադարձավ և, ըստ թագավորի հրամանի, իր անձով ամբողջ Աղվանքն էր ներկայացնում: Նա, իր գունդը վերցնելով, հոր հետ միասին դուրս է գալիս Պերոզապատ¹⁶⁸ քաղաքի վերին կողմը: Իսկ պարսիկ քաջերը շարժվելով գալիս են մեր Երկրի վրա Զվանշիրի ապստամբվելու պատճառով: Մինչդեռ թշնամու առաջամասերը նույն գավառի վարի կողմից շտապ դուրս էին գալիս, անմիջապես ամենամեծ աճապարանքով վերագինվում, հանդուզն նախահարձակ է փնտում այնտեղ ջարդելու գեղամիհնազի¹⁶⁹ մի օմն գորապետի: Այս ժամանակ ինքը և զորքը սրահար ճարակումով շտաբին կործանում, այլև նրանցից գրավում են ձիեր, ջորիներ և մեծ քանակությամբ ավար խելելով վերագանում են: Սակայն պարսից գունդը չէր պողարում հետամղալուց: Սրկրորդ ընդհարումը միմյանց հետ տեղի է ունենում մի լեռնոտ վայրում, այդ օրն էլ տիրոջ կողմից նրան հաջողվեց հաղթություն տանել: Այդ ժամանակ իսկույն ժամանում է դաժարիքը և ասում է, թե՛ «Պարսկական զորքը մտավ Պերոզ քաղաքը և գերեզարեց մորդ՝ եղբայրներիդ հետ միասին»: Իսկապես եմ ասում, ինչպես ձագակոտոր արջ զայրագնած գազանացել էր: Դտունացած արագ սնցնում է իրեն ևնթակա իր հայրենիքի սահմաններից Կուր գետի այն կողմը գտնվող Կապիճան¹⁷⁰ գավառը և այնտեղ նրանց դեմ ճակատամարտում է ոչ այնպես վայրիվերո, այլ մտածված ու կշռագաստված: Իր անվախ կովի հետևանքով գլխից վերք է ստանում, սակայն Քրիստոսի զորեղ աջի օգնությամբ այնպես կտրուկ և ուժեղ հանգես եկավ, որ թշնամուց մինչև անգամ մի մարդ էլ կենդանի չմնաց: Այդտեղից մեծ ու պանծալի անունով դադար է առնում Վրաստանի սահմաններում: Սրկրի իշխող Ատրնեբսեճը, որ մի մեծուպատիվ մարդ էր և հոռմեա-

կան թագավորությունից ստացել էր եռակի գահերեցություն¹⁷¹ տիրոջս, այդտեղ այցելում է նրան. ինքն իր ձեռքով փաթաթում է նրա վերքը և նրա քաջարի հաղթությունը համարում է մեծ ուրախություն: Այդ ժամանակ խաղաղ և անքակտելի դաշինք են կապում միմյանց հետ, ու Զվանշիրը օգնական զորք է վերցնում վրացիներից, աճապարում է ամենից առաջ արշավել Ուտիք. այդտեղ պարսից զորքից ում որ գտնում է, տեղն ու տեղը սրի ճարակ է դարձնում: Եվ շափազանց շտապ հասնում է իր ձեռնանոցային քաղաքի¹⁷² վրա ու նույն ձևով է վարվում, մինչև անգամ շափահասներին ու արգանդից նոր ծնված մանուկներին բռնի կերպով կորզում է:

Դրանից հետո Ատրպատականից սկսվեցին էլ ավելի շատ զորքեր թափվել այնտեղ: Սակայն նա բուլղոսովին չէր վախենում նրանցից, քանզի նրա էությունը այն էր, որ շատերի դեմ ավելի էր խիզախում, քան քչերի հանդեպ: Շակահե¹⁷³ գավառում էր նա երկու ինչ-որ ճակատամարտերի ընթացքին խիստ վրիժառու թյամբ խոցոտումով իրենց գնդերով հազարավորների կյանքին վերջ տվեց: Թե դրանից հետո գանազան տեղերում ինչքան պարսիկներ են կոտորվել Զվանշիրի ձեռքով, ասելու տեղը չէ:

Այս ամենը տեսնելով՝ հայոց ու վրաց նախարարները մտածում են իրենց սերունդից նրան կին տալ: Իսկ նա կին է առնում Աբուխճան տոհմից Միսական¹⁷⁴ նահանգի իշխանի դստերը, որի համար Սյունիքը ընդմիջող ուրախանում է:

Իսկ պարսից զորավարը, երբ տեսավ նրա կողմից իր սուկալի պարտությունը և իր զորքերի կործանումը, հակվեց հաշտության ու խաղաղության կողմը. նամակ գրեց և ուղարկեց Սյունիքի բարձրաստիճան իշխանին ու մեծ երդումներով առաջարկեց, որ սա հաշտության գա, իսկ միջնորդը հազիվ-հազ համոզեց նրան, որպեսզի երկու կողմն էլ միակամ հաշտություն ու խաղաղություն կնքեն: Հաշտություն կնքեց և մրտրում խորհելով վերադարձավ, իսկ Աղվանից սպարապետը մոր ու եղբայրների հետ գնաց իր երկիրը:

Բայց հիշելով պարսից մեծ պետության փոքրանալը, արևելքի (Աղվանքի) առաջին թագավորների ինքնակալու-

թյունները, արքայաբար նմանեցնելով իր շուքը՝ մտադրվեց, որ իր իշխանութունը ոչ մեկին ենթակա չլինի: Նա խիզախ կերպով պարսից գորապետին առաջարկում է, որ յուրաքանչյուր կողմը պետք է անկախ իշխի, և ինքը եղբայրների հետ մտնում է հայրենի երկիրը: Իսկ պարսից զորավարը ուխտազանց լինելով պատրվակներով կանչում է նրա հորը և սուաջարկում, որ հնազանդվի իրեն, գնդեր է ուղարկում և Ազվանքի նահանգի համար կուսակալ է նշանակում:

Արդ՝ ի՞նչ անեին այն քաջ Զվանշիրը և նրա անդրանիկ եղբայրը, որոնք ինքնասեր մարդիկ էին: Վրեժխնդրությամբ լցված՝ զինվեցին, հեծան արագընթաց երկվարներ և այն երկար ճանապարհը կարճ կտրելով, շրջելով եկան Պերոզկավատ քաղաքի մոտ և շտրս կողմից շրջափակված մի անտառախիտ տեղում առաջին անգամ քուն մտան: Արեգակը ծագելու հետ առյուծի կորյունների նման ձիարձակվեցին և քաղաքը գրավեցին: Նրանց, որոնք քաղաքում կամ պարսից զորավարին ենթակա սահմաններում էին գտնվում, շարաչար կերպով պատժեցին, իրենց զինավառ զորքերով այնքան ծանր հարվածներ հասցրին պարսիկներին, մինչև որ իրենց հորը վերադարձրին:

Հազկերտի թագավորության քսաներորդ տարում պարսկական տերութունը ամբողջովին մեջտեղից վերանում է. այդ հազարացիների համաշխարհային կռվի երեսունմեկերորդ և իմ տեր Զվանշիրի տասնհինգերորդ տարին էր:

Այսպիսով արարները հարձակվեցին հյուսիսային ու արեւմելյան կողմերի վրա. նրանք տոհմերի ավագներին նեղում էին, որ սրանք հանձնեն այսպիսի նության տեղեր, և սրանցից իբրև պատանդներ առնում էին զավակներին ու կանանց, որպեսզի իրենց դեմ չապստամբվեն: Երբ Զվանշիրը տեսավ հարավցու դաժան զորութունը, կարճ ժամանակով խաբեց նրանց, անցավ գետի այն կողմը, որտեղից անվահներ քաջ իրեն ուզեղնում, բորբոքում է՝ վերստին պատերազմելու նրանց դեմ, որպեսզի իր հորը նրանցից ևս ազատի: Բայց հայրը արգելեց նրա այդ մտադրութունը և ինքնակամ զնաց թըրջ նամու մոտ: Իսկ քաղմակողմանի իմաստուն Զվանշիրը հայրը

զորավարի հետ դաշինք կերեց և համոզում էր նրան, որ հնազանդվի ըլուզանդական կայսրին: Եղբայրական համաձայնության գալով՝ Զվանշիրը հունաց թագավորին նամակ է գրում հետևյալ ձևով՝

Ք լ ու խ Ի

ԶՎԱՆՇԻՐԻ ՆԱԲԱԿ ԲՅՈՒԶԱՆԿԻՆՍԻ ԿՈՍԱՆԿԻՆ ՔԱԿՍՎՈՐԻՆ

Ձմենահաղթ տեր, բյուզանդացիների հզոր և սղորմած թագավոր օգոստոսափառ Կոստանդին, ծովերի ու ցամաքների աստվածաբար իշխող. Ազվանքի սպարապետ և իշխող Զվանշիրը արևելցիներին քեզ հնազանդ ողջ երկրով նվաստորեն ողջունելով, երկրպագում է:

Թող հաճելի լինի քո քրիստոսասեր տերությանը՝ սիրով ընդունելու հեռավոր մարդկանց նորընծա այս հնազանդութունը, որպեսզի քո փառքի մեծ վաշխչութունից նաև մեր սոսկատենչ խոնարհությանը պարգևի աստվածային շնորհ ունեցող բարերարությունս:

Արդ՝ երբ նամակը* ներկայացվեց ամենաբարեպաշտ կայսեր, սա ուրախացավ, հրմվեց. այդ օրը շատ և մեծ ուրախությամբ անցկացրեց ու իսկույն հրամայեց երդմնադիր գրել և միակամ խաղաղություն պահպանել: Մեծամեծ պարգևներ շնորհեց. ուղարկեց քանդակազարդ թիկնակով ոսկեզօծ արծաթյա զահույք, ոսկեհյուս հանդերձանք և իր անձնական մարգարտազարդ պատյանով սուսերը: Նրան դարձրեց պրոտոն¹⁷⁶ պատրիկ և իրավունք տվեց, որ նա ում կամենա, հազար երկու հարյուր մարդու շնորհի պատրիկության, հյուսաուսության¹⁷⁶, և պարթոսության¹⁷⁷, սպարապետության, կիստության¹⁷⁸ աստիճան: Նաև Քրիստոսի կենարար խաչի մի մասը, որ իր ծոցում սլարանոցին կրում էր, հանեց և ուղարկեց նրան:

* Քննարում «հրովարտակ» է, բայց մենք թարգմանեցինք «նամակ»:

«Քեզ՝ տեր Զվանշիրիդ, Գարգամանի տիրուջդ, Աղվանքի իշխանիդ, ապուհիդ¹⁷⁹ և առաջին պատրիկիդ, արևելքի կուսակալիդ, փրկարար խաչի աստվածային զորությունից շնորհ և ողորմություն, իսկ մեր օգոստոսադառ թագավորությունից խաղաղական և մեծ սիրով ողջյա՛ւն:

Առաջանք քո ողջունագիրը, որ մեզ ցույց տվեց առ աստված տածած քո բարեպաշտ սերը, և ուրախացանք այն բանի համար, որ դու հանձն ես անել արևելյան երկրովդ հանդերձ հնադանդվել մեզ: Իրա համար մենք և մեր սրգոյնները քեզ և քո զավակների հետ սերնդեսերունդ, առհավետ մտերմական անքակտելի սիրով ու քաղցրությամբ կապրենք»:

Երբ նա նամակի խոսքերը լսեց, սքանչելի խնդրությամբ ուրախացավ, մանտվանդ առաջել գոհ մնաց ամենպար խաչի հասնելուց. ուստի երեսնիվայր ընկավ փրկարար խաչի առջև ու սխեց փառավորել աստծուն, որ բոլոր բարությունների տվիչն է: Այդ ժամանակ Աղվանքի կաթողիկոսը, եպիսկոպոսներով ու երևելի մարդկանց բազմությամբ ընդառայ գալով, ծաղիկներ է բերում ու օրհնաբանում փառավոր պարզեհին: Այնուհետև այնտեղ վայրիվերո, անկարգ խոսակցություններ, կամ հարբեցություններ, կամ ծաղրածություններ չէին լինում, այլ կատարվում էին շափավոր զվարճություններ: Նա այն գիշեր շքեց, այլ անցկացրեց իր երկրի շահի համար մտածելով: Եվ երբ մեծ Արուսյակը ծաղեց, արքայաբար դարձարվեց ու նստեց իր գահուլթին, դռները բացվեցին, և զինվորները ներս մտնելով զենքերը այստեղից-այնտեղից վերցրին ու խմբվեցին նրա շուրջ: Ըստ իրենց աստիճանի ահառելի ներս մտան աստիճանավորները: Տիրոջ արդար դատաստանը և անկաշառ իրավունքը նրա պալատում բոլորին էին շնորհվում: Նա ցոփ կյանք չէր անցկացնում, այլ ամբողջ օրը զբաղվում էր երկրի հոգսերով: Կովկաս լեռան շուրջ բնակվող վայրենաբարոսներին իմաստուն կերպով գիտակցության էր բերում: Այսպիսով վրաստանի սահմաններից մինչև Արաքս գետը տեր դարձավ միահեծան մեծությամբ:

Իսկ իր թագավորության տասնիններորդ տարում Կոստանդիանոսը՝ Հերակլի թոռը, հունական բազմաբանակ զորքերով ու շատ ընտիր զորավետներով պատրաստված եկավ Պարսկաստան ու արարներից խլեց երկիրը՝ իր հետ ունենալով աշխարհի ճառագայթավետ լույսը՝ Քրիստոսի խաչը: Այդ ժամանակ զորագլուխներից մեկին ուղարկեց Զվանշիրի մոտ, որպեսզի սա գա տեսության: Զվանշիրը անմիջապես աճապարեց և հասավ Մարաստան՝ կայսեր մոտ: Այս վերջինը, լսելով նրա գալու մասին, ինքը նրան ընդառայ զնաց Քունգր¹⁸⁰ գյուղը և ողջությամբ ընդունեց նրան: Նա անմիջապես հրամայեց նրա վրայից հանել սգազգեստները, որ հագել էր իր կնոջ մահվան սոսթով, և հագցրին նրան պալատական զգեստներ: Այս բանի վրա նա համարձակություն առնելով՝ կայսրից խնդրեց հավիտենական թագավոր խաչի մասը: Նա վերցրեց փրկարար արեգակը (խաչը), նրա դեմ հանդիման կտրեց և մեղքերի փարատիչը տալով նրան, ասաց. «Աս թող քեզ ու քու որդիների համար լինի հոբ պատենչ ընդդեմ թշնամու»: Երբ հայոց նախարարները և զորավար Համագասպր տեսան, որ այսպիսի երկնավոր պարգևը նրա մոտ է գտնվում, խիստ նախանձեցին. բայց նա ուշադրություն չէր դարձնում, այլ այնուհետև բարեսեր թագավորից հրաժեշտ է խնդրում և այն էլ ոչ իբրև ստորագաս մեկը, այլ իբրև գահակից եղբայր ընդդեմ պարսիկների: Այրարատյան ազատանու հետ նրան ճանապարհ է դնում. սա սքանչացած ասածու իր նկատմամբ եղած ներողամտության վրա, վերագառնում է իր երկիրը: Աղվանից հոգեզվարճ Ուխտանես հայրապետը լսելով նրա ժամանումը, մեծաթիվ ժողովրդի ներկայությամբ օրենեց նրան՝ բարձրաձայն ասելով. «Ահա տերը Սրոնից մեզ զօրության գավազան ուղարկեց, և մենք սրանով պետք է տիրենք մեր թշնամիներին»:

Իմաստուն Զվանշիրը մտածում է Քրիստոսի խաչի համար

պահպանման վայր գտնել, ուստի և Գարգաման բերդի իր բնիկ գավառում կառուցում է եկեղեցի ու շքեղ գեղադարձում ի խնդուեթյուն և ի փառս Քրիստոս աստծու: Եվ երբ դարունը բացվեց, Աղվանքի մեծարգո իշխանը կազմ, պատրաստ գտնու- վեց երկրորդ անգամ տեսնելու կայսրին և հանդիպեց Վա- դարշապատ քաղաքում: Նույն ժամանակ թագավորը հրամա- յեց, որ պալատական մեծամեծներն ու բարձրաստիճան մար- դիկ ընդառաջեն նրան: Այդպես արքայաբար մտավ կայսերա- կան մարզարանը: Կայսրը նրան տեսնելով, ուրախ համբույրով բոլոր մեծամեծներից վերև նրա աթոռը դրեց՝ առաջարկելով նստել: Այդ օրը օրերի մեջ օրհնվեց օսկու և արծաթի տեսակ- տեսակ գեղազարդուեթյամբ: Հրամայեց նրան տալ թագավո- րական ամբողջ սպասքը, որի պատճառով սեղանակիցներն էլ սոսկացին: Դրանից հետո իր Հերակլ քաջ պապի և Նիկիտա տասի արքունական գոտին կապեցին նրա մեջքը, տվեց իր պատմուճանը, երկու գրողակներ և որդիներին ղեռահաս պաու- րիկներ դարձրեց: Աղվանքի առաջին թագավորները եթե որևէ ժամանակ գլուխը և ուրիշ տարածուեթյուններ ունեցել էին, բոլորը սերնդեսերունդ նրան հանձնեց և իրավունք տվեց, որ բոլոր արևելցիներին արքայաբար կառավարի:

Կայսրը նրանից ոչ մի գաղտնիք չուներ և նրանից լսելով բազմաթիվ խելացի խորհուրդներ, հիանում էր. վերջում ողջունելով նրան՝ ասում է. «Քո անձը իմ անձի փոխարեն է, իսկ իմ սիրտը քո սիրտն է, զես՝ խաղաղուեթյամբ»: Այսպիսի մեծագույն հրճվանքով գալիս մտնում է իր երկիրը և վերադա- հրաման է արձակում, որպեսզի այն երկրներում, որ պատկա- նում էին իրեն, (շենքեր) շինեն, (ծառեր) տնկեն, վայելելով ապրեն խաղաղուեթյամբ: Նա ինքն էլ բազմաթիվ ապարանք- ներ և ուրիշ այնպիսի բաներ շինեց, որոնք մարդկանց վայելչ- ների համար են. աստծու փառքի շնորհիվ նա ամենաթան- կագին առարկաներն ուներ, մինչև անգամ թուրքեստանցի- ների թագավորը նրանից հաշտուեթյուն ու խաղաղուեթյուն խնդրեց: Նրան ընծայաբերում էին ընտիր երկրայիններ, ծառա- ներ ու աղախիններ և զանազան կենդանիների մորթիներ: Նույնիսկ Ասորեստանից, Ատրպատականից, Այրարատից ու Վրաստանից, մինչև իսկ Հնդկաստանից գալիս էին նրա մոտ

նրան տեսնելու և լսելու նպատակով: Նրա բազմակողմանի հանճարեղ խելամտությունը և համեստ սերը բոլոր այցելող- ների նկատմամբ սքանչացնող պատմություն էր դառնում ամեն երկրում: Այս բոլորը նրան ոչ մի տեղից չտրվեց, այլ կենաց փայտը (խաչը) նրա անունը հռչակեց ամբողջ տիեզեր- քում, իսկ բարեխնամ ծնողի օրհնությունները նրան ծաղկեց- րին:

Գ լ ու ի Ի Գ

ԽԱՋԻՐՆԵՐԻ ԳԱՂԸ ԵՎ ԿԵՏԻ ԱՅՆ ԱՓԻՆ ԶՎԱՆՇԻՐԻ ԿՈՂՄԻՑ
ՊԱՐՏԱԿԱԼԸ

Այս եղելությունից երկու տարի հետո խազիրները հարձակվում են Աղվանքի վրա՝ առ ու ավարի: Այդ ժա- մանակ Աղվանքի իշխանը գինվում և ներկայանում է ամենա- հազթ խաչի առջև. ծնկի գալով երգում է Իսրայելի արքայի երգը, թե՛ «Տե՛ր իմ, առ քո զենքն ու վահանը և ետ առը ինձ վրա եկողներին»*: Եվ վերջնելով իր զորքը՝ անցնում է Կուր մեծ գետի այն կողմը: Նրանց դեմ ճակատամարտ է տալիս և խնդրանքը անկատար չի մնում, որովհետև ճակատամարտի խոնումի ժամանակ նրա արագասուրաց երիվարը գայթում է և նրան զորում, բայց նա չկործանվեց, քանի որ տերը ձեռքը մեկնեց նրան ու կանգնեցրեց: Նա վեր կենալուն պես չար- դից հակառակորդին: Այդ օրն էլ մեծ հաղթություն տարավ՝ խոսք ուղղելով այդ բարբարոս ցեղին. «Ծնա՛, մտի՛ր Չոդա»⁸⁷ դոնից ներս և երկրորդ անգամ այս կողմ մի՛ անցնիր, որովհետև տերը արգելեց քո հարձակումը»:

* Սազմ., ԼԳ, 2:

Գ լ ու խ Ի Գ

ԳՍՐԴՄԱՆԱ ԲԵՐԴԻ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏԱՀՈՐԻ ԱՎԱՐՏԸ, ԶՎԱՆՇԻՐԻ
 ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱՍ ԵՒԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԳԵՍԸ, ՆՐԱ
 ՕՐԶՆԱՐԱՆՈՒՄԸ ԵՎ ԶՐԻՍՏՈՍԻ ԷԱԿԸ ԿԱՆԳԵՆՑՆԵՐԸ

Ջվանշիրի՝ խաղիրներին հաղթելուց և նրանց զորքերը հալածելուց հետո երկու տարի անց ավարտվում է աստծու անվան տաճարի գեղեցկաշեն կառուցումը: Նա վեր է կենտուրնկնում մշտնջենավոր լույսի (խաչի) առջև և աղոթում է. «Այժմ մե՛ր կաց, ե՛կ քո հանգստավայրը և քո կենսավետ փայտի կաղարանը, ո՛վ տեր, որ շինեցի քո անունով»: Այս վերջնում է կաթողիկոսին, եպիսկոպոսներին ու իր նախարարներին հետ միասին մոտ մի օրվա ճանապարհ գնում է Պերոժ-Կավատ քաղաքի վերին կողմը, ծունկի եկած աղոթում է նախ ամեն բարիքներով լի մի վանքում, որը նա կառուցել էր երկու դավանների միջև մի անշեն վայրում իր իշխանելու և բոլոր այնտեղ եկողների հանգստություն համար: Կարգադրում և ասում է, որ ոչ ոք ձեզանից չհրաժարվի այդտեղ մնալուց: Այնտեղից վեր է կենտուրնկնում Գարդման¹⁸¹ գավառը: Արաց¹⁸² ամսի տասնմեկին լույսի խաչը տանում, տեղավորում է իր կառուցած աստվածատանը: Այնտեղ ընկնում է ծնկների վրա, թախծալի զղջումով ու արտասուքներով աղերսում է ամենաստեղծին և ասում.

Գ լ ու խ Ի Ե

ԶՎԱՆՇԻՐԻ ԱՂՈՒՔԸ

«Ո՛վ տեր, իմ տեր, որովհետև անհիշաչար եղար քո բազմամեղ ծառայի հանդեպ և ինձ պարզեցիր այս խաչը, որից երկրում քեզ մեխելով կախեցիր, ուստի քո սուրբ հոգու շնորհները հղիք այս տաճարը և Սողոմոնի տաճարի՝¹⁸³ հանգուռակ քո փառքի հոգեխառն ամպով, իբրև մեղով, սա զարդարելով վայելչացրու: Սա դարձրու ազոթքների ու պաղատանքների

տուն նրանց համար, որոնք արևելքում ծովեզերյա են: Որպեսզի նրանք, որոնք այս տեղում պատարագներով քո նկարը պաշտեն, դու բարձունքից լսես և տաս նրանց խնդրվածքները: Իսկ եթե ամբողջ Աղվանքը միաբանված գան այս տանը փառավորելու քո անունը, այս խաչի աստվածընկալ գորությամբ փակես թշնամիների դռները, դադարեցնես ավազակային պատերազմները, հրամայես քաղցրություն բերող օդային հոսանքներ լցնել երկիրը, որպեսզի խաղողենին, թզենին և հանդ ու անդաստանի բոլոր բույսերը լիուլի բերքով պտղավետ լինեն, և մարդիկ այս բղձալի երկրում անվրդով ապրեն:

Իսկ ես՝ Ջվանշիրս, որ ծանրաբեռնված եմ հանցանքներով, ո՛վ տեր, անձկալով ապավինեցի քո ամենազորեղ խաչի օգնությունը, ինչպես որ կյանքին խիստ կարոտ հիվանդը ապավինում է բարի բժշկին: Դատարկաձեռն ու ամոթահար մի՛ թողնիր ինձ. իսկ այս տունը, որ շինեցի, ճակատամարտի օրը հովանի դարձրու իմ գլխին և ինձ վրա վերկացողներին նետի՛ր իմ ոտքերի տակ, իմ ուստրերին ու հուստրերին անվախ դարձրու շարից և ամեն ինչում զորացրու: Եվ ո՛վ դու, տեր, իմ տեր, որ մանկությունից պահեցիր ինձ և շրջապատած փորձանքներից ազատեցիր, շատացրիր ինձ համար ոսկի, արծաթ, ծառաներ ու ալախիններ, շնորհեցիր ինձ դորություն, որպեսզի իմ իշխանությունամբ արքայաբար կառավարեմ, այժմ էլ ընդունի՛ր քո ծառաներին ի բարին և իմ սերունդների մեջ լցրու հանճար ու դիտություն, որպեսզի ընթանան քո ճանապարհով և աներկմիտ կերպով հնադանդվեն քո կողմից օժված Բյուզանդիայի կայսրին:

Իսկ երբ համրեղհանուր հարություն օրը կգա, երբ աներկվույթները կփոխանորդեն երևացողներին, փողային բարձրագույն հնչյունները ննչեցյալներին կարթնացնեն քնից, և հրեղեն չեկատները աշխարհի ծայրերից կհավաքվեն քեզ՝ ամենակալ թագավորիդ մոտ, այդ ժամանակ քո ուզեցույց խաչի միջոցով, որին ես ապավինել եմ, այցելի՛ր ինձ ու իմ կողակից հուսրովանուշին և իմ նախահայրերին, մանավանդ իմ ալեղարդ հորը՝ Վարազ-Գրիգորին ու իմ մորը՝ Գորիզուխային. իմ եղբայրներին՝ Վարազ-Պերոմին ու Հեզուա-Խոսրովին և իմ գավակներին: Իսկ ինձ՝ Ջվանշիրիս, որ Դավիթ Երանեղու¹⁸⁴

նման արտասուքներ հոսեցրի, բարկութեամբ մի՛ դատիր ու խիստ ճշտութեամբ մի՛ պահանջիր, քանզի ի՛նչ շահ քեզ իմ արյունից, երբ ես ոչնչանամ: Փրկի՛ր ինձ հավիտենական փորձանքներից և այս տաճարի փոխարեն, որ երկրում քո անուշով եմ կառուցել, ինձ՝ հոգով մեղանշածիս, օթևան պատրաստիր քո հոր տանը, ո՛վ Քրիստոս»:

Եվ երբ աղօթքը վերջացրեց, մատուցեց նորահրաշ տոնի համար հատկացված պատարագներ, փրկութեան ուխտ արեց այնտեղ, թե՛ «Սա թող լինի ինձ և իմ որդիների համար վայր՝ տիրոջ առջև երախայրիք մատուցելու և քեզանից ողորմութուն ստանալու»: Սրանից հետո աստվածավայել ավետիքներով այնտեղից իջնում է ձմեռանոց Պերողապատ քաղաքը և ողջ տարին անցկացնում է հաճելի ու խաղաղ իր հանգիստը:

Գ Լ Ո Ւ խ Ի Զ

ԶՎԱՆՇԻՐԻ ԵՆԱՄԻԱՆԱԸ ԶՈՆԵՐԻ ԸՅՑ ԵՎ
ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԵՎԱՏՄԱՐԲ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼԸ

Մինչդեռ արի Զվանշիրը խաղաղորեն գահակալում, և մյուս տարին լրանում էր ձմեռային օրհավասարը, հոների թագավորը բազմահազար հեծյալներով եկավ Աղվանքի վրա: Եվ չնայած նախապես նրա կողմից հրամայված էր, որ երկիրը զգուշ մնա ու ամրանա, սակայն հոների ասպատակողները ոչ միայն Կուր գետի այս կողմի և Արաքսի հզերքներում եղած բուն երկրի անասունները, այլև Արարատյան գավառներից ու Սյունիքից ձմեռնարոտ գաշտը արածելու եկած հոտերն ու նախիրները քշելով՝ բոլորը բանակատեղը հավաքեցին:

Այա հոների թագավորը ցանկացավ Զվանշիրին տեսնել. իր եղբորը ուղարկելով թախանձագին խնդրում է Զվանշիրին միմյանց հանդիպել և իրենց միջև եղբայրական հարաբերություն կնքել: Իսկ քաջ ու արիասիրտ իշխանը մտքով չէր անցկացնում վախենալ, այն դեպքում, երբ պարսից թագավորներից ոչ ոք

չէր հանդգնում դեմ հանդիման տեսնել, թուրքեստանցիների թագավորին:

Զվանշիրը աներկյուղ ու անվախ սրտով եկավ փրկարար խաչի առջև և ասաց. «Թեպետ զնալու եմ մահվան ստվերների մեջ, բայց չեմ վախենալու շարից, որովհետև դու ինձ հետ ես, տե՛րա: Այնտեղից վեր կենալով արքայաշուք պատրաստութեամբ զնաց նրանց մոտ: Իսկ հոների թագավորը, ընդառաջելով նրան, նազ նստած, պատրաստութեամբ գալիս խաղաղ կերպով կանգ է առնում զետեղերքի հանդարտասահ խոր ջրի վրա: Միմյանց հետ հաշտ ու խաղաղ խորհրդակցում են՝ վերացնելու երկու կողմերի տարածայնությունները և մանավանդ կապվելու միասիրտ եղբայրութեամբ: Նրանք դաշինք՝ կնքեցին, և յուրաքանչյուրը վերադարձավ իր տեղը:

Իսկ իմ քաջասիրտ իշխանը հաշորդ օրը ինչ արեց. տասնյոթ մարդկանցով անցավ գետի մյուս կողմը և զնաց հոների բանակը. այնտեղ հոների թագավորի դստեր հետ ամուսնացավ և վերադարձրեց ավար տարված հարյուր քսան հազար ոչխարների հոտը, յոթ հազար ձիերի ու խոշոր եղջերավոր անասունների նախիրը և ոչ պակաս, քան հազար երկու հարյուր գերված մարդիկ: Այնտեղից խաղաղութեամբ վերադառնալով ուրախ սրտով եկավ իր տեղը: Լաց եղավ տիրոջ առջև, կանչեց ու ասաց. «Ես ոչ թե հույս դրել եմ իմ աղեղի վրա, այլ դու ինձ փրկեցիր, տե՛ր, և իմ փառքն ու մեծությունը քո մեջ են, տե՛ր»:

Այդ ժամանակ կարգադրեց, որ վստահելի մարդիկ ավարից վերադարձրած ամեն ինչ բաժանեն մարդկանց՝ ըստ իրենց ունեցած բաժնի:

Եվ ահա քսանութ տարի իր աշխարհակալ սպարապետութեամբ՝ սկսած երիտասարդ հասակից մինչև միջահասակ տարիքը, զրվատանքներով լի, աշխարհահռչակ անունով նա իր ժամանակի երեք բառորդը անցկացնելով նախ Պարսկաստանում, ապա հոների մոտ, անթիբի կերպով կատարեց այնպիսի անվեհեր քաջություններ, մինչև որ արևելքում, արևմուտքում, հյուսիսում, հարավում, արիների ու անարիների

* Բնագրի դաշի բառը դաշնագիր է նշանակում: Աճառյանը արաբերեն tahvil բառն է համարում:

նրանց պատերազմի դուրս բերել կամ արգելել խնամհական կապերի շնորհիվ, այստեղ սոսկալի նախանձ է բորբոքվում գոռոզ տիեզերակալի սրտում: Ուստի վստահելի պատգամավորների միջոցով ծանր երդումներ ու անշափ պարգևների խոստումներ է ուղարկում, որպեսզի Ջվանշիրը գնա նրա մոտ:

Իսկ նա, Քրիստոսի խաչի մեծահույս բարությունների վրա վստահ լինելով, պատրաստում է մեծ քանակությամբ ընծաներ և նախապատրաստվում է նրանցով ողջունել տիեզերակալին: Նախ այցելում է այն եկեղեցին, որ իր ապավինության համար կառուցել էր Գարդման բերդում: Այնտեղ սրտատուչ հառաչանքով աստծուն խնդրում է այցելության, ինչպես մեծ Դավիթն է ասում. «Ժրպիւնքի և արդարության ստեղծող, մի՛ մատնիր ինձ իմ նեղիչների ձեռքը»: Եվ այս մտքով հրաժեշտ տվեց մեծահաղթ խաչին, գինվեց՝ մեկնելու օտար երկիր: Հայոց զորավարը, բոլոր նախարարների հետ միասին ընդառաջ դուրս գալով նրան, մեծ ուրախությամբ ընդունում և մեծ պատիվներով ու շքով ճանապարհ է դնում: Սրբ մտնում է Ասորեստան, տեսնում է, որ թագավորի հրամանով գավառների պետերը և քաղաքների մեծամեծները՝ յուրաքանչյուրն իր սահմաններում պատվում են իրեն. ամենուրեք կազմ ու պատրաստ երիվարներ, օթևաններ. մինչև որ մեծ շքով հասնում է թագավորի պալատը:

Այդ ժամանակ թագավորը հրամայեց մերձավոր մեծամեծներից նրան ընդառաջ ելնել՝ տանելով այն երիվարները, որոնք անձամբ թագավորն էր հեծնում: Եվ այդպես շքեղաշուք պատվով բերում մտցնում են կովոդ բազմախումբ բանակը: Նրա բարձր անվան պատճառով ամբողջ խառնիճաղանջ ամբողջ տեսնելու էր շտապում՝ խմբված ճանապարհին: Իսկ հարավի թագավորը արևածագին, իր սովորական ժամից առաջ, զարթնեց քնից, և ուրախ սրտով ու բարի ողջունով հանդիպելով արևելքի իշխանին, միշտ ուրախ էր նրա գալըստյան համար: Այդ պատճառով նրա ընդունելությունը ամենակատարյալն էր, որովհետև երկրի կուսակալներից ոչ մեկի նկատմամբ այդպիսի արթայական մեծարումներ չեն եղել, մանավանդ երբ փորձեց նրա խոհական հանճարամտությունը:

Որովհետև թեպետ բազմաթիվ իշխաններ ու շատ ժողովուրդների առաջնորդներ են թարկված էին նրա իշխանություն, բայց դրանցից ոչ մեկին այնպես առանց կասկածների գալուների չէր հայտնում, ինչպես Ջվանշիրին. այդ պատճառով նա թանկագին պարգևներ է շնորհում նաև նրանց, որոնք Ջվանշիրի հետ ժամանել էին: Դրանից հետո արևելքի իշխանը խաղաղ ողջունով հրաժեշտ է խնդրում: Իսկ հարավի արքան անկեղծ ու սերտ սիրո հաստատունության համար երդումներ է կնքում, մեկնում է նրան նաև իր աջը, որ երբեք տիեզերակալ գոռոզը սովորություն չունեն որևէ օտարազգի մարդու նկատմամբ այդպիսի բան անել:

Այս ամենից հետո մեծավայելուչ փառքով ուղարկվում է ընդհանուր հանդիսարանից: Գալիս-հասնում է Արարատյան գավառը, որտեղ նրան ընդառաջ է ելնում ամբողջ ազնվականությունամբ հանդերձ Մամիկոնյան տոհմից քաջ Գրիգորը և բերում է նրան իր Արուճ¹⁸⁸ գլուղաքաղաքը: Այնտեղ ժամանեց սուրբ աղավինի՝ եկեղեցու սյունը՝ հայոց մեծ հայրապետ Անաստասը: Մեծ հավատացյալ իշխանը երբ նրան տեսավ, հոգեզվարճ բերկրանքով լցվեց. խոնարհվեց և նրանից օրհնեց, ինչպես սուրբ հրեշտակից: Նույն շուքով գալիս-հասնում է Գարդման գավառը և անմիջապես մտնում է իր ապավինություն օթևանը՝ (տաճարը): Այնուհետև սկսեց թանկագին նյութեր գործադրել նրա հրաշագեղ անպատմելի պայծառությունը զարդարելու համար: Մեծ ծախսեր անելով նկարիչների գործի դրեց և գմբեթից մինչև դռան բարավորները նկարեց ու պատառեց կերպասներով, իսկ տաճարի դուռը՝ տիեզերքի լույսը պահպանողը, արծաթապատեց և հրաման տվեց քանդակազարդել: Սրանից հետո գրեթե երեք ամբողջ տարի պանծալի իշխան Ջվանշիրը հարավի թագավորի նկատմամբ հանգես բերեց անկեղծ տիրասիրություն:

ԶԳԱՆՇՈՒՄԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԸ ՀԱՐԱՎԻ ԲՈՒԱԿԱԼԻ ՄՈՏ.
ՈՅՈՒՋԱՆԿԱՅԻՆԵՐԻՆ ԽԵԼԱՑԻ ԿԵՐՊՈՎ ՕԳՆԵԼԸ ԵՎ ՀԱՐԿԵՐԸ
ՊԱԿԱՍԵՆՆԵԼԸ

Հարավի թագավորը կրկին անգամ նվիրատվական խոստումներով հրավիրում է արևելքի իշխան հուշակալոր Զվանշիրին, որպեսզի նախորդ մեծարանքի վրա ավելացնի նոր փառք, քանի որ Բյուզանդիայից եկել էին հարուստ մարդիկ և իրենց ուսին էին վերցրել հազարացիների հարկատվության ծանր լուծք, այդ պատճառով Կոստանդինի թագավորության յոթերորդ տարում պալատական պաշտոնյաները, որոնց թագավորի կողմից հրամայված էր սպասել, մինչև այնտեղ գա արևելքի իշխանը, նախաձեռնում են սպանել նրան: Իսկ հուշակալոր իշխանը առաջին անգամից պատրաստություն էր ցուցաբերում մեծարանքների ու պատիվների է հանդիպում. որովհետև հրամայել էր իր հարազատ եղբոր ապարանքը նրա հանգստության համար պատրաստել և ընթրիքի միշտ ի՛ր հետ սեղան նստել, ուստի բյուզանդական մայրաքաղաքից այնտեղ եկած մեծամեծ մարդկանց հետ նրան էր առաջարկում հաշտության բանակցություններ վարել: Այդ ընթացքում թագավորը շափազանց զարմանում էր նրա խորթաթափանց խելոքության վրա, որին քիչ շնորհակալություն չէին հայտնում նաև հոմեական պետությունից այնտեղ եկած պատգամավորները, քանի որ բաղմամբիվ փաստերով թագավորի մտադրությունը փոխում էր հօգուտ նրանց:

Իրանից հետո ավելի մեծ պատվով, թագառու արքաներին համապատասխան, արևելքի իշխանին հարավի թագավորը մեծարելով, հրամայում է նրան նվիրել Հնդկաստանից բերված լավ վարժված ու սովորեցրած հսկայակերպ փիղը, որով թագավորների պալատները ահեղորեն և փառաշուք կերպով դարդարվում են: Այսպիսի բան մինչև այսօր ոչ ոք չի լսել, որ ավելի կրտսեր մեկի համար իբրև մեծարում կարելու լսած եղած լինի: Սրանից հետո նվիրում է նա լուսթալ, որ բոլոր թուլուններից ավելի հարգի է, քան հին ժամանակ ոչ մի այլ

տեղ չկար, բացի բյուզանդական թագավորությունից: Համապատասխանորեն նվիրում է նաև այլ թանկարժեք իրեր՝ ոսկեպատյան պողպատյա սուսեր, գեղեցկաշար մարգարիտներով ընդելուզված պատմունքներ, ոսկեհուռ կերպասներ, ողիբերոն՝ դիպակներ, վառ գույնի ծիրանիներ ու այլ շքուղ գույներով կերպաներ՝ բոլորը միատեղ, որոնք չէին տեսնված թե՛ առաջներում և թե՛ այժմ. դրանց հետ նաև հիսուներկու արագավազ ձիեր պարզանց, որոնք միայն թագավորը ինքն էր նստում:

Նաև իր տիկնանց տիկնոջը հրամայեց, որ նա էլ արևելքի տիկնոջը նվիրի թագուհիներին վայել հրաշապաճույճ դարպարանքներ, մետաքսառելջ ու ոսկեհյուս պեղեսներ: Հրամայում է, որ նրա հետ եկած յուրաքանչյուր մեկին արվի մոտ հիսուն տղամարդու զիպակներ և զգեստազարդեր: Բացի այն, որ նրան ենթակա է դարձնում Սյունիքի իշխանությունը, այլև թագավորը ստիպում է նրան, որ համաձայնի գերի այն կողմը Ասորպատականին ևս իշխելու: Իսկ շէր համաձայնվում այգքան ընդարձակ տարածություններ միահեծան իշխելով՝ զորեղանալ: Նա թողնում է փառքի այդ մնացորդը և համաձայն իր բնական աշխարհաշեն էություն՝ լսով է համարում իր ժողովրդի օգտի մասին հոգայ:

Այնուհետև սկսում է խնդրել իր երկրի ծանր հարկերի թեթևացման վերաբերյալ, որին սիրով համաձայնվում է հարավի թագավորը և հրամայում է հարկերը երկու կես անելով թեթևացնել ու առաջին կեսի երեք մասից մեկը վերցնել**:

Այդ՝ այսքան մեծապարգև լավություններից հետո, որոնցով թագավորը նախամեծարեց բոլոր իշխաններից ավելի,

* Ողիբերոն կա և ազդիբերոն, որ Աճառյանը համարում է կազմված ազդիբերոն բառից, այսինքն ստեղծ ծայրով հյուսված:
Իովսեթը առաջարկում է թարգմանել կարճաճեղձի՝ ավելի հավանական է, որ դա գույնի մասին է, որովհետև այսպես է քննարկը. «Մարդարտոնո՞ւմ զեղաշարեայ պատմունքանս ոսկեհուսս քստ օրակս և դիպակս, ողիբերոն և զուարճատեսի ծիրանիս»: Աղիբերոն ձև զոչություն չունի, զա միայն Եսհնաշարյանի տպագրության մեջ է:
** Իովսեթը թարգմանել է, «Հրամայեց հարկը պակասեցնել մեկ երրորդով»:

կրկին մեկնում է նրան իր աջը և հավիտյան սքանչանալու արժանի պատվով ճանապարհ է դնում: Գալիս-հանում է իր երկիրը, շտապում է ժամանել տիրոջ տունը (եկեղեցին): Ընդունում է երեսն ի վայր և, գոհանալով աստծու անպատմելի սյարգեներից, ասում է. «Աստուց է իմ ուժն ու փառքը»: Այդ տեղից մեկնում է մայրաքաղաք, որ ձմեռանոց էր: Այդ ժամանակ այնտեղ տեղի է ունենում ընդհանուր ժողով, ուր մենք տեսանք ոչ սովորական շափով մարդկանց, այլ բազմապատիկ ավելի, որոնք ոյճնված, հագնված, զուգված էին արքայական շքով: Տեսանք արքայական թուղներ, որի տեսքը շափազանց գեղեցիկ էր. որովհետև դեղնագույն փետուրների հետ հավասարաչափ խառնված էր փոքր-ինչ կանաչություն, որ փայլփրջում էր*: Կրծքի կարմրանիշ գույնը, այս ու այն կողմ տրոհվելով, պարանոցի շուրջը միմյանց հետ հանգուցվելով, նմանվում էր հանդերձում եղած գարնանային այգարացի ցողի կաթիլների. փետուրների ոսկե ծայրերը մարդարտածն վար էին կախված ամբողջովին: Այսպես էին նաև աչքերի բիրբերը, հաստ կտուցը դեպի վար դարձած՝ ոլորվում էր բերանի շուրջը, որի մեջ կլորածն լեզվի ծայրը ատամների նման ցցված ճրտվորումներ էր արձակում և մարդկային խոսքին համապատասխան հաճախակի բռներ էր արտաբերում: Սա ինչպես սկզբում եղել է Ներոն կայսեր պալատում նրան գովաբանող, այդպես է: վերջում այստեղ տեսանք մեր բազմաբախտ իշխանին Ե. Նոյ: Չնայած դրա վրա զարմանքը շատ մեծ էր, սակայն ոչ այնքան, պատրաստվում եմ պատմելու: Երբ զվարճությունն ու խաղերի էր գնում արքայընթաց պատրաստություններ, տեսնում էինք արտաքին պարսպի ելքի մոտ, նախադան ճանապարհին, ինչպես թագավորին են երկրպագում, երկրպագություն էր գալիս վիթխարի կենդանին՝ ժայռաչափ փոլը, որի գերանածն սրունքները նրան իրենց վրա առած պահում էին, բարձր, ինչպես լեռ, իսկ գանգից հսկա սողունի նմանու-

թյամբ դեպի ցած կախված էր կնճիթը, որը գետնի վրա այստեղ-այնտեղ շրջրջելով, արագ պտտեցնելով, ուղղահայաց դեպի վեր կանգնեցնելով, ներս քաշելով ու երկարացնելով, ուժգին խոնշոցով ներշնչված օդը դուրս էր բերում. ճիշտ եմ ասում, իբրև հրեշ գլխի շարժումից ահաբեկող զարհուրանքով սարսափը բռնում էր մարդու էությունը: Տեսնում էինք նաև բերված սեղընթաց, շքեղապարանոց, թեթևավարձ, արագընթաց, էլ ավելի հախրապույց երիվարները, որոնք հողմընթաց թեթևությամբ ոսկեսանձ թամբերով, գեղեցկազարդ դեմքերով արշավում էին:

Այժմ այստեղ ի՞նչըր ասեմ և կամ ո՞րը պատմեմ, երբ սա (Ջլանշիրը) աստվածային նախախնամությամբ ի ծնե իսկ փառքի ու մեծություն մեջ ստեղծվեց, և մինչև այսօր տերը հնարավորություն չունեց արան, որ բոլորի համեմատությունությամբ ամենափառավորը լինի: Այդ պատճառով նրան ոչ մի բանում թագավորներից պակաս չտեսանք. լի էր ամեն հարստություններ, ուներ անթիվ ոսկի ու արծաթ, թանկագին ծիրանիներ, գեղեցիկ հանդերձներ, թանկարժեք ոսկեզեններ, և ոչ քիչ լուսափայլ մարգարիտներ: Ամեն ինչ լիառատ էր ու կատարյալ: Ահա այս երեսուններեք տարի է, ինչ տերն սկսեց Աղվանքի քաջահայ իշխանին բազմամեծար դարձնել. նրա շքա ժողովուրդների աշխարհակալ թագավորների կողմից պատիվների արժանացավ և շափազանց մեծարվել՝ ոչ մի բանի մեջ պակաս չլինելով, քան այս ինքնակալները. ընդհակառակը, ըստ ամենայնի վեհ ու մեծ էր: Ոչ ոք երևալայական կարծիքով և անմտություններ սրա տիրակալությունը փոքր համարեց՝ միայն գլխին թագ, այսինքն՝ թագավորական մեծություն բազմավայելուց պատվի ծայրագույն նշանը շունենալու պատճառով:

Այդ պատճառով մեզ՝ ամենախոնարհ ծառաներիս համար թող նա մեծ լինի ոչ թե ինչ-որ Օգոստոսի կամ Տիբերիս կայսեր համահավասար, այլ իր մեծաշնորհ բարերարություն համար նմանվի երանելի Կոստանդիանոսի ահագին գերազանցություն, որ պատկերով պատվից և փառավորվեց աստծուց: Այս, իսկպպես, ո՞վ դու, արևելքի բազմամեծար իշխան, քեզ լնկեր դարձնելով կե՛ծացնենք, որովհետև ինչ է պահանջում

* Այստեղ բնադիրն ունի նոգնայր ձևը: Երանազարյանը ունի նոգնե: Այս բառի գրություն և իմաստի շուրջը կատարածներ կան, որ ավելորդ են: Մեծ խոսվածքը (Կոտայքի նշողման) ունի նոգնող բայը, որ նշանակում է նոր ճառագայթել (արեի մասին):

քեզնից մեր տեր Հիսուս Քրիստոսը, որ քեզ ստեղծեց, ով դու, իմ տեր Քնոզորոս, ոչ այլ ինչ, եթե ոչ հրաժարվել մեղքերից և սիրել աստված, երկնչել նրանից, և գնալ նրա ճանապարհով, որովհետև քեզ և քո որդիներին սերնդե-սերունդ հավիտյան բարի կլինի:

Գ Լ Ե Լ Ի Թ

ԱՍՏՄՈՒ ՄԻԱԵԶՆԱՅԱՍ ԱՅՐ ԿՐԱՅԵԼԻ ՏԵՄԻԼՔԸ ՍՈՒՐԲՄԱՆՏՈՒ ՈՒ ԱՇԽԱԿՐՏՆԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎ ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ԳՅՈՒՏԸ, ՈՐ ԳԹԱՌԻՄ ԷՐ ԳՏԵՎՈՒՄ

Ճշմարտապատում գրվազաներ իսրայելի միանձնանալու մասին քիչ հայտնաբերեցի: (Կյանքի) սկիզբը անհայտ է, այլ այն միայն կշարադրենք, ինչ հիշում ենք:

Մի լրիվ տարի լեռան վրա, գետնին ծունկի եկած էր քնում: Մի գիշերվա շորորդ ժամին անակնկալ կերպով նրան հրաշալի սքանչելի լույսով փայլատակող մի տեսիլք է երևում. միաժամանակ անուշ մի բուրմունք տարածվելով՝ լցնում, քաղցրացնում է նրա հոտոտելիքը. իմաստութուն է թափվում նրա մեջ, որը նրան խելամիտ է դարձնում, և սա մտաբերում է բոլոր ասվածները, անցյալ ժամանակների հայտնության մեծ խորհուրդը, մեծերի առաջին պարզե հանդիսացող ավետիչ քարոզությունը, թե որպե՞ս կամ ի՞նչ ձևով ընդունվեցին, որպիսի՞ մարդկանց կողմից և ո՞վ որտեղ էր, որոնք արյունով մարանչեցին և նահատակի անուն ժառանգեցին, կամ որտե՞ղ աստվածային զանձը թաքցրին, և թե դու ի՞նչ պետք է անես: Այս ամենը նրան ասվեց կրկին անգամ. այդ մարդը զարթնելով գրիթի մի լրիվ ժամ ահուդողի մեջ էր: Ապա վեր կենալով այնտեղից՝ սիրտը բացում է. աստծու առաջ բազկատարած լինելով՝ գոհություն մտածում և աղոթքն է կատարում:

Մյուս օրը երբ մտաբերում է աստվածային խոսքը, թե՛

«Վա՛յ նրան, որ տիրոջ գործը հասպոդելով է կատարում», շտապ իշնում է լեռնից, հետք վերցնելով իր սպասավորին՝ աճապարանքով անցնում է եպիսկոպոսանոցի եկեղեցապատկան ավանը. մեծ զգուշությամբ ներս մտնելով՝ մանրամասն, ճշգրիտ կերպով եպիսկոպոսին պատմում է խորհրդավոր հայտնությունը ամբողջությամբ, ասում է. «Իմ տեր, շուտանք աստծու պատվերը ուշացնել, այլապես գուցե իբրև զլացողներ դատապարտվենք. հետամուտ եղիր այս գործին և շուտափույթ կատարի՛ր, որպեսզի աստծու գանձը հայտնաբերվի»: Դավիթ եպիսկոպոսը, որ Մեծկողմանքի տոաջնորդն էր, այս ամենը լսելով, մոտ մի ժամ մտախոհ դարձավ, նա իր մտքում խորհեց և վերցնելով իր հետ պարկեզ տորեպիսկոպոսներից ոմանց և նրանց հետ միասին պատմեց Ադվանքի Ուխտանես եպիսկոպոսին: Այս վերջինը լսելով այդ ցնծությունը գոհություն է հայտնում տիրոջից և խիստ զարմանում է եպիսկոպոսի պատմության վրա, որը պատմում էր հոր տեսիլքը, թե ինչպե՞ս արժանի եղավ այդ հայտնությանը: Այդ առթիվ կաթողիկոսը հրամայում է մեծ ժողով անել: Նաև կանչեցին Արցախի կողմերի, որին Մեծիրանք¹⁸⁰ են կոչում, եպիսկոպոս քաջ Հովելին, որը այնտեղ գալով խիստ խոսքերով հանդիմանեց կաթողիկոսին և Դավիթ եպիսկոպոսին, թե՛ «Ինչու՞ եք լսում այդպիսի դատարկարանություն, ականջ եք գնում ցնորական տեսիլքներին, երբ Աստվածաշունչը մեզ սովորեցրեց դրանք չընդունել: Քանի որ առաքյալների ու ավետարանիչների քարոզչուց հետո այդպիսի երևույթներ տեղի չեն ունեցել, ապա այժմ ևս շպետք է լինի»: Իսկ ինքը օժտված էր մեծ դիտություն և հմուտ էր Աստվածաշունչին:

Այդ ժամանակ սուրբ հայրապետը նրան պատասխանելով ասաց, որ ըստ Աստվածաշունչի այդ ճիշտ է, բայց քանի որ ինչ-որ նոր և չքնաղ բան է այս տեսիլքի պատմությունը, կարող է աստծուց լինել, և մենք հակադրվելով դրան, իբրև զլացողներ դատապարտվենք. կարիք չկա հակառակվելու, թերևս աստվածամարտեր գառնանք, շպետք է այդ հայտ-

¹⁸⁰ Հավանորեն տեղանուն է Եսայա այն խոսքը, որ ասում է. «Վա ախոցիկ, սք... ի գործս տեսան ոչ հայեմ», տե՛ս Ծ, 11—12:

նությունը մտացածին համարել, քանի որ առաքյալներից հետո բոլոր սրբությունները սուրբ խաչի հետ միասին և երկնային ծածկված գանձերը վերջին ժամանակներս մարդկանց տեսիլքով վանազան տեղերում՝ Երուսաղեմ սուրբ քաղաքում և շատ քաղաքներում հայտնաբերվել են, որ այժմ տիեզերքը լցվել ու եկեղեցիները պայծառացել են: Հենց այստեղ՝ Աղվանքում, բազմաթիվ վայրերում հայտնաբերվել են սրբերի մատուցանքներ. ուստի սա որ այժմ երևում է, նոր զարմանալիք չէ, քանի որ աստծու գանձերից ոչինչ չկա, որ հողում թաղված մնա: Պետք չէ նշմարտությունը ստության ու խարեության հետ դեն նետել, ու աստծու գործը սատանայի շարժարանք համարել, այլ անհրաժեշտ է ստույգ կերպով քննել և նշտությամբ վերահասու լինել, ինչպես սուրբ առաքյալն է ասում, թե՛ «Ամեն ինչ փորձեցե՛ք, բայց բարին ընդունեցե՛ք»: Դարձյալ կաթողիկյան թղթերի (Աստվածանշյում) մեջ ասում է, թե՛ «Ամեն հոգու մի՛ հավատաք, այլ ընտրեցե՛ք այն հոգին, որ աստծուց է»:

Արդ՝ դուք՝ այն կողմերի փոխանորդ եպիսկոպոսներ, գնացե՛ք, յուրաքանչյուրդ իբրև վերակացու քննեցե՛ք և վերահասու եղե՛ք. ավելի աստծուց խնդրեցե՛ք, արդյոք դա աստվածայի՛ն է, թե՛ մի տեսակ ցնդաբանություն, քանի որ սատանայի փորձությունները և մարդկանց խարեությունները հայտնի են, բայց աստծուց եկած շնորհները ավելի ևս հայտնի են: Արդ՝ ինչպես որ տեք աստված այն տեղում ցույց կտա և կհայտնի ձեզ գաղտնիքը, դուք էլ օրը օրին մեզ կտեղեկացնե՛ք:

Այդ ժամանակ երկու եպիսկոպոսները՝ Դավիթն ու Հովելը, կամավոր կերպով ընդունում են հայրապետի պատվերները և հրաժեշտ տալով սուրբ հոգու առաջնորդությամբ գալիս են Մեծկողմանքի Ռոստակ¹⁰⁰ գավառը՝ Զղախյան հովիտը՝ Ասպարիսաձև դաշտակը Տրտու գետի ափին, որը գտնվում է Մեծիբանքի վիճակում: Եկան տեղավորվեցին նշանավոր անտառում՝ մի քիչ բարձր տեղում՝ սարավանդակ վայրում: Այնտեղ կար մի փայտաշեն մատուռ՝ խեցիներով երեսպատված, խաչանիշ վարդարանքներով դրվազված, պատերը զարդափայլ գեղեցկությամբ հորինված: Արդ՝ երբ այդ լուրը տա-

րածվեց, աճապարանքով հավաքվեցին անվանի մարդիկ, բոքեպիսկոպոսներ, քահանաներ, սարկավազներ, հարյուրների գավառապետներ, դեկավարներ ու մեծամեծներ, գործակալներ, տղամարդկանց ու կանանց ժողովրդական բազմություններ, որպեսզի բոլորը մասնակցեն աստծու սքանչելիքի ցուցադրությանը: Ապա եպիսկոպոսները հրամայեցին, որ մանևտիկները հանդիսավոր թափորի մեջ հայտարարեն, որպեսզի հաստատուն կերպով երեքօրյա պաս պահեն և աղոթք անեն, քանի որ նրանց մեջ քիչ չէր երկպառակությունը: Մի մասը հավատում էր, մյուս մասը չէր հավատում: Նույնիսկ ինքը՝ գլխավոր եպիսկոպոս Հովելը, խարեություն էր համարում: Երբ երեքօրյա պասի ժամկետը լրացավ, սրբասուն Իսրայելը բահը ձեռքն առավ և հրամայեց աներկյուղ փորել: Բոլորը միահամուռ ծուկի եկան և սկսեցին նայել նշված տեղը: Այդտեղ միատեղ հավաքված բազմաթիվ մարդիկ, մասնակցելով այդ գործին, իրենց փեշերով կրում էին հույր հետու. ծանր աշխատանքից հոգնեցին, բայց չկարողացան տենչալի ու ցանկալի գանձը գտնել: Ապա այնուհետև քանդեցին արևելյան կողմի փայտաշեն հարկը, ուր կանգնած էր տիրոջ մեղսաքավիչ պատարագի սեղանը: Այնտեղ հետախուզելով, որոնելով սեղանի տակը՝ մոտ երեք կանգուն փորեցին: Հանկարծակի այրտեղից շափազանց քաղցր ու անուշ բուրմունք տարածվեց: Եվ լցվելով հաճելի առատությամբ՝ շատերի հոտտեղիքները ընդմիշտ քաղցրացրեց. այդ բուրմունքը այնպես ճշգրիտ կերպով նմանվում էր բյուրավոր խնկերի ու բազմազան ծաղիկների տղնվական բույրերին, որ բոլորը միահավասար զարմացած էին մնացել: Երբ սուսը թիզ փորեցին, գտան երկու արծաթյա արկղեր, որոնց վրա գրված էր կառարե կնիք, կնիքի վրա հաստահեղույս մեխերով մեխված էր մի ոսկեձուլյ տախտակ, իսկ սրա վրա գրված էր ասորերեն ու հայերեն: Քանի որ մեծաքանակ ամբոխով լցված հրապարակում աստվածային այդպիսի հրաշագործություն կատարվեց, ուստի մեկից մյուսին փոխանցվելով զարմանքը շափազանց մեծանում էր: Մարդիկ, միմյանց գլխի թափվելով, ձգտում էին սրբությունների տապանակները տեսնել, որովհետև սրբերի սիրտ համար հավատով տոշորված էին:

Այնուհետև այնտեղ հղավ սրտալի ուրախութիւն, և նա-
յոզները անհավայելուչ տեսարան դիտեցին: Բազմաթիվ սուրբ
մարդիկ ու քրիստոսասեր եպիսկոպոսներ աստուհ հրաշալիք-
ների վրա նույնպէս շատ զարմացան, որի համար մեծ օրհնու-
թյամբ գոհացան աստուհ անպատմելի պարգևներով: Դրս.
համար աստուհ մարդ Իսրայելը եպիսկոպոսների և ժողովրդի
առջև մեծ հարգ ու հեղինակութիւն ձեռք բերեց, ուստի նրան
պատվում էին ըստ իրեն արժանի սրբութեան:

Ապա եպիսկոպոսները Իսրայելի և պատվավոր քահանա-
ների հետ միասին առանձնանում և բաց են անում սրբութեան
տապանակների մատանու կնիքը. այնտեղ գտնում են Քրիս-
տոսի փրկարար խաչի մի մասը: Նույն ինքը՝ Արքեդիակոն
քորեպիսկոպոսը, կարդում է ոսկեծուլ տախտակի գրութիւնը,
որը հետևյալն էր, թե՛ «Առանձնացած մասունքները Երուսա-
ղեմի սրբերինն են»: Իսկ երբ Մեծիրանքի հովվապետ Հովելը
այդ աստվածային հրաշքը տեսնում է, իր ընդարձակ գիտու-
թյամբ նույնպէս բազմաբեղուն կերպով ծաղկում է, ամբողջ
սրտով գոհանում է աստուհ, ճշտութեամբ հաստատում է
Աքասի տեսիլքը ի լուր ամենքի հուշակում է՝ դառնալով շի-
նոզ այն բանին, որ երբեմն քանդում էր: Նույն բանի նկատմամբ
հենց իրեն հանցավոր ու գատապարտված էր համարում սկզբ-
բուն հակառակորդ լինելու պատճառով: Եվ որովհետև իր նա-
հանդում էր գտնվում նախապէս սահմանված վայրը, որտեղ
կենսատու լուսը ծածկված էր, ուստի շապասեց որպէս ճամ-
փորդ կամ անցորդ որևէ մեկի կողմից շնորհ ստանալու, այլ
ինքը դարձավ տնօրինող ու հսկող դրանց վրա, իբրև իր գանձե-
րի վրա: Եվ տապանակներից մեկը ինքն է վերցնում իբրև
պատիվ ու տանում է եպիսկոպոսանոցը: Սակայն դրանից
խիստ դժգոհ էր աստուհ մարդը, որովհետև ինչ-որ նրան աստուհ
կողմից վատահոյեց, և որին ինքը տեղչակ էր, վայել էր նրան
և մատակարարել էր սուրբ աստված: Սակայն մի պահ նա
թող տվեց և, ըստ իր հեղութեան, ոչ որի շամբաստանեց, այլ
առավ մնացած տապանակները և Դավիթ եպիսկոպոսի հովա-
նությամբ տիրոջ պաշտամունքը կատարող բազմաթիվ քորե-
պիսկոպոսներով, քահանաներով ու ամբողջ ժողովրդով տարան
իր բնակավայրը և սաղմոսներով, օրհնութիւններով, լուսա-

վառ լապտերներով ու մոմերով տիրոջ սրբութեանը ուղի գցած
իշեցրին Գլխովանքի¹⁹¹ սուրբ եկեղեցին. և միմյանց հոգևոր
ողջուններով համբուրեցին, ու յուրաքանչյուրը վերադար-
ձավ իր տեղը:

Գ լ ու յ Լ

ՈՏՆ ԹՂԹԻ ՊԱՏՃԵՆԸ, ՈՐ ԳՐՎԵՑ ԴԱՎԻԹ ՈՒ ՀՈՎԵԼ
ԽՊԽՈՎՊՈՍՆԵՐԻ ԵՎ ՄԵՍ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ, ԹԵ
ԻՆՉՊԵՍ ՍՍՏՎԱՄ ԱՅՊ ՄԵՍ ՀՐԱԵԱԼԻՔՆԵՐԸ ՅՈՒՅՑ ՏՎԵՑ

«Աստվածային, հոգևոր համ ունեցող համբուրներով լըց-
ված և հոգու շնորհներից պարզև ընդունած ո՛վ արևելցիների
աստվածային եպիսկոպոս Ուխտանես և բարեխնամ, քաջա-
զուն, հավետ փառավոր, գործող, իշխանաց իշխան տեր Զվան-
շիր՝ Ազվանքի իշխան, և ձեզ հետ միատեղ բոլոր նախարար-
ներիդ:

Դավիթ և Հովել նվաստ եպիսկոպոսներից տիրոջ միջոցով
ողջուն յն:

Պարտավոր ենք սույն պատճենը հրովարտակի ավետարեք
ձայնով ձեզ հայտնել հրաշափառ թաքցրածների հայտնաբե-
րումը և սուրբ խաչի գլուստը, որ անսահման զարմանքով
լցրեց մեր հոգին այն ժամանակ, երբ առաջ անհավատալի ու
անհավանական մտքով այդ իրերի մասին խոսել անգամ հանձն
չէինք անում: Այժմ ահա տեսանք՝ ականատես լինելով խաչի
հովետ սքանչելի հայտնաբերմանը, հեղինակավոր կերպով
վկայում ենք ճշմարտապես, թե սա պարծանքների պարծանքն
է. և ինչպե՞ս կարելի կլինի այս բանը լուսթյան մատնել և
կամ արփիափայլ պատկերը թաքցնել, այլ, ընդհակառակն,
պետք է գնել լուսեղեն աշտանակի շաքճը, այսինքն՝ սա պետք
է լինի Ամարասի սուրբ լուսատու եկեղեցում: Արդ՝ այսու-
հետև մենք պետք է գերագույն հուշակներ մեր փրկութեան այս
պատճառը՝ գեղեցիկ, մշտապես վայելուչ շորեփերայան խա-
չը, որը մեզ համար իր վրա է քնդունել անհամեմատելի նեղու-
թիւններ: Արդարև, հենց սա է քրիստոսյաների հուշը, մեռ-

յախների հարուժյունը, կուլյրերի առաջնորդը՝ Խաչը, որ մի ժամանակ դատապարտելի անվանում էր, այժմ դարձավ հավատացյալների փրկութեան միջոցը: Արա միջոցով գանձվեցինք արքայական հովանու ներքո, այսուհետև չենք վախենում բոցեղեն նետերից, որովհետև թագավորական նշանը մեզ վրա ենք կրում: Հաճույքով ունկնդրեցեք իմ այս խոսքին, որ լսում եք:

Թեպետ և ոչ կամավոր կերպով համաձայնվեցինք տեղեկանալ այս գործերին, բայց շկարողացանք ընդդեմ կանգնել ձեր հրամաններին և մանավանդ որ կասկածամտորեն այդ առարկաները խաբեություն կարծեցինք: Սակայն ճիշտ քննելով՝ աստծու շնորհով գտանք ճշմարտությունը, երբ եկանք Արցախի հովիտը՝ գետեղերը մի տեղ, որ կոչվում է Չղախ¹⁹¹, ուր գտնվում է մի մատուռ: Եվ ահա մեր այնտեղ գնալու լուրը տարածվեց, և շրջակայքի ժողովուրդը խիտ-խիտ կուտակվեց. այնտեղ հասան քահանայական խմբերը և նշանավոր մարդիկ, որոնց մեջ քիչ չէին հակաճառողներն ու ընդդիմադիրները: Բայց երեքօրյա խիստ պատ սահմանեցինք և, լրացնելով սահմանված օրերը, յուրաքանչյուր օրվա մշտական աղաչանքներով սկսեցինք փորել սեղանի մոտակայքը. այստեղից հանկարծակի անուշահոտ բուրեց և շարունակ լցրեց մեր հոտոտելիքները. այդպես մի փոքր աշխատելուց հետո բարձրալի շնորհների միջոցով և սուրբ հայր Իսրայելի աղոթքներով գտանք մեր փախազելին, այն է՝ երկու սրծաթյա արկղ, որոնք ամբողջված էին կապարյա կնիքով և փակված էին հոտմանական փականքով. դրանից կախված էր ձուլյ ոսկի մի տախտակ՝ հաստ գամերով մեխված, որի վրա կային ասորերեն ու հայերեն գրություններ: Ըստ այդ գրությունների մենք բաց արինք սրբազան քահանաների առաջ և գտանք ամենքին ապրեցնող խաչի և այլ սրբությունների մասունքներ, որոնց մասին գրությունն հաղորդում էր, թե տիրոջ սրբերի մասունքները Երուսաղեմին են:

Նրանց հետ հենց ես՝ նվաստ եպիսկոպոս Հովելս, մեծապես զոհացա բոլորի պարգևատուից, ամեն կասկածանք դեմ նետեցի իմ մտքից ու հավատացի Աբասի տեսիլքին: Եվ որովհետև այս գյուղը տեղի ունեցավ իմ թեմում, տապանակ-

ներից մեկը մեծ հաճույքով տարա իմ սեփական եկեղեցին. իսկ մնացած սրբությունները մենք՝ Դավիթ ու Հովել եպիսկոպոսներս, քորեպիսկոպոսների, քահանաների ու կրոնավորական դասի միջոցով՝ շնորհքն աստծու ցնծալից ուրախությամբ, հոգևոր երգերով ուղարկեցինք Աբասին մենաստանների վայրը: Թող տեր աստվածընկալ այս խաչի երևման շնորհներով ձեզ պահպանի երկար ու խաղաղ կյանքով զորութեան ու փառքի մեջ. երկնքի ցողից և երկրի պարարտությունից թող ձեզ տա երկուսի անշահությամբ առատություն, ի վախ՛ լումն, ո՛վ դու, հոգևոր տեսող և քեզ, ո՛վ դու, թագազարմ ժառանգներով մեծազահ առաջնորդ Ջվանշիր, տիրոջով ո՛ղջ եղեք»:

Գ Լ Ո Լ Խ Լ Ա

ՄՐԱ ՄՍՍԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԻՇԽԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԽՊՆԱՅՈՊՈՍՆԵՐԻՆ

«Գրված ու շարադրված հրովարտակի պատճենը ստացանք. սրա պատճառով շափազանց զոհ մնացինք անզղչացող աստծուց, որն իր ողորմությամբ օրըստօրե հրաշագործություններ է կատարում արարածների մեջ, է՛լ ավելի մեր մեջ ձեք սրբութեան շնորհներով, ո՛վ Դավիթ և Հովել եպիսկոպոսներս: Ուխտանես նվաստ կաթողիկոսը և Աղվանքի զորավար ու իշխան Ջվանշիրը տիրոջով ողջունում են:

Աստծուց մեզ կենսատու փրկություն հասնելու պատճառով մենք հավետ զոհացանք նրա անսպառ պարգևներով. իսկ ինչ վերաբերում է այդ սուրբ խաչին, որ մեր մեջ հայտնվեց, երևացրեց, բացեց, լուսավորեց մեր աչքերը. այս է պատճառը, որ մենք չզազարող բերանով և անհանգիստ լեզվով օրհնեցինք մեր տեր Հիսուս Քրիստոսին՝ բարերարին, հրաշագործին, պարզևարաշխին, որ մեզ շնորհեց սուրբ հոգու անսպաղան պարգևները: Թեպետև մենք մարմնով հեռու ենք, սակայն հոգով մտա համարեք և հիշեցեք նորագյուտ այդ խաչի առջև Թսկ դուք, առաքինազգեստ և սրբասուն Իսրայել, շնորհների

այդ գանձը սուրբ նշանով միասին վերցրեք ու մեծ զգուշու-
թյամբ այստեղ մեկ հասցրեք, սրպեսզի մենք էլ տիեզերական
ժողովի հետ միասին երանավետ համբուլըրով երկրպագենք.
ողջ ու առողջ մնացեք տիրոջ միջոցով»:

Նմանապես և երջանիկ վերագիտողն ու եպիսկոպոսների
տեսուչը, ստանալով Արևելքի գործարի ու սուրբ կաթողի-
կոսի նամակի օրինակը, անմիջապես շեշտակի արագությամբ
վերցրեց սրբերի գտնված գանձն ու եպիսկոպոսների և Խորա-
յեկի հետ անհապաղ ժամանեց Պերոժ-Կավատ մեծ քաղաքը:
որովհետև Արեւիլի մեծ իշխան Ջվանշիրը և եպիսկոպոսապետ
Ուստանեսը բոլոր նախարարներով հանդերձ այնտեղ էին
նստում: Դրանք հռչակավոր հանդեսով ընդունեցին լուսապաշ-
ժառ շնորհները ու բազմամբոխ հրապարակում երկար ժամա-
նակ երկրպագում էին: Իսկ իշխանը օգտակար ընձաներով ու
պարգևներով նվերներ էր բաժանում և, ներբողելով Աբասին,
մեծարում էր կաթողիկոսի ու ամբողջ երկրի բազմության հետ
միասին: Այս հրամայում է խաշապաձառ տապանակով
նրան նորից ճանապարհել Մեծ Կվյանքի վերնակողմ գավառը՝
բարձր լեռ՝ իր մենաստանի վայրը՝ Գլխովանքը¹⁹²: Հոգևոր
համբուլըրով ողջունն տվին երանելուն և յուրաքանչյուրն
ուրախությամբ վերադարձավ իր տեղը:

Գ յ ու խ ԼԲ

ԱՂՎԱՆՔԻ ՆՕՆԱՐԱՐՆԵՐԻ ԱՋԳԱՊԻՂԾ ԿՆՑՄԻԱՆԱԼԸ
ԵՎ ԱՆԻՄՎԻԼԸ

Այս ժամանակ Աղվանքի ազգապիղծ գլխավորները անօրի-
նակ խառնակությամբ պղծվեցին. նախ թագավորազնի՝ Կոդ-
թի¹⁹³ տիրոջ տունը, Դաստակերան¹⁹⁴, Ճնշմիան¹⁹⁴, Մամշե-
ղուն¹⁹⁴ և Կուր գետի այն կողմը Հեջերի¹⁹⁴ տունը, ուստի
գավառի Գիսում գտնվող Վարադ-Պերոժի տունը, որ զար-
նարի* տիրոջն ունեցր: Արաժականում¹⁹⁵ նստող Վարաժնի

սարկավագատունը* և Տվերակի տունը: Սրանց անհանձ լրբու-
թյունը և ապօրինի ամուսնությունը երանելի հայրապետ Ուխ-
տանեսը անեծքով արգելեց: Դրանք, դարձի չգալով, իրենց գոր-
ծած շարիքների մեջ ամենքն էլ բնաջնջվելով՝ վերացան երկրից:
Դրանից հետո վախճանվում է նաև սուրբ հայրապետը. նրան
հաջորդում է նշխարաբը, որը մի բարի ու ազնիվ մարդ էր:
Սա Շաքիի եպիսկոպոսն էր, որ Ուխտանեսի վախճանվելու
ժամանակ այդ կողմը ժողովի էր եկել այլ եպիսկոպոսների
հետ. մի քանի ազանգավորներ նրա ժողովի գալը պարսավում
էին: Յայգապաշտամունքից հետո ժողովը Պերոժ-Կավատ
քաղաքի առաջնորդ ընտրեց մի ոմն վանականի, որին կամե-
ցան կաթողիկոս դարձնել: Այդ ժամանակ պիղծ սատանան
ամենքի աչքի առջև գետին զցեց նրան՝ ամբաստանության
թուղթ մեջտեղ բերելով: Եվ հենց այդտեղ քվեարկվելով, ինչ-
պես Մատաթիային, այն պարկեշտ եղիազարը նույն ժողովից
ստանում է առաքելական պատիվ, երբ դևո բարեբայտ Ջվան-
շիրը ասածու կամբով աշխարհիկ իշխանությունն էր վարում
այս անցողիկ կյանքում:

Գ յ ու խ ԼԳ

ՅԱՏԱՌԻ ՍՈՒՐԸ ՄԱՐԿ ԿՍԻՍԵԼԻ ԲԱԼԱՆԱՅԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ
ԵՎ ՍՈՒՐԸ ԿԱԶԻ ԳՅՈՒՏԸ. ԵԱՐԱԳՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՂԱԲԱՐ

Բայց քանի որ լուսավոր հոսքով աղբյուր էր այդ երջանիկ
մարդը, իր հորդահոս քաղցր բազմաթիվ վատկներով հագեց-
նում էր և միշտ սաստիկ պատերազմի մեջ էր ընդդեմ թշնամի
ենիթին**, մի սլատերազմ, որով հենց առաքինազուները վարժ
են նրա դեմ հանդես գալու իբրև քաջ և ընտիր ավսոյան: Նույն
ձևով էլ սա դեզեցկազարդ արդարությամբ էր պճնված՝ հրա-
շակվելով երկրում: Սա շատերի հոտոտելիքները հանկարծ

* Դովսեթը թարգմանում է հանդերձատուն:

** Հստ Դովսեթի ենթադրույթան սատանա բառի հոմանիշներից մեկը
պետք է լինի:

* Իշխանական մի տիրոջն անվանում է: Միայն այստեղ է գործածված.

լցրեց սրբութեանց սրբոց անուշ բուրմունքով: Հետագայում, երբ սուրբ հոգին Դավիթ եպիսկոպոսի սիրտը շարժեց, նրան ալից մեծ քահանայապետութիւնը. ձեռնադրեց որպէսզի գրավի իշխանութիւնը և փրկի կորուսյալների հոգիները մեծ Պետրոսի նման և անարատ զո՛ւ մատուցի, ինչպես արի Ահարոնը: Եվ թե՛ մերձավորները, թե՛ հեռավորները, խրախճանակից գտնուելով, նրա սուրբ աչից օրհնութիւն կառնեն: Բայց ահա մեծ ու զարմանալի հրաշքը այն էր, որ շատերին անհատապէս էր թվում: Դա օրրատօրե շարունակաբար կատարվում էր նրա նկատմամբ՝ ըստ վերին հայտնութեան առաջին խորհրդի: Այդ պատճառով նրա նկատմամբ հարմարվում է առաքելական խոսքը, որ ասում է, թե՛ «նախապես հրավիրվածներին արդարացրեց աստված, իսկ արդարներին փառավորեց»:

Եվ ահա այդ բանի վրա մի տարի անցնելուց հետո նախապես իմացնող հրամանի պատճառով, որ վերևից եղավ նրա համար իբրև ազդ, սուրբ քահանան խիստ ցանկութիւն ունեւ խնդրել փափաղիլի խաչը, որ սուրբ Մաշտոցը ծածկել էր Ռատի գավառի Դիս անվանված գյուղում: Եվ որովհետև ինքը առաջնորդ էր բարի եղբայրների, խորհում էր կատարել ամենքի նկատմամբ սիրո պատվիրանը, ծածուկ զգեցած էր աստծու ճշմարտութիւնը: Դրա համար բարեխնամ կերպով հոգալով բոլորի շահը՝ ծածուկ մտադրութիւնը հայտնի չէր դարձնում ամբոխի առջև և ջանում էր խուսափել մարդկանց գովեստներից՝ փախչելով փառամուլ ու սնապարծ խիտերից:

Այս պատճառով սրբասուն քահանաներից միայն մեկին, որ պատվավորներից նախամեծար էր, այդ գյուտի համար իրեն հետևող է գարձնում և ոչ թե կամենում է ամբողջ ժողովով երթի կազմել: Նրա հետ միասին հասնում է վերոհիշյալ վայրը՝ հին եկեղեցին, բայց չի կարողանում ստուգել և գտնել տեղը: Նույն ժամին զարմանալի հրաշք է տեղի ունենում սաղարթապատ նոճի ծառերի վրա, որոնք, այս և այն կողմից արանք գոյացնելով, իրենց միջև ունենին սուրբ եկեղեցին, որ իբրև լույս բոցաճաճանչ կամարածն երևում էր վերևում և նույն ձևով հավասար միանալով շքնաղագեղ գմբեթին, ամբողջապէս սահելով ճառագայթում էր նոճի ծառերի ծայրերի վրա ճիշտ

ծիածանի նման, որ լինում է ամսերում, ապա փայլակի նման արտացոլում էր ներքևում քարաշար ու ալյուսաւար պուրակի* վրա, ուր գտնվում էր Քրիստոսի խաչը: Այնուհետև սուրբ մարդը խմացավ, որ այդ նույն տեղում է անկապտելի գանձը: Իրիշք վերցրեց ու գոտեպնդից ինչպես արի Աբրահամը, սկսեց փորել նկատված տեղը իրեն միաբանված մարդու հետ: Երբ փոսը հինգ քիլ կամ թե մի քիլ ավելի էր, հանկարծակի հայտնվեց մի արծաթե ժանգապագույն, հնացած տապան, որ միասեղ ունեւ հայերեն, լատիներեն ու ասորերեն գրութիւններ. դուրս եկավ, որ սրա մէջ կար նաև կյանքի հիմք հանդիսացող խաչափայտից: Այնտեղ կար Քրիստոսի նշանը՝ արծաթածուլլ, գեղակերտ, ոսկեգօծված, որ ընդմիջտ տիրոջ խաչին կից է:

Այնուհետև աստծու մարդը բազմանգամ խնկարկութեամբ հրճվեց, զվարթացավ հոգեծաղիկ պայծառութեամբ և, ընդօրինակելով մարմնաքնար** Դավիթի երգը, հորինեց երաժշտական նվագներ. «Ամեն ժամ կօրհնեմ տիրոջը կարգով՝ մեղ՝ իր երկուցածնորին, նշանը շնորհելու համար, որը ընդմիջտ մեզ ազատում է թշնամուց»: Փրկութեան այս նշանը գաղտնաբար վերցնելով բերում է իր եկեղեցին: Այն օրերին, երբ նշանը հայտնվեց և եկավ հասավ հանգստավայրը, մեծ ու սքանչելի այնպիսի հրաշք տեղի ունեցավ, որ աստծու աճեղ ու մեծ փառքի մասին շխտել անհնար է: Ինչպես կյուրեղը, որ Երուսաղեմում հայրապետ էր, Կոստանդիանոսին ուղղված մի գրութեամբ խաչի երևալու մասին ասում է. «Թե լույսի ցոլբերը մինչև Չիթաստանի լեռը ոչ թե մեկին կամ երկուսին երևաց, այլ քաղաքի ամբողջ բազմութեանը ակնհայտ տեսանելի եղավ»— նույնպես էլ եղավ արևելցիներիս երկրին լույսի խաչի երևումը. որովհետև բոլորն էլ պարզ համոզա-

* Անառայանը ճիշտ կերպով պուրակի բառը բացատրել է գմբեթ, ավելի ըստ գմբեթի գազաթ: Այդ ապացուցում է ինչ զլխի վերջին տողը, որտեղ ասված է. որայց չէր կարողանում գմբեթի աղյուսաշար գազաթը (պուրթ) քանդել, որովհետև այնտեղ կայան էին գտել տիրոջ խաչն ու նահատակների մասունքները»:

** Տե՛ս Ազգաբնգեղաս, 1:

վասար կերպով տեսան պայծառ լույսը, որ բոցաճաճ ճանշ վայ-
լումով եկավ երկնքի ամպերի միջով և սլացավ ամեն քի աշքերի
առջև: Ամենքն էլ տեսան շնորհների բարձրանալն ու իջնելը
ամենատուրը խաչի վրա: ու երբեմն նմանվում էր հրի, եր-
բեմն՝ լույսի, երբեմն՝ լուսաստղի. այդ ոչ միայն մենք տեսանք,
այլև ամբողջ աշխարհը մեծապայծառ ճառագայթներին ակա-
նատես եղավ: Երբ երկնքի միջով արտացոլվեց տաճարին կից
տեղում, ոչ միայն քաղաքի բնակիչներին տեսանելի եղավ,
այլև տեսան շրջակայքում սփռված գյուղերը, քաղաքները,
տղամարդիկ ու կանայք, նաև լեռներում գտնվող հովիվները,
արոտների նախորդները, դաշտերի հողագործները, որոնք
իրեն հողասերներ, բերք էին հավաքում, բազմաթիվ բացօթյա
ճամփորդներ. գիշերվա ժամի հինգին դրանք բոլորով տեսան
արփիտափայլ սքանչելիքը: Նրանք բազմաթիվ այլ տեսողների
հետ շտապ, արագընթաց ստեղծի ամբողջ ուժով եկան տեսնե-
լու լայնատարած հրապարակում հանդեսի համար խառնի-
խուռն ու խումբ-խումբ հավաքվածներին: Եվ կատարելով
իրենց ղանկությունը՝ համբուրում էին Քրիստոսի սուրբ
խաչը, ընդունում էին շնորհներ ու ողորմություն հենց նույն
տեսնելի գեներացի և ապագա հաղթություն վայելուչ պարգե-
ներն էին ընկալում: Եվ շնայած բոլոր կողմերից երկրի գլխա-
վորներն եկել էին տերունական նշանի տոնին, բայց սարսա-
փելի ու ահավոր այն հրաշքների պատճառով, որ հայտնվե-
ցին խաչի վրա, ոչ ոք չհանդգնեց ամբողջ գիշերը այն սենյակ-
ները մտնել և քաղաքի գավիթներում գիշերել. բոլորը դրանից
հետո դուրս էին գալիս բարձրագիւր վայրերը և ամբողջ գիշերը
այնտեղ մինչև առավոտ աղոթք էին կատարում. երբ արեգակը
ծագում էր, մտնում էին եկեղեցու գավիթը և ահով ու հր-
կյուղով կանգնում խաչի առջև և անմիջապես հսկում էին կա-
տարում խաչապայծառ տոնին՝ սեզանի վրա մատուցելով
գահացուցական պատարագ:

Ապա այս հրաշքների հայտնվելուց հետո ինչպես վերստին
ճյուղեր արձակած, վերածաղկեց մեծ աշտարակի հզոր, աստ-
վածընկալ խաչը, երբ դավանել վատահվեց մեզ, և աստծու կող-
մից մենք արժանավորվեցինք միշտ մեր պաշտպանության տակ
պահել նրա արարչություն գտնել: Տերը մեզ իբրև նեցուկ

մատուցեց այդ փրկարար կայմը, որը մեզ համար պարզեց
աստվածագիտությունն առաջատար: Առանց գիտությունների
էին մնացել դպիրների խմբերը և առանց ուխտի՝ պատանինե-
րի դասերը, որովհետև նրանցից ծածկված էր խորհուրդը:

Ապա աստծու սպասավորը, որ հին եկեղեցում էր, իմացավ
խաչի երևալը: Երբ այս բանին տեղյակ է լինում այդ մարդը,
կամավոր ցանկությունը դնում է կվյանք¹⁰⁰ գավառը՝ Գլխո-
վանք եկեղեցին: Այնտեղ Բարայել անունով աստղնորդը տես-
նում է սրբին, ընկնում է նրա ոտքերը. պատմում է ամբողջ
երազատեսությունը և խնդրում է հնար գտնել ու հայտնել
իրեն իրերի գրությունը: Իսկ սա հանձն չի առնում նրան գաղտ-
նիքը հայտնել, և նա վերագառնում է իր տեղը: Մյուս օրը
նույն բանը կրկնվում է միևնույն մարդու նկատմամբ (երազր).
նա թուղթ է գրում և բերում, տալիս է աստծու մարդուն: Այս
րանը տեսնելով՝ սուրբը հասկանում է, որ գորությունը ի
վերուստ է, ուստի և հայտնում է նրան գաղտնիքը ու ցույց է
տալիս հենց նույն կենսատու խաչը և պատժի երգումով պատ-
վեր է տալիս նրան ոչ ոքի չպատմել: Բայց շնայած նա երգ-
վեց, որ ոչ ոքի չի պատմի, սակայն քիչ ժամանակից հետո
ուխտադրոնեն գնում և կաթողիկոսի ու շատ ուրիշների ներ-
կայությունը հայտնում է խոսակցությունը, որովհետև պետք
չէր ճշմարտությունը ծածկել: Եղիպար հայրապետը այդ
պարզև տրված ավիտիքի համար հիանում է և նույն ժամին
Ջվանշիր իշխանի հավանությունը Բարայելին հաղանայ հրա-
մանագիր է ուղարկում, որպեսզի Քրիստոսի չքնադադուս
խաչը իրեն հասցնի:

Իսկ նա, հնազանդվելով հայրապետական հրամանին, շտապ
հասնում է սուրբ եկեղեցին: Ինքը՝ մեծ իշխանը, ու սուրբ հայ-
րապետը բոլոր մեծամեծների հետ հասնում են այնտեղ և
սկսեցան տեսնում են Քրիստոսի նորոգափայլ խաչը, որը
սուրբ Մաշտոցը իր իսկ տեսքով պահել էր և որով նա Աղվան-
քը կառավարողական մոլորությունից դարձրեց շնորհների լու-
սածին ավազանին: Եվ երկրպագելով սուրբ նշանին՝ այնտե-
ղից մշտուրախ բերկանքով դարձան՝ տեսնելի պարզները
ավողին փառաբանելով:

Իրանից հետո աստծու քահանա Բարայելը մեծարելի

դարձա՛վ կաթողիկոսի ու իշխանի առջև և մեծամեծների աշ-
քում: Նա հրաման է ստանում նրանցից ամեն ինչ համարձակ
կերպով կատարել: Մի քանի օրից հետո այդքան հրաշքների ու
մեծամեծ սքանչելիքների պատճառով, որ բազմաթիվ անգամ
կատարվել էին նոճի ծառերի վրա, կամեցավ դրանք խաչի
տիրոջանման պատկերով ձոնել նշանին՝ իբրև նվեր: Անմի-
շապես հրավիրեց վարձով հմուտ հյուաններ, և նրանք վայի-
լուչ կերպով շինեցին խաչի նշանը, քանդակակերպ զարդե-
րով դրվագելով ամեն ինչ պատրաստեցին ըստ տիրոջ գործի:
Եպիսկոպոսապետն ու Ջվանշիրը, այս բանը լսելով, ան-
միջապես նամակ են գրում աստծու մարդ Խորայելին, որ իրենք
ևս կմասնակցեն ու ցանկանում են հասնել նավակատիքի նը-
շանի տոնակատարության ու սուրբ խաչի օծմանը: Տիրոջ քա-
հանան մեծ ուրախությամբ համաձայնվեց այդ բանին և պատ-
րաստակամ կերպով ձևավորեց նվիրական տոնը կազմակերպելու
անհրաժեշտ բաները ըստ խաչազարդ պայծառության օրինա-
կի: Բայց նրանք սաստիկ ծուլությամբ շկարդացան հասնել
գործի կատարմանը: Այդ ժամանակ աստվածային տեսիլք
երևաց Եղիազար պատրիարքի վրա, որպեսզի շղանդալի
գնալու և օծելու Քրիստոսի խաչը: Նա, բոլորին իր հետ վերց-
նելով, առավոտյան վեր է կենում և շտապով հասնում է նշա-
նակված եկեղեցին, որը գտնվում էր Գիսավան¹⁰⁷ նահանգի
թեմում:

Քանի որ այն ժամանակ մեծ իշխանը մեկնել էր հարա-
վային կողմերը՝ Միսվան¹⁰⁸ դավառը, և որովհետև Եղիազար
հայրապետը միանգամայն նման էր առաքյալներին իր խոսքով
ու գործով, ապա սուտ ու մոլոր ցնորամտությունները վրեժ-
խնդրությունները դուրս էր մղում, իսկ ինչ որ ճշմարտությու-
ն էր, ծաղկեցնում և պարծանքի պսակ էր համարում իրեն,
դրան դատապաշտպան էր կանգնում: Առաքինազարդ ուղ-
ղափառությունք սիրալիր ջանք թափելով՝ ուսուցանում էր
միշտ երեք անշփոթելի անձնավորությունների պազել: Այնու-
հետև երջանիկ մարդը հասկանում էր, որ այս հրաշագործ
տեսիլքի խորհուրդը աստվածապաշտությանն է վերաբերում.
դա միաժամանակ երևաց Խորայել քահանային, ուստի նրան
ընդունում է իբրև աստծու սպասավոր և Մաշտոցի սուրբ

խաչից հանված մասը նա առավ նրա կամքով դրեց փայտ-
ակերտ նորոգաշեն խաչի մեջ, խաչը օծեց օրհնության յուզով
և կանգնեցնելով եկեղեցում՝ մեծ խնջույքներով, հուշակված
հանդեսներով, կեղեցական միաբանությունքով ու հովասա-
ցյալների խմբերով տոնահանդես կատարեց:

Գ Լ Ո ւ խ Լ Գ

ՄԵՏ ԻՇԽԱՆ ԶՎԱՆՇԻՐԻ ՕՐՀԱՍԿԱԿԱՆ ՄԱՆՐ

Այնպես պատահեց, որ այդ ժամանակ մեծ իշխան Ջվան-
շիրը՝ մեկնեց լեռնականների կողմերը գրոսանքի, որպեսզի
տարվա տոնական օրերը ուրախ անցկացնի՝ երկրներ շրջելով:
Խանդավառ գուսաններով ներբողված սիրառատ Ջվանշիրը՝
պարթևահասակ զորավարը, որ գերազանց խոհականությամբ
բոլորին ենթարկում էր իր իշխանություն և, մահկանացու-
ների մեջ իր ստացած գերազանց հատկությունների շնորհիվ
ամբողջովին բարեբախտ լինելով, հպարտանում էր իր իմաս-
տուն քաջությունք: Բայց այդ քաղձալին ու հուշակափորը նեն-
գավոր կրքի ախտի շնորհիվ թափուր ու դատարի լինելով,
անմաս մնաց աստծու այդ փառքերից, որովհետև աստծու
պատվիրանին հակառակ էր գործում: Եվ ահա ամենը եղավ
սարդոստայն, շատ շուտ այն շքնաղ վայելչությունները
սյնչացան: Ամառվա տապակեզ օրերին գերահրաշ իշխողը իր
հետ վերցրեց ազատասուն (աղվակական) տոհմը նամեսական¹⁰⁹
գնդի հետ միասին, և բարձրաբերձ լեռների հովիտներում
զվարձանում էին ծաղկանման բնակությունք, գեղեցիկ դաշ-
տերում զուգվում և զարգարվում էին ու բարիկեցիկ վայել-
քով օրեր էին անցկացնում:

Իսկ երբ տոթակեզ օրերը անցան, և մոտեցավ խաչի մեծ
նավակատիքի բարձր տոնը, այն կողմերից մեկնեց, եկավ-
անցավ Ուտի գավառի Պարտավ քաղաքը՝ իր գեղազարդած
տաճարը, որպեսզի այնտեղ հանդիսավոր տոնին սյարգեսա-
բայի մեծարանքներով աստծուն երկրպագություն մատուցի:
Եվ մինչդեռ մեծահուշակ Ջվանշիրը մեծ ուրախությամբ հան-

գրատանում էր, անօրենն ու վատանուն մի մարդ, որ կայննի
ախտի մեջ էր ընկնում, խարդախ խաբեությամբ իրեն հանա-
խոհ ընկեր պատրաստեց: Նա ո՛չ նրա բարեկամությունը,
ո՛չ իր հոր տանը նրա կողմից մեծ պարգևներով տրված
պատիվները հիշեց. այլ մտածեց նրան սպանել: Նենգամոտ-
թյամբ նրան հրապուրեց՝ պատրվակնելով անտառախությունը,
փաստադատի խուճերով նրան համոզեց դուրս գալ դարշ-
ի գվարճության: Եվ երբ իշխանը տաճարից ծաղկանոցների
այգեպատ ճանապարհը դուրս եկավ, գիշերվա առաջին ժամն
էր: Նա իր մոտ միայն առանց վահանի մի թուր ունեւր, իսկ նրա
թիկնապահների սպառազինված ջոկերը անհող ու անտարբեր
պալատի դռներում քնով էին տարված:

Զարանենգ Ծնիբը՝ Վարադդինի դավաճանողը, վերցնելով
արքունական վաղակալորը (կարճ սուր), պողպատյա սուսերը
ու ոսկեկումբ վահանը՝ զավաղաբար առջևից էր գնում՝ պատ-
ճառարանելով, թե ինքը շարժվում է գինակրի օրինակով:
Ինքը՝ անօրենն նենգավորը, ծածուկ գինավառված, պատմու-
ճանի տակից հագել էր զրահները: Երբ հասնում են բուրաս-
տանի մեջտեղը ու մոտենում են ցանկապատի թերվածքին⁷,
որ շրջապատում էր արքունիքի լայնատարած բակը, ինչպես
որ ամեն հարցում իմաստությամբ լցված էր անհաղթ Ջվան-
շիրը, այս դեպքում էլ իմացավ սպանողի ստորագույն դավա-
դրական նենգությունը: Եվ երբ լսեց հագած զրահի ձայնը,
իշխանը վախենալով սրտաբեկ եղավ. նա կարծեց, թե մեծ
թվով մարդիկ լսմբված մտադրվել են իրեն սպանել: Եվ լռել-
թվով մարդիկ վերադառնալ պալատ: Իսկ անօրենն սպանողը,
սուսերը կիսով չափ դուրս քաշած պահելով, հանկարծակի
թիկունքի կողմից հարվածում է քաջ իշխանին և ծանր վիրա-
վորում, որովհետև սա իր վրա դրահ չունեւր, բայց արագ չի
կարողանում իշխանին հողթել: Աս խ արագորեն, ինչպես
մեռչացող առյուծ, կամեցավ սուսերով գործի անցնել, սակայն
բարձրյար ուժը խլել էր նրանից՝ մասնելով նրան հենց նրա
մտերիմ սիրելու ձեռքը: Առաջին անգամ երբ սուսերով հարձակ-

* Թե՛վածի բառը համապատասխանում է քնադրի պատույզ-ին: Աճառ-
անը բացատրում է շրջապատ:

վում է անօրենի վրա, այս վերջինը, վահանը առաջ տալով,
կանգնում է, լինքը թաղելով վահանի մեջ, ամենևին չի կարո-
ղանում նորից դուրս քաշել և ամբողջովին մնում է այնտեղ:
Իսկ նա, լցվելով վայրենի գազանությամբ, գայրադնած վի-
րավորում է իշխանի ամբողջ մարմինը ինչպես թունավոր
ոձ և կրծող ցատումով թրակտուր արած, վազակավորով խո-
ցոտած անխնայաբար գետին է տապալում իր տիրոջը: Տիրաս-
պանը համարում է, թե նա արգեն շունչը փչել է, մինչդեռ
պարզվեց, որ նրան կիսամահ է արել, ինքը գաղտնի դուրս է
դալիս և գնում է իր տունը՝ կեղծելով, որ իր վրա կասկած չա-
նեն, որպես թե ինքը անտեղյակ տանը քնած է եղել:

Եվ ահա, այնուհետև կատարված իրողությունը իմաց-
վում է, շարագույժ աղմուկն ու խառնաշփոթությունը տարած-
վում է, և ամբողջ խմբվում է: Իսկ ռճրագործին իր հարապատ-
ներից մեկը հայտնում է նրա գործած ոճիրի մասին, և սա ան-
միջապես հեծնում է երիվարը ու փախչում:

Այդ ժամանակ մի պատրիկ՝ իշխանի բեռորդին, վերցնում
է իր նամեսական¹⁰⁰ լեգեոնից մի հիսնյակ մարդ ու հետա-
պնդում է մահապարտին: Բայց չի մտածում նախապես փա-
խածին հասնելու մասին, այլ գնում են վեր՝ դեպի Արցախ
դավառը՝ ոճիրի դիմաց վրեժխնդիր լինելու: Նրա հոր տունը
ավարի են ենթարկում և հրդեհի միջոցով քանդում: Մետաքսա-
հյուս ու կերպաս դիպակները, պուլնեզգույն կապերտները,
ոսկին ու արծաթը, ընտրելագույն կահույքն ու սպասեղենը
թալանում են, իսկ իրենք ողբալի արտասուքներով վերադառ-
նում և լալիս ու սղրում են իշխանի համար: Բայց դեռ նա շունչը
չէր փչել, որովհետև մի քանի օր կենդանի մնաց, ուստի իր
որդիներից յուրաքանչյուրին զանձ ու աստիճան տալով,
նրանց նշանակեց իրենց բաժինների վրա և, ծանր վերքերից
թուլանալով, վախճանվեց:

Այդ ժամանակ ոչ քիչ խոռվություն տեղի ունեցավ Աղվան-
քում, որովհետև բազմությունը գինված, կուտակված էր
դուսեր, իսկ մեծամեծ նախարարները ժողովված էին, և ամբողջ
երկիրը, միատեղ վայնասունով լցված, ողբում էր իշխանին
կականալիք ու սաստիկ գոռում-գոչումով: Եվ այսպես ծանր
ուռ ու անասելի գժբախտություն հասցրեց երկրին: Այդ

ժամանակ Դավթակ անունով ճարտասանի մեկը, որ ծանոթ էր տաղաչափական արվեստին, ստեղծագործելու մեջ վարժ ու հաջողակ, քերթողական ընթերցման մեջ առաջադեմ, մեջտեղ եկավ: Սա առատ խոսքերի պաճուճանքներով ճարտար կերպով երգում է և շատ լավ գովարանում՝ ունենալով այնպիսի լեզու, ինչպիսին ունենում է արագագիր գրողը: Սա շարունակ գալիս և երկար ժամանակ մնում էր պալատում: Իսկ երբ մեծ զորավարի հանկարծահաս սպանություն առթիվ օրհասական շշուկը տարածվեց արևելյան երկրի (Աղվանքի) վրա, այդ ժամանակ նա սկսեց երգել այբբենական կարգով դասավորված այս ողբը բարյացպարտ Զվանշիրի վրա և ասաց այսպես.

Գ Լ Ո Ւ Յ Ա Ն

ՈՂԲ ԶՎԱՆՇԻՐ ՄԵՍ ԻՇԽԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌՔԻՎ

«Աստվածային խոսքին գիտակ հոգի, հորինի՛ր իմաստով ողբերգական երգեր, որպեսզի սգալի ձայնով, անդադար ողբանք մեր ծանր կորուստի վրա:

Ծանր դժբախտություն պատահեց արևելյան երկրին, և կործանման գույժը հնչեց երկրով մեկ: Քող ազգերն ու ցեղերը լսեն իմ խոսքը և բոլոր հողածիրները ինձ հետ միասին ողբան:

Կենդանի ու հղոր վեմը գլորվեց, և ամբակուռ պարիսպը խորտակվեց: Խոսող աշտարակը տապալվեց, և շինություն պարիսպը հիմքից փորվելով փլվեց:

Մեր խաղաղությունը դառն ողբի փոխվեց, և ավազակային հորդաններ* թափվեցին մեզ վրա, որովհետև մեծասքանչ տերությունը կործանվեց, և հիասքանչ պետության ճառագայթը մարեց:

Մեզ վրա թափվեց անծծքն այն, որը կանխավ սպանում էր Եսայի մարգարեն, որովհետև տերունական խաչի տոնի օրերին մեզ սգի ու դառնագին լացի մեջ նետեցին:

Անդառնալի կորստյան անդունդ փորեցին, որպեսզի բարե-

հույժին խորասուզեն նրա մեջ: Մոլորություն ոգին շնչեց նրանց մեջ, և իզուր տեղը թաքցրին մահվան որոգայթը:

Նա, ինչպես առյուծ, նստել էր իր բնում և լռել, բայց նրանից սարսում էին թշնամիները: Տոհմատերերն ու իշխանները ամբողջ երկուղով ու սիրով հնազանդվում էին նրան:

Նրա համբավը տարածվեց ամբողջ աշխարհով մեկ, և նրա անունը հնչեց աշխարհի շրտ ծագերում, որովհետև նրա հնարագյուտ ուժն ու հանճարեղ իմաստությունը հանդիսավոր ձայնով գովեց տիեզերքը:

Բյուզանդացիների թագավորը ու հարավի իշխանները բուռն տենչանքով ցանկանում էին տեսնել իշխանին, բազմամեծար ուշույններով էին ընդունում նրան ու փառքով պատկերով պատվում էին մեծ հարգանքով:

Անակնկալ շարիքը վրա հասավ մեզ, և անպղչալի մոլորությունը հարվածեց: Մեր գործերով բարկացրինք արարչին, իսկ նա կորուստի մատնեց մեր տերությունն առաջին մարդուն:

Պահապանները հեռու մեկնեցին, և վերին օգնականները հրաժարվեցին նրանից, որովհետև տերը հեռացավ, շար օրը նրան թողեց դաժան մարդկանց սունակոտի դառնալու:

Բանասրիու թշնամի լարեց իր աղեղը և ինչպես սուր սրեց նենգությունը, ծանր խոցոտելով մահը վրա հասցրեց զիշերը, ինչպես Մովսրի²⁰⁰ ցեղի վրա:

Խարդախ մտադրությունը առանձնացրեց ու անողորմ վերքերով վիրավորեց վեհազնին: Հանդուգն էիր աշխարհի բոլոր ազգերի հանդեպ և ծանր խոցում էիր նրանց, որոնք քիչ անհանդուստացնում էին: Իսկ արդ՝ արևը փոխեց իր ծիրը, և քս ժառանգի որդիները հարձակվում են քեզ վրա:

Այն շար ծնունդը, որ մեղսագործ եղավ նրա հանդեպ և այն անօրենը, որ տանջեց նրան, անեծքներով պարուրված թող գնա երկրով ու Կայենի երերումով տարակուսանքի մեջ շրջի:

Թող նրա փախուստի շավիղները կապվեն, և երկնքի թռչունները ճախրեն նրա վրա: Ձորերի ագռավները սլանան նրա վրայով, իսկ վայրի գազանները սպասեն նրան:

Թող Հերովդեսի հուրը առաքվի նրան, և նրանում որդունք ու մկներ գոչանան: Աղիքները կիզող առշորումը թող բորբոք-

* «Կրուկք» այստեղ հարմար գասնք թարգմանել հորդաներ:

Այն նրա մեջ և անմիջապես ուստի նրա անբաժանելի մասը կըլլի
Այն ձեռքը, որ պարզվեց տպանեղաւ արդար, և այն ոտքը,
որ արտեց չքնաղ պատկերը, թող բորբոքեր ուխտի բարբոսու-
մով գոտանան, և նրանց մեջ թող գլխաւն ցեցերը շարակեղ
խոցատու մնով:

Թող թաքնվելով հանգստութուն գտնի դժեկի վշի հովա-
նու տակ, և իժերի ձագերը խայթեն նրան: Քարը օձերի թուր-
ները լցվեն նրա վրա և դաժան ուռուցքով հերձեն նրան:

Խաղաղության մշտարիտ լայտեղն էր նա մեր և փոփոք-
համարը աշխրհները խոտաղեցնող նախապետն էր քաջ միան-
ժիրը, որ փարատում էր բոլոր գերիշների ցատուքը:

Նրա բերանի խոսքերը մարգարտաշար կերպով էին շարա-
հյուսված, և նրա վարքն ու քարքը մարբափայլ էր:

Քնից արթնանում էր ինչպես առշուձների կորոշուքը և
առաջնորդան խրում ու ոչխարների փափուկ միս էր բաժանում:

Մարմնով ննջում էր, բայց հոգու արթնությամբ Արեւի
կառքը քաշությամբ վարում էր աստղերի մեջ՝ իր հետ քեթե-
լով զգոնության ծաղիկը:

Աստվածապաշտության շնորհները հորդահոս շարժումով
իջնում են Հիսուսի կողերի կաթիլներից: Ծաղի նման ծայք
հոգու օրինակով պտորժահամ քաղցրություններից անմահու-
թյան բույր է արտահոսում հոտոտելիքներին:

Ողբերը ինձ համար արդեն հավերժահարսների ու ողբա-
օացների խմբի ողբերից չեն, այլ կսկծագին կոծ են որդիների
մասին, որ անշատված են մնացյալների համար ինչպես մեծա-
ցած քաղաք:

Գտնաբեր շէին այս ժամանակի օրերը, երբ քո ցավալի
մահը տեղի ունեցավ, թող շարիքներով շորանա նա, որ քեզ
չարշարեց:

Քո արեգակը պայծառ և մեղ համար մշտավառ լույս էր
Ո՛հ, ի՛նչ թիպամած խավար գիշեր ու անլույս նյութ էր, որ
քո գեմքը մեղմից ծածկեց և անփարատելի ստվերը նետեց
յուրայիններիդ վրա:

Հիրավի, սողորվում, առգնապահար այրվում եմ, երբ
քարձրագահ աթուր քեզանից թափուր եմ տեսնում:

Քո գեալը միթիարության ճանապարհը փռեց, ուստի

վշտագին վերջերով իմ աշքերը միշտ արտատուքների տղջուր-
ներ կ'ըսեն:

Քո սիրելիները քո սիրով են այրվում, իսկ քո սերը անմո-
ուսց կ'հիշեն. ո՛հ, հրանի անաշարտը խուճկ ծխած լինելիք
քո գերեզմանին:

Մեր թաղը վերացավ, մեր աթուրը վերցվեց, իսկ վաշի-
լությունն ու փառքը քեզ հետ միասին թաղվեցին:

Տիրեթախան ծոցերը կրանանի լեռների հետ քո անցով
հազնում էին. միակ աշքով հյուսիսի հողմի օձիքը բռնած
միջա քեզ են սրնում: Քո ներկայությամբ հոտերի տապարով
նունեղները չեն կուտարտի թագավորների խմբերը քո պատ-
նառով սուղ հազան, հարաների առաքատները խիստ փոշա-
վեցին: Բոլորը ցավում ու դանն արտասվում են: Հյուժված
ստուապում են և ինչպես ձագամեռ հավքը նստում են անա-
պատում:

Շտապում են իրենցից թոթափել այս անարգված փառքը:
Քեզանով նույն ունայնությունը նորից սովորում են, թե ոչ
որ էլ չի կարող այս աշխարհում մնալ:

Քաղցր էր ուրիշ բաներ էլ ստել և միշտ հեծել, բայց ավելի
քաղցր էր քեզ հետ հող մտները:

Գ Լ Ո Ւ Խ Լ Զ

ՎԱՐԱԶ-ՏՐԴԱՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՂԱՎ ԻՇԵԱՆ ԵՎ ԱՍԵՑ ԶՎԱՆԵԾԻ
ՏԵՂԸ. ՀՈՆԵՐ ՎՐԵԹԵՆԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԶՎԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ
ԱՌԹՎ ԵՎ ՎԱՐԱԶ-ՏՐԴԱՏԻ շԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԿԵՔԵԼ ԵՐԱՆՑ ՀԵՑ

Դրանից հետո երբ արամությունն անցավ, սուզը փարատ-
վեց, և ծանր աղետը մի փոքր մոռացվեց, սոճմերի իշխան-
ները, կուսակալները, նահանգների պետերը, մեծամեծները,
նախարարները և երկրի բոլոր իշխանները հավաքվեցին մեծ
արքեպիսկոպոս Եղիազարի մոտ և խորհրդակցեցին Ազվանը
խաղաղության ու շինության մասին: Եվ սրտացավ շրջահայե-
ցությամբ հոգալով երկրի իշխանության մասին՝ համաձայն-
վեցին անմիջապես ավազ քնարի մի ոմն նախարար, որ

մեծարված էր կայսերական պատվով, ստացել էր ապիճյու-
պատ պատրիկոսության աստիճան: Սրա անունն էր Վարազ-
Տրդատ, որ Զվանշիթի եղբայր Վարազ-Պերոժի որդին էր:
Երկրի իշխաններն ու կաթողիկոսը սրտով ու միակամ շտապում
էին մեծ փուլթաշանությամբ գործը գլուխ բերել: Բոլոր մեծա-
մեծները միատեղ կենարար խաչածեղ գրոշակները պարզած,
փողերի ձայներով անունը հռչակելով՝ վերցրին նրան, կանգ-
նեցրին ոսկեկմբյա վահանի վրա, բազմիցս վեր էին թռչը-
նում և ներքողական ճառեր ասում:

Եվ այսպես մեծ ուրախությամբ հանձնեցին նրան հայրե-
նական գահի առաջին իշխանի աթոռը՝ օգնելով ու նպաստելով
նրա նոր իշխանությանը: Սրանից առաջ արդեն քաջ այր Վա-
րազ-Տրդատը իր հզորիմաց հանճարով բոլորի նկատմամբ
մեծ սեր ու բարեկամություն էր արտահայտում. իսկ երբ
իշխանությունն ձեռք բերեց, շնայած որ նրա նախանձորդ
ազգակիցներից ոմանք նրա դեմ շարությամբ լցված էին*,
բայց նա շնորհիվ իր իմաստալից ու քաղցր խոսքերի նվաճեց
և իրեն գրավեց բոլորի սիրտը: Երկայնամիտ հեղությամբ
հնազանդեցրեց երկիրը նրա սովորական ու նախնական իշ-
խանության սահմաններով: Եվ այս ուղղությամբ առաջ գնա-
լով՝ գրավեց հռչակավոր մայրաքաղաք Պարտավը:

Այդ նույն ժամանակ հոների զորավար ու մեծ իշխան
Ալիբիթիթվերը վերցրեց իր բազմաթիվ զորքերը և քաջերի
երկիր Գովգի²⁰¹ դանազան տեղերից նրա մոտ եկած մարդկանց
զենքերով ու զարդերով զինավառված, զորապետներ դրոշակ-
ներով, տեղավորներ, աղեղնավորների ու սպառազինված,
զրահավորված, սաղավարտավոր հեծյալների գնդերով ա-
պատակեցին Աղվանք՝ Կովկաս մեծ լեռան ստորոտներով,
Կապաղակի²⁰² գավառի ավաններով, որպես թե Զվանշիթի
արյան դիմաց վրեժխնդիր են լինում: Իսկ ինքը՝ զորավարը,
իր թիկնապահ զնգով դաշտերում ու հովիտներում ման գալով,
Կուր գետով անցավ Ուտի գավառը: Եվ ահա այստեղ հավա-
քեցին այդ երկրի մարդիկ ու անասունները, ավարեցին ու

* Բնագրի անբեզուն մեռա ունել թարգմանեցինք շարությամբ լցվե՞լ՝
Անուշանը անբեզուն բացատրում է անհամակիր:

գերեցին ամեն ինչ: Իսկ իրենք նորից դարձան ու բնակութուն
հաստատեցին դաշտի կողմերում, Լիփնքի²⁰³ սահմանները
մտաերթը:

Իսկ երբ Աղվանքի իշխան Վարազ-Տրդատը տեսավ զորքի
այդ ահագին քանակությունը, որ ասպատակելով անխնա
ղերում ու քանդում էր ամեն ինչ, տխրեց ու տարակուսանքի
մեջ ընկավ: Ապա մեծ եղիսկոսությամբ Եղիազարին հոների
իշխանի մոտ սպառազմավոր ուղարկեց՝ նրա միջոցով առա-
ջարկելով իր անկեղծ հավատարմությունն ու բարեկամու-
թյունը, որ նրա նկատմամբ տածում է իբրև սիրելի եղբոր,
միաժամանակ հայտնում է, որ իրենք մասնակից չեն եղել
Զվանշիթի սպանությանը, այլ այդ անասելի ոճիրը կատարվել
է մի վատանուն ու շնչին մարդու ձեռքով: Այս ամբողջը Աղ-
վանքի կաթողիկոսը խոսեց հոների մեծամեծների (հյուղական)*
առաջ: Նա ավելացրեց նաև այլ անիմանալի աստվածալին
խոսքեր, որոնք նրան մղեցին դեպի աստծու երկյուղն ու սերը
և նրա միտքը փոխեցին դեպի հաշտությունն ու անքակտելի
սերը: Ապա կաթողիկոսը հոների իշխանին անկեղծ սրտով
թիկունք ու օգնական է դարձնում Վարազ-Տրդատի իշխանու-
թյանը, իսկ նա մեկնում է այնտեղից և անցնում, գնում է
իր երկիրը:

Գ Լ Ո Ւ Յ Լ Է

ՎԱՐԱԶ-ՏՐԴԱՏԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՆԱԶԱՆ ԿՈՂՄԵՐԻՑ
ՍՍՏԻՃԱՆ ՈՒ ՊԱՏԻՎ ՍՍԱՆԱՍՈՒ ՄՍՍԻՆ. ՄԵՄ-ԿՎԵՆՔԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՎԻԹ ՄԱՀՎԱՆ ԵՎ ԻՍՊԱՅԵԼԻ ՄՐԱՆ ՓՈՒԿԱՆՈՐԳԵԼՈՒ
ՄԱՍԻՆ, ՈՐ ՈՒՐԻ ԱՌԱՋՆՈՐԳ ԵՂԱՎ

Այնուհետև աստվածային իշխան Վարազ-Տրդատը օրըս-
տօրև առաջ էր ընթանում իր կառավարման գործում: Սրանից
հետո արաքների հզոր և արքայակերպ իշխանից գերագույն
պատիվ է ընդունում՝ լինելու իշխան արևելքի վրա, կառավա-

* Հիւղական հավանորեն նշանակում է պաշտական հավարական
եղանակութամբ: Անառայնը համարում է հեղինակ բառի հին ձևը, որ սկզբնա-
պես ունեցել է իշխան իմաստը:

րելու Աղվանքի ամբողջ թագավորութունը, Ուտիքի գավառը և բուրբին իր իշխանությանը ենթարկելու՝ մշտաբախ ցնծությամբ հաղթող ու հզոր լինելով իր սահմաններում: Այդ ժամանակներում Մեծ Աղվանքի հայրապետ Դավիթը վախճանվեց, սա բարու համար կույեց ու այս կյանքում բարի անվանվեց, իսկ հանգերձյալում հանդիսակից դարձավ հրեղեններին: Բայց հետո հտոր անհովիվ մնաց, և եկեղեցին սուգի մեջ ընկավ: Այդ ժամանակ Աղվանքի բարեպաշտ իշխանը խորհրդակցեց հովատարի՞մ գորավարի ու կաթողիկոսի հետ՝ բոլոր եպիսկոպոսներով, նախարարներով, որպեսզի շուտափուլեթ հասնեն աստվածային խորհրդի կատարմանը: «Եկե՛ք, — ասում է, — աստծու կողմից ընտրված այս Իսրայելին՝ առաքինազգեստ մարդուն, նշանակենք Մեծկողմանքի գավառի սրբազան առաջնորդ, որպեսզի արարչի խոսքերով նրանց լուսավորի օրենքներ սովորեցնող խոհականությամբ: Իսկ նա թեպետև մի պահ հանձն շտաով, բայց քանի որ իշխանապատ հրամանով ստիպում էին նրան, չհամառեց, չընդդիմացավ, այլ հիշեց առաքելական խոսքը, որ ասում է. «Նա, որ եպիսկոպոսության է զնում, բարի գործի է ձգտում»²⁰⁴: Կամ հիշեց մանկական հասակի իր տեսած վաղեմի երազը՝ Վաղարշապատ քաղաքի սուրբ եկեղեցում:

Դրա համար ձայն բարձրացրեց և ասաց. «Թող աստծու կամքը կատարվի»: Այս արագ թափով իշխանը նրա ետևից նախարարական ավագներից մարդիկ է ուղարկում, որպեսզի նրան շտապ կարգով իշխանի մոտ բերեն: Ահա նրանք գալիս հասնում են Միջնարցափ²⁰⁴ գավառը՝ նրան գտնում են Գլխավանքի իր մենաստանում: Այդ պատճառով թեմական քահանաների ժողով է լինում: Եվ այնտեղից վավերական հրովարտակներով նրանց ճանապարհ են զնում, որոնք գալիս հասնում են Կաթողիկոսի և Աղվանքի իշխանի մոտ: Նրանց են ներկայացնում սրբասուն Իսրայելին՝ կրոնական կարգով զգեստավորված: Սրանք բուրբին ուղարկում են զովասանագիր և հրովարտակներ են առաքում յուրաքանչյուր կողմի գորավարին ու նախարարներին: Կաթողիկոսը նրան պատվելով ձեռնադրում

է Մեծկողմանքի գավառի եպիսկոպոս և մեծ բազմությամբ ու հանձնարարական թղթով ճանապարհ է զնում իր գավառը: Նրանք քաղով նախապես հասնում են եպիսկոպոսանոցը, որը կոչվում էր Տաղձանք²⁰⁴, Մեծաշուք մեծարանքներով ընդունվելով իր աթոռակիցներից, երկրի գլխավորներից և ժողովրդից՝ ափելի լավ էր արտահայտում իր վարդապետութունը, քան իր նախորդների: Պարծանքի խաչի նշանը իր վրա կրելով՝ բազկատարած պաղատանքներ էր մատուցում աստծուն իր երկրի համար, կրոնավորի կյանքով զգաստացած անբողհատ մեծանում էր. շրջում էր իրեն ենթակա բոլոր գավառները: Նրանց ամբապնդում էր քրիստոնեական ուսմունքի շնորհներով, որպեսզի նրանք մնային պատճիրանի պահպանության ուղղափառ հավատի մեջ: Այս ձևով քարոզում էր իր վարդապետութունը ու պայծառանում էր Քրիստոսի սիրով:

Գ Լ Ո Ւ Խ Լ Ը

ՄԵՍ ԻՇԽԱՆ ՎԱՐԱՂ-ՏՐԴԱՆԻ ԿՈՂՄԵՑ ԻՍՐԱԵԼԻ ԵՊԿՈՍՈՍՈՍԻ
ԱՐԲԱՍՏԱՆԻ ԳՈՎԱՌ՝ շԱՅՑ ԻՄԵ շԱՅՐԳՈՒՄՆ ՍԱՀԱԿԻ ԵՎ
ԲԱՐԵՊԱՍՏ ԻՇԽԱՆԻ ՍՈՏ ԱՌԱՔԵԼԸ՝ ՈՒՐԵԿԱՍՏԻԹՅԱՆ շԱՄԼԸ

Հենց այդ ժամանակներում բարեպաշտ իշխան Վարաղ-Տրդատը միտք է հղանում ինչ-որ կարևոր գործով ու բարեկամութուն հաստատելու նպատակով Իսրայել եպիսկոպոսին առաքել հայոց մեծ կաթողիկոսի ու Արարատյան գավառի բարեպաշտ իշխանի մոտ: Այս վերջինները մեծ սիրով հարգում ու ընդառաջ են դուրս գալիս նրան: Հանգիստ տալով նրան շնորհ են անում, որպեսզի նա մի որոշ ժամանակ մնա կենտրոնական երկրում: Այդ ժամանակներում հայոց իշխանը՝ մեծ գորավարը, Դարանաղի²⁰⁵ գավառի Թորգանից Հայաստան՝ Արարատյան գավառ՝ Վաղարշապատ քաղաք էր բերել Քրիստոսին խոստովանող սուրբ Գրիգորի թանկագին մատուցանելը բոլոր ոսկորներով հանգերձ ու դրել էր Նորաշեն եկեղեցում, որը մեծ ներսես էր շինել սուրբ Գրիգորի անունով: Այդ մեծ աղաչանքով Իսրայել եպիսկոպոսը ընկավ կաթողիկոսի և հայոց գորավարի ստաշ, թախանձեց, որ հնարա-

* Ա Տիմոթ., 9, 1:

վորութեան դիպքում կատարեն նրա սրտի փափազն ու խնդիրները: «Տվեք, ասում է, սուրբ Գրիգորի մասունքներից»: Բայց նրանք հանձն չառան, ասելով, թե՛՝ «Ո՛չ մի ժամանակ սուրբ Գրիգորի մասունքները բաժանված չեն, և մենք էլ իրավունք չունենք նրանցից մաս պոկել ու քեզ տալ»:

Այդ ժամանակ նա դիմեց Հեղինե իշխանուհու՝ Մեծ Հայաստանի տիկնոջ օգնությանը, որը հենց Ազգանքից էր. այս պատճառով էլ սա օգնեց նրան: Պարբերաբար վեր էր կենում, գալիս էր կաթողիկոսի մոտ, աղաչում էր նրան՝ կատարելու մասունքների մասին արված խնդրանքը: Նույնպես էլ հայոց զորավարին՝ իր տիրոջն էր համոզում մասունքները տալու, ասելով՝ «Տվե՛ք իմ երկրի և իմ հոր տան Մեծ Գրիգորից հասանելիք բաժինը, կատարեցե՛ք այն եպիսկոպոսի խնդրանքը, որ ուղարկվի է իմ երկրից, որպեսզի կատարվի նրա փափազը, և նա ուրախ սրտով հրաժեշտ տալով՝ հո ուղարկվի ձեր կողմից»: Մարդասեր աստված ներշնչում է նրանց միակամ կերպով տալու Քրիստոսին խոստովանող Մեծ Գրիգորի օրհնաւսույց ծնոտից մի մաս: Նրան պարզեցին ցանկալի գանձը, արքունիքի կողմից շքեղ պատիվներով մեծարվեց, ողջուն ընդունեց, հանձնվեց աստծու շնորհներին և ճանապարհ ընկավ: Լուսընթաց փառքով շատ քիչ տեղեր օթեցանելով՝ առողջությամբ, շափազանց ուրախ, հոգեկան բեկրանքով գալիս-հասնում է իր երկիրը ու բերած սրբությունները դնում է Գլխովանքում՝ իր մենաստանում:

Գ Լ Ո Ւ Լ Ա Լ Թ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐԱԶ-ՏՐԳԱՏ ԻՇԽԱՆԸ ԻՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՉԵՏ
ՆՈՐՉՐԿԱԿՑԱԻԹՅՈՒՆ Է ՈՒՆԵՆՈՒՄ՝ ԽՐԱՑՆԻ ԵՊԻՍԿՈՍՈՍԻՆ
ՈՒՂԱՐԿԱԿՆԻ ԶՈՆԵՐԻ ԵՐԿԻՐԸ ՉԱՇՏՈՒԹՅԱՆ ՉԱՄԱՐ

Այա գոռոզ Մահմադի՝ հարավի Թագավորության վաթսուներկուերորդ տարում խորհրդակցություն տեղի ունեցավ Ազգանքի իշխան Վարազ-Տրդատի համաձայնությամբ այս վերջինի, իր ազգակից նախարարների ու Նղիազար կաթողիկոսի միջև. ասում է. «Ահա այն հարկերը, որ մեզ վրա դրվեցին

արարական դաժան ցեղի կողմից, մեզ շափազանց նեղում ու տարակուսանքի մեջ են գցում: Երկրորդ անասելի աղետը այն է մեզ համար, որ ամեն տարի հոնների զորքերը ասպատակում են մեր երկիրը: Եվ այսպիսով՝ երկու կողմերի թշնամիների բռնության հետևանքով մեր երկիրը ավերվում ու աղքատանում է: Իմ մերձավորնե՛ր ու սիրելիներե՛ր, եկե՛ք մի եպիսկոպոս ընտրենք մեր երկրից մեր խաղաղության համար, որպեսզի գնա և աստծու շնորհիվ երկու աշխարհակաշների տրամադրությունը ուղղի դեպի հաշտություն և անքակտելի բարեկամություն, որպեսզի այսուհետև մեր մտքում նրանց հանդեպ քեն ու թշնամություն չունենանք»:

Եվ երբ այս բանը ընեցին իշխաններն ու նախարարները, անմիջապես ընտրեցին ու մեծ աղաչանքներով ուղարկեցին Մեծկողմանք գավառի իմաստուն ու պարկեշտ եպիսկոպոսին, որի անունն էր Իսրայիլ: Որովհետև կյանքում ողջախո՛հ էր, հոգու իմաստությունը ճառագայթում էր բոլորի վրա և իսկապես սքանչելի էր դառնում՝ փրկելով իր և շատերի հոգիները: Նա կատարեց հնազանդության ու սիրո պատվիրանը, հանձն առավ շուտափույթ ճանապարհ ընկնել ու գնալ հոնների հեռավոր երկիրը: Այա պատրաստեցին, կապեցին նվերներ ու ընծաներ. նույն ձևով նրան ու նրա ուղեկիցներին ճանապարհի ուտելիչներն ու ծախս տվին, և նրանք այնտեղից մեհեկան²⁰⁶ ամսի տասնութին ճանապարհ ընկան: Հանդիստ դուրս գալով Պերոզ-Վավատ քաղաքից՝ հեռացան, անցան Կուր մեծ գետը. Ազգանքի սահմանները կտրեցին-անցան. տասներկու օր գնացին-հասան Լիինքի քաղաքներից մեկը, որտեղ նրան ընդառաջ ելան քաղաքի բոլոր բնակիչներն և ուրախությամբ ընդունեցին, ինչպես վայել է ընդունել եպիսկոպոսին, մանավանդ որ մոտեցել էր աստվածահայտնության տերուհական տոնը: Մտնելով քաղաք՝ իջևանեց և անմիջապես տոնը կատարեց: Այդտեղից գնացին, անցան Ճիդրերի²⁰⁷ երկիրը, որ գտնվում է Մեծ լեռան²⁰⁸ ստորոտում: Այդ ժամանակ ձմեռվա հյուսիսային քամիները անասելի բուք ու մրրիկ բարձրացրին Կովկաս լեռան սարավանդակի մոտ, որտեղ երեք օր արգելափակված մնալով, շկարոզացան աչք բարձրացնել կամ նշմարել անցման ճանապարհը: Որովհետև շափազանց

շատ տանջվեցին, ուստի տարակուսանքի մեջ ընկան սատանայական տակնուվրայություն հետևանքով: Արհայիրքներ ու բռնություններ տեղի ունեցան, սակայն շկարոդացան աստծու մարդուն վախեցնել, որովհետև խաչի նշանը ձեռքն առած՝ բոլորին հրամայում էր ծուներ դնել և նրանց հետ համաժամ էր ընկնում զեպի այն լեռը, որը կոչվում էր Վարդեգրվակ²⁰⁰, Աստվածային խաչի գորությունը և Մեծ եպիսկոպոսի աղոթքներով հողմերը գաղարում են, ու ընուկությունը խաղաղվում է: Եվ այդպես աներկյուղ լեռան կատարով անցնում են: Գրանից հետո երկար ժամանակ ո՛չ արևն էր երևում և ո՛չ աստղերը, իսկ գառնաշունչ եղանակը քիչ ժամանակ շտնեց: Հարկադրված դիմադրելով, հեռանալով, լքված, շարշարված, երկար ժամանակ գնալով հասան վաղեմի թագավորանիստ կայանը, այն տեղը, ուր նահատակվեց Մեծ Գրիգորի թոռ սուրբ Գրիգորիսը՝ Աղվանքի կաթողիկոսը: Ապա մի քանի օրից հետո հասնում են Չորա պահակը, սրը Գերբենդի մոտ է:

Այնտեղ նպաստավոր մեծարանքների արժանանալով բնակիչներից՝ նրանք այդպես երկար ճանապարհ կտրելով եկան հասան Վարաշան²¹⁰ հոյակապ քաղաքը մեծ պատի սկզբում: Հոնաց մեծ իշխանը, նրա գալուստը իմանալով, ողջունով ընդառաջ գնաց, մեծ ուրախությամբ ընդունեց, խոնարհվեց նրա առաջ և, հայրապետական սրբությունը պատիվ անելով, կատարում էր նրա պատվերները: Եվ երբ սուրբ մեծ պատի օրերը պայծառորեն սկսվեցին, բնակիչները մեծ սիրով ընդունեցին նրան, նա ու իր մարդիկ պատիվներ էին ստանում բուրբի կողմից, մանավանդ ավելի բարեխնամ իշխանից ու ազնվական մեծամեծներից: Այդ փայլուն ընդունելությունը և սրբություն նկատմամբ տածած սերը տեսնելով՝ եպիսկոպոսը շափազանց ուրախանում ու մեծապես գոհանում է Քրիստոսի անպատմելի պարգևներից: Եվ այդպես երկար ժամանակ հանդուստնում է տանջալից շարշարանքներից. այնտեղ լուռ է ամբաստանություն ու տեսնում է թշվառացած ցեղի երեսպաշտ կրոնը: Ողբում ու տրամում է անասելի շարիքների ու երկդիմի հավատքի համար այն մարդկանց, որոնք իրենց աստվածապաշտ էին անվանում, մինչդեռ հենց նրանք այդ գորությունից հրաժարվել ու օտարացել էին:

ԻՍՐԱԵԼԸ ԵՎ ԵՎԵՆՈՍԻ ԿՈՂՄԻՑ ՀՈՆԹՐԻՆ ՔՐԻՍՏՈՆԵՍ
ԴԱՐՁԵԼԸ ՎԱՐԴՈՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՆԱՐՀԻՎ ԵՎ ԱՅՍ ՎԵՐ ԶԻՆՆԵՐԻ
ՀՐԱՇՔՈՎ ՔԱՂՅՐՈՒԹՅԱՆՍԵՐ ԵՆՔԵՐԿՎԵԼԸ

Որովհետև սատանայի կերակուր դարձած ծառայաշտ մոլորությունը աղճատված էր այն ժողովուրդը, ուստի, ըստ հյուսիսային ցրտամիտ հիմարության, առասպելահող և ստապանույճ կրոնը՝ հեթանոսական պղտոր պաշտամունքը, մեծ էին կարծում: Նաև որոտընդոտ հրակերպ կայծակների փայլատակումը և եթերքը կիզող ալյուրմեները երբ մարդու կամ որևէ այլ բանի էին դիպում, ձոնելով դրան որևէ բան կամ այդ բանը պաշտելով համարում էին Քվար* աստծուն նվիրված: Նույն ձևով մի վայրագ անճոռնի հսկայի ձխախորով զոհերով պաշտամունք էին մատուցում՝ նրան անվանելով Թանդրիթ խան աստված, որին պարսիկները Ասպանդամա են կոչում: Ամենին ղեկավարող դադափար շունենալով՝ սայթաքում էին բուրբ մոլորությունների ետևից: Չուռնա էին փչում ու թմրուկ էին զարկում դիակների վրա, և դաշունահարության հետքեր, դանակի ցտուճներ այտերին, մարմնի զանազան անդամների վրա արյունահոս կտրվածքներ, մերկանդամ սրահարություններ, դժոխային մի տեսարան, ուր մարտահրապարակի տղամարդ տղամարդու և ջոկ ջոկի ետևից գերեզմանի դուռն էին հասնում**:

Եվ խուռն բազմությունը ըմբշամարտելով միմյանց հետ անառակություն է անում ու ձխարևակ արշավով այս ու այն կողմ ճախրում: Ոմանք սցում ու կոծ էին անում, ոմանք էլ, ըստ իրենց սատանայական սովորության, զվարճանում էին: Խաղեր էին խաղում ու պարեր

* Հստ Հենինգի պիտի լիտ xivar, որ նշանակում է արև, տե՛ս «The history of the caucasian Albanians by Movses Dasxurani», translated by G. F. Dowsett, London, 1961.

** Բառացի նշանակում է գերեզմանների մոտ շարժվել (տես գերեզմանօրն լուծի), մենք հասկանում ենք իբրև դարձվածային արտահայտություն, որ նշանակում է մեռնում են: Ինչ վերաբերում է բնագրի նույնպես բառին, մենք ենթադրաբար թարգմանեցինք Աստուհրապարակ:

բորբոքում՝ իրենց զազրելի գործերով թաղված խավարային ախտերի մեջ և կույր մնացած արարչի լույսից, որովհետև կրակներին ու ջրերին էին զոհ մատուցում, ճանապարհների կուռքերին, լուսնին և այն բոլոր արարածներին, որոնք նրանց աչքում զարմանալի էին թվում, երկրպագում էին: Նույն ձևով տուփական ցանկուլթյամբ անառակութուն անելով, ըստ հեթանոսական վայրենամիտ բարքերի, նրանք հոր կնոջը իրենց կին էին դարձնում, երկու եղբայրներ մի կին էին պահում, զանազան կանայք էին առնում և բազմաթիվ ու անկրոն սովորություններ և կարգեր տնենալով՝ նրանք չէին կարողանում նկատել ու ճանաչել արդարութիւն արեգակը:

Երբ նա (Իսրայելը) լսում ու տեսնում է այդ շար պաշտամունքը, նրանց կամով սովորությունները, գիշեր-ցերեկ ասածուն աղաչում է այդ երկրի փրկութեան համար, թե միգուցե կարողանա դարձի հնար գտնել: Այս նրա հրամանով ժամ է նշանակվում աստվածային գործի համար, և հոնքի ամբողջ նախարարների ազատանին ու ռամիկները հավաքվում են պաշտամունքի երկրպագութեան սուրբ եկեղեցում՝ լսելու աստվածային պատգամներ: Ահուհետև հավաքվելով այնտեղ, տիրոջ տանը՝ իշխանն ու ժողովուրդը ուզում էին ետխկոպոսին լսել ու միմյանց ասում էին. «Սկի՛ք սրանից միխթարութեան խոսքեր լսենք, որովհետև սա քրիստոնեական սուրբ հավատի առաջնորդն է, որ աշխարհին սուրբ հոգու պատգամներն է ավանդում»:

Ապա երբ (Իսրայելը) տեսավ նրանց հոժարամտությունն ու սիրալիք ունկնդրությունը, սկսեց նրանց համար խոսել քրիստոնեական ուսմունքից, ասելով. «Որդիներ՛ք, զարձի՛ք և ճանաչեցե՛ք տեր աստծուն, որպեսզի գթա և ապրեցնի ձեզ, քանի որ նա ինքն է ամեն ինչի տերն ու արարիչը: Այսուհետև հրաժարվեցե՛ք սիրո՞մ պաշտամունքից, արարածներին երկրպագություն մի՛ մատուցէք, որովհետև այդ ամենը սատանայական է և հոգիների կորուսիչ: Այ՛դ որ չի կարող երկու տերերի ծառայել, և ոչ որ չի կարող թե՛ տիրոջ բաժակը ըմպել և թե՛ դեբրի: Հնարավոր չէ ե՛ տիրոջ սեղանից վաչելի, և՛ դեբրի սեղանից: Թող աստված ձեր գիտակցաբար և անգիտակցաբար գործած մեղքերը այլևս չհիշի, այլ ձեզ զցի գիտություն բովի և

արդարութեան խրատի մեջ: Նա, որ ամբողջ տիեզերքն իսկ լուսավորեց աստվածնկալ ավագանով և հեռացրեց մեզն ու մառախուղը հեթանոսական խավարամիտ ժողովուրդներից՝ նրանց վրա ճառագայթելով ճշմարիտ հավատի լույսը, ձեզ ևս կլուսավորի իր շողարձակ շնորհներով, միայն թե ինքներդ ձեզ մոտեցրեք աստծու առաջ աներկյուղ մաքով, սիրով արմատա գցած և ամբացած աստվածորդու փառքով սուրբ երրորդութեանը խոստովանութեամբ հավատացեք: Որովհետև հրեշտակները սրբասաց ծայնով, եսակի խոսքով աղաչակում են ասելով. «Սուրբ, սուրբ, սուրբ է գորութեանների տերը, ամբողջ աշխարհը լի է նրա փառքով»: Տեսնում ես երեք անձերի և միաստվածութեան գորութեանը, ինչպես որ նախապես ընծայելով ավանդեցին ձեզ սրբազան առաքյալներն ու Քրիստոսին խոստովանող Գրիգորիոսը, թե հայր իրենից է, որդին՝ հորից, սուրբ հոգին՝ նրանց էութեանից: Եվ ամբողջ աշխարհը՝ լի է նրա փառքով, այսինքն՝ բոլոր հեթանոսների ներկայութեամբ փրկչական խոսքի ավանտարանի քարոզությունը գորություն ունի, որ լցրեց, տարածվեց տիեզերքում ըստ Սաղմոսի ձայնի, թե՛ «Ամբողջ աշխարհով անցավ նրանց խոսքը, մինչև աշխարհի ծայրերն են հասնում նրա խոսքերը»*:

Ահավասիկ այսօր տեսնում ենք, որ ձեր մեջ է թագավորում աստվածային խոսքը և բազմաբեղուն օրանք ծավալվելով արգասավորվում է ձեր սրտերի անդաստաններում. հմուտ մշակների ձեռքով բերք է բերում՝ մեկին հարյուր, մեկին՝ վաթսուս, մեկին՝ երեսուս**:

Արդ՝ երբ ձեր մեջ այցբան՝ բազմապրազություն կա, ի՞նչ պետք ունեք մահաափուլու խուսնին մտցնելու ձեր խելացի ու ծաղկազարդված մտքի անդաստանը: Զգիտե՛ք, որ մեր նախահայր Ադամը սրա պատճառով գրախույց դուրս եկավ և փշաբեր ու տատակածին երկիրը ժառանգեց: Նրան ամբաստանում է նաև առաքյալը, ասելով, թե երբ

* Տե՛ս Սաղմոս, ԺԷ, 5:

** Տե՛ս Սաղմոս, ԺԸ, 9:

*** Տե՛ս Լուկա, Գ, 8, 20:

անօրեն իշխանը աստվածանա կամեցավ, ձեռքը մեկնեց ու բոլոր մարդկանց մեղքի մեջ գցեց: Նա, հախանձելով նախասեղծին (Ազամին) տրվող պատվին, նրան մղեց հակառակության մոլորությունը, նենգությունը հրապուրեց անօրեն Կայինին՝ սպանելու եղբորը: Այդ սպանության պատճառով բոլոր մարմնավոր ախտերի, տառանումների ու անեծքի սերմերի հայր եղավ ինքը և իր թշվառ ցեղը: Այդպես էլ ասում է Մենդոց գրքում, թե Ղամեքը իր համար երկու կին առավ, թե Ղամեքի որդի Հորազը ստեղծեց երգերն ու քնարները, մանավանդ փողերն ու տավիղները, թմբուկները և բոլոր երաժշտական ձայները, որոնք ստեղծում են կապալաշուտություն և հորդորում իդամու ախտերը, ինչպես որ նաբուզգոնոսորը այն ձայներով հրավիրելով տասնմեկ խելահեղ կաճառները՝ կապալաշուտության էր կանչում, զոհեր էր ձոնում հսկա սպիկուտ արձանին. և նվիրական տոնահանդես էր լինում նրա համար: Տեոնո՞ւմ ես Կայինի ցեղի անսահման շարությունը: Ինչպես որ սպանությունը սատանայից էր, նույնպես էլ երկու կին առնելը և գաղնավոր նվագներ հորինելը նույն բանասարկուի սովորեցնելուց առաջացավ, որոնք անմիջապես շնություն և ալլանդակ մտքերի մեջ թաղվելով, խառնակվեցին Անթլան²¹¹ ցեղի նզովչալ դուստրերի հետ, իսկ աստված բարի խոստումների փոխարեն նրանց սելարկեց ջրհեղեղը և աշխարհի կործանումը (վեբը): Եվ քանի որ Նուր արդարացած սուհմից այն ցեղի մեջ անմեղ գտնվեց շնորհիվ իր արդարացի սրբություն, աստծու հրամանով յուրաքանչեքի հետ միասին ջրակործան պատուհասից պահպեց: Այդպես հարգելի ու թանկագին են հավատքն ու սրբությունը:

Ահա Քանանն²¹² էլ անիծվեց Քամի²¹³ ծաղրական հանդրդնություն պատճառով ըստ Մենդոց գրքի խոսքի, թե՛ «Թող անիծվի մահուկ Քանանը և դատնա իր եղբայրների ժառանգ»: Մենք տեսնում ենք, որ նրա ցեղից դուրս է գալիս Նեբրովթ²¹⁴ հսկան, որ դիվական կախարհությունը բոլոր ցեղերին հրապուրում է քարակարկառ աշտարակը շինելու, իսկ ինքը ամբարտալանանությունը իր հաղթանդամ տեսքի ու հսկայազոր

մեծություն պատճառով թազավորում էր բոլորի վրա, ինչպես որ գրված է. «Թե նրա թազավորության սկիզբ եղավ Բարելոնում»*: Նաև աշխարհաշին աշտարակի կործանումից ու յիզուների խառնումից հետո էլ, մենք ումանց ժամանակագիր պատմությունից իմացանք, թե Նեբրովթը ինքը իրեն աստվածներին նմանեցնելով, գոռոզանում ու հպարտանում է անբան, որ մինչև անգամ հմուտ քանդակագործների հրամարում է, որ արծաթի կամ պղնձի վրա իր պատկերը սպիկուրը նկարներով քանդակեն, և իր քանդակին անուն է դնում: Բաղմաթիվ ցեղեր մոլորված նվիրական ձոներով գոհ էին մատուցում այդ պատկերի առաջ, ինչպես հիմա տեսնում ենք ձեզ, որ անհաստատ և առասպելամոլ մրցանքով այս ու այն կողմ եք հանում անկոխ ճանապարհով կախարհ վհուկների, գեամակոշ զուշակների խաբուությունը և ինչ-որ Ասպանդիատի²¹⁵ ստեղի, վայրագ մի հսկայի, այլոս ձիով գոհ եք մատուցում: Իսկ այդ բանը չեք կարողանում իմանալ, թե անմարտը բաներ սիրույր ինչպե՞ս կարող է սուրբ լինել: Փանի որ, ինչպես գահարաններն անմարտը ու պիղծ են, այնպես էլ աստծու սույն պարշիտի ու պիղծ են այն բոլոր մարդիկ, որ Ասպանդիատին սրաշտամուներ են մատուցում, ըստ այն գրածի, թե՛ «Ամեն անօրեն տիրույ առաջ պիղծ է և արդարի հետ չի կարող ապարդակից լինել»*: Այդպես էլ երկնքից արտափայլող կայծակներին, որ որոտման ձայնից փայլատակում են, աստված կոչելով՝ փրկիչ եք անվանում: Եվ Գուբ, ո՞վ վայրենի խելորներ, ինչպես չեք իմանում, որ վեց ամսվա ընթացքում, երբ ձմեռվա ցրտերն ու սառնամանիքներն են փշում, ո՞ւր են գնում և դադարում ամպերից առաջ եկած փայլատակումներն ու որոտման ձայները: ԶԷ՞ որ մեր արարիչ աստծու ակնարկելով են փայլատակում ու նրա հրամանով դաշարում են և չեն համարձակվում ձեռն ժամանակ հանդես գալ: Գրանով էլ պարզ է, որ աստվածների չեն դրանք, այլ արարիչ աստծու ստեղծվածը են: Եվ դուք չափազանց մոլորված եք, երբ չեք բանում ամբարտաք, ըստ սրբ՝ ձեյն աստվածները, որոնք երկինքն

Մենդոց, Ժ, 10:

Ստեղծ, Գ, 32:

* Մենդ. Թ, 25—27:

ու երկիրը շին ստեղծել, թող կորչեն երկրից*»։ Բայց դուք իմացեք ու տեսեք, թե տեր աստված նա է, որ ինքնությամբ միայն է, և նրանից առաջ ոչ ոք չկա։ Ինքն է բոլոր նրանց արարիչը, որոնք երևում են, և որոնք շին երևում, և միաժին որդին է աստված, որ հորից է ծնված, և սուրբ հոգին, որ նրանց էությունից է, որոնցով և աշխարհը ստեղծվեց։ Այսուհետև դե՛ն նետեցեք հին մոլորությունը, ապականված կապաշտությունը ու նորոգվեցեք ձեր հոգու նորոգումով, որպեսզի յավը ընտրեք։ Որովհետև Հիսուս Քրիստոսը այս աշխարհը եկավ մեղավորներին փրկելու, ուստի եկեք, դարձեք դեպի նա ապաշխարության միջոցով։ Արեդակին ու լուսնին մի՛ երկրպագեք, այլ աստծուն երկրպագություն մատուցեք, որ ստեղծել է արեգակն ու լուսինը, երկինքն ու երկիրը և ծովն ու այն ամենը, որոնք գտնվում են երկնքում ու երկրում։ Որովհետև նրանք, որ արեգակին ու լուսնին երկրպագում են, անշեշ հուրն է նրանց բաժինը։ Իսկ նրանք, որոնք շրերին են զոհ մատուցում, կիջնեն շատ շրերի մեջ, ինչպես քարեր։ Իսկ նրանք, որ սաղարթավոր ծառերին են ձոնում՝ նրանց նվերներ մատուցելով, Աստվածաշունչը դրանց մասին այսպես է ասում, թե՝ «Կրակ կվառվի զաշտի բոլոր փայտերի վրա և կուտի բոլոր ամբարիշտներին ու չի մարի**»։ Եվ նրանք, որոնք ոսկի կամ արծաթ վիշապ օձի պատկերն են կրում իրենց վրա, դրանց մասին Աստվածաշունչը ասում է. «Նրանց արծաթն ու ոսկին չի կարողանա նրանց փրկել տիրոջ ցասման օրը, տիրոջ, որ ի գորու է դիմադարձ մեղավորների հալիտանական տանջանքների ու գհհների ծանր րեռները վերցնել, մեղավորներ, որոնք իբրև հեթանոսներ կյինեն անհավատ»։ Այս և սրանից ավելի շատ բան խոսեց աստծու մեծ քահանայապետ Իսրայելը։

* Եսեմիա, Ժ, 11:

** Եսեմիա, է, 20:

ԻՐԱՆԵՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԻ ԶՈՅՈՎ ՀՈՆԵՐԻ՝ ՔՐԻՍՏՈՍԻՆ
ՀԱՎԱՏԱԼԸ, ԶՈՂԱՐԱՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ ԵՎ
ՔՐԻՍՏՈՍԻ ԵՍՁԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Որովհետև մեծագահ բարեմիտ իշխան Ալեքիլութվերը մեծամեծներով ու աշխարհախումբ բանակով խիստ ոգևորված էր աստծու մարդու խոսքերի ունկնդրությամբ, և նրանք հանուշքով լսում էին նրա ծագկազարդ վարդապետությունն ու քաղցրուսույց խրատը, ուստի փառաբանում էին աստծուն և ասում. «Անրդ՝ իսկությամբ հավատում ենք, որ տերը սրա միջոցով մեզ ուղարկեց իր շնորհների մխիթարությունը, որպեսզի մեզ ազատի խավարային գործերից ու սատանայական ամեն ընթացքից»։

Այս այնուհետև մխիթարությամբ հնազանդվեցին Քրիստոսի լծի ծառայությանը, անկեղծ կերպով, սրբությամբ ու պարկեշտությամբ իրենց զարդարում էին զատկի պահքին, պասով ու աղօթքներով գիշեր-ցերեկ հոգևոր նախանձախնդրությամբ ամեն մարդ իր ընկերոջից ավելի շտապում էր սուրբ եկեղեցուն երկրպագելու՝ մոռանալով նախկին օրկրամուրհան սովորությունը, որը հայիսկոպսոս լուսաառ խրատների շնորհներով նրանց մաքից մաքրեց։ Անմիջապես հնազանդվելով սուրբ հայիսկոպոսի հրամանին՝ աստվածասեր իշխանը շտապ կերպով հանձն է առնում իր մերձակներով տարեց-տարի մեծ պասը սրբությամբ կատարել, որովհետև ինքը չափազանց բարեմիտ մարդ էր։ Անմիջապես լինում է աստվածային պատվիրանի հրամանակատար. ինքը բարեպաշտ դասալով հայածում է անհավատներին։

Այսպես հավատարով լուսափայլ վարդապետությանը՝ նա օրըստօրի պայծառանում է Քրիստոսի սիրով, սուրբ հավատի ցանկալի հյուրընկալ լինելով։ Այս երկրի ծնունդ լինելուց դառնում է աստծու շնորհների որդի և կենարարի կյանքի մերձավորը։ Եվ ինքն էլ իր ուժով ու զորեզությամբ քաջ ու անվանի է դառնում պատերազմների մեջ (ինչպես հույների լիմուփական ազգը հզոր է երևում ամենքի մոտ), քաջության

հոյակապ անուն է ժառանգում, բազմաթիվ քաշադործու-
թյուններ է անում նաև Թուրքեստանում²¹⁶ խազր խաքանի
մոտ: Դրա համար խաքանը նրա սիրով տարված իր դուստրը
նրան կնուծյան է տալիս, փակ ինքը, փիթիվերուծյան տիտղոս
ունենալով, փառավորվում է երեք երկրում, որովհետև եպիս-
կոպոսի չուսավոր վարդապետությունից իբրև պարծանքի
պսակ ընդունում է խրատը: Աստիճանաբար ջանում է արգելել
մեռելիների վրա տեղի ունեցող խելագար լացը և դիվական
սրակծությունը՝ զարշնչի ու պիղծ Կամարելով հայրենական
պաշտամունքը, ուխտում է ամենքի մոտ Ասպանդիատի զո-
հարանները և այլ աստվածների նվիրարերումները խափանել
ու պաշտել կենդանի աստծուն, երկնքի և երկրի արարչին,
միաժին որդուն ու սրանց համազոր հոգին: Զարիթների բոլոր
մնացորդները իր մտքից հեռացնելով՝ իբրև ծնված մանուկ
որգի փափագ էր տածում անարատ կաթին: Զանազան տեղե-
րում եկեղեցիներ էր շինում ու բարձրացնում էր աստծու
քահանաների պատիվը: Եվ քանի որ սաղարթախիտ, շատ,
բարձր կաղնի ծառերից, որոնք ձոնված էին զարշնչի Ասպան-
դիատին՝ սրան զո՛հ մատուցելու ձիրով, որոնց արյունը թա-
փում էին ծառերին, իսկ գլուխն ու կաշին պցում էին ծառերի
ճյուղերի վրա, ուտաի եպիսկոպոսը հրամայում է կտրել նրան-
ցից այն մեկը, որ գլուխն ու մայրն էր սնտաի աստվածների
անվան ձոնված բոլոր բարձր ծառերի, որը հոների երկրում
պաշտում էին բոլոր իշխաններն ու ազատները շատ շատերի
հետ միասին, որովհետև այդ ծառը համարում էին աստված-
ների փրկիչ ու կեցուցիչ և բոլոր բարիքների սյուիչ: Երբ լսում
են, թե (եպիսկոպոսը) հրամայում է կտրել դյաւազազունների
հսկայապարզև ծառը, որով գայթակղվել և կործանվել էին
բոլորը՝ կախարդները, գուշակները, վհուկները, քրմապետ-
ները ռամիկների հետ միասին ազմուկ են բարձրացնում,
կուրծք են ծեծում, բարձր ձայնով դիմում են հոների իշխանին
ու երկրի մեծամեծներին և ասում, թե՛ «Ինչպե՛ս կարող եք,
ինչպե՛ս եք գատում ու մտածում, այդպիսի բան անել, այ-
սինքն՝ կտրել այն ծառը, զա մեր հակառակորդը և մեր աստ-
վածների թշնամին է ասում ձեզ: Եվ հապա ինչու՞ եք լսում
նրան ու քանդում, ավերում. կործանում մեր մեհյանների

բազինները, որոնք ձեր հայրերը կանգնեցրին և թագավորները,
իշխաններն ու մեր երկիրը ամբողջովի՛ն պաշտեցին մինչև այժմ
և մեհյանների նույն աստվածներից ու նվեր ստացած ծառերից
ստացան բարիքների պարգևներ, երկրի մարդաշատություն,
և դուք զորավոր ու հաղթող եղաք ձեր թշնամիների դեմ մղված
պատերազմներում: Արդ՝ դուք որան ինչ-որ բան եք համա-
րում, լսում եք դրա խոսքին ու իշխանություն եք տալիս դրան
այդ անհյու՛ ավերելու, քանդելու ձեր աստվածների մեհյան-
ները: ԶԷ՝ որ երբ պաշտում, զոհեր ու նվերներ էիք մատու-
ցում ծառերի առջև հանուն հսկայազոր քաջ Ասպանդիատի,
ինչ բարիքներ որ խնդրում էիք, առնում ու ստանում էիք:
Հիվանդներին առողջացնում էր, շքավորներին ու աղքատ-
ներին հարստացնում էր, արևակեզ երաշտների ու տոթա-
խառն շոգերի ժամանակ նրանց զորությունը ձեզ համար
անձրև էիք բերում, որ խորշակի տապը զովացնում, բույսերն
ու տունկերը կանաչեցնում և պտուղները լցնում ու հասցը-
նում էր իբրև ձեզ համար վայելչություն և կերակուր: Նույնպես
և սաստիկ անձրևներից, ամպերի, եթերական փայլակնա-
ցայտ եղանակների ամպրոպային մոլեգնությունից ձեզ հա-
մար խաղաղություն էիք ստանում:

Բայց այժմ թեև դրա մուրեցնող խոսքերին հավատում
էլ եք և պաշտում այն աստծուն, որը դա է քարոզում ձեզ, սա-
կայն ձեր բուն աստվածները, որոնց ձեր նախնիներն ու դուք
պաշտեցիք, շպետք է թողնեք, ուրանաք, դեն նետեք և մատ-
ներդ դրա ձեռքը, որ ոտքերի տակ պցի ու փշրի: Այլ մեր աստ-
վածները նույնպես պաշտեցեք, որպեսզի սրամտելով չբար-
կանան ու մեր երկիրը մեծամեծ և ծանր հարվածներով շպատ-
ծեն: Այլև ո՞վ կհամարձակվի նույնիսկ մտանալ, շնդհուպ
մերձենալ այն վայրին, որտեղ հսկայազոր Սպանդիատի մեհ-
յաններն ու բազիններն են շինված, հաստատված. կամ ս՞վ
կմոտենա այն գեղեցիկ աճած ծառին, որ այս երկիրը պահողն
ու ապրեցնողն է: ԶԷ՝ որ նրանք, որոնք անդիտությունը այն
ժառի ընկած տերևներից և կամ փայտից վերցնում, օգտագոր-
ծում են իրենց կարիքների համար, ծանր վերքերով, այսա-
հարուժյամբ, նաև մահվամբ իսկ պատժում էր նրանց, ոչքե-
լացնում էր և նրանք սուունն ու ցեղը՝ Եվ արդ՝ նա կարո՞ղ է

մտտե՛նալ ու կտրե՛լ դա և կամ ավերել մեր աստվածների մեհ-
յանները: Արդ՝ մենք մի բան միայն գիտենք, և թե՛ դա համա-
ռեղիվ պնդի ու մոտ զնա նրանց, կայստովի ծանր ցավերով:
այլև կյանքից իսկ կզրկի նրան:

Այդ ժամանակ հոների իշխանը պատասխանեց գուշակնե-
րին, կախարհներին, վհուկներին, բազինների ու ծառերի սպա-
սավորներին և ասաց. «Մենք համաձայնվելով հավատացինք
այս մարդուն և պաշտում ու երկրպագում ենք այն աստծուն,
որը դա է քարոզում մեզ. և չեք արգելի դրան մեհյանները
ավերելուց ու քանդելուց, ծառք արմատախիլ անելուց ու
կրակի մեջ այրելուց: Արդ՝ եթե դուք ի վիճակի եք բազին-
ներով, մեհյաններով, ձուլած ծառերով վախեցնել դրան և
կամ ծանր ցավի ու հիվանդության մեջ նետել, կամ մահ բե-
րել դրան, ձեզ կհավատանք, կորոշենք նորից շինել ու պաշտել
մեհյանները, բազիններն ու քանդակագործված պատկերները,
և կերկրպագենք ծառերին, կմատուցենք զոհեր ու նվերներ,
ինչպես մինչև այժմ: Իսկ եթե դուք չեք կարող պատժել դրան,
ու վախեցնել, և դա քանդի բազիններն ու մեհյանները, կտրի
ծառերն ու կրակում այրի, և դրան ոչ ցավեր պատահեն, ոչ
էլ մահ, մենք նույնպես համաձայնվելով կհավատանք դրան
ու կհամարենք, որ դա աստծուց առաքվեց մեզ, և կերկրպա-
գենք մի աստծու, որ երկինքն ու երկիրը, արեգակն ու լու-
սինք և աստղերը ստեղծեց, իսկ ձեզ կապած ոտքերով ու ձեռ-
քերով կհանձնեմ դրան, որ նույն ծառերի ու մեհյանների տակ
ձեզ այրի:

Այդ ժամանակ Ա. Թրոդիտեի²¹⁷ գուշակները, կախարհները
և վհուկները մոլի կախարհությամբ սկսեցին դուրթութուն
անել ստապաճուճ զետնակոչության միջոցով՝ հորինելով
ինչ-որ կախարհախոսություններ ու բարբաջանքներ, բայց
իրենց սուտ ու մուլար հնարանքներով ոչինչ չկարողացան
անել: Սրանից առաջ մարդկանց կապում էին անհայտ կապանք-
ներով և ծանր ցավեր էին զցում նրանց վրա՝ սատանաներ
ուղարկելով նրանց մեջ. դրանից հետո ստապատիր խոսքե-
րով քարոզում էին նրանց, թե՛ «Դուք պետք է զոհեր ու նվեր-
ներ մատուցեիք մեհյաններին ու ծառերին, բայց չեք մատու-
ցել. այդ պատճառով մեր մեծ աստվածներից պատիժ հասավ

ձեզ: Ուրեմն՝ այժմ վերցրեք զոհեր ու նվերներ և մատուցեք
ծառերի ու մեհյանների առաջ, ուստի կազատվեք այդ ցավե-
րից ու հարվածներից: Եվ նախապես նրանց սարսափեցնե-
լու համար, ինչպես որ նրանք ասում էին, այդպես էլ անում
ու կատարում էր սատանան: Այլև երբեմն երևակայական ու
ցնորական բաներով սաստիկ անձրևներ էին ցույց տալիս,
երբեմն էլ հրաշտներով ցամաքեցնում էին հողը դիվահնար
ու սատանայական մոլորություններով: Այնուամենայնիվ, գայ-
թակղում ու կործանում էին նրանց երկիրը, որովհետև իրենք
մոլորված էին ու մոլորեցնում էին տատանվողներին:

Բայց այն ժամանակ այս բաներից ոչ մեկը չկարողացան
գործադրել և կիրառել ու զարհուրեցնել աստծու մարդուն և
հաղթել նրան, որովհետև սուրբ խաչի նշանով կապվեցին-
կապվեցին նրանց ամբողջ գորությունները:

Ապա սկսեց խոսել ու ասել սուրբ օրհնասուտյց եպիս-
կոպոսը հոների իշխաններին ու մեծամեծներին, թե՛ «Ես չեմ
վախենում ու սարսափում կամ մտածում դրանց զրախոսու-
թյունների մասին, որովհետև դրանք հենց աստծու ճշմարիտ
կյանքից հուսակտուր են և կամենում են դիվապաշտական
կախարհությամբ ինձ, ինչպես և մարդկանցից այլ հիմար-
ների վախեցնել: Ոչ էլ մեհյանների շատ բարձր ծառերի մա-
սին եմ մտածում ու նրանցից վախենում, որոնք իմ առջև
զանազան կերպարանքներ են ընդունում. այլ ես ձեր-ամեն-
քի առաջ բացարձակ ու աներկյուղ գործում եմ՝ հուսալով
Քրիստոսի սուրբ խաչի շնորհներին: Եվ ձեր սրտից կասկա-
ծանքները ու այդ ծառապաշտ մոլորությունը վերացնում եմ,
որոնք բացարձակ ոչինչ են և շար կամ բարի բան չեն կարող
անել, ո՛չ իրենց սպասավորներին կարող են պատվել և ո՛չ
էլ իրենց թշնամութուն անողներին կարող են անարգել, այս
բանը այժմ դուք կտեսնեք ձեր աչքերով համբ կուռքի նկատ-
մամբ, թե՛ ինչպես կիշրվի իմ ձեռքերով և զետին թափվելով
կտրորվի ամբողջ երկրի ոտքի տակ»:

Այդ ժամանակ եպիսկոպոսը հրամայում է քահանաներին
կացիններ վերցնել, ծուճը դնել ու աղոթել և դիմել աստծուն
այս սաղմոսով. «Թող վեր կենա աստված, և ցրիվ լինեն նրա
բուրբ թշնամիները. թող փախչեն նրա ստեղծիչները նրա երե-

սիւ, օ՛ր Եղ՛ ասպա խաչակներեց բառօր ծառերի վրա, որ շրանք ձուսել էին գարշելի Ասպանգրաստի անվանը: Եվ քահանաները միասին ներս գնալով կտրկցին ծառերը. նուէն ժամին հրամայեց ծառերը բերել Վարաշան²³⁸ քաղաքը: Իր մոտ կտնչեց քաղաքի հմուտ հյուաններից և նրանց հրամայեց այն (ծառը) հավասարաշափ, բոլորաձև խաչ պատրաստել և կառուցվածքով նկարազարդ խաչի վրա տեսակ-տեսակ պատկերներ ամրացրեց ու սոսնձեց՝ ամբողջովին ծածկելով գեղեցիկ նկարի նմանահանութեամբ ճշգրտեց, վերից մինչև վար համահման ներկերով ներկեց: Նուէն ձևով էլ աչ կողմից ավելի գեղեցիկ խաչեր մեկը մյուսի ետևից վերից վար շարելով, ամրացրեց հաստ դամկերով. խաչի ներքեում երկփեղկանի քանդակապարզ, շուշանաձև, քառակուսի մի դռնակ թողեց, որի մեջ գտնվում էր մի արծաթյա խաչ, որ մասնատված էր տերունական խաչից:

Այս ձևով կարգավորեց, հարմարեցրեց և շքնաղ ու հրաշալի գեղեցկութեամբ այն կանգնեցրեց իբրև ուխտի ու պղծութի վայր արքունական դռան արևելյան կողմը և ասաց. «Այս ամենակեցուց խաչի առջև երկրպագեցե՛ք ձեզ ստեղծող տիրոջը. որովհետև դուք սովոր էիք երկրպագել այդ ծառին ցնորական դատողութեամբ, այժմ պարզ ու ընտանի կերպով երկրպագեցե՛ք այդ խաչին և աստծու անտեսանելի պատկերին, որովհետև ուտում ու խմում էիք անասուն գոհերի միսն ու արյունը, և ինչ որ դեներին էր, ծառերի առաջ էիք մատուցում: Իրա համար փոխանակ գոհանվեք ծառերի՝ իր խաչը կանգնեցրեց տիեզերքի մեջ և փոխանակ գոհերի արյունների իր արյունը տվեց մեր ամենքին քավութեան համար: Եվ ևս դիտեմ, ինչ որ անում եք, անգիտութեամբ եք անում: Բայց արդ՝ սրանից հետո ձեզ մտեցրեք աստծու շնորհների աթոռին, թոթափեցեք հետո ձեր անօրենութեան շարիքների ախտերը և դուք արժանի կլինեք ձեր անձի վրա հագնելու փառքի լույսի պատմունձանք»:

Իսկ հոների բարեպաշտ իշխանը երբ մեծամեծների հետ միասին լսեց այս, ոգևորվեց աստծու սիրով ու երկյուզով: Այն էլ տեսավ, որ գուշակներն ասում էին, թե դա մեհյանների

ծառերի կողմից կպատժվի, ծանր ցավերով կբռնվի ու կմեռնի, բայց սրանցից նրան ոչ մի շար բան չպատահեց, ընդհակառակն, ավելի ու ավելի պայծառանում, զվարթանում և ուժեղանում էր Քրիստոսին ծառայելու մեջ: Իսկ նրանք ավելի էին ամրապնդվում հավատքի մեջ և լսում էին նրա քարոզի խոսքերը: Ապա այդ ժամանակ խիստ իշխանութեամբ հրաման է տալիս բանել, ձեռքերն ու ոտքերը կապել կախարդների սատանայակիր ու դիվամոլ ցեղի՝ քրմապետների հետ միասին ու բերել աստծո մարդու առջև. և բերում, հանձնում է նրա ձեռքը: Իսկ նա հրամայում է մի մասին Ջանապարհների անցումներում ու փողոցների էջք ու մուտքերում կրակը նետել՝ ցուցադրելու կախարդութեան փուշ զորութունը, իսկ ոմանց էլ բանտարկում է և երկիրը ազատում փուշ կրոնի պաշտամունքից ու հնազանդեցնում է Քրիստոսի ծառայության ամենաթեթև լծին: Հրամայում է սրկել ու առնել նրանց վրա նղած հեթանոսական ոսկյա ձուլածո պարդերը, իսկ ինքը յուր ձեռքերով շարդում ու սրանք էլ է վերածում տերունական խաչի նշանի: Այսպես ու այս օրինակով ամենքին ցույց է տալիս իր աստվածապաշտութունը:

Այս ամբողջ կարգը ստեղծվեց մեծ պատի մեջ նաև հոների արքունական բյուրավոր բանակում, ու այս ամենը կազմվեց, պատրաստվեց տեղ աստծու կամքով, եպիսկոպոսի ձեռքով, ուրբ հոգու ազդեցութեամբ. սրով ծավալվում էին Քրիստոսի փառքի անպատմելի պարգևների շնորհները: Իսկ երբ պատի արփիափայլ լույսի ծագումը (զատիկը) հասավ, զբր-մապետներից ու կախարդ գուշակների գլխավորներից շատերը դեռևս դաժան կապանքների մեջ էին ընկած: Ապա Իլուսիվոր իշխանի համաձայնութեամբ հավաքվեցին բոլոր քաղաքացիք, հրաման եղավ հրապարակ կազմել ու սույան բանալ երկու կողմերին տրվեց իրավունք պաշքարի մեջ մտնելու սովարախիտ քաղմութեան ներկայութեամբ: Եպիսկոպոսը ըսկրսեց Աստվածաշնչի վարդապետական խոսքը գործադրել և սաստիկ հանդիմանում էր նրանց, նախատինքի ու սյարսավանքի խոսքերով խեղդում: Զրապաշտ ու թշվառական քուրմերը ամոթով մնացին տերունական խաչից, որը իր ձեռքին լանած էր եպիսկոպոսը. նրանք վախենում, լեզապատառ էին

* Սաղմ., 41, 2.

լինում: Եվ հենց իրենք իրենց անարդեցին, խոստովանեցին իրենց հանցանքները ու եկան ճշմարիտ հավատի: Բոլորին կորստի մատնող բախտաքվեները տվին եպիսկոպոսի ձեռքը ու կրակի մեջ ոչնչացրին. սուրբ ավազանի միջոցով վերստին արժանի եղան ծնունդի:

Իսկ երբ հոնների իշխանը տեսավ այդ բանը, ամբողջ բազմության հետ միասին ալիլի հաստատվեցին Քրիստոսի հավատքի սիրտ մեջ և հեռացան սուտ ու փուտ պիղծ պաշտամունքից, որովհետև նորոգազարդ խաչի տոնի օրը, որը (խաչը) եպիսկոպոսը կանգնեցրել էր արքունական պալատի մոտ, իշխանը և բոլոր մեծամեծները զահարեցին մեծ կատարեցին: Երբ խաչի առջև նվիրաբերությունների վրա քահանաները կամենում էին օրհնաբանություններ երգել, եպիսկոպոսը ասաց իշխանին. «Ահա աստծու հանդեպ ունեցած քո սիրտ խոստովանքը այսօր հատուցիր տիրոջը և նրան հաշտեցրու ձեզ հետ՝ հեռացնելով ձեզանից անօրենությունը, որպեսզի սրանից հետո խոչընդոտ չլինի քո ոտքերի առաջ. մանավանդ որ այս քրմապետներին սուրբ հոգին այս անգամ փորձում է. դրանով դուք ես կատարյալ կդառնաք, ինչպես որ ձեր երկնավոր հայրը կատարյալ է: Արդ՝ համաձայնվեցեք այս խոսքին. նախ այս նշանավոր օրը որոտընդոստ խալամների* գերեզմանները, որ կոչվում են Դարբունանդ, պետք է այրվեն դրանց պաշտող քրմապետների ձեռքով, որոնք պիտի զնան անիծելով անիծեն, ապա այրեն, նրանից հետո մկրավեն ու կերակուր ճաշակեն»:

Երբ հոնների բարեպաշտ իշխանը այս լսեց, անմիջապես նրա ձեռքը հանձնեց՝ քանդելու մեհյանները: Այդ ժամանակ եպիսկոպոսը և իշխանը ուղարկեցին Մովսեսին, որը հմուտ էր արհեստի մեջ, այլ քահանաների հետ միասին, որպեսզի քանդեն ու այրեն մեհյանները. սրանց գործակից դարձան նաև քրմապետների խմբերը և, դիպական պղծանոցները բոլորը

* Զավա բառը Առձեռն բառարանը թարգմանում է խալամ, որ նշանակում է ձիու գանդ: Մենք այդ բացատրությունը ճիշտ ենք համարում, որովհետև հոնները ծառերին ձիեր էին զոհարեցում՝ գանգերը ծառերից կախելով, ապա դրանք թաղում և շիրիմներ էին պատաստում:

միասին հրդեհելով, ոչնչացրին: Ինքը՝ եպիսկոպոսը, վերկացավ մի բարձր տեղ կուռքերի հանդեպ ծուկը դրեց, խաչակնքեց, և ապա բարձրացավ մի ուժգին հողմ, սաստկապես վրա հասավ ու վառեց բարձր մեհյանները և զոհարանների խալամները զազրելի մորթիների հետ միասին: Այդտեղից մեծ ուրախությունով դարձան քաղաքը և լուսազգեստ մկրտություն ընդունեցին: Եվ այդ օրը տոնների տոն ու տոնախմբումների տոնախմբություն դարձրին իշխանն ու մեծամեծները:

Գ լ ու խ ԽԲ

(ԹԵ ԻՆՉՊԵՄ) ՀՈՆՆԵՐԻ ՄԵՄ ԻՇԽԱՆ ԻԼԻՔՎԵՐԸ ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒՄ Է ԻՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ, ՈՐՊԵՍՅԻ ԽՍՐԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՄՆԱ ՆՐԱՆՑ ՄՈՏ ԱՅՆՏԵՂ ՀԻՄՆԵԼՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՐ

Հոնների մեծ իշխանը բարի խորհրդի է նստում իր տերություն թուրք մեծամեծների ու նախարարների հետ և ասում է. «Տղիտական մթացուցիչ ոգիների ինչ-որ խավար վազուց պարփակել էր մեզ. այդ պատճառով չէինք կարողանում ամբողջ տիեզերքի արդար լույսը նկատել: Արդ՝ մեր տեր Հիսուս Քրիստոսը իր քաղցրությունով այս եպիսկոպոսին մեզ համար կյանքի առաջնորդ ուղարկեց, որը խոսքերով ու գործերով կշտամբեց և անարգեց մեր անօրենությունները ու մեզ ճանաչել տվեց ամենին ստեղծող աստծուն և նրա սքանչաճաշ գորությունը, որին ամբողջովին իսկ ճշմարիտ կերպով հավատարմ խոստովանեց իմ հոգին: Եվ ահա հավատացիք մի աստծուն՝ երկնքի ու երկրի արարչին: Մեզ համար օրինակ պետք է վերցնենք այս կրոնին հավատացող ամբողջ աշխարհը և բյուզանդացիների մեծ թագավորությունը. որովհետև ասում են, թե մի թագավոր է եղել Կոստանդիանոս անունով, որը Կոստանդնուպոլիսն է շինել: Ասում են, որ այն թագավորության առաջին քրիստոնյան նա է եղել, և այնքան հավատույցյալ է եղել, որ աստծու հրեշտակը սպասարկում էր նրան, և այս հավատի շնորհիվ իր բոլոր թշնամիներին հզոր հաղթությունով կործանեց: Արդ՝ եթե քրիստոնեական հավատքի մի-

չոցով անպես փառավոր ու հաղթող կարելի է լինել, մենք ինչու՞ Ժուլյանանք հավատալու կենդանի աստծուն: Ահա աստծու պատգամների ուսուցիչը այս մարդն է՝ Իսրայել եպիսկոպոսը. եկեք ազալենք սրան, որպեսզի մեա մեր երկրում և լուսավորի մեզ:

Այս բաները միաձայնութեամբ խորհրդակցելով Իսրայել եպիսկոպոսի մոտ է ուղարկում Ավլի անունով մի ավագ իշխանի, որ ուներ թարխանութեան աստիճան և Չաթկասարի սենեկապետն էր: Եվ սրանք, գալով նրա մոտ, պատմում են խորհրդակցութեան բովանդակությունը. «Եթե, — ասացին, — հոնների մեծ իշխանն ու բոլոր մեծամեծներս քո միջոցով ճանաչեցինք մեր տեր արարչին իրի մեզ հայր, ուստի միշտ հավատում ու երկրպագում ենք սուրբ երրորդությունը: Աղաչում ենք քո սրբությունը (քեզ), որպեսզի համաձայնվես մեզ եպիսկոպոս և ուսուցիչ լինել՝ մեր Վարաչան քաղաքում հայրապետական աթոռ հաստատելով: Ես՝ Իլիթվերս, քեզ հետ տիրոջ ուխտ կկապեմ և հեթանոսական ամբողջ պաշտամունքը հոնների երկրի երեսից արմատախիլ կերպով կքնաչնչեմ, իսկ հավատի շեկող կախարդ գուշակներին հրով կայրեմ: Այն անձը, որ իբրև հեթանոս կըջջի մեր երկրում, կամ գաղտնի կուղքերին զոհ կմատուցի, սրով կսպանեմ: Թող նույն աստվածապաշտությունը առաջ գնա և քարոզվի Քրիստոսի անպատմելի պարգևների մասին»:

Եվ եպիսկոպոսը պատասխանելով ասում է. «Առանց Ազվանքի մեծ հայրապետ սուրբ Սիդազարի ես անձամբ իրավունք չունեմ այդպիսի բան անելու, որովհետև այդ իրավունքը նրան է պատկանում, իսկ ես բարեկարգ թեմ ունեմ, ինչպե՞ս կարող եմ իմ հոտը թողնել, որը աստված ինձ տվեց հովվելու: Բայց տեր Քրիստոսը ըստ իր մարդասիրության ձեզ կհոգա, կաճեցնի ու կօրհնի և ըստ ձեր հավատքի հովիվ կտա ձեզ Քրիստոսի ավետարանով տեսչավորելու ձեզ: Պատգամավորները կրկնելով, երեքկնելով նույն խոսքերն էին ասում: Եպիսկոպոսը ասում է. «Թո՛ւյլ տվեք ինձ այնքան ժամանակ, մինչև աստված ինձ շնորհ կանի գնալու իմ երկիրը՝ իմ բարեպաշտ որդի Վարագ-Տրդատի՝ Ազվանից իշխանի և սուրբ կաթողիկոսի մոտ: Եթե աստծուն և նրանց հաճելի լինի, աստ-

ված կհաաարի այդ խոսքը: Իսկ այդ պատիվը, որ խոստանում եք, ինձ չի պատկանում. բայց եթե ծանրամահ տանջանքներով ձեր հողմից տառապանքի են թարկվեմ տիրոջ համար, այդ կհամարեմ ինձ պատիվ և շատ կուրախանամ: Բայց դուք պետք է ձեր այդ միտքն ու մտադրությունը գրավոր կերպով հայանեք ամբողջ Ազվանքի ժողովրդին և Սիդազար հայրապետին. սուրբ Սիդեից սկսած մինչև այսօր աստվածաբանակ բաղաք Երուսաղեմի կողմից, միայն հյուսիս-արևելքին է վիճակվել առաքելական աթոռ ունենալ և տիրոջ եղբայր սուրբ Հակոբից ձեռնադրությունն ընդունել: Իսկ դուք այդ թեմի սահմանն եք. առանց իմ բոլոր հայրերի, եղբայրների և աթոռակիցների կամքի ու խորհրդի այդ ինչպե՞ս կլինի, որովհետև նոր է այն գործը և նշանակությունը կարևոր: Այս ամենը եպիսկոպոսից լսելով, կատարեցին նրա պատվերը ու պատվով նրան իր երկիրը ուղարկեցին:

Գ Լ Ե Խ Խ Գ

ՄԵՍԿՈՂՄԱՆԵՐԻ ԻՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՍՏՆԻԼ ՎԵՐԱԿԱՐԶԷ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ ԵՎ ԵՐԿՈՒ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ՝ ՆՍՍ. ՆՏԵՎԻՑ ԳԱՂԷ՝ ԽՆԳՐՆԸՆԻ, ՈՐ ՆԱ ԳԱՌՆԱ ԻՐԵՆԵՑ Կ.Ս.Ս.ՋՆՈՐԳ

Հոնների մեծ ու բարեպաշտ իշխան Իլիթվերս իր երկրի գլխավորներից երկու հոգու՝ Խուրսան Իրթգինին և խազր Յութին պատրաստում, ուղարկում է սուրբ Իսրայելի ետևից իրի բարեկամության պատգամատարների ու խնդրում է նույն Իսրայելին դառնալու հոնների առաջնորդ:

Հրովարտակի պատճենը այս էր. «Հոգեզին աչքերի տեսություն միայն ընդունեցինք ձեր կողմից առաքվածին՝ Աստծու այդ Իսրայել եպիսկոպոսին և դրա միջոցով ողջունում ենք ձեզ Ազվանքի մեծ հայրապետ Սիդազար և մեր սիրելի եղբայր Ազվանքի աշխարհակալ իշխան Վարագ-Տրդատ: Որովհետև դուք մեզինք խնդրում էիք մարմնավոր խաղաղություն, իսկ մենք հոգևոր ողջուցնով տեսանք դա ինչպե՞ս աստծու պատկեր և դրա (եպիսկոպոսի) սուրբ վարքի ու նորաքանչ հրաշք-

ների միջոցով, որ բարձրալը ցույց տվեց, ճանաչեցինք մեր արարչին ու ստացանք մեր հոգիներին խաղաղություն: Եվ արդ՝ ձեզանից խնդրում ենք, որ նույն իրեն՝ Իսրայելին, տաք մեզ եպիսկոպոս ու առաջնորդ, որի միջոցով շատերս հավիտենական փրկություն գտանք, և որպեսզի մեր ու ձեր միջև անքակտելի բարեկամություն հաստատվի: Ո՛ղջ եղեք տիրոջով:

Գ Լ ու խ ԽԳ

ՀՈՆԵՐԻ ԻՇԵՌՆԻ ՆԱՄԱԿ՝ ՈՒՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԻԵՎՆՈՒՅՆ ՆՊԱՏԱԿՈՎ

«Մեծ Հայաստանի սուրբ եպիսկոպոսապետ Սահակին և Հայաստանի զորապետ մեծագով իշխան Գրիգորին ողջունենք:

Աշխարհի գոյության սկզբից անգիտությամբ մառախլապատ մեզով խավար մեր հայրերը մեռան: Իսկ աշխարհի համար եկած փրկությունը վերին աստծու՝ երկիր իջած Քրիստոսի մասին մենք աղոտ կերպով լսեցինք իբրև լուր: Այդ երկիրը արշավելու շնորհիվ և Աղվանքի ձեր պետությունը մոտ գտնվելով՝ տեսանք, որ դուք և ամբողջ տիեզերքը ունեք միևնույն հավատքը, մեր սրտում էլ բարի նախանձ հաստատվեց: Եվ Քրիստոսի՝ մեր աստծու խոսքը լրիվ կատարվեց: Նրա ավետարանը բարոզվեց հյուսիսայիններին սահմաններում, իսկ այդ բոլորը բովանդակապես մենք սովորեցինք մի լավագույն մարդուց՝ Իսրայելից, որ եղել է Մեծկողմանքի եպիսկոպոս:

Եվ այժմ մեզանում կատարված հրաշքների մասին դուք լսել եք ձեզ մոտ եկածներից: Խնդրում ենք մեր հայցումը կատարել ախորժեք, այն է՝ նրան ուղարկեք մեզ համար եպիսկոպոս: Եվ ձեզանից՝ սուրբ հայրապետ Եղիազարից խնդրում ենք մենք՝ ձեզ նրան գործակից ու հավատակից ճանաչելով, երկուսիդ էլ աղերսում ենք, որպեսզի կատարեք մեր հոգևոր խնդրանքը: Նրա մեզ մոտ լինելով խուժադուժ ցեղերի զորքերի արշավանքները դեպի ձեր երկիրը կարգելափակվի, երբ մենք և դուք մի հավատի լինենք. ո՛ղջ եղեք»:

Արդ՝ երբ նրանք եկան-հասան Աղվանք և Հայաստան ու

ողջունեցին՝ պատմելով այն ամենը, ինչ աստված նրա ձեռքով կատարեց հոների երկրում, և ներկայացրին հոների մեծ իշխանի նամակները սուրբ Սահակ քահանայապետին ու հայոց Գրիգոր իշխանին. սրանք ու ամբողջ երկիրը մեծ ուրախությամբ անջունեցին և տվին հետևյալ պատասխանը.

Գ Լ ու խ ԽԵ

ՀՈՆԵՐԻ ՆԱՄԱԿԻ ՊԱՏԱԿԱՆԸ

«Հայոց կաթողիկոս Սահակից, ամբողջ քահանայական միաբանությունից, հայոց իշխան Գրիգորից և բոլոր եկեղեցիների աշխարհականներից տիրոջ միջոցով ողջունի:

Աստծուց ձեզ հասած կենսատու փրկության համար, ինչպես որ մեզ պատմվեց, անչափ ուրախությամբ գոհացանք Քրիստոսի անդղջալի պարզկենրով. և այն նամակը, որ դուք՝ աստծու նորբնծա ծառաներդ, գրել եք մեզ, ստացանք. սրանով ճանաչեցինք արարչի բարեբարությունը, որը (արարչի) ձեր երկրի վրա աստվածահանաչման լույսը ծաղեցրեց այնպես, ինչպես ամբողջ աշխարհի վրա: Ե՛լ ավելի փառաբանեցինք մարդասեր աստծուն, որը ձեզ շնորհեց ձեր առաջին հայրերի փուռ պաշտամունքի մեջ, այլ ձեզ ճանաչեցրեց իր սուրբ անունը, և դուք եղաք ձեր արարիչ աստծու նշմարիտ երկրպագուները:

Այլա իմացանք, որ նրա անունը տարածվելով լցրեց տիեզերքը, ձեր գրածներից ու պատգամափորձներից լսեցինք, լին ինչպես Իսրայել եպիսկոպոսի միջոցով սրաանց դարձ կատարակիք: Եվ արդ՝ շնայած մենք և մեր երկիրը մայրենապես հեռու ենք, սակայն մեր անկեղծ սրտով համարում ենք, թե ձեզ տեսանք մեր դիմաց: Բայց ինչ վերաբերում է այն բանին, որ մեզանից պահանջում եք Իսրայել եպիսկոպոսին, ձեր այդ մտադրությունը մեծ է, որովհետև հոսը չի կարող առանց նովի լինել: Եվ արդ՝ ծանր ու դժվարին է մեզ համար ձեր խնդիրը շկատարել, սակայն պատճառներ կան. նա մեր ախոսի իշխանություն տակ չէ. այլ ենթակա է Աղվանքի տան

աթուղիք։ Անցք կամենում ենք ու մեծ ցանկություն ունենք, որ նա միշտ ձեզ մոտ լինի։ Բայց այդ իրավունքն ու իշխանությունը պատկանում են մեր աթոռակից Եղիազարին՝ Ազգանքի հայրապետին, այդ նրա գործն է։ Արդ՝ ճանաչեցե՛ք կենդանի աստծուն, որ կյանք է տալիս մարդկանց, մեռցնում ու ապրեցնում է։ Սուրբ հոգու նույն շնորհը թող ձեզ հաստատ պահի աստծու երկյուղով ու նրա պատվիրանների պահպանությամբ։ Իսկ մենք կարոտալի սրտով անմոռաց կհիշենք ձեզ մեր եկեղեցիներում. ո՛ղջ եղեք»։

Իսկ երբ Զիթգին Խուրասանն ու Չաթն Խազրը վերադարձան Հայաստանից և ներկայացան Եղիազար կաթողիկոսին ու վարազդատ իշխանին Պարտավ մայրաքաղաքում, հրաժեշտ խնդրեցին նրանցից և թախանձեցին առ կախկոպոսին. այդ ժամանակ չկամեցան Խորալիին տալ նրանց իբրև առաջնորդ։ Ասացին. «Ինչ չի կարող աստծուց իրեն վստահված իր հոտը ամբողջովին թողնել և ձեզ մոտ լինել. այլ մենք կհրամայենք, որ գնա ու զա ըստ իր կարողության, ձեզ հաստատի Քրիստոսի հավատի մեջ և անխախտ պահի մեր բարեկամությունը, որ տածում ենք միմյանց նկատմամբ։ Այդ բանին մենք էլ ենք համամիտ, որովհետև եթե դա միջնորդ լինի մեր և ձեր միջև, մեր միջից թշնամությունը կվերանա, և կհաստատվի սեր ու խաղաղություն»։

Իշխանները այս ամենը լսելով՝ տազնապի մեջ ընկան կատարվածի վերաբերյալ, վախեցան ու դժկամ ցանկությունք համաձայնվելով ասացին. «Մեզ մոտ գալն ու գնալը թող ուշ ուշ Աինի, հավատի դրված հիմը նորից չքանդվի, և նա մեզ որք չթողնի, որովհետև ուրիշ վարդապետի մենք չենք. լսի ու հնազանդվի»։

Եվ երանելի եպիսկոպոսը, ըստ իր քաղցր բնավորության, երկու կողմն էլ չեն էր պահում։ Միբանժար ցանկությունք հանձն առավ գնալ Հանաստան, հոգալ Քրիստոսի նորընծա հավատի մասին և նրանց դաշինքի ուխտն ու պայմանը հաստատուն պահել։ Մեծաշնորհ եպիսկոպոսի այս հավաստիացումներին հավատալով՝ ուրախությունք լցվեցին և խաղաղությամբ վերադարձան իրենց տեղը՝ փառաբանելով ամենատուրք երրորդությունը։

ՄԵՏՈՂԱՅԻՆ ԳԱՎՐԻ ԵՊԻՍԿՈՍՈՍ ԵՆԴՐԱՆԲԸ ՀՈՉԱՆ
ՄԵՐԱՆԳՈՄԵՏՈՒՑ՝ ԱՐՁԱՆՆԵՐ ՈՒ ԿԱՐՆԵՐ ՎԵՐԱԲԵՐԱՒ

Հենց այն ժամանակներում, երբ դեռևս Աղվանքի հայրապետն էր տեղ Ուխտանեզը և նրանից հետո՝ Եղիազարը, քաղմաթիվ հերձվածներ ու խռովություններ էին առաջանում գանազան տեղերում, գիտունների ու սղոթաների կողմից տեղի էին ունենում պայքար ու մրցում հույների և հայերի միջև։ Սակայն Աղվանքը այս բաներից զերթ էր մնում։ Նրանց լուր հասավ, թե կան սմանք, որ պատկերները չեն ընդունում, կան որ մկրտություն չեն անում, աղ չեն օրհնում, հարսանիքների պատկազրություն չեն կատարում. այս է պատճառը, որ քահանայությունը վերացել է երկրից։ Սրա համար Մեծկողմանքի Դավիթ եպիսկոպոսը պրավոր կերպով հայոց Հոհան վարդապետից խնդրեց այդ բաների պատճառը (քացատրել)։ Եվ նա, հնուտ լինելով այդ բանում, ճշմարտապես կատարեց՝ ասելով հետևյալը. «Այդ աղանքը առաջալսներից հետո հայտնվեց, իսկ պատկերամարտությունը նախ բյուզանդացիների մեջ երևաց, որի պատճառով Կեսարիայում մեծ ժողով կայացավ. հրամայեցին աստծու տանը (եկեղեցում) պատկերներ նկարել։ Այդ պատճառով նկարիչները մեծամտեցին և կամեցան իրենց ավելի բարձր դասել, քան եկեղեցական բոլոր ստեղծվածքները»։ Նրանք ասում էին. «Մեր սրվեստը լույս է, որովհետև թե՛ ծերերը, թե՛ մանուկները համահավասար դիտում են, իսկ սուրբ գրքերը քչերն են կարդում»։ Այստեղ աղմուկ է բարձրանում, կրկին ժողով են անում և բնեկելով արգարացնում են գրողներին, կարդացողներին ու թիկնիչներին և գրանց նկարիչներից գերադաս են համարում։ Այս ժամանակից սկսած միջև հայոց կաթողիկոս Մովսեսը այդ հերձվածք չէր հայտնվել։ Իսկ երբ հայոց հայրապետությունը երկուսի բաժանվեց, մեծ պայքար սկսվեց Մովսեսի ու Կարնո եպիսկոպոս Քեղոբորոսի միջև, որին անվանում էին փիլիսոփայապետ։ Սրանք և մենք ուղղափառներս վարկաբեկում էինք բյուզանդացիների բոլոր աղանդները։

Մովսեսը իր կողմնակից վարդապետներով ժողով է անում և հրամայում է՝ ամենեւին չհաղորդակցվել այն բյուզանդացիներին հետ, որոնք հնադանդվել են Քաղկեդոնի շար ժողովին, որովհետև նրանց գործերը սուտ են: Նրանցից չպետք է ընդունել ո՛չ գրքեր, ո՛չ պատկերներ, ո՛չ նշխարներ:

Այդ ժամանակ Թեոդորոսը հրաման ավելց, որպիսյր իր կողմնակից հայոց եպիսկոպոսները հավաքվեն Կարին բազաթում, և ասաց. «Մենք պետք է կաթողիկոս ընտրենք»: Եվ սյունեցի Հոհան անունով մեկին բերին, ձեռնադրեցին ու հնադանդվեցին քաղկեդոնական սպանդին: Նրանցից ոչ ոք չհարեց սկզբափառ հավատին, բացի Երանելի ննսից, որ հեռացավ նրանցից ու եկավ Մովսես կաթողիկոսի մոտ: Սրան ուրախությամբ ընդունեցին: Մովսեսը կաթողիկոս էր նստում Դվինում: Նրանք՝ հունադավան հայերը, կաթողիկոսարան կազմակերպեցին նույն ավանում, միմյանց մոտ: Նրանց մեջ գոյություն ուներ անհաշտություն. նրանք չէին ընդունում Հոհանի կողմից ձեռնադրվածին: Այդ Հեսու անունով մի քահանա, Թադևոսն ու Գրիգորը, որոնք Մովսեսի կողմնակիցներն էին, Դվինից գնացին Սոթք²¹⁹ գավառը: Եվ որովհետև կրոնավորներ էին, բնակվեցին անապատներում ու սկսեցին սովորեցնել, թե եկեղեցիներում նկարված պատկերները սընչապրեք և աշխարհական քահանաների հետ մի՛ շփվեք: Խոտվություն սկսվեց գավառում, և բուրբ հասավ Մովսես Հայրապետին: Մովսեսը իսկույն գրեց, թե՝ «Շտապ եկեք այստեղ»: Նրանք չեն թարկվեցին այդ հրամանին, այլ այնտեղից գնացին ու բնակություն հաստատեցին ձեր Արցախի գավառներում: Կաթողիկոսը հարցրեց իր գիտուններին, թե ինչպիսի՞ն է այդ մարդկանց գործը, նրանք հունուկանի վերաբերյալ ասացին, որ շեղում է:

Այդ նամակ գրեցին, թե՝ «Ոչ ոք թող չհանդգնի մերժել այն նկարները, որոնք եկեղեցիներում են: Եվ երբ Մովսես հայրապետը վախճանվեց, և սկսեց իշխել հայոց Խոսրովը, երկիրը միաբանվեց: Հայրապետական աթոռին նստեցրին ճշմարիտ ու ընտիր մի մարդու՝ Աբրահամին, որը նախ նգովքով ընչեց Քաղկեդոնի ժողովը (օրենքները), ապա ձեռնադրվեց, իսկ պատկերամարտները, որ եկան Աղվանք, խառնե-

ցին ձեր երկիրը, ապա Գարդմանի իշխանը բռնեց երեք հողու, որանց անունները գրված են այս նամակում, շղթայակապ բերել տվեց Հայաստան: Նրանք հանգիպեցին մեզ, և մենք հարցրինք, թե ի՞նչ պատճառով չեն ընդունում մարմնավորված աստծու պատկերը: Նրանք պատասխանեցին, թե՝ «Դա պատվիրաններից դուրս է, և այդ բանը հատուկ է կապաշտներիին, որոնք բուրբ արարածներին պաշտում էին: Մենք պատկերներին չենք երկրպագի, որովհետև Աստվածաշնչից այդպիսի պատվեր չունենք»: Այդ մենք մատնացույց արինք Մովսեսի խորանի նկարակերտ լինելը ու Սողոմոնի տաճարի քանդակագործությունները և ասացինք, որ նույն բանը ընդօրինակում ենք մեր եկեղեցիներում: Այս և սրա նման խոսքեր սուսայինք, նրանց շեղումը ուղղեցինք»:

Գ Ի Ո Ւ Խ Խ Ե

ԵՈՐՉԻԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ ՄՈՍԻՆ, ԹԵ Ե՛ՐԲ ԱՆԻՄՎԵՑ
ՔԱԳԱԿՊՈՆԻ ՋԱՐ ԺՈՂՈՎՐԷՅ՝ ԵՎ ԱՂՎԱՆՔԸ ԱՅԳ ԱՂԱՆԳԻՑ
ԶԵՐ ՄՆԱՑ, ՎՐԱՅԻՆԵՐԸ ՀԱՅԵՐԻՑ ՈՒՔԱՆՎԵՑԻՆ, ԵՎ ԹԵ
ԱՐՐԱՀԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՑԸ ԱՂՎԱՆՔԻ ՀՈՒՄՈՒ ԻՆՉ ԱՐԻՑ

Բյուզանդացիների թվականության²²¹ քառասուներեքերորդ տարին էր, երբ Հայաստանը քրիստոնյա դարձալ, Աղվանքի՝ քրիստոնյա դառնալուց 270 տարի առաջ: Հայերի քրիստոնյա դառնալուց 180 տարի անցած՝ հայոց կաթողիկոս Թարգնի ժամանակ Քաղկեդոնի աշխարհափորձան ժողովի սովիվ տեղի ունեցավ քննաժողով: Հուլիսբը, ամբողջ Իտալիան, հայերը, աղվանները և վրացիները միաբանված նգովեցին Քաղկեդոնի շարափառ (հերձվածող) ժողովը և կենի սամարը բյուզանդական բարեպաշտ թագավորներ Ջենոնի ու Անատասի հրամանով: 878 տարի անցնելուց հետո՝ հայոց կաթողիկոս Աբրահամի ժամանակ վրացիները անիծյալ Կյուրանի միջոցով բաժանվեցին հայերից. սրանց հետ բաժանվեցին նաև հուլիսերն ու Իտալիան: Իսկ աղվանները չհեռացան սկզբափառությունից և հայերի հետ միաբանվելուց: Կյուրանի րձպիմ դառնալու առթիվ Աբրահամը շրջաբերական նամա-

[1] Պատմություն Աղվանից աշխարհի

կում նրա մասին բոլոր ազգերին մեղադրականներ է գրում՝ հողեր սրով կտրելով ու դեն նետելով: Նախ հայտնում է աղվաններին, նրանց իմացնում է և իր նամակում այսպես է գրում. «Թե հայերի աթոռակալութունից առաջ հաստատվել է Աղվանքի աթոռակալութունը.²²² նրա մեզ հետ համաձայն լինելով և նրանց կամակցությամբ մենք ու աղվանները նզովեցինք, գցեցինք կյուրոնին՝ ըստ մեր հայրերի կանոնական հրամանի, որ գրեցին բյուզանդացիների վերաբերյալ, և մնում է ընդմիջաւ նույն բանը հրամայեցինք նաև վրացիների վերաբերյալ, այն է՝ ամենևին չպետք է շփվել նրանց հետ ո՛չ աղոթելիս, ո՛չ ճաշելիս, ո՛չ էլ խմելիս, ո՛չ բարեկամությամբ, ո՛չ դայակությամբ. աղոթելու չպետք է գնալ այն խաչի մոտ, որ Մցիսեթ վայրով է հռչակված. չպետք է գնալ նաև Մանգլիսի խաչը, նրանց մեր եկեղեցիներում չպետք է ընդունել, իսկ ամուսնական կապերից ամենևին պետք է հեռու մնալ. միայն կարելի է առևտուր անել նրանց հետ այնպես, ինչպես հրեաների հետ: Արդ՝ ով որ առանց խտրություն դնելու շփվի՝ նրանց անհավատությանը համամիտ լինելով, թող հոգով ու մարմնով նզովվի, իսկ ովքեր որ այս հրամանը կարհամարհեն, թող իրենց ամբողջ կյանքով անշատ մնան աստծու եկեղեցուց, լինեն խավարի բնակիչներ և հավիտենական հրո կերակուր»:

Գ Ի Ո Լ Խ Խ Ը

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԲՅՈՒՋԱՆԴԱՅԻՆՆԵՐԸ ՎԻՃՈՒՄ ԷՆԸ
 ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՆԸ ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄ
 ԶՈՒՆԵՆԱԼՈՒ ԳԱՏՃԱՌՈՎ: ՀԱՅԵՐԻ ԶԳՏՈՒՄԸ, ՈՐՊԵՆՍԻ
 ԱՂՎԱՆՔԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍԸ ԻՐԵՆՑ (ՀԱՅԵՐԻ) ՄԱՏ ԶԵՆԱԿՐՎԻ,
 ԱՂՎԱՆՔԻ ՄՐԲՈՒՄԸ, ՍՅՈՒՆԻՔԻ ԱՆՋԱՏՈՒՄԸ ՀԱՅՍՏԱՆԵՐԾ,
 ԵՎ ՄԻԱՅՈՒՄԸ ԱՂՎԱՆՔԻՆ. ՍՅՈՒՆԻՔԻ՝ ԱՅՍ ՎԵՐՋԻՆԵՐԻՑ
 ԶԵՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԵԹ ՍՏԱՆՈՒՐ

Երբ թագավորում էր բյուզանդացիների շարմիտ Մարկիանոսը, անմիջապես հրապուրվեց մի կարգալույծ նեատորկանի կնոջից՝ պիղծ Պողոքերայից, շտապով ուղղափառ հավատի սահմանները քանդեց Քաղկեդոնի ժողովով: Դրանից հետո

նրանց հետևողները բազմաթիվ անգամ վիճի մեջ մտան հայերի հետ, որպեսզի սրանք նմանվեն նրանց: Բացի նրանից, որ շատ անգամ նամակներ ուղարկեցին, նաև դեմառդեմ ժողովի կանչեցին մի անգամ Կոստանդնուպոլիս, երկու անգամ էլ Թեոդոսիոպոլիս: Զանք էին թափում նրանց իրենց կողմը քաշել իրրե մուրթվածների: Չնայած որ թագավորի հրամանով հավաքված տեսական կրթութուն ստացած բյուզանդական ճարտարաբանները հելլեն սուր լեզվի վրա վստահ էին, որ պերճախոսությամբ կհաղթեն, սակայն ըստ այդ պերճախոսությանն էլ պատասխան էին ստանում: Թեպետև նոր էր հայկական եկեղեցիներում կրոնական ուսմունքը, բայց հունարենին լավ տեղյակ էին: Այլև հայերը Հոհան Մայրազոմեցու մասին լուր հանեցին, թե նա հույների կողմն է և իրենց դեմ է դուրս գալիս: Այս զրպարտության պատճառը եղավ Սողոմոն անունով մի ճգնաժող, որ հետո դարձավ հայոց կաթողիկոս: Նա հարցրեց իր Սողոմոն վարդապետին, որ մաքենացիները²²³ վարդապետ էր. նա գրավոր հայտնեց, որ «Հայերը հավատի հարցում չպարտվեցին, այլ խիստ պարավեցին նրանով, որ հույները ասացին, թե աստված եկեղեցին կարգավորեց ինք դասերով: Ինչպես այնտեղ վերևում երկնայինները, այնպես էլ գահակալեցին ներքին եկեղեցու պատրիարքները, որ են հայրապետ, արքեպիսկոպոս, որ կոչվում է եպիսկոպոսապետ, մետրոպոլիտներ, եպիսկոպոսներ, քահանաներ, սարկավագներ, կիսասարկավագներ, գրակարդացներ, սաղմոսերգուներ: Այս բոլորը միաբանվելով կարող են ձեռնադրել հայրապետ, իսկ այս վերջինն էլ՝ բոլորին:

Արդ՝ եթե ճշմարտությամբ հավատում եք, տպախոսականեցեք, թե ո՛վ է ձեր պատրիարքը, որովհետև երկրի վրա միայն չորսն էին. Ալեքսանդրիայից՝ Մարկոսի աթոռն էր, Անտիոքից՝²²⁴ Մատթեոսի, Հռոմից՝՝ Ղուկասի, Եփեսոսից՝²²⁵ Ասիայում Հովհանի. աշխարհի չորս անկյունում նստում էին ըստ դրախտի քառավորակ գետի, ըստ չորս կերպարանք ունեցող կենդանիների, ըստ չորս ավետարանիչների, ըստ մովսեսական չորս օրհնքների, քանի որ աստծու օրհնքները նորից կրկնելը այլ է համարվում: Մենք բոլորին ենք հասկանալովում, դուք հնազանդվեցեք նրանցից մեկնումեկին, կամ

ամենքին, որպեսզի միահավատ լինենք, քանի որ ձեր եպիսկոպոսապետ սուրբ Գրիգորը ձեռնադրվեց միայն Կեսարիայում, և նրանից հետո եկողները նույնպես այնտեղ են ձեռնադրվում մինչև այսօր: Ապա սրանից զատ մի այլ ուղղափառ եկեղեցի ճանաչում էք: Յույց տվեք նաև ձեր պատրիարքին, որին է ենթարկվում ձեր արքեպիսկոպոսը. մինչև այսօր մեզ էր ենթարկվում: Ապա էթե պատրիարք և ամբողջ եկեղեցու այլ կղերականներ չունենք, պարզ է, որ խոտորված հերձվածող էք՝ Արիոսի, բարբարոսների և այլ շարափառների հետ միասին: Սրանով հայերը մնում են առանց պատասխանի և պարտվում են, որովհետև եկեղեցին այդ վիճակում էր կառավարվում:

Իսկ երբ Հուստինիանոսն էր թագավորում, սա սուրբ Հովհաննես ավետարանիչի մասունքները փոխադրեց Կոստանդնուպոլիս և այնտեղ հայրապետական աթոռ հաստատեց. բուն աթոռը մնաց այնտեղ՝ եփեսոսում: Նույնպես և Մատթեոսի աթոռը Անտիոքից Երուսաղեմ փոխադրեց, ասելով՝ «Բրովհետև սա մեծ արքայի քաղաքն է»: Իսկական աթոռը մնաց Անտիոքում: Այդ ժամանակ բոլոր մեծամիտները գլուխ բարձրացրին և, որտեղ որևէ առաքյալ էր վախճանված, ամենքի աթոռն էլ պատրիարքական համարեցին: Նրանց կողմից կարգ ու կանոն դրվելուց հետո այնտեղ խոսք բացվեց նաև մեր մասին: Պարսիկներն ու հույները Հայաստանը բաժանել էին. տեղի Մովսեսն էր նստած սուրբ Գրիգորի աթոռին՝ Դվինում, իսկ հունական կողմում Մովսեսին հակառակ նստեցրին մի ոմն Օհանի՝ նրան մոտիկ: Սյունիքի տերերը հայրապետության երկուսի բաժանվելը մերժեցին և երկուսից ոչ մեկին չընդունեցին: Իրենց եպիսկոպոս առաքինի Պետրոսը որ արդեն իր վերջին օրերն էր ապրում, սլատվիրեց իր թեմին՝ ձեռնադրվել Աղվանքում և օրհնության մեծոսը այնտեղից ստանալ, մինչև որ սուրբ Գրիգորի աթոռը միասնանա: Այս պատճառով Աղվանքի Զաքարիա սուրբ Հայրապետի կողմից Սյունիքի եպիսկոպոս ձեռնադրվեց վրթանքը: Միաժամանակ սյունեցիները օրհնության յուզր ամեն տարի վերցնում էին Աղվանքից, մինչև որ հակաթոռությունը վերացավ, և Արրաի համը հայրապետական աթոռի միապետը դարձավ: Ինչ դա-

սակարդության պատճառով եկեղեցական գլխավորները քմահաճ կերպով ըստ իրենց գոռոզ բնավորության Արրահամին պատրիարք են կարգում հայերին, Աղվանքի համար արքեպիսկոպոս են դնում, իսկ վրացիների համար՝ մետրոպոլիտ: Վրաց մետրոպոլիտը, որի անունն էր Կյուրոսն, չեն թարկվեց և վճռեց հակառակվել, իսկ Արրահամ հայրապետը ասում էր, որ Աղվանքը վրացիներից ավելի առաջ է հավատացյալ դարձել, նրանց համնում է եպիսկոպոսապետություն: Այս վիճարանությունից ելնելով վրացիները դիմեցին ուղղափառ հավատին և դարձան քաղկեդոնականներ: Ապա հունական զորավարները գրգռեցին հայերին՝ պահանջել գահերեց լինելու Աղվանքի վրա, սրան շամաձայնվելով՝ Աղվանքը այլ մարդու ցույց տվեց, որ նախապես ուղարկվել, եկել էր Աղվանք: Սրա անունը եղիշա էր և տիրոջ աշակերտներից էր՝ ձեռնադրված տիրոջ եղբայր սուրբ Հակոբի կողմից. այնտեղ նա քրիստոնեություն բարոզեց և եկեղեցի շինեց ավելի առաջ, քան Հայաստանում. արևելքի մայր եկեղեցիներից առաջինը Գիսի եկեղեցին էր, որ հիմնադրեց նա և ինքը նվիրվեց նրան: Աղվանքը հայերից ձևք քաշեց՝ որևէ մեկի իշխանության տակ չլինելու համար: Այս հայերը հույների մեծամտության հետևանքով, որոնք ամեն կերպ ջանում էին փոքրացնել Թագևոս Առաքյալի հանգրտավայրը, որպեսզի չունենան եպիսկոպոսապետ ու մետրոպոլիտ, մտածեցին մետրոպոլիտ դարձնել մարդապետական եպիսկոպոսին, տալով նրան խաչ ու պատիվ միայն, բայց ոչ եպիսկոպոս ձեռնադրելու իրավունք: Սա խնդրեց, որ երկու կամ երեք եպիսկոպոս իր հետ լինեն, բայց երկրի գլխավորները չամաձայնվեցին՝ վախենալով. թե մի գուցև այժմ մի ույլ տեսակ բաժանում կատարվի միապետող աթոռի նկատմամբ: Ապա տեսնելով, որ Սյունիքի տերերը աստվածավախ ու հյուս հնազանդ են տիրոջ պատվիրաններին, իսկ եկեղեցիների հսկողականությունը լավ կրթված և ուղղափառ է ամեն բանում, նրանց իրավունք տվին հայերի համար մետրոպոլիտ գտնել՝ խաչանիշ կրելու մեծարանքով, բայց շահագրեց խառնվելու այլ գործերի և ոչ էլ հայրապետին եպիսկոպոսապետ: Համարել Երկրում էլ նախկին կարգերը թողին. որ խոտվություն չառաջանա: Այդ պատճառով սյունեցիք եղիս-

կոպոսապետ չկոչեցին և ոչ էլ հայերին պատասխան գրութեան մեջ եպիսկոպոսապետ գրեցին, որովհետև եթե կարելի էր բանավոր անվանել, ապա նաև կարելի էր գրել. բայց ոչ բանավոր ասելով մեծ կլիկի և ոչ էլ գրելով: Բայց խաչակիցները տիրոջ փառքի համար է, իսկ անուշը միայն խաչով ու քարոզով է հաստատվում և ոչ թե որևէ մեկի նրա տակ գտնվածի հիշատակով: Այսպես նշանակեցին ինք կարգերը, իսկ Սյունիքում հոգևորական կոչումները գրվում էին «հոգևոր», «տեր», իսկ նրանք գրում էին «ծառայից»: Ապա տեր Նղիայի Երիցվանքում²²⁶ արած անմտութեան պատճառով, երբ Աղվանք գնաց, նրա համար չգրեցին «ծառայից», նրանք էլ արգելեցին «հոգևոր» անվանումը. այս է իրողությունը:

Գ լ ու խ խ թ

ՍՍՄՐԱՄԻ ՄԵԻԹԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆՍՄԵԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԱՅԵՐԻ ԿՈՂՄԵՑ, ՈՐԸ ՀԱՅՅՈՅՈՒԿԱՆ ԷՒՆ ԴԹԻՐՍ ԲԵՐԾԷ ՎՐՔԵՐՈՒՄ

«Ձեզ՝ պատվական գտնվածներդ ու վեճ հուշակվածներդ, որոնք տկարութունը հոժարութեամբ նախընտրեցին և անտեղի բաները բացասեցին, հարմար է ասել, որ նաև նմանձողներ լինելով կամավոր կերպով հավասարվեցիք ավանական նորագույն հայրերի շանքին: Հյուսիսային կողմերի ներկա ժամանակի լսողների ու պատմողների մեջ հալածողներ դարձաք առատանվողներին, մանավանդ եկեղեցական խորհուրդների ամբարջման համար: Ամարասի եպիսկոպոս տեր Մխիթար, Մեծիրանց եպիսկոպոս Միմոն, նաև սուրբ եկեղեցու այլ եպիսկոպոսներ, որոնք համախոճ են նրանց, ազատներ և Աղվանքի ժողովրդից այլ մարդիկ:

Հայոց կաթողիկոս Աբրահամից, մարդպետական²²⁷ եպիսկոպոս Թեոդորոսից, Բագրևանդի²²⁸ եպիսկոպոս Ստեփանոսից, Սյունյաց եպիսկոպոս Դավթից, Խոխտառույաց²²⁹ եպիսկոպոս Մովսեսից, Ապահունյաց եպիսկոպոս²³⁰ Քրիստափորից և այլ եպիսկոպոսներից, եկեղեցիների միաբանություններից ու ազատներից, աղոթալիր և սրտի բուռն խնդիրքով

ցանկանում ենք տերունական հոգեխառն ողջույն ասել ձեզ: Որովհետև դուք մեզ գրելիս պատմեցիք ձեր պաշտամունքի հանգամանքները, բայց ձեր կամեցողության մասին, թե որքան եք կողմնակից ստեղծված հակառակութուններին, այս մասին տեղեկացանք Գրիգոր անունով սյունեցի մի նախարարից: Որովհետև ձեր ծառայից հարցրի կերտողի մասին, հրաժարվեց, բայց մենք գուշակեցինք: որ դուք բարեպաշտություն եք որոնում և ձեր կամքով շարժվում եք դեպի երանելի նախահայրերի նմանաչումը: Թեպետև նրանից ստացած լուրերը տարբեր էին, բայց հին ժամանակներից սկսած ձեր եղբայրական սերը մեզ բռնի կերպով բերեց հետևյալին. որովհետև ձեր գրածը կամեցաք հավատի համառոտ խոստովանություն համարել և նրա մոտ դեմ սուրբ հոգու վարդապետությունը, մասամբ ճշմարտությունից հեռանալ և կամ ընդունել այն շատ բաների հետ ծանոթանալուց հետո: Հայտնիք ինձ քո միտքը, բայց ոչ կեղծը, այլ ուղիղը և մի՛ դատվիր հակառակողների մեջ, որովհետև աստծու եկեղեցին այդ չի ընդունում: Ձեզանից ստացված նամակը մեզանից շնչին գոհունակություն արտահայտելուց հետո մեզ իմացրեց, որ ամբաստանության ճառ է այն մարդու մասին, որ խիստ տկար մեկն էր սահմանված ետ մեր՝ նրան հավատալը իբրև թե անմտություն է ու անտեղի: Եթե մեր մասին խոսեք, մենք ոչ թե թիրի ենք, այլ հավատքով կատարելապես նման ենք ձեզ, որովհետև առաքյալներն ու վարդապետները հավասար ու միանման ավիտարանեցին, և ապա մի քանի խոսքից սուրբ երբորդությունը որոշ տարբերությամբ ավելի առաջ էր աստվածաբանված, քան հավիտենական էությունը: Եվ երկար խոսելուց հետո դուք տիրոջ մարմնավորվելը տարբեր ձևով բացատրեցիք, որպեսի ուսմունք Քրիստոսի եկեղեցին առաքյալներից չի ստացել, և ոչ էլ Սուրբ գրքի խոսքերը նույն իմաստին է բռնի կերպով հարմարեցրել. այլ գալիսը եկեղեցուց կորզեցին մարդկանց, որոնք թյուր կերպով խոսում են և իրենցից հետո թողնում են իրենցը աչակերտածներին: Իսկ մյուս խոսքերը, որոնք սրան չեն համապատասխանում, իբրև միամիտներին խաբելու կեղծ դուռ, մեզ՝ հավատացյալներին մոտ փակվում է, և որ այդ այդպես է, ո՛վ դուք, պատվական մար-

դիկ, ուշադրութիւն դարձրեք ձեր խոստովանութեան վրա և տեսեք, թե ո՛ր է քաշում և ինչպե՛ս է մեկուսացնում սուրբ հոգու վարդապետութիւննից:

Արդ՝ ամեն մի խոսքին բազմաթիւ ու հատու պատասխանելով՝ լույսը խավարի հանդեպ ճանաչեցեք՝ ավելի խոր քննելով: Եվ դու, ո՛վ բարիքներ ցանկացող, ինձ հետ քո սուր հայացքը բարձրացրու դեպի սուրբ երրորդութեան սահմանները, ինչպես որ Պողոսը վարդապետում է հոռմայեցիներին: (Պողոսի Առաքելոյ առ Հռովմայեցիս թուղթ). «Աղաչում եմ ձեզ, — ասում է, — Հիսուս Քրիստոս տիրոջ միջոցով և սուրբ հոգու սիրով, որպեսզի մարտակից գառնաք ինձ առ աստված ուղղված իմ աղօթքներում և ընդունեք, որ տեր Հիսուս Քրիստոսը և սուրբ հոգին աստված են»: Այսպես էր նա սովորեցնում սուրբ երրորդութեան անուճը և մինչև իսկ գրում էր, թե՛ «Առաքելական բոլոր կտակարանները լի են այս արտահայտութեամբ (սուրբ երրորդութիւն), որի անունով մենք հրաման ստացանք մկրտել և փառք վայելել մի երկրպագութեամբ:

Արդ՝ ինչո՞ւ տեղիք տանք Ըոբովամին²³¹, որպեսզի աստծու եկեղեցին բաժան-բաժան անի, որոնց աստծու որդին մի զավթի մեջ խմբեց: Թող մեզանից դուրս չգան նազարն ու Արիւստը²³² և անհավատ կերպով օտար կրակ շմատուցեն, որպեսզի հրատաշոր չլինենք. մեզ վերստին երկնող Քրիստոսին մեր հավատը այլափոխելով շանարգենք, որպեսզի Նոյի դեպի Քանան ուղղված անեծքը մենք շառնենք նրանից, որը ոչ-խարները բաժանում է այժերից: Այս ձայնը մեզ և քեզ է ուղղրված, ո՛վ Միխիթար, որ գլուխ ես անցել Ամարասի եկեղեցուն և հռչակում ես, թե դա սուրբ Գրիգորն է հիմնադրել, և որ դու միեւնոյն հավատն ունես: Ժառանգն ես և բարեխոսում ես Քրիստոս աստծուն, որպեսզի մենք էլ ժառանգակից լինենք նրան: Թող այնպես չլինի, որ լսենք, թե դուք Քանանի զավակ եք ու ծառայում եք մեղքերին և ոչ թե խոստովանող Հուդայի զավակ, և կհրամայվի մեջտեղից կտրել կեղծավորների մասն էլ: Եթե մենք որդիներն ենք այն հայրերի, որ իրենց հավատքով առաքյալներից չեն տարբերվում, ապա և նրանց սովորեցրածը ամուր պետք է պահենք և ջուր յխառնենք կրի հետ անարատ կաթին նմանեցնելով, որովհետև այն, որի

անունով մենք պարծենում ենք, հենց նա մեր մասին վատ կիտսի երկնավոր հոր մոտ, այլև վրեժի շատութեամբ շպետք է հրապուրվենք: Բայց ըստ Սողոմոնի խրատի շպետք է շատերի հետ ձգտել դեպի շարիքը: Պետք է ջանանք ութ հոգու հետ տապանակում փակվել²³³ անջատվելով այն ամբողջից, որոնց քաշում է ջրահեղձուլց պատուհասը: Պետք է Ղովաի²³⁴ հետ տղատվենք հրակեզ անձրևներից, վեց հազար տապաստ ընկածներից, երկու ազատվածի հետ պարզևված երկիրը պետք է մտնենք: Որովհետև միշտ բարի հովիվք, լեռները դղրդացնելով, ասում է. «Մի՛ վախենա, փոքրիկ հոտ, քանի որ ձեր հայրը բարեհաճեց ձեզ արքայութիւն տալ»: Եվ սրա մեջ համառոտներին մենք միշտ հորդորում ենք դեպի նույնը: Բայց մենք ինչպես որ ընդունեցինք երկրպագութեամբ պատվելու սուրբ երրորդութիւնը, առանց թերահավատ դառնալու, առհավետ կրօնենք և կպահենք՝ խորշելով ամեն մի այնպիսի եղբորից, որը այս բանում անկարգութիւն կանի»:

Պ Լ Ի Ս Ծ

ՀԱՉԱՅՓ ԱՆՅՊԱՏԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԲՆԱԿՎՈՒՄ ԷՐ ԱՐՅԱՆՈՒՄ, ԱՐՍ. ԵՐՈՒՍԱԿԱՆՄ ԳԵԱԼԸ ԵՎ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՍՐՔԵՐԻ ՄԱՍՈՒՆ ՔՆԵՐԸ ԲԵՐԵԼԸ

Հերակլի թագավորութեան, Հազկերտի պարսկական ջախջախված թագավորութեան, հայոց եզրի կաթողիկոսութեան, Մուշեղի սպարապետութեան, Գրիգորի Սյունյաց իշխանութեան և Մաթուսաղայի եպիսկոպոսութեան ու Գարգմանա տիրոջ՝ Վարադ-Գրիգորի Աղվանքի իշխանութեան ժամանակ ես՝ Հովսեփ անապատականս, Գեղամա գավառի Բրտիայրյաց վանքից գնացի շար ու ծանր ժամանակի պատճառով, երբ սևորենները զայրացած ոտնատակ տրորեցին եկեղեցիները և սուսապալներին հարկապահանջութեամբ ու անառակ ընթացքով կործանեցին. մանավանդ զորեղանալ սիսեց արաբական

* Ղով. ԺԲ, 32:

առյուճարբու ընդը և ամբողջ աշխարհը զարձրեց տրորելու հող, Այսպիսի ննդություններից խուլս տալով՝ եկա Արցախ զավառի Հղերկ գյուղը՝ ժերուների Միհր եպիսկոպոսի մոտ: Նա ինձ անարժանիս ընդունեց, գյուղացիներից այս տեղը խընդրեց, սուլն եկեղեցին շինեց, և ես մնացի սրա մեջ տասներկու տարի, ապա նա վախճանվեց:

Նրա աթոռը զրպից Անդրեասը, որ իշխեց տասնմեկ տարի. իմ տեղը ինձ հանձնարարեց նրան, որը մեծ սիրով այս տեղը հաստատեց ամեն ինչով: Բայց այդ վայրերում սրբերի մասունքները չկային: Իսկ Տանձիբից²³⁵ Մխիթար անուևով մի անապատական ցանկացավ տեսնել Երուսաղեմ սուրբ քաղաքը. երկու ընկերներով գնաց, երկրպագեց բոլոր սրբություններին, և մի տարի այնտեղ մնալուց հետո, սուրբ Ստեփանոսի ու սուրբ Գևորգի մասունքներից Քրիստոսը շնորհեց նրան մի հավատավոր բյուզանդացի գյուղացու միջոցով, որը պահել էր իր մերձավորների համար, և երբ նրանք վախճանվեցին, սրբությունները տվեց Մխիթարին ու ասաց. «Կտանես զրանք մեր երկիրը և մի արժանավոր վայրում կտեղավորես»: Նա դանձը վերցրեց ու մեծ աճապարանքով գնաց դեպի Բյուզանդիայի կողմը՝ երկուսը կրելով թշնամուց: Հասավ Տավրոս լեռան մոտ, Սուրբ Անդրեի վկայարանը, որ բազմաթիվ ընկերներով նահատակվեց Մելիկիոս թագավորի կողմից: Այնտեղ նա մեծ աղաչանքով սպասավոր Քրիստոսի խնդրեց Անդրեի մասունքներից. նա էլ զիջելով նրա թախանձանքներին՝ տալիս է նրա խնդրածը:

Այդ ժամանակ ընդունելով թանկագին գանձը՝ գալիս հասնում է Արցախի կողմերը: Ես՝ Հովսեփոս, լսելով նրա համբավը, ընդառաջ ելա նրանց. սրբությունները արժանի կերպով հանգստացրի այդ օրը, մյուս օրը հարցրի Մխիթարին, թե ո՞ւր ես ուզում գրանք տանել: Նա ասաց. «Մտեղ աստված կամենա, զրանք այնտեղ կբնակվեն»: Իսկ ես ի սեր սրբերի համոզելով ասացի նրան. «Գիտեմ, որ ես անարժան եմ գալ զրանց սպասավորելու, բայց քեզ հետ միասին, Մխիթար, հույս ունեմ սպասավորելու մեր ամբողջ կյանքի ընթացքում»: Այդ ժամանակ նա համաձայնվում է և սրբությունները ղնում է վկայարանում, որ շինել էին մի փոքրիկ հյուան ու նրա որդի-

Հոհանը երեք տարում Բախտաներ Գարբինի օժանդակությամբ. բայց կանոնների կատարեցինք նրանց հիշատակը.

Մերանից հետո իմ մեջ ցանկություն առաջացավ սուրբ Հովհաննեսի նշխարներից ստանալ, որ, ըստ փրկչի վկայության, կանանցից ծնվածների մեջ ամենամեծն է: Եվ իմ աշակերտներ Քրիստոսատուրի, Գրիգորի, Սարգսի հետ սլառաստվելով՝ գնացի որոնելու Կարապետին Անդրե Երեցի հրամանով ու ճանապարհածախսով, իմ միաբանություն կրոնավորների Հովհանի ու Մխիթարի համաձայնությամբ: Եվ գնացի-հասա սուրբ քաղաք Երուսաղեմ: Այնտեղ երկրպագություն կատարելով մեծ տրամություն վերադարձա, որովհետև բոլորն էլ գունավորվել և բնդունել էին Քաղկեդոնի աշխարհակործան ժողովը: Նրանց առանց ողջույն տալու անգամ եկա իմ Գեղարքունի գավառը Պուհավանքը, որ ես դիտեի մանկությունից, ուր պահված է Հովհաննու մասունքների մի մասը և ես բուն ցանկությունս խնդրեցի սրբի սպասավոր Գրիգորիկից: Աստծու ողորմությամբ համաձայնվեց նա, բաց արեց տապանակը, և այնտեղ գտանք սուրբ Մկրտչի, Քրիստոս առաքյալի և նախավկա Ստեփանոսի մասունքները, որոնք առաջին հայրերը բերել էին՝ ստանալով սուրբ Երուսաղեմի ուղղափառներից: Ես՝ Հովսեփոս ասացա և բերի նույն վկայարանը. և ժողովուրդը, մեծապես խնդակցելով մեզ, ընդառաջ ելավ: Եվ այսպես տեղավորվեցինք ու ըստ հիշատակի տուն նշանակեցինք համաձայն հրամանի Կյուրեղ Երուսաղեմացու, որն ի փառս մեր Քրիստոս աստծու ընթերցվածքները ցույց տվեց: Սրանից հետո Գեղամա գավառի բոլոր սրբերը հաճույք զգացին, յուրաքանչյուրին անուևով ու գրություններով բերին, դրին եկեղեցին, որոնց բարեխոսությամբ տեք աստված թող ողորմի աշխարհին»:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՔԵ ԵՐՈՒՍԱԳԼԵՄԻ ԵՆՈՂԵՑԻՆԵՐԻ ԿԱՌՈՒԹՎԱՍՔԵՆԵՐԸ
ԻՆՉՔԱՆ ԵՆ ԵՎ ԻՆՉ ՁԱՓԵՐՈՎ ԵՆ ՀԻՄՆԱԳՐՎԱՍ, ԱՏՈՒՅԳԸ
ԱՅՈՏԵՎ ԿԳՏԵՍ

Կենարար Քրիստոսի անձնաշափ (իբր անձի շափով) տապանափոր քարը մեկ ու կես գրկաշափ հեռու է սուրբ կենարարի գերեզմանի մեջտեղի գմբեթից: Եվ գմբեթաձև սյունների վրա է, եկեղեցու վրա, որ շինված է հարյուր կանգուն բարձրությամբ և հարյուր կանգուն լայնությամբ, նրանցից յուրաքանչյուրի մեջ տասներկու սյուն կա. տասներկու սյուն վերնատան ներքևից, տասներկու սյուն վերևից: Այդ վերնատանն են գտնվում Քրիստոսի գեղարզը, սպունդը և ոսկեպատ սկավառակը: Իսկ մատուռ անվանված Կաթողիկե եկեղեցին, որ խաչի գյուտն է, քսան կանգուն ավելի հեռու է Հարուսթյան տաճարից՝ վերևում ու ներքևում երկայնությամբ վաթսուհինգ սյուն ունի: Իսկ սուրբ Գողգոթայի եկեղեցին, որ կոչված է Աղամի գերեզման, Հարուսթյան տաճարից հեռու է տասը քայլ. սա ներքևում և վերևում ունի պատարագի սեղան, ուր վեմի վրա խաչվեց Քրիստոսը: Իսկ սուրբ Սիոնի եկեղեցին մի ասպարեզ հեռու է Հարուսթյան տաճարից. սա ունի հարյուր կանգուն երկայնություն, յոթանասուն կանգուն լայնություն և կառուցված է ութսուն կամարակապ սյուներով: Վերնատուն չունի, այլ փայտյա վանդակաշար է կապված, և վանդակաշարից* կախված է այն փշեպսակը, որ դրին կենարարի զլխին: Եկեղեցուց աջ գտնվում է պատարագի վերնատունը և փայտյա գմբեթը: Վերնատան մեջ նկարված է փրկչի ընթրիքի արարողությունը, այդտեղ է արարողության սեղանը, իսկ պատարագ մատուցվում է Սիոնի վերնահարկում, որ դառնում է մի վերնատուն: Նաև սուրբ Սիոնը գտնվում է Պիղատոսի սենյակի աջում, որ կոչվում է Կապպաթա. այստեղ է նաև այն քարը:

* Վանդակաշար բառի դիմաց բնագիրը ունի թարգմանությունը՝ Առաջին անգամ Շահապարյանն է բացատրել (վանդակաձև հյուսված): Թարգմանությունը է, որով ձկնք են բռնում:

որի վրա Պիղատոսի առջևում կանգնած էր փրկիչը, և ուր չափմ երևում է ոտքերի հետքը. սրա ներքևում ավազանն է, որտեղ նա լվաց աշակերտների ոտքերը: Սիոնից ձախ բանտն է, ուր բանտարկեցին տիրոջը՝ Քրիստոսին. այնտեղ կա սեղան, որի վրա պատարագ է մատուցվում: Այն տեղում, քաղաքից դուրս, որտեղ հրեան բռնեց սուրբ կույսի դագաղը և թույլ շովեց թաղել, չորս սյունից մի գմբեթ է կառուցված և սյուններին, որ մարմարյա են, պղնձե խաչ է պոստված: Այնտեղից ցած երկու հարյուր հիսուն քարյա աստիճաններ են շինված մինչև սուրբ կույսի գերեզմանը, որ Գեթսեմանի ձորում է գտնվում, իսկ այստեղից մինչև Զիթենյաց լեռը, որտեղից համբարձվեց Քրիստոսը, ութ հարյուր աստիճան է:

Համբարձման տեղում Հարուսթյան եկեղեցու ձևով կա մի գեղեցիկ գմբեթարդ կառուցվածք, որի երկարությունն ու լայնությունը հարյուրական կանգուն են կազմում. այստեղից երևում են Հորդանան գետը, Հովր լեռը և շատ գավառներ: Իսկ Բեթղեհեմը Հարուսթյան տաճարից ավելի հեռու է: Հեռավորությունը արևմտյան կողմից երկու հարյուր քսան հրասխ²²⁶ է: Եկեղեցու մեծությունը չափը հետևյալն է. երկու հարյուր կանգուն երկայնություն է, հարյուր կանգուն լայնությունը. կառուցված է ինսուս մարմարյա սյուներով և քարե կամարներով. սրա մեջ է դարձյալ այն քարայրը, որն Աբրահամը գնեց իրրե շիրմավայր: Բեմից ներքև գտնվում են սուրբ քարայրն ու մուրրը, որտեղ սեղանն է, և պատարագ է մատուցվում: Եկեղեցուց աջ մատուռն է, ուր Հերովդեսի կողմից սպանված մատուկների մատուցեցին են պահվում: Այստեղից արևելք՝ Հորդանանի կողմից, Բեթղեհեմից երեք ասպարեզ հեռու այն տաղավարն է, ուր երկու եկեղեցի կա, և պատարագ է մատուցվում. իսկ Հորդանան գետը, որտեղ փրկիչը մկրտվեց, դեպի արևելք, Երուսաղեմից հեռու է յոթ հրասխ²²⁶, որտեղ խաչանման սաղաշին (տափակ քարաշին) մի եկեղեցի է շինված ութսուն կանգուն երկայնությամբ և ութսուն լայնությամբ. այդտեղ կա երեք պատարագի սեղան, և պատարագ է արվում, իսկ Զիթենյաց լեռը Երուսաղեմի արևելյան կողմն է:

ԵՐԱՅՍՏՂԵՍՈՐԻՄ ԱՂՎԱՆՔԻ ԱՆՈՒՆՈՎ ԵՐԵՎԱՆԻ ՎԱՆՔՆԵՐԻ
ԱՆՈՒՆԵՆԵՐԸ, ՈՐ ՎԱՀԱՆ ՄԱՄԻՊՈՆՅԱՆԻՆ ՈՒՂՎԱՍ
ԵՐԱՆԵՆԻ ԱՆԱՍՏԱՍԻ ՆԱՄԻԿԻՑ ԱՌՆԵՆՈՎ՝ ՍՈՎՈՐԵՑԻՆՔ,
ՈՐԱՆՔ ԵՆ

Դրանցից մեկը Պանդավանքն* է, որ Զիթենյաց լեռան արևելյան կողմն է, և որի նախաշինողն եղել է Աղվանքի Պանոն անունով մի ճգնավոր, իսկ այժմ կառավարում է Աղվանքի Պետրոս քահանան: Մրիի Սուրբ քառասունք վանքը, որ միննուլն կողմում է և մոտ է նրան, այժմ արաբներին է պատկանում: Պարտավի Սուրբ Աստվածածինը, որ Դավթի աշտարակի մոտ է, այժմ մի շամբորեցի Մարիամ անունով կին է կառավարում, իսկ կեսին տիրում է արաբ: Կաղանկատուքի վանքը միևնույն կողմում, այժմ տիրապետում է Թեոդորոսը՝ մի քրիստոնյա արաբահամական դպիր արաբ: Աբուղկամետի, Աղիոյիտի, Զարիշատի²³⁷ (վանքերին) տիրում է մի շար արաբ: Արցախի Սուրբ Աստվածածին վանքը Սուրբ Մտեփանոսից հարավ՝ ամբողջովին գրավում են արաբները: Ամարասի Սուրբ Գրիգորի վանքին այժմ տիրում է Գրիգորի անունով մի կին: իսկ կեսը պատկանում է արաբի: Աղվանից ուրիշ երեք վանքերի անունները, որ բունությամբ տիրել են արաբները, հայտնի չեն: Աղվանքի մի այլ վանք, որ Առավիների վանքի տակ է գտնվում, շուկամեջն է, և այժմ տիրում են արաբները, ավելի ճիշտ Երուսաղեմի հայրապետները նախանձից դրդված իանգարեցին վանքերի կողմից Հայաստանին և Աղվանքին օգնելը: քանի որ այնտեղ գտնվող ավելի քան հարյուր վանք, որոնց տիրում էին հայոց իշխանները, յոթ կենդանի²³⁸, որ անում է յոթանասուն հազար դահեկան, տվին Հուստինիանոս թագավորին և բոլոր վանքերը ազատեցին հայրապետների բռնի տիրապետությունից: իսկ հետո մերոնց անհոգ գտնվելու պատճառով բոլորը փոխվեց:

Վերջացավ Աղվանից միջին պատմության երկրորդ հատորի շարադրանքը:

* Գարգմանի Պանդալիոն վանքի (Պանդավանքի) անունով:

ՆԱԽ ԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՐԿԻՑ՝ ԳՐԱՎԵՂՈՒ ԱՇԽԱՐՀԻ ԲՈՒՐ ԾԱՅՐԵՐԸ,
ԵՎ ՈՐ ԱՅՍ ՍԿՍՎԷՑ ՍՈՒՑ ՄԱՐԿԱՐԵ ՄԱՀՄԵՂԻ ԿՈՂՄԵՑ

Գլխի բացահայտումը, ինչ որ ստացանք հոգի ուրախացնող ուսուցիչներից, արտահայտել կսովորենք, հիշելով նահապետի խոսքը, որ Իսմայելի վերաբերյալ մարգարեացավ, թե՛՝ դրա ձեռքը ամենքի վրա սլետք է լինի, և դա դառնալու է մեծ ցեղ*:

Պարսից սասանյան թագավորության թուլանալու ժամանակ սուտ մարգարեներին՝ Մահմեդ անունով մի մարդ հայտնվեց, որի մասին լսեցինք փրկիչից: Սա ապրում էր անապատում և դիվանի հոգով, վաղրագ աղեղնավոր մի մարդ էր: Մի օր սատանան վաղի երեի կերպարանք է առնում և սրան հանդիպեցնում է Բահերա անունով արիստական մի կեղծ միայնակյացի: սատանան տեղնուտեղը շփոթում է, իսկ քիալիճ աղեղը Մահմեդի կողմից ուղղվում է այդ մարդուն: Այս վերջինը սասանի գողալով ասում է, «Մի՛ մեղանչիր, որդի, որովհետև ես էլ քեզ նման մարդ եմ»: Մահմեդը նրան ասում է, «Ի՛նչ մարդ ես և ինչի՞՝ համար ես քարանձավում»:

Այդ ժամանակ նա Մահմեդին իր մոտ է կանչում և սկսում

* Մենդոց, ԺԵ, ԺԶ, 12:

է սովորեցնել Հին ու Նոր կտակարաններից՝ ըստ Արիստի, որն աստծու որդուն արարած է համարում: Իսկ ինչ որ նրա՝ այդ պիղծ ուսուցչի միջոցով սովորեց, հրամայվեց նրան, որ նա այդ նույնը պատմի վայրենաբարո արարների, և զահանդում էր, որ ոչ սք չգիտենա նրա տեղը: Եվ անգետ, հեթանոս ու կեղծավոր այդ ցեղը զարմացած էր մնացել հրաշափոսութեան պատճառով: Ասում են Մահմեդին. «Սրտեղի՛ց ես դու այդ իմանում»: Մահմեդը, խաբելով իր անտեղյակ ցեղին, պատասխանում է. «Հրեշտակն է խոսում ինձ հետ, որպես աստվածաբոս առաջին մարգարեներից մեկի հետ»: Նրանք գաղտնի լրտես են դնում իմանալու, թե ո՛վ է նրան այդ բաները պատմում կամ որտեղի՛ց է նա այս ամենը իմանում: Իսկ Մահմեդը, այս դավաճանությունը իմանալով, թաքուն սպանում է իր շար ուսուցչին և ավագաթագ անում: Ինքը նստում է միևնույն տեղում ու լրտեսներին ասում է. «Այստեղ հրեշտակը երևում է ինձ ու մեծամեծ հրաշքներ է պատմում»: Նրանք, սրան միայնակ տեսնելով, եկան պատմեցին սիալական, մոլորամիտ արաբ ցեղին: Նրանք մեծ խմբով հավաքվեցին, դիմեցին անշուր, դիվական անապատը և մեծ պատվով այդ դիվաշունչ Մահմեդին բերին իրենց մեջ:

Եվ ահա փրկչական խոսքը այնտեղ կատարվեց, որ ասում է, թե հանդես կգա սուտ մարգարե*։ Դիվախաբ Մահմեդը սկսեց մարգարեություն անել, ասելով. «Եթե դուք անսաք իմ մարգարեությունն ու բարոզությունը և կատարեք, մեր ցեղը մեծ իշխանություն կհասնի, ինչպես որ բյուզանդացիների դիրն է ասում, թե մեզ աստծուց իշխանություն տրվեց մեր հավատքի պատճառով: Եվ իրենց ատուշանների ու զոհարեբումների տեղերը անվանեց Աբրահամի գմբեթ և աստվածակոխ տեղ: Հրամայեց այնտեղ կոտորած սարքել ու այդ կոտորած անող զորքը Աբրահամի զորք անվանեց. հրամայեց շորանկյունանի զոհարանում աղոթք անել, քարարձան կանգնեցնել սվեց և համբուրել էր տալիս Աբրահամի անունով: Եվ կրանելի մարգարեն իր մարգարեությունը նրա վերաբերյալ արեց. «Եթե ամուսինը թողնում է իր կնոջը, և այդ կինը այլ տղա-

մարդու հետ է լինում, երբ վերագտնում է իր ամուսնու մտ, յլ՝ որ պղծվելով պղծվում է այդ կինը*»: Հենց այս բանը կատարեց Մահմեդը:

Տայր անունով մի արաբ մի գեղեցիկ կին ունեւր: Նրա համար Մահմեդը պատգամ է ուղարկում ամուսնուն, թե աստված հրամայեց, որ դու թողնես քո կնոջը: Իսկ այդ Տայրը իր կնոջը բերեց հրապարակի մեջ, երզումով վկաներ բռնեց և բաժանվելով իրենից հեռացրեց: Իսկ Մահմեդը այդ կնոջը իր մտ վերցրեց, իր մոլի կրքերին բավարարություն տվեց. ու դրանից հետո դարձյալ ասաց Տայրին. «Աստված հրամայեց, որ դու քո կնոջը ետ առնես»: Եվ այս զգվելի** օրհնքը մուտք գործեց նրանց ցեղի մեջ, այսինքն՝ եթե մեկը թողնում է կնոջը, այդ կինը պատկում է ուրիշի հետ, ապա կրին իր մոտ է տանում: Եվ այնպես է նրանց անօրեն օրենսդրությունը, որ մինչդեռ աստծու ահեղ անունով երզվելիս, ասում են, իսկ երբ կանանց ամոթաւքով են երզվում, երզումը շեն կատրում: Եվ ուրիշ շատ արտեղություններ Մահմեդը ավանդեց այդ ցեղին, որոնք նեւր կարասյաններն ու զորքն են. դրանք լինելու են նրա երկրպագուներն ու մարտակիցները: Նրանց վերաբերյալ է ասում օրհնյալ Պուրսը. «Այն մարդիկ, որոնք մեղքելով ապուխանված են և անպիտան են հավատքի մեջ, նրանց անմտությունը հայտնի կղանա մեծ դատաստանի օրը»***: Եվ մի այլ տեղ ասում է. «Անգամ լաց լինելով Քրիստոսի խաչի թշնամիների վերաբերյալ ասում եմ, որ դրանց արածը կորուստ է տանում****»:

Երբ լրացավ հայոց վաթսուհինգ թվականը, մուլար Մահմեդը հայտնվեց Մեղին քաչաքում, իսկ յոթնասուտն թվականը լրանալիս եկավ Աբրահամի գմբեթը և այդտեղից Սափար²³⁹

* Եբեմիա, Գ, 2:

** Բնագրում տաղակալի բառն է, որ թարգմանեցինք զգվելի Այս բառը սովորապես, տաղակալի տարբերակները Անառյանը կարծում է, որ լալաց արարների բառն է, որ աղահարգան է նշանակում: Մենք այդ ճիշտ չենք համարում: Տաղակալի գրաբարում նշանակում է զղվելի, պարչելի և անգլին կ կրտաված է: Համեմատիր. տիղմ տաղակալի:

*** Բ Տիմոք, Գ, 2:

**** Փիլիպ., Գ, 13:

* Մարկ., ԺԳ, 22:

ամսին գնաց այն քաղաքը, որ այժմ իր անունով կոչվում է Մահմեդի (քաղաք): Այնտեղ մնաց մի տարի և ամբողջ տարին այդ քաղաքից ասպատակներ էր սփռում, շահր ռաբի զովազ²⁴⁰ ամսին սկսելով՝ ռամազան²⁴¹ ամսի տասնիննին զբավեց Աբրահամի գմբեթը, այս ժամանակ նրա իշխանությունն ութերորդ տարին էր: Շավազ²⁴² ամսի տասնհինգին կովեց Բեհ պարսկի հետ. հաղվաթ²⁴³ ամսին օրհավասարի ժամանակ եկավ Մեքքա և այնտեղից վերադարձավ իր քաղաքը այն ժամանակ, երբ դեռ նույն տարում աղկադէ²⁴⁵ ամսից վեց օր մնում էր: Մեքքայում ամիրա նշանակեց Աբուաբդի որդի Մեդին: Նրա ընկերները վերադարձան Մեքքայից: Աբուհփի որդի Աբուբքրը ընկերների ավագն էր, և այդ Մահմեդի իշխանության իններորդ տարին էր: Տասերորդ տարում շահ ռաբիալու²⁴⁴ ամսի երկուսին երկուշաբթի օրը մեռավ Աբուբքրը՝ իշխելով տասը տարի: Տասերեք տարվա իր մոլորեցնող քարոզությունից հետո գաղտնի կրոն հաստատեց: Երբ հանդես եկավ, քառասուն տարեկան էր, իսկ վաթսուներեք տարվա մեջ մեռավ:

Գ Լ Ո Ւ Խ Բ

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹՅ ԻԼՔԵՐ ԷԻՆ, ՈՐՈՆ Ք ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԻ ՄԱՆՄԵԳԻՑ
ՀԵՏՈ ԱՄԻՐՄՈՒՄԵՆԻՔ ԵՂԱՆ

Մահմեդից հետո, իբրև երկրորդ, արաբների իշխանությունը զբավեց Աբուբքր Աբուկահփյանց, որ տիրեց ինը տարի: Արանից հետո իշխանություն գլուխ անցավ մար Իբն Խադաբը, որ տիրեց յոթ տարի, սրան սպանեցին: Ութման իբն Ափանը իշխեց տասնմեկ տարի, ապա թուլլ շուվին, որ նա իշխի, և Ութմանը իշխանությունը տվեց Աբդուլային, և իբրև պատիվ սա իրավունք ստացավ մագերի ու մորուքի վրա քրքում ցանել: Մավխան տիրեց ինը տարի: Եզիդ Իբն Մավխան իշխեց ութ տարի: Արա ժամանակ ապրում էր Հաշեշ Իբն Հուսուփը: Աբդլմեխթ Իբն Մրվանը իշխեց տասնմեկ տարի: Աբդլմեխթի որդի Վլիթը իշխեց ինը տարի: Սուլեյման Իբն

Աբդլմեխթը տիրեց տասնչորս տարի: Աբդլազլիֆ որդի Ումալը՝ տասը տարի: Եզիդ Իբն Աբդլմեխթը՝ վեց տարի: Հեշմ Իբն Աբդլմեխթը՝ քսան տարի: Վլիթ Իբն Եզիդը՝ մի տարի. սրան սպանեցին, և արաբների մեջ խառնաշփոթություն ընկավ: Մահմադի որդի Մրվանը իշխեց չորս տարի, սա սպանեց Կուրիշիկներին՝ արաբների գլխավորներից վաթսուն մարդու, որոնք սպանել էին Վլիթ ամիրային՝ իր առջև ակնարկելով սպանողներին:

Աբլ Աբասը Մարաստանից եկավ խորասանի իշխան Աբու Մուլիմի զորքերով ու օգնությունով, սպանեց Մրվանին և գրավեց իշխանությունը յոթ տարի: Հետո իշխեցին Մահմադի որդի Աբլ Աբաս Աբդլան, Աղայի որդին, Աբդլայի որդին, Աբդլ Աբասի որդին. Աբդլ Մուտադիբի որդին, որոնք այժմ հեշամիկներ են կոչվում. վերջինս գաղտնի սպանեց Աբու Մուլիմին. երբ իշխանության հասավ, նրա սպանությունից հետո ինքն էլ մեռավ: Աբու Ջափրը, որ Աբդլա կոչվեց, նրա եղբայրն է. սա իշխեց քսաներկու տարի և մեռավ Աբրահամի Գմբեթում: Աբդլայի որդի Մադին, որ Մահմադ է կոչվում, իշխեց ինք տարի: Մուսին՝ մի տարի, Մահիդի որդի Հարունը, որ կոչվում էր Մահդուն, իշխեց քսանհինգ տարի: Սա աշխարհին շատ նեղություն պատճառեց, սրա պատճառով Հայաստանի շատ գավառների քնակչությունը փախավ Բյուզանդիա: Հարունի որդի Մահմուդը տիրեց երեք տարի. իսկ կենդանություն օրոք Հարունը իշխանությունը բաժանեց իր երկու որդիներին՝ Մահմադին ու Մայմունին. ըստ ավագության Մահմադը գրավեց Բաղդատի ու խորասանի իշխանությունը, իսկ Մայմունը նրա դեմ դուրս եկավ պատերազմով: Մահմադը մեռավ, իսկ Աբդլան, որ կոչվում էր նաև Մայմուն, ամբողջ իշխանությունը գրավեց: Իբրահիմը իշխեց տասը տարի: Հարունը Մահմեկից հետո քսաներեքերորդ ամիրմունին էր, իսկ այս ժամանակ հայոց թվականության երկու հարյուր ութսուն տարին էր:

Գ յ ու լ խ Գ

ՈՄԵ ԵՐԿԱՐԱՆԱԿ ԲԱԿՈՒՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՈՒՆԵՐ ՆԵՐՍԵՑ ԱՆՈՒՆԵՑ,
ԵՂԱՎ ԱՂՎԱՆՔԻ ԿԱՔՈՂԿՈՍՍ

Աղվանքի կաթողիկոս Երանելի Եղիազարի մահվան ժամանակ Բահուր անունով քաղկեդոնական մի ոմն երկաբնակ աղանդավոր կար, որ մի ժամանակ եղել էր Գարդմանի եպիսկոպոս և հորջորջվել էր Ներսես: Սա Վարագ-Տրդատի կնոջ՝ Ապրամ տիկնոջ հետ, որ հետևում էր նույն աղանդին, դաշինք էր կնքել փառամուլ իշխանության հասնելու համար. սա ասել էր. «Ծթե դու կամենում ես, ինձ Աղվանքի հայրապետական աթոռը բարձրացրու, և ես ամբողջ Աղվանքը խոստովանության մեջ քաղկեդոնական կդարձնեմ»: Սրան լսելով շարափառ կինը՝ խորհրդակցեց Աղվանքի եպիսկոպոսների ու մեծամեծների հետ, որոնցից ոչ ոք չիմանալով դավադրությունը, միահամուռ հանձն առան կատարել այդ խնդիրքը: Իսկ ամենակարող սուրբ հոգին ներշնչեց Մեծիրանքի եպիսկոպոս Հովելին, որը բազմամարդ ժողովի առաջ Ներսեսից պահանջեց Քաղկեդոնի ժողովը և Լեոնի տոմարը նզովելու հայտարարություն՝ կնքված կաթողիկոսական մատանիով: Նա ստացավ նամակը, որը, ըստ կանոնական սահմանադրության, արևելյան (Աղվանքի) ժողովի կողմից ընդունվեց: Եվ ապա նույն ինքը՝ Հովել եպիսկոպոսը ու այլ եպիսկոպոսներ հայրապետական շնորհներով նրան հրավիրում են բազմելու Աղվանքի սուրբ աթոռին: Հենց նույն ժամին Հովել եպիսկոպոսը իր մոտ է վերցնում նզովքի թուղթը և զգուշությունով պահում: Սրանից հետո ապրում է տանջոք տարի ու վախճանվում է:

Այդ ժամանակ Ներսեսը հարմար է համարում կատարել իր մտադրությունը. իսկույն շտապում է Մեծիրանք գալառը, իրեն գործակից է ճարում վանահայր Զաքարիային, խոստանում է սրան եպիսկոպոս դարձնել և շնորհել տերունական հասը, եթե միայն սա վերադարձնի իր ձեռագիրը (նզովքի թուղթը), որպեսզի այրի: Նա նրան է տալիս երդման սուրբ գրությունը, իսկ սա առնում և տեղնուտեղը անմիջապես հրկիզում է: Այս Զաքարիային ձեռնադրում է Մեծիրանքի եպիսկոպոս և նրան

իր մոտիկ բարեկամը համարելով, վերադառնում է իր նախկին փախածին, որին երկար ժամանակ սպասում էր: Ապրամ տիկինը սրան զորում է, և նրա ու այլ նախարարների օգնությամբ, որոնք քաղկեդոնություն էին ընդունել, Ներսեսը քարուքանդ է անում բազմաթիվ սեղաններ եկեղեցիների, որոնց հանդեպ նա հաղթող զուրս եկավ: Եկեղեցու արժանաթառանդ ուղղափառ զավակներին հայածեց ու դարձրեց տարարնակ: Ամենից առաջ հայածեց Մեծկողմանքի հրաշագործ երանելի Իսրայել եպիսկոպոսին, որ խաղիբների, հոների շատ երկրներ քրիստոնյա դարձրեց, սրա հետ հայածեց նաև Գարգմանա եպիսկոպոս Եղիազարին: Իսկ եպիսկոպոսներից ոմանք չեն թարկվեցին նրան. դրանք էին Կապադակի եպիսկոպոս Հովհաննեսը, Ամարասի եպիսկոպոս Սահակը, Հոշի եպիսկոպոս Սիմոնը, Աղվանքի Ենրո մեծ իշխանը իր ազնվականներով. և եկեղեցու ուխտի բազմությունը մեծ ժողով գումարելով, նզովեցին Ներսեսին բոլոր հերձվածողների հետ միասին և նամակ գրեցին Հայաստան աղետավոր անցքերի մասին:

Գ յ ու լ խ Դ

ԱՂՎԱՆՔԻ ԺՈՂՈՎԻ ՆԱՄԱԿ ՈՒՂՎԱՍԾ ՆԱՅՈՅ ԵՂԻԱ
ԿԱՔՈՂԿՈՍՍԻՆ

«Հայոց Տեր Եղիա կաթողիկոսին Աղվանքի միաձայն ժողովից երկրպագություն:

Որովհետև մեր և ձեր միևնույն հավատք ունեցող հայրերը հոգ էին տանում միմյանց հոգիների փրկության համար, և տեր առածու ներողամտությամբ զորացավ քաղկեդոնական աշխարհակործան խիստ վտանգավոր կրոնը ու լցրեց աշխարհը, սակայն մեր կողմերը մինչև այսօր անարատ էին մնացել այդ աղանդից: Իսկ այժմ Ներսեսը, որին մենք կարծում էինք, թե բարի հովիվ էր մեզ համար, գայլ է եղել ու սկսել է հողոտել Քրիստոսի բանավոր հոտը. դրա համար կամեցանք ձեր գործությունը հիշեցնել, որպեսզի այցի վաք մեզ որպես ձեր անգամների և բժշկեք մեր վնասվածքը:

Ո՛ղջ եղեք տիրոջ շնորհիվ»:

ՀԱՅՈՑ ԵՂԻԸ ԿԱՔՈՂԻԿՈՍԻ ԵՍՄԱԿԸ ՌԵՂՂԱՍԵ ԱՐԳԻՄԵՆԻՔ
ԱՄԻՐՔՈՄԵՆԻԸ ՄԻՆՎՆՈՒՅՆ ՄՏ ՔՈՎ

«Աղշարհակալ Արդլ ամիրմոմնիին՝ հայոց եպիսկոպոսապետ
Օղիայից:

Ամենակալ աստծու շնորհիվ Քրիստոսին ծառայող մեր
երկիրը հազանդված ենք գտնում ձեր տերութեանը. թե՛
մենք, թե՛ Աղվանքը Քրիստոս աստվածության մի հավատք
ենք պաշտում: Իսկ այժմ նա, որ Աղվանքի կաթողիկոսն է և
նստում է Պարտավում, խորհրդակցել է բյուզանդացիների
կայսեր հետ, նրան է հիշատակում աղոթքներում և ստիպում
է, որ ամբողջ երկիրը հավատակից դառնա նրան և միաբան-
վի նրա հետ: Արդ՝ ի դիտութիւն թող լինի ձեզ, և անտարբեր
մի՛ մնաք այդ խնդրի վերաբերյալ. նրան մեղսակից է նաև մի
հարուստ տիկին. ձեր մեծ իշխանութեամբ հրամայեցե՛ք պատ-
ժել նրանց՝ արժանի իրենց այն գործերի, որ աստծու դեմ
մեղանշել կամեցան»:

ԱՐԳԻՄԵՆԻՔ ԱՄԻՐՔՈՄԵՆԻՔ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԱՅՈՑ
ԿԱՔՈՂԻԿՈՍ ԵՂԻԸՅԻ ԵՍՄԱԿԻՆ

«Աստծու մարդ Օղիայիդ՝ հայոց ազգի կաթողիկոսիդ, մտեր-
մական նամակը կարդացի և իբրև քեզ շնորհ իմ հավատարիմ
ստորագրելով թազմաթիվ գորքով ուղարկեցի: Մեր տերու-
թեան դեմ ապստամբ Աղվանքի վերաբերյալ հրամայել ենք,
որ, համաձայն քո կրոնի, նրանց ուղղութեան բերի, իսկ մեր
պատիժը քո ներկայութեամբ մեր ծառան կգործադրի Պարտա-
վում. ներսեսին և նրան համարժեց տիկնոջը միևնույն շղթա-
յով կապված անարգանքով կբերի արքունի դուռը, որպեսզի
քուրդ ապստամբների համար իբրև ցուլց նրանց նշավակեմ»:

ՀԱՅՈՑ ԿԱՔՈՂԻԿՈՍ ԵՂԻԸՅԻ ՊԱՐՏԱՎ ԳԱԼԸ, ԵՆԲՍԵՍԻՆ
ՊԱՏ ԺԱՂԸ ԵՎ ԱՂՎԱՆՔԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՄՔՈՎ ՍԻՄՈՆ ՍԱՐԿԱՎԱԳԱՊԵՏԻՆ
ԵՆԲՍԵՍԻ ՏԵՂԸ ԼՍՏԵՑԵԼԸ

Հայոց մեծ հայրապետ Նղիան գալիս-հասնում է Աղվանքի
Պարտավ խոշոր քաղաքը. նստում է մեծ եկեղեցում և հրամա-
յում է ներսեսին բերել իր առջև. բայց նա թաքնված էր ու չէր
գտնվում: Այդ ժամանակ Աղվանքի խիստ հավատացյալ Շերո
իշխանը բռնելով նրա մերձավորներին՝ հրամայում է բերել
Ներսեսին: Նրան կանգնեցնում են բազմամարդ ատյանի մեջ՝
Նղիայի առջև: Այդ եղկելին ոչինչ չպատասխանելով, ըստ
արքունի հրամանի, տաժանելի վերքեր ստացավ: Ոտ ոտի
կցված կապվեց այն կնոջ հետ, և պատրաստվում էր նրան օտար
երկիր տարազրել, բայց որովհետև այդ պատճառով ութ օր
անսվաղ մնաց, ուստի վախճանվեց: Նա իրեն թաղել տվեց
միևնույն շղթայով և անիծեց Շերոյին, որովհետև սա նրան և
Սպրամին առաջնորդեց դեպի շարը, և այդ այն պատճառով,
որ Շերոյի և Սպրամի միջև տարածայնություն կար իշխանու-
թեան վերաբերյալ:

Ներսեսը ուղղափառ կերպով աստուծուց տասնչորս տա-
րի, իսկ քաղկեդոնականութեամբ՝ երեք ու կես տարի՝ նման-
վելով Նեոխն, որ պատրաստվել է հանդես գալու վերջին օրի-
րում:

Մրանք այսպես լինելուց հետո նույն ժողովում քնտրեցին
Սիմոնին, որ մի պարկեշտ ու սուրբ մարդ էր և ձեռնադրեցին
նրան Աղվանքի հայրապետ, որ Ներսեսի խոսովությունը վե-
րացրեց երկրից և բազմաթիվ ուղիղ կարգ ու կանոն ավան-
դեց շեղված եկեղեցուն. իսկ եղկելի ներսեսի հերձվածային
գրքերը, որ նա լցրել էր արկղերը, վերցրեց բոլորը և իր թե-
ղալուր²⁴⁵ կոչված ամառանոցավայրում լցրեց Տրտու²⁴⁶ գետը.
սա աստուծուց մեկ ու կես տարի:

ՀԱՅՏՈՅ ԿԱԹՈՂՈՍԻՈՍ ԵՂԻՍՅԻ ԱՂՎԱՆՔԻ ԺՈՂՈՎԻՑ ՊԱՀԱՆ ԶԼԾ
ՔՈՒՂԹԸ, ՈՐ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԱՂՎԱՆՔԻ
ԻՄԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՇԵՆՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

Որովհետև բազմաթիվ ու տեսակ-տեսակ շարութեամբ, ինչպես որ ամեն ժամանակ սովոր է բարին ատող և ընդհանուր փրկութեան հակառակորդ սատանան որսալ մարդկանցից միամիտներին և ըստ իր բնածին սովորութեան կռվել եկեղեցու ծառաների դեմ, այլպես էլ կամենում է գտնել նաև ընտրյալների մեջ՝ ըստ այն խոսքի. «Մեր թշնամի սատանան աւուրծի նման մոնչում է և շրջում, թե ում արդյոք կլանի*», քանի որ մեր նախահոր ամենաառաջին ստեղծման ժամանակ ապստամբ գինվորի (սատանայի) միևնույն շարութեանը հեռացրեց մեզ կենաց փայտից և քաղցր ու ախորժելի փափուկ դրախտից: Եվ սատանան հենց սկզբից մեղանչում է մանավանդ մտքով թույլ ու տատանւող, դիվամոլոր անմիտ այն մարդկանց հանդեպ, որոնց միտքը կուրացած է համաձայն շարութեամբ ընթացող ժամանակների, որպեսզի Քրիստոսի փառքի լույսը նրանց վրա չծագի: Որովհետև բանսարկուն ինչ-որ զրկվեց իր սկզբնական շարութեամբ կուռքերին երկրպագութիւնն աւուր մոլորեցնող խարեութիւնից, այժմ անմիտ, աստծու եկեղեցին պառակտող մարդկանց շնորհիվ նոր խոսքով ու անմաքուր ձևով կամեցավ ձեռք բերել թե՛ դրամագուլթը և թե՛ տոկոսը: Այդ պատճառով էլ նաև մեր մեջ այժմ երևաց նեստորի ու Մաքսիմիանոսի շար ու դառնարմատ աղանդը՝ անօրեն դարձած Ներսեսի միջոցով, որը սուրբ հոգու ներողամտութեամբ կարգվեց Աղվանքի առաջնորդ, բայց խորամանկութեամբ դարձավ հավատակորույս ու մեր հոգիների մոլորեցուցիչ: Որովհետև մեր առաքելաբարոզ (առաքյալների նման քարոզող) հայրերի փրկարար ավանդութիւնը, որ անարատ ձեռքերով հաստատել էին եկեղեցիներում, նա անարժան ձեռքերով դուրս մղեց. բարուն նախանձախնդիր, ուղղափառ հավատի ավանդապահ

* Ա Պետրոս, Ե, 8:

կոխկոպտաներին ցաքուցրիվ արեց. ոմանց բամբասանքներով հայածեց օտար Լրկրներ, ոմանց վշտի ու նեղութեան մեջ նետեց, պատվական աթոռը խորտակեց և ճգնավոր կրոնավորների խմբերը խառնաշփոթութեան մեջ գցեց: Նրա կողմից Քրիստոսի սուրբ մարմնի պատվական անդամները ցաքուցրիվ զարծվեցին, իսկ Սիոնի որդիները խաբեութեամբ բոլորովին մոլորվեցին: Մեր սուրբ տաճարը փոխվեց ապականութեան, բայց Երեմիայի ողբերգութեան, մեր սրբութեան փառքը վերացավ, և շորեկուտի տիեզերքում մեր սլարծանքների պարծանքը մարելով կործանվեց:

Բայց հենց այստեղ մեր փրկիչ աստծուն թող օրհնութիւնն ու ղոհնութիւնն լինի, որ թույլ շավեց մարդկութեան թշնամուն մինչև վերջ առաջ գնալ: Եվ զթալով մեր տկարութեան վրա, ողորմելով իր ժողովրդին՝ մեզ մոտ ուղարկեց թե՛ պատվական հայր Եղիայիդ, աստծու շնորհիվ հայոց կաթողիկոսիդ, սուրբ Գրիգորին զուգաթու սուրբ ու ճշմարիտ մարդուդ, ձեր կոխկոպտաներով ու վարդապետներով, որոնք են՝ Խոսիտուհայոց եպիսկոպոս Սիմոն, Ամատունայց²⁴⁷ եպիսկոպոս Սարգիսը, Ռուսաակի եպիսկոպոս Սարգիսը, Հովհաննես վարդապետը, և ձեր ուրիշ շատ աշակերտներով եկաք-հասաք մեր Պարտավ մայրաքաղաքը ու ձեր քաղցրուտույց քարոզութեամբ մեր միջից շարք վերացրիք և, հիշելով մեր առաջին հայրերի անվանդութիւնները, վերանորոգեցիք մեր հայրապետութեան աթոռը այն սրբասուն մարդու ձեռքով, որի ճշմարիտ լինելուն մենք երաշխավոր ենք: Այդ պատճառով մենք բոլորս՝ Աղվանքի Սիմոն կաթողիկոսը, Կապուղակի Հովհաննես եպիսկոպոսը, Հոշո Սիմոն եպիսկոպոսը, Ամարասի Սահակ եպիսկոպոսը, Ներսիմիոնի վանքի տանուտեր սրբասեր Քչիկր աղանդից զերծ մնացած իր ամբողջ միաբանութեամբ, Գաւալանքի²⁴⁸ տանուտերը, Կատարո վանքի²⁴⁹ տանուտերը, Հովսեփի վանքի²⁵⁰ տանուտերը, Կաղանկատուքի Գավիթ վանականը, Տրիտակերտի²⁵¹ Պետրոս վանականը, Աղածորի Պողոս վանականը, Աղվանքի իշխան Քրիստոսասեր Ծերոն, Աղվանքի սպարապետ Զվանքոն, Վարդան տառիկն ու նրա եղբայր

* Նեմիա, ԺԱ, 15:

Գագիկը, Հրահատյան Բարը, Վարազմանյան Վախթանգը, Թագավորական տոհմից Քարոյան Պատրիկը, Վարազհոհանյան Վահանը, Անաստոյան Թեոդորոսը, Ռոստոմ Վարազ Աքոյանը, Զարմիր՝ Վարազ Քուրդաքչյանը՝ Թագավորական ցեղից, Մահմեդ Շերոյանը և այս երկրի բոլոր մյուս ազաւանները օրհնեցինք և հոգևորականների ու աշխարհականների միաբանութեամբ ընդունեցինք մեր առաքելական հովատը, որը նախ սուրբ Եղիշայից հիմնադրվեց, ապա սուրբ Գրիգորիսից հաստատվեց և մինչև այժմ իր ուղուց չէր շեղված: Բայց երբ փորձանքը վրա եկավ, աստված հասցրեց իր օգնութեամբ թո՛ւ սուրբ Գրիգորի հաջորդի՞ դեռ՞ով, Գրիգորի, որի ուղղափառութեամբ աշակերտել ենք և այժմ կաշակերտենք քեզ՝ հայոց կաթողիկոս տե՛ր Եղիայից, որ վրեժխնդիր եղավ արդարութեան թշնամու նկատմամբ:

Եվ արդ՝ մենք բոլորս նզովում ենք բոլոր հերձվածողներին՝ առաջիններին, միջիններին ու վերջիններին, նոմինոսին ու նրա ուսուցիչ Արիստին, Վաղենտինոսին, Ապոդիմարին, Մանիին, Մարկիոնին, Եվտիքեսին, Նեստորին, Գիողորոսին, Թեոդորիտոսին, Քաղկեդոնի ժողովը, Լեոնի տոմարը, Մաքսիմոսին ու նրա աշակերտներին, որոնց հետ նզովեցինք նաև մեր եղկելի ներսեսին, որը ընդունեց երկաթնակ ազանդը, և նրանց, որոնք հետևում են այդ ազանդին: Մուշե կանոնները աստծու և ձեր սրբութեան առաջ հաստատեցինք, որպեսզի սրանից հետո մեզնից ոչ ոք չհանդգնի մեր ու ձեր հայրերի ավանդութեանից դուրս գալ: Իսկ եթե մի որևէ հանդուգն գտնվի, որը կրկին մոլորութեան մեջտեղ գցի, թող այդպիսին նզովվի սուրբ երրորդութեանից ու մեր միաբանութեանից, սուրբ հոգու շնորհներից անմաս մնա և խոստացված արքայութեանը չհասնի: Իսկ եթե եպիսկոպոսներից մեկը այդպիսին կլինի, պատվազուրկ կարվի և բարձր աթոռից կընկնի, իսկ եթե քահանաներից լինի, թող նույնը կրի, եթե կրոնավորներից մեկը լինի, նզովվելով կհալածվի, իսկ եթե ազնվականներից է, կհեռացվի եկեղեցուց, չի թույլատրվի ընկերների հետ շփվելու, մինչև որ շուղովի: Նույնպես և Աղվանքի կաթողիկոսների ձեռնադրութեան համար այսպես սահմանեցինք. քանի որ մի կարճ ժամանակ մեր կաթողիկոսները մեր եպիսկոպոսներից

կին օծվում, բայց որովհետև մեր երկիրը սխալ գործ բունեց և հերձվածող դարձավ, դրա համար աստծու և ձեր հայրութեան առաջ պայմանավորվեցինք, որ Աղվանքի հայրապետութեան ձեռնադրութեանը մեր երկրի միաձայնութեամբ սուրբ Գրիգորի աթոռի միջոցով լինի, ինչպես որ էր սուրբ Գրիգորից սկսած, որովհետև քրիստոնեութեանը մենք այնտեղ ընդունեցինք և նշմարութեամբ գիտենք, թե այն, ինչ դուք եք ընտրում, աստծուն և մեզ հաճելի է: Այս պայմանից ոչ ոք իրավունք չի ունենա դուրս գալ կամ այլ ձևով վարվել: Իսկ եթե այսպես լինի, անվավեր ու փուշ կլինի, և այդ ձեռնադրութեանը ընդունելի չի համարվի: Արդ՝ նրանք, որոնք աստծու երկյուղով մեր սահմանադրութեան կանոնները կկատարեն, սուրբ երրորդութեան ու աստծու բոլոր ուղղափառ ծառայներից կօրհնվեն: Իսկ եթե որևէ մեկը ընդդիմանալով շեղվի այս ճշմարտութեանից, ով էլ որ լինի, ինքն է աստծուն պատասխան տալու:

Այս թուղթը գրվեց միաձայնութեամբ և աստծու միջնորդութեամբ երկու կողմերի միջև հավատի հաստատուն ու անշարժ լինելու համար՝ արարների ութսունհինգ և հայոց հարյուր քառասունութ թվականներին, հրոտից ամսին²⁵³, Կնթիկ կամքով ու մատանինքով մեր, որոնց անունները գրված են վերևում»:

Գ յ ու ի ս թ

ՉԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ԵՂՆԵՑ ԳԼԵՏԿԱՆԻ ԹՈՒՂԹԸ՝ ՈՒՂՎԱՆՔ ԱՂՎԱՆՔԻՆ

«Աղվանքում գտնված շարափառ ներսեսը իր շարժումը հավատի վերաբերյալ և Քաղկեդոնի երկաթնակ ազանդի գունդարդումը սերմանեց շատերի հոգիներում և իր խորամանկ շարութեամբ վտանգեց եպիսկոպոսներին, քահանաներին, կրոնավորներին, այդ զգալով ես՝ հայոց կաթողիկոս Եղիաս, իմ եպիսկոպոսների հետ եկա Աղվանք՝ ձեր գերահռչակ Պարսավ քաղաքը: Եվ ինձ մոտ հավաքվեցին հոգևորականներն ու աշխարհականները, ցույց տվին ինձ այն թուղթը, որ առաջ

նդովի և ներսեսին գցել էր Աղվանքի կաթողիկոսությունից: Թեպետև նա բռնի կերպով մնացել էր կաթողիկոսական աթոռին, սակայն նույն նպիտակությունները և եկեղեցու բովանդակ միաբանությունը վերստին գրոյ ու կնիքով նդովեցին նրան ու աստծու միջնորդութեամբ մեզ հետ միասին պայման դրեցին, թե կամենաք միևնույն հաստատութեամբ և շենք բնգտնելի Քաղկեդոնի պիղծ աղանդը ու Բակուրի ուսմունքը: Արգ՝ եթե հավատարիմ եք մնում նույն պայմանին և սուրբ հայրերի ավանդութեանը, ընդունեցի՛ք նրանց և սիրեցի՛ք ինչպես ձեր հոգևոր տեսուչների, իսկ եթե որևէ մեկը շեղվի այս պայմանից, լինի կաթողիկոս կամ եպիսկոպոս, իշխանութեան շունի ձեզ վրա. դուք մնացի՛ք ձեր եկեղեցիներում և միշտ ու անդադար աղոթք մատուցեք աստծուն: Թող ձեզ վրա աստված լինի իշխան և ուղղափառ վարդապետները: Այս իբրև ձեզ համար ապահովութուն հանձնեցի Ներսիսի վանքի վանահայր սրբասեր Քչիկին և Հովսեփի վանքի վանահայր սրբասեր Գրիգորին: Ես՝ հայոց կաթողիկոս Նիքիտ, իմ եպիսկոպոսների հետ միասին Աղվանքի ժողովից ստացա ձեր միավորման թուղթը և այս պայմանի թուղթը հանձնեցի ձեզ, որպեսզի ոչ ոք չհանդգնի շեղվել կնքված ուխտից: Եվ երկու նամակն էլ իմ մատանիով կնքեցի, ավեցի պահպանութեան ներսեսիսի միաբանութեանը սրբասեր հայր Քչիկի միջոցով՝ որպես ապահով լինելու պայման:

Գ յ Ո Ւ Խ Ժ

ԸՍՏ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂՎԱՆՔԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ,
ՈՐԸ ՆԵՐՔԵՆԻ ԱՐԳԼՄԵԼԻՔ ԱՄԻՐՍՈՄՆԵՆ ՏԱՐԱՎ ԵՎ ԳՐԵՑ
ԱՐՔՈՒՆԻ ԳԻՎԱՆԸ

Սուրբ հավատի այս խոստովանագիրը, որը պահանջեցինք Պարտավի ժողովից՝ դրավոր կերպով մեզ ծանոթացնելու ճշմարտութիւնը, երկու բնույթ ունի. առաջին՝ հերետիկոսութեանը ժխտող խոսք է և հոգի ուրախացնող վարդապետների ընդդիմախոսութիւնն է. անմիջապես ստույգ կերպով իմա-

ցանք, նախ ես՝ Աղվանքի իշխան Շերոս, աղվանից սպարապետ Զվանքոն, Վարդան պատրիկը և նույնի եղբայր Գագիկը, Վախթանգ Վարդամանյանը, որի նախնին Միհրական տոհմից քաջ Վարդանն է, որը Աղվանքի արքա Վաչագանի ժամանակ արքայի կողմից Աղվենում²⁵³ ժողովի նախագահ եղավ, բնակվեց Գարդմանում, արքաների զարմից Պատրիկ Քարոյանը, որի տոհմը միևնույն Վաչագան արքայի հրամանով բնակվեց Աղբերդ գավառում²⁵⁵, սրա նախնիները քաջ Վաչագանն ու Վաչեն էին, որոնց անունները ըստ կարգի կան ցուցակում. Բաբ Հրահատյանը, որի տոհմը Ատրպատականի իշխաններից է՝ բնակված Կապաղակում և Կողթում²⁵⁶, Վահան Վարազ-Հոհանյանը՝ մաղինացիների զարմից, որոնք հավատքով հակորթան են և եկան, բնակվեցին Կամբեշանում, Ռոստոմ Վարազ-Աքոյանը, որի տոհմը Պարսկաստանի Ստահր գավառից է, բնակվեց Ուտի գավառի Կաղանկատուք ավանում. Զարմիհր Վարազ-Քուրդակյանը և Մահմադ Շերոյանը՝ Գըլմունքի²⁵⁷ տերերի որդիները, որոնք բնակվել էին Աղվանքի արքայատուր Դղմահողբում²⁵⁸, Այս բոլորը արձանագրվեցին Արզլամելիք Ամիրմումնիի գիվանում այն պատճառով, որ եթե սրանցից մեկնումեկը գտնվի երկարնակ եղած, սրով ու գերութեամբ բնաջնջվի: Այսպիսով Աղվանքի բոլոր եկեղեցիները խաղաղվեցին:

Գ յ Ո Ւ Խ ԺԱ

ԱՂՎԱՆՔԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ՍԻՄՈՆԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՆԵՐՍԵՍԻ
ՏՊԱՍԼՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Այս կանոնադրութիւնը սահմանվեց Աղվանքի Սիմոն կաթողիկոսի կողմից, երբ նա աթոռ նստեց ժողով գումարելու համար, որ տեղի ունեցավ անիծյալ ներսեսի պատճառով, բանի որ սա եկեղեցիների կարգ ու կանոնը փոփոխեց: Այդ պատճառով հարկ եղավ վերստին ուղղել:

Բայց քանի որ բարեբար ու մարդասեր ամենակալ աստված, ըստ իր մեծ ողորմութեան, կամեցավ գթալ մեզ քաղցրու-

թյամբ, իր անշափ սիրո շնորհիվ հովիվ, տեսուչ ու առաջ-
նորդ նշանակեց մեզ՝ իր բանավոր հոտի համար, որը սուրբ
առաքելական եկեղեցին է: Եվ այս աստվածային ու մեծ պա-
տիվը մեզ շնորհել է Քրիստոսը ոչ թե մեր բարեգործ ու ար-
ժանի լինելու համար, այլ ըստ իր անշափ ողորմության կա-
մեցավ հենց ինքը և մեզ պարզեց իր շնորհով: Ինչպես ասում
է հրանելի առաքյալը, որի բերանով Քրիստոսն էր խոսում.
«Սուրբ հոգին ձեզ իր հոտի համար հովիվներ ու տեսուչներ
նշանակեց, արդարությամբ հովվելու համար, այդ պատճառով
ձեզ պատվիրում եմ. զգուշացե՛ք ձեր անձերի ու հոտի համար՝,
նաև՝ երբ տերը Մովսեսին քահանաների վերաբերյալ պատ-
վիրում էր, այսպես էր ասում. «Քեզ գլուխ և առաջնորդ եմ
կանգնեցնում իմ ժողովրդին, որպեսզի դու նրանց զգուշաց-
նես, որ իմ պատվիրանը պահեն, ժրացի՛ր, քա՛ջ եղի՛ր ու մի՛ ծու-
լանա»^{**}. Այդ նույն օրինակով նաև այլ մարգարեների միջոցով
մեզ է զգուշացնում մարդու որդի տերը. «Քեզ դիտորդ նշանա-
կեցի իմ ժողովրդի վրա. հիշեցի՛ք նրանց պատգամները,
ինչպես իմ կողմից ասված, որպեսզի մեղավորն ու անօրինը,
դանան իրենց շար ճանապարհից ու ապրեն. եթե չզգուշաց-
նեք, նրանց արյան համար ձեզ պատասխանատու կգարձեն»^{***}»:
Տիրոջից ունեք այս ահավոր ու սոսկալի պատվերը, այլև այն,
որ ասում է. «Ձեզ իրավունք տվի թողություն տալ մեղքերին
ու մարդկանց մեղքի կապանքներից արձակելու: Եվ արդ՝ ոչ
թե մեր անձով կամ ուժով առանք այս իշխանությունը, պա-
տիվը և առաքելական աթոռը, այլ բոլորի արարիչ ու ստեղծող
աստված մեզ նշանակեց այս տեղում, որպեսզի ժողովուրդ-
ներին հովվենք՝ ըստ նրա հաճության:

Վրա համար, ո՛վ իմ սիրելի ու պատվական եղբայրներ,
Քրիստոսի ընտիր աշակերտներ և նրա պատվիրանների ճշ-
մարիտ սպասավորներ, մեզ պետք է ու արժան է պտղաբերել
աստծու համար բարի ու քաղցր պտուղի հաճույս նրա և առա-
քելական հիմքի վրա շինել, որը Հիսուս Քրիստոսն է, ոսկի,

արծաթ, թանկագին քարեր, այսինքն՝ տեսակ-տեսակ առա-
քինություններ ու ամեն բարի գործ, որպեսզի մեր փրկիչ
աստծուն ներկայանալիս ընդունենք փառքի պսակ:

Արդ՝ ընտրենք բարին ու մերժելով անարգենք շարք,
սուրբ հոգու շնորհիվ ու նրա պատվիրաններով. ինչպես մեզ
հրամայեց տերը՝ մարգարեների, առաքյալների ու վարդա-
պետների միջոցով, պետք է նախ ամբողջ սրտով սիրել աստ-
ծուն և պահել նրա պատվիրանները, մեր ճշմարիտ ու աստ-
վածային հայրերից ընդունածները անշարժ ու հաստատուն
բռնել, նույնպես սուրբ եկեղեցու կարգ ու կանոնները ան-
խափան պահել, անարատ քահանաների ու սպասավորների
միջոցով պայծառացնել. միմյանց սիրել ինչպես սեփական
անձը, միարան կերպով կրոնավորել ըստ կանոնական հրամա-
նի, շթողնել ու թույլ չտալ անարժաններին ու զինվորական-
ներին գրավել եկեղեցու իշխանությունը. ո՛չ պոռնկորդինե-
րին, ո՛չ շնացողներին, ո՛չ մարդասպաններին, ո՛չ գողերին,
ո՛չ ստախոսներին, ո՛չ սուտերգմանակներին, ո՛չ զրկողնե-
րին ու շարաչք ազատներին, ո՛չ գովադներին, ո՛չ էլ ամենևին
զինվոր մարդկանց, հեծյալների ու մաքսապետների, ոչ որ
չհանդգնի տալ եկեղեցու իշխանությունը և ո՛չ էլ այդպիսի-
ներին հանձնի հացն ու հասը, որովհետև աստվածային օրեն-
քով ինչ որ ժողովուրդը իր մեղքերի համար տալիս էր աստծու
տանը, այն վայելում էին քահանաները, սեղանի անարատ
պատարագիչներն ու սպասավորները, քանի որ հասը պատ-
կանում է նրանց, որոնք զօր ու զիշեր աստծուց խնդրում են
սեր ու հաշտություն աշխարհի համար, մեղքերի թողություն,
հոգիների ու մարմինների առողջություն, և ոչ թե աստված
հրամայել էր, որ անարժանները կամ զինվորականները տիրեն
եկեղեցու իշխանությանը, և ցատում առաջ բերեն աշխարհի ու
իրենց վրա: Որովհետև փառքի տերը երբ Մովսեսին տաճարի
մասին պատվերներ էր տալիս, ասաց, թե՛՝ «Անարատ ու սուրբ
քահանաներին ընտրիր Աստի ցեղից և ոչ թե Իսրայելի մյուս
ցեղերից ընտրիր զինվորի անարժան հանցավոր մեկին կամ
սրատավորի՞: Ինչպես հենց ասում է օրինակ գիրքը, թե՛՝ «Թող

* Գործք, Ի, 28:

** Գառ., ԺԱ, 11:

*** Եզեկ., 19, 7:

անորժամանակը շահնդզնեն իմ սեղանի առջև կանգնել և ոչ էլ համարձակիլն եկեղեցու տուրքերից ուտել:» Նույնիսկ քահանաները, որոնք իրենց վարքով անարժան են, մերժվելով հեռացվում են ժառանգութունից. և հասարակ ժողովուրդը բուրբովի շպեռք է մտնում ո՛չ պաշտամունքի, ո՛չ կարգ ու կանոնի և ոչ էլ քահանաների ցեղին, իսկ նա որ հանդգնի, պատժվելով կապանվի, ինչպես Կորիսը, Գաթանը և Աբիրոնը²⁵⁹, որոնք խորասուզվեցին, կամ նույն ինքը Ռզան²⁶⁰, նույնպես և ուրիշ շատերը, որոնք իրենց աստիճանից վեր հանդգնեցին աստծուն պաշտամունք մատուցել: Որովհետև խորանը, սուրբ եկեղեցու նոր ուխտի քահանաները օրինակ էին, որ անարժաններն ու զինվորները շահնդզնեին եկեղեցում ապրել: այս պատվերը փրկչի հրամանով ավելի ևս հաստատեցին սուրբ առաքյալները, ասելով թե՛՝ «Սուրբ հոգուն և մեզ հաճո թվաց՝ այսպես կարգել: զինվորներն ու անարժանները շպեռք է հանդգնեն եկեղեցին զցել իրենց իշխանության տակ, իսկ ով որ հանդգնի, թող նզովվի»: Ըստ այդմ նաև մեր երջանիկ հայրերը հաստատել են. «Թե ոչ ոք իրավունք չունի աստծու եկեղեցին հանձնել անարժան մարդկանց ու զինվորների, կամ ծախել իբրև ունեցվածք, կամ տալ իշխաններին ու նրանց դաշակներին իբրև նվեր: Նույնպես էլ քահանաները իրավունք չունեն եկեղեցու հասույթը կամ հացը տալու անարժան մարդկանց հյրաչյրներին ու որդիներին և ոչ էլ պետք է հանդգնեն վաճառել եկեղեցու ժառանգութունը. նույնիսկ եթե քահանաները ու սրանց եղբայրներն ու որդիները անարժան լինեն, պետք է զրկվեն ժառանգութունից, իսկ նրանք, որոնք կը հանդգնեն, թող նզովյալ լինեն»^{*}:

Մենք աստծուց և նրա պատվիրաններից այս հրամանն ունենք, ուստի շպեռք է աստծուն հակառակ լինենք: Եվ եկեղեցիների վերաբերյալ այս օրենքները այսօր էլ պահում են բոլոր կալվածատերերը, որովհետև. երբ իրենց սեփական գյուղերը վաճառում են, պայմանագիրը այսպես են գրում, թե դատ է եկեղեցուց և եկեղեցու հողից: Քանի որ աստծու եկեղեցիները ազատ են և որևէ մեկի իշխանության տակ չեն

պանվում, բացի եպիսկոպոսներից և նրանցից, որոնց հանձնում են եպիսկոպոսները, այսինքն՝ անարատ մարդկանց ու հմարիտ սուրբ քահանաներին և ոչ թե անարժան զինվորականներին, ուստի սրանից հետո և առաջ ոչ ոք թող շահնդզնե այդ այգպես անել: Աստծու պատվիրանների հակառակ է և հոգու ու մարմնի փրկության համար կորուստ եկեղեցու ազատութունը անարժանների ձեռքը մատնել: Այդ առթիվ շատերից լսում եմ, որ տրտնջում են, թե շատ տեղերում աստծու եկեղեցուն վանականությամբ հանդերձ զինվոր մարդիկ են տիրում, որոնք իրենց շար գործերի պատճառով արժանի չեն եկեղեցի մտնելու, թող թե եկեղեցական հասույթն ու հացը ուտելու:

Այս առթիվ ներսմահր²⁶¹ վանահայր սրբաուն Քշիկր գրի է, թե աղվանից իշխան Վարագ-Տրդատը մի փոքրիկ գյուղակ է նվիրել սուրբ խաչիս իր հոգու փրկության համար սպասավորելու, իսկ այժմ Փուսան-Վեհ անունով մի աշխարհիկ հեծելակ, ուր անառակությամբ կյանք է անցկացնում, իուղթ է մեջտեղ բերում, թե Աղվանքի իշխանը ինձ է տվել այդ եկեղեցին վանականությամբ, որպեսզի ես հոգամ: Այդ պատճառով, ո՛վ սիրելիներ, այս իրավունքները կմնան այսուհետև ու ապագայում, իսկ այն Փուսան-Վեհը, ըստ սուրբ հոգու հրամանի, շպեռք է տիրի այն եկեղեցուն, այլ անբիծ ու անարատ քահանաները կիշխեն եկեղեցու վրա, քանի որ նա ո՛չ աստծուց է իրավունք ստացել և ո՛չ էլ մեզնից:

Արդ՝ ես աստծու շնորհիվ աղվանից կաթողիկոս Սիմոնս, բոս աստվածային պատվիրանների ու կանոնների այսպես հրամայեցի, որ աստծու եկեղեցու իրավունքները իրենց ձեռքը վերցնեն ճշմարիտ, ուղղափառ քահանաները, որոնք չընդունեցին եղկելի ներսեսի աղանդը. զինվորներն ու աշխարհականները եկեղեցու վրա իշխանութուն չունենան և բռնի կերպով չվերցնեն եկեղեցուն արվող նվերից: Բայց եթե որևէ մեկը հօսկոցնի, աստծու և մեր կողմից պատժի կենթարկվի: Իսկ եթե որևէ մեկը եկեղեցու վերաբերյալ թուղթ մեջտեղ հանի բոս մարմնավոր ու աշխարհական իրավունքների և ոչ թե աստվածային պատվիրաններով ու կանոններով, այդպիսի թուղթը անվավեր է ու չհաստատված, և ոչ ոք այն վավերա-

* Տե՛ս վերը՝ Աղվանի ժողովի կանոնները:

կան լպետր է ճանաչի, որովհետև աստված հրամայել է, որ եպիսկոպոսներն ու քահանաները հող տանեն եկեղեցու մասին և ոչ թե անարժան մարդիկ, այսինքն՝ զինվորներն ու հեծյալները:

Այժմ, դուք, ո՛վ սիրելիներ, ու եղբայրներ, սուրբ աթոռների վիճակված աթոռակից եպիսկոպոսներ, նույն կանոնապահ իրավունքները պահեցեք յուրաքանչյուրը ձեր խնամուք և թույլ մի տաք աստծու եկեղեցին ճնշել, իսկ քահանաներին ծառայեցնել ու հարկի տակ զցել, որպեսզի աստված մեզ հեռահարովի և սգորվելով փրկի մեզ բոլոր նեղություններից: Բանի սր տերն ասաց. «Ձեր մարգարիտները մի՛ թափե՛ք խոզերի առջև և սրբությունները մի՛ տաք շներին»*: Ինչպե՞ս որ աստված կամեցավ կոչել սրբություն սրբոց նույն իրեն անարատ քահանաներին և ոչ թե անարժաններին ու աշխարհական զինվորներին:

Արդ՝ ամենքին պատվիրում եմ. աստծու պատվիրանները վերաբերյալ զգո՛ւյ՜ջ կացեք և անսպառ գոհություն մատուցե՛ք ողորմած աստծուն, որ երկաթնակ պիղծ Ներսեսից վրեժ հանեց և նրա շար որոմբ հեռացրեց մեզանից՝ խաղաղության արմատ հաստատելով իր եկեղեցու մեջ: Այդ պատճառով զգաստորեն հոգացեք եկեղեցու կարիքները, որովհետև մենք բոլորս պետք է կանգնենք Քրիստոսի ահեղ առյուծատաշ և ժողովրդի ու մեզ համար հաշիվ պետք է տանք: Իբրև՛ յալ աղաչում ու ասում եմ. զգո՛ւյ՜ջ կացեք: Եվ թող սուրբ հոգին ձեզ հետ լինի. ամեն:

* Մատթ. է. 6:

ԱՂՎԱՆՔԻ ԻՇԽԱՆ ՎՈՐԱԸ-ՏՐՊԵՏԻ ՉԱՐԿ ՊԱՆԱՆՔԻԸ,
ԲՅՈՒՔԱՆԿԻՍ ԳՆԱԼԸ, ՈՐԴԻՆԵՐԻՆ ՊԱՏԱՆԿ ՏԱԼԸ, ԵՐ ԵՐԻՐԸ
ՎԵՐԱԿԱՌՆԱԼԸ ԵՎ ՍԻՄՈՆԻՑ ՉԵՏՑ ՄԻՔԱՅԵԼԻ՝ ԱՂՎԱՆՔԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱՌՆԱԼԸ

Պարսից թագավորության խաղաղ անկումով և հարավալին ցեղի, այսինքն՝ արաբների զորեղանալով — աշխարհի, մտնականգ արևելյան կողմերի, հարկատվության շափերը ստատկացան. Աղվանքի Վարազ-Տրդատ իշխանը երեք պետություն էր հարկ տալիս՝ խաղիքներին, արաբներին և բյուզանդացիներին: Իսկ ափելի խիստ նեղություն նրան հասավ բյուզանդացիներից, որովհետև իր որդիներով կայսրի կողմից արգելափակված էր մայրաքաղաքում. որդիներին պատանգ տալով՝ ինքը՝ իշխանը, այնտեղ հիվանդացավ ու մնաց: Երկրի բնություն մասին ասում են, թե ժանտաբեր է, և էր օտար մարդիկ գարնանը մուտք են գործում այնտեղ, անմիջապես հիվանդանում, ու այդ պատճառով մազերն ու մորուքները թափվում են: Եվ Վարազ-Տրդատը երկար մնաց այդտեղ. մի օր այնպես եղավ, որ բյուզանդացիների թագավորը ընտրեց թանկագին քարեր և Աղվանքի իշխանին կանչելով ցույց տվեց նրան, իսկ նա խորամանկելով ասաց. «Իմ տանը դրանցից ափելի թանկագիները կան, ես դրանք կտամ ձեր աստվածապսակ անձին, որովհետև իսկ և իսկ ձեզ է վայել»: Այդ ժամանակ իշխանի Սյուզանդիայում մնալու հինգ տարին էր: Այս բանի համար ստոծալ օգնականությունը դուրս պրծավ, եկավ հասավ իր երկիրը: Իրանից հետո նա արևելյան երկիրը (Աղվանքը) հանձնեց արաբներին և հարկ էր տալիս միայն նրանց:

Նույն Վարազ-Տրդատի իշխանություն ժամանակներում անտանելի սով ընկավ Աղվանքի սահմաններում, այդ պատճառով ոմանց կողմից առասպելաբանվեց, որպես թե կորեկր տակ է. «Ես՝ կորեկս, Շակաշեն»²⁶² զավառի Հակու վայրում թարնված էի, զնորդների բազմությունը ինձ անուշադրություն էր մատնել և չէր գնում. եկավ մի բարի ժամ, երբ տիրեց իմ եղբայր Սովը, և ահա ես դարձա երևելի ու բարձրացա Վարազ-

Տրդատ իշխանի ու Եղիազար կաթողիկոսի սեղանները: Ուժքեր որ ինձ կերան, նրանցից արյուն գնաց, ներողամիտ եղեք: Իսկ Աղվանքի իշխան Վարազ-Տրդատի որդիները՝ Գագիկին ու Վարդանը, որոնք Յուզանդիայում պատանդներ էին, թագավորի բարիության հետևանքով տասներկու տարի մնացին մի մթին զնդանի մեջ. պատճառը արևելյան երկիրը (Աղվանքը) նրանց հոր կողմից արաբներին տալը եղավ: Երբ բուզանդացիների թագավոր Հուստինիանոսը վախճանվեց, թագավորել սկսեց Վարդան Փիլիպիկոսը, որ հայ ազնվականներից էր. սա հիշեց նրանց, որոնք խավար բերդում կենդանի արգելափակված էին. թագավորը հրամայեց անտանելի տանջանքներից դուրս բերել նրանց, որոնց տեսողությունը խավարը ծածկել էր: Ապա քիչ-քիչ լույսի մեջ հանելով՝ թագավորը պարզեցրեց սովեց և ուղարկեց իրենց երկիրը: Գագիկին շնորհեց տիեզերքի լույս կենսատու խաչից մի մաս: Նա եկավ և մեծ պարզեց սովեց Աղվանքի կաթողիկոս Միքայելին: Տերունական խաչ կանգնեցրին, որի վրա այսպես է գրված. «Քրիստոս աստված, հիշի՛ր քո կամավոր շարժարանքները սրա վրա: որոնք դու կրեցիր մեր փրկության համար: Ընդունի՛ր այս խաչը, որը դու սովիր քո երկյուղածներին, ների՛ր իմ՝ Աղվանքի կաթողիկոս Միքայելիս հանցանքները, ողորմի՛ր այս երկրին՝ ամեն կարգի փորձություններից փրկելով, որպեսզի քո գալստյան օրը արժանի լինենք կանգնելու քո աջ կողմը: Նանաղաշում եմ քո ծառա Գագիկի, սրա քույր Մարիամի և մեծ ոսկերիչ Վարազոյի համար»:

Գ լ ա լ խ Ժ Գ

ԱՂՎԱՆՔԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԻՔԱՅԵԼԻ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԱՐՆԵՂ՝
ԱՐՅՈՒՆԱԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՄՈՒՍՆՈՒՓՅՈՒՆՆ ԱՐԳԵՆԵԼՈՒ ՆԼԵՄՔ

Միմոնից հետո Աղվանքի հայրապետական աթոռն է նրատում երջանիկ Միքայելը և ապրում է երեսունհինգ տարի: Սրա օրոք Աղվանքի իշխանները ամուսնանում էին իրենց արյունակիցների հետ. այսպես՝ Վախթանգի որդի Վարազ-

Ջանի թոռ Վարազն իր թոռնակից Վարդանուհուն է առնում: Տիր Միքայելը արգելում է նրան, ասելով, թե մի՛ հանդգնիր ասնել, որովհետև թոռնակիցներ էք: Իսկ նա, կորստյան միտք հղանալով, գրում է վրաց կաթողիկոս Թալիելին, որ այս վերջինը օրհնի իր անօրինական ամուսնությունը: Իսկ այն շարափառ մարդը, այսպես է առաջարկում. «Եթե դուք ընդունում եք իմ դավանանքը, օրհնված եք, իսկ եթե մնում եք սղվանից ավանդություններին՝ հավատարիմ, ձեր գործն է»: Այդ ժամանակ Աղվանքի կաթողիկոս Միքայելը իրեն նվախա եկեղեցու ուխտի ժողով է անում և իր մոտ է կանչում հույակավոր Սողոմոնին, որ մաքենացիների²⁶³ սուրբ ուխտի առաջնորդն էր, իսկ այդ ուխտը իր ժամանակին Հայաստանի պարծանքն էր: Եվ նրանց բոլորին հավաքեցին Շամբրոյի Բերդ վանքում, որոնք միաբան ժողովով նպովեցին Վարազոյի տունը: Միևնույն ժամին արաբները հասան և մոր գրկում սրով փողոսեցին նրա մի որդուն, իսկ մյուս որդուն ձին սարավ, սպանեց: Ժողովականները նամա՛: գրեցին վրաց եպիսկոպոս Թալիելին. թե՛ «Ինչո՞ւ հանդգնեցիր սուրբ առաքյալների աշակերտների կողմից տրված կանոնները քանգել, որոնք (աշակերտները) հավաքվելով Անտիոքում Պողոս Սամոսացուն վտարեցին սուրբ եկեղեցուց և սահմանեցին կանոնական օրենքներ. «Թե ոչ ոք չպիտք է հանդգնի իր արյունակցի հետ ամուսնանալ, և դա սուրբ Աթանասի կանոնական հրամանն է, որ այդպիսի ամուսնությունը ոչ թե ամուսնություն է, այլ պոռնկություն: Նան երանելի Բարսեղն է այս առթիվ խոսել: Արդ՝ մենք ուղղափառ ժողովս բեկ նորմեցինք բոլոր հերձվածույների հետ, իսկ արդարադատ Քրիստոսին կմատուցենք բազմապատիկ փառք»:

Գ յ ու խ Ժ Դ

ԱՂՎԱՆՔԻ ՀԱՅՐԱՊԵՏ ՆՈՒՅՆ ՄԻՔԱՅԵԼԻ ՈՐՈՆՈՒՄԸ ԶԱՔԱՐԻՎՅԻ
ՊԱՊԱՆՉՄԱՆ ԵՎ ՓՐՎՉԻ ԾՆՆԴՅԱՆ ՈՒ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՐԵՐՅԱԼ՝ ԸՆԴԴԵՄ ԿՐԿԱՐԱՆՆԵՐԻ

Մովսեսը իսրայելացիների համար տոներ նշանակեց յոթ-
երորդ ամսին, այսինքն՝ թշրինի²⁶³ առաջին օրը՝ փոզերի
տոնը, տասերորդ օրը՝ քաժուկայան տոնը, տասնհինգերորդ օրը
տաղավարահարսների տոնը, տասնյոթերորդ օրը տեղի ունե-
ցավ Զարարիայի պապանձուսը մինչև նույն թշրին ամսի
քսաներկուսը: Այգա զնաց իր տունը և հղիացավ նրա կին Նղի-
սաբեթը, ինչպես որ ասում է Ղուկաս ավետարանիչը. «Թե
թաքցնում էր իրեն հինգ ամիս, իսկ վեցերորդ ամսում աստժու-
կսովից ուղարկվեց Գաբրիել հրեշտակը»²⁶⁴:

Արդ՝ տեսնե՞ք վեցերորդ ամիսը ո՞րն է. քննեցինք տոմարը
և գտանք այսպես. թշրին ամսի քսաներկուսը համընկնում
հոտմեական հոկտեմբեր ամսի իննին: Արդ տասից առաջ ըսկ-
աւում ենք լրացնել վեց ամիսը, լինում է ապրիլի յոթը, որը
բառ հրեշտակի ասածի, թե այս նրա վեցերորդ ամիսն է, իսկ
երբայեցիների նիսանի²⁶⁵ տասնյոթը ավետիք կուշտինն է
Գրանից առաջ մինչև հունվարի հինգը անում է երկու հարյուր
յոթնասուն օր, որ է ինն ամիս և ալգա Քրիստոսի ծնունդը
նյա առթիվ ունենք նաև վարդապետների ասածները. իսկ
ծնունդը, հայտնությունը և ավետիք եկեղեցին կատարում է
իրեն մի տոն, որովհետե մի աստժու ծնունդը և մեր հոգևոր
փրկությունը իբրև մի տոն է կատարվում, ինչպես որ աստվա-
ծային վարդապետներից մեկն ասաց. «Երեք ծնունդ է ճանա-
չում մեզ համար միածինը. մեկը՝ փշուճով, երկրորդը՝ մարմնա-
նալով և մկրտությունը, որ մի ծնունդ է համարում, իսկ երրո-
րդը՝ հարությունը»: Նույնպես և Երուսաղեմի Մարկոս հայրա-
պետը, որ նիկիական²⁶⁶ հայրերից մեկն էր, իր խրատակա-
թղթի մեջ մկրտության մասին գրեց հայերին, թե մի օրում

ենք տոնում ծնունդն ու մկրտությունը, և ինչպես որ մահն
ու թաղումը անկատար է առանց հարություն, կամ ինչպես
հարության ավետարանը նախ խաչումն ու թաղումն է հայտ-
նում, և ալգա ավելացնում է հարությունը, նույնպես էլ անում
է փրկությունը. ինչպես օրինակ, դարձյալ ասում է աստվա-
ծաբանը. «Բայց այժմ աստժու հայտնության տոնն է, որով-
հետև աստված ծնունդով հայտնվեց իբրև մարդ»: Երուսաղեմի
կաթիկոպոսները մինչև Կյուրիզը քառասուներկու են. սրանցից
հետո մյուսները ծննդյան ու հայտնության տոնը կատարում
էին հունվարի վեցին մինչև Հոբնաղիոսի ժամանակ. իսկ հա-
րությունից մինչև Հոբնաղիոսը հաշվվում է շորս հարյուր
տարի: Գարձյալ այն, որ ընթերցվածում Գավթի ու Հակոբի
օրվա մասին ասում է, թե այլ քաղաքներում Քրիստոսի ծը-
նունդը տոնում են զեկտեմբերի քսանհինգին. այլ քաղաքնե-
րում այսպես են ասում, թե հեթանոսներից հավատացյալ-
ներ կային և ոչ թե թլպատվածներից, իսկ հեթանոսության
ժամանակ նրանք սովոր էին արեգակի ծնունդը տոնել այն
օրը. այդ պատճառով չէին համաձայնվում թողնել տոնը:
Այգա առաքյալները ստիպված եղան համաձայնվել և նրանց
համար Քրիստոսի ծնունդը նշանակել այդ օրը: Իսկ նրանք,
որոնք թլպատվածներից էին, ամեն տեղ հունվարի վեցին են
տոնում, որ ավանդվեց մեր նախնիներին, և որը պահպանում
ենք մինչև այժմ, ինչպես որ ասում է, թե՛ «Օրենքները Միտնից
կիրեն, իսկ աստժու խոսքը՝ Երուսաղեմից»²⁶⁷:

Գ յ ու խ Ժ Ե

ՍՅՆ ԳՈՐԾԵՐԸ, ՈՐ ԿՈՏԱՎԷԼ ԵՆ ՀԵՐԱՆԻՔԻ ՈՐԳՈՒ ԵՎ ՆՐԱ
ԹՈՒԻ ՕՐՈՔ

Կյուզանդացիների թագավոր քաջահաղթ Հերակլեսը զա-
նապես պատերազմներ շահելով՝ քաջի հրշտակ թողեց աշ-
խարհում: Նրանից հետո Կյուզանդիայի թագավոր է դառնում

* Ղուկ., Ա, 22, 24, 26, 27:

* Նապի, Բ, 2:

նրա որդի Կոստանդինը՝ երեք տարի: Սրա օրոք արաբները տիրեցին Ասորիքին և սուրբ քաղաք Երուսաղեմի եկեղեցին հարկի տակ գրին. այս բանը տեղի ունեցավ հայոց ութսուն թվականին: Իսկ այդ վերջինի որդի Կոստասը թագավորեց քսանինը տարի: Սրա հինգերորդ տարում Արաբիայում կոթվեց հղավ, իսկ վեցերորդ տարում արաբները եկան Հայաստան և գրավեցին Գլխնը. գերվածների թիվը հաշվվեց երեսունհինգ հազար: Կոստասի տասնիններորդ տարում հայոց կաթողիկոս է նստում տեր Ներսեսը՝ քսան տարի: Այս ժամանակ հայոց հարյուր տասնմեկ թիվն էր: Սա նույն Կոստանդինի հայրացուն էր և նրա միջոցներով Քաղաքադաշտում²⁶⁷ շինեց բանավոր հոտերի հոյակապ փարախը՝ Սուրբ Գրիգորը, և ավարտման հանդեսին հրավիրեց բյուզանդական թագավորին, որը անշափ հիացավ կառույցի վրա ու հրամայեց կառուցողներին գնալ իր ետևից, որպեսզի նույնաձև մի տաճար ինքր կերտի մայրաքաղաքում: Բայց դեռևս շտամանած՝ հասապարհին քարագործը վախճանվեց:

Գ յ ու խ Ժ Զ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՀՄԵԴԻ ՉԱՅՈՍԱՆ ԳԱԼԵ ԵՎ ՉԱՅԵՐԸ ՆՆԱԶԱՆԳԵՑՆԵԼԸ, ՉԱՅՈՍԱՆԻՑ ԱՎԱՆ ՔՈՎ ԱՃԱՊԱՐԵԼԸ ԵՎ ՁՈՂԱ ԳՈՒՌԸ ՄՏՆԵԼԸ, ԱՅՆՏՎ ՉԱՅԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՍԵԼԸ, ԱՅԴ ՊԱՏՃՈՌՈՎ ԱՅՆՏԵՂԻՑ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ, ԳԱԼԸ, ՍԵՎԱՆ ՍՈՎԱՊԱՏ ԿՂԶԸՆ ԳՐԱՎԵԼԸ ԵՎ ՉԱՅՈՑ ՈՒ ԲՅՈՒԶԱՆԳԱԿԱՆ ՁՈՐՔՐԻՆ ԿՈՅՈ ԵԼԸ, ԻՇԽԱԼՆԵՐԻՑ ՈՍԱՆՑ ԻՐ ՉԵՑ ՆԱԽԻՋՈՎԱՆ ՏԱՆԵԼԸ ԻՒ ԱՅՐԵԼԸ, ԱՅՈՍԵՂԻՑ ԱՍՈՐԻՔ ԳՆԱԼԸ, ԱՅՆՏՆՎ ՁՈՐԱԶՈՐ ՄԱՀՈՎ ՄԵՌՆԵԼԸ ՈՒ ԱՅԼ ՊԵՏՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց հարյուր քառասունվեց թվականին Հայաստան զգալիս Մահմեդ երկրորդը. այնտեղից Աղվանքով շտապում և մտնում է Չոզ: Իսկ ապստամբված հայերը արաբներին արգելափակում են Գլխնում և դրանցից վաթսուներկու հազար կոտորում են՝ Բյուզանդիայից շատ զորքեր բերելով: Հինգ յուր տարում սուրբ Գրիգորի տոհմը վերջացավ: Մահմեդը Չոզից վերադարձավ, եկավ, երեք տարի պաշարեց Սևան

ծովապատ բերդ-կղզին. ապա գրավեց այն և կղզում ում որ գտավ, սրածեց: Այնտեղից անցնելով Հայաստան՝ կոտորեց բյուզանդական ու հայկական զորքերը: Իսկ նրանց համար, որոնց չկարողացավ բռնել, հանդիսավոր երդումով դարան պատրաստեց. դավով ու խաբուկությամբ իր մոտ հավաքեց հայոց իշխաններին և տանելով Նախիջևան քաղաքը, ութ հարյուր մարդ եկեղեցին լցնելով կենդանի-կենդանի այրեց, շորս հարյուր մարդ էլ խրամում այրեց, իսկ նրանցից մնացածներին սրածելով կոտորեց: Եվ նրանց այս կոտորյան սատճառն այն էր, որ ընդհանրապես մոլորության շունչն էր նրանց մեջ շնչում, արհամարհանքով ծաղրում էին հայրապետին, քահանաներին, կրոնավորներին, ձանձրացնում ու նեղութուն էին պատճառում նրանց: Եվ շնայած հայերը կրեցին այդ ծանր հարվածները, բայց տեր աստված Մահմեդին շթողեց այդ վրեժը, այլ երբ Մահմեդը հասավ Ասորիք, մահվան ծանր ցավը բռնեց նրան, և յոթ ամիս հոգեվարքի մեջ մնալով, հաղիվ շունչը փչեց ու սատկեց: Երեք անգամ թաղվեց, բայց գերեզմանից դուրս էր թռչում, հողը նրա գարշելի մարմինը չէր ընդունում: Ապա մի շուն բռնելով շամփրեցին Մահմեդի հետ, և այս ձևով հողը պարտակեց այդ շարիքը:

Արանից հետո Աղվանքի իշխան Եբրոյին ազնվականների հետ միասին տարան Տարոն. իսկ այնտեղից էլ՝ Ասորիք: Այս ժամանակ հայոց հարյուր հիսուներեք թիվն էր: Մյուս տարին Ասորիք տարան Եբրազի տիրոջը: Երկու տարի հետո արաբական իշխան Մրվանը անցավ Ալանք, բայց չկարողացավ մտնել: Խազրինների իշխանը ութսուն հազար զորքով գրավեց Աղվանքը: Այդ ժամանակ հայոց հարյուր հիսունութ թվականն էր: Երկու տարի հետո հայոց հարյուր վաթսուն թվականին Աղվանք եկավ արաբ իշխան Աբդլ Աղիզը և նստեց Պարտավում: Այնտեղ նրա առջև բերին Մանկիկ ու Միրզազատ եղբայրներին, որոնք ազնվական տոհմից էին. քրիստոնեական հավատքի համար բազմաթիվ ու տեսակ-տեսակ տանջանքներ կրելով՝ երանելի Մանկիկը, նահատակի անուն ժառանգելով, պսակվեց Քրիստոսի կողմից: Նրա թանկագին մատուցները դրվեցին Պարտավի Սուրբ Գրիգոր մեծ եկեղեցին: Իսկ նրա եղբայր Միրզազատը, շիմանալով տանջանքներին, բազ-

մամարդ ժողովի առջև ուրացավ Քրիստոս աստուծուն, ապա
զղջաց, հետո գառն ու հորդահոս արատաւքներով հաշտեցրեց
նրան, որին խոսովեցրեց (Քրիստոսին): Նաև իր ամբողջ կյանքի
ընթացքում իր արատաւքը քավութեան ավագան դարձնե-
լով՝ լվանում էր նրանց, որոնց աղտեղելով գալթեցրեց: Եվ
սրտի խորքերից հեծեծանքներ էր առաքում գաղտնիքների
գիտակին: Մինչև կյանքի վախճանը անմխիթար սզով մնաց:
Քայց նա, որ ողորմած է ու գթած, նրան նահատակների հետ
ընդունեց. նրա մահվան ժամին զարմանալի հրաշքներ կատար-
վեցին:

Նույն տարին Աբղլ Ազիզը անցավ Կուր գետի այն կողմը:
Երեք տարի հետո եկավ Մալիմանը, ավերեց Դերբենդը և
մտավ Խազիրք, որտեղից շկարողացավ դուրս գալ: Ապա
թողեց ամեն ինչով կազմ ու պատրաստ բանակը, մինչև ան-
գամ հարձերին իր վերջապահներին հանձնեց: Եռանշահիկ
Վաչագանին՝ Աղվանքի ազնվական իշխանին, որը քաշ, կո-
րովի աղեղնավոր էր, իր ամբողջ զորքով իրեն վերջապահ
նշանակեց, որի հետևից ընկնելով խազիրները պարտվեցին
ու փախուստի մասնակցին: Այսպես ազատվելով Մալիմանը
գնում է Վրաստանի կողմով, իսկ հայոց հարյուր յոթանասուն-
չորս թվականի ամառը տեղի է ունենում անասունների համա-
ճարակ, և ձմեռը կատարվում է հերթական աշխարհագիր, որ
մարդ, անասուն, հող ծանր հարկերի տակ դրեց: Մինևույն
ժամանակ Աղվանքի իշխան Զվանշիրին սպանեցին ամեթե-
ղունները: Նույն տարին մեռավ հայոց Սմբատ իշխանը, իսկ այդ
տարին, որ հայոց հարյուր յոթանասունհինգ թիվն էր, ծանր
սով էր տիրում: Երեք տարի ևս անցնելուց հետո Զառահը
երկրորդ անգամ Աբխազիայի վրայով մտավ Խազիրք: Մյուս
տարի հանդես եկավ խազիրների իշխան Ասորորդին և սպա-
նեց Զառահին ու ձերբակալեց Զազիկին: Հայոց հարյուր ութ-
սուն թվականին Մալիմանը դարձյալ շինում է Դերբենդը արաբ-
ների համար, բայց Աղվանքի կաթողիկոսարանը չի քանդում,
սր գեւես գոյություն ունի այնտեղ:

ՍՅՈՒՆՅՈՒ ԵՊԻՍԿՈՍՈՍ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՄԱԻՆ, ՆՐԱ ԲՅՈՒԶԱՆԴՈՍ
ԳՆԱԷ ԵՎ ԱՅՆ ԳՐԹԵՐԸ ԲԻՐԻԸ, ՈՐՈՆՔ ԱՐԻՎԵԼ ԲՈՒՄ ԶԿԱՅԻՆ.
ՆՐԱ ՎՍԽՃԱՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՏԻՓՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՍՏՈՒ ԿՈՂՄԻՑ
ՀԱՍՈՒՆ

Այս ժամանակներում Ստեփանոս Մյունեցի անունով
մեկը, որ հասակով գնեսս պատանի էր, բայց Սուրբ գրքի մեջ
հմուտ և լավ վարժված, հակաճառում է հայոց երկարնակ
Սմբատ ասպետին՝ թողնելով նրան անհավատութեան մեջ,
գնում է Բյուզանդիա: Այնտեղ մի ուղղափառ մենակյաց է
գտնում և նրա մոտ ուսման է մտնում: Իսկ այս երկարնակ
Սմբատը գրում է Բյուզանդիայի թագավորին, թե Ստեփանոս
հերձվածողը այստեղից եկել և բնակվում է այսինչ անունով
մենակյացի մոտ: Թագավորը խիստ բարկանալով պահանջում
է, որ նա պալատ գա: Մենակյացը խրատ է տալիս նրան, որ
նա թագավորի առջև իր մասին ասի, թե ինքը տուն-տեղ չու-
նեցող մուրացիկ է: Եվ երբ այս լսում է, բանակալի ցասումը
իջնում է: Այդ ժամանակ Ստեփանոսը համարձակութուն է
ստնում և ասում է կայսրին. «Ըս քեզանից խնդրում եմ, որ-
պեսզի սրբերի արկղերը բացվեն»: այնտեղ հավատի վերա-
բերյալ մի ոսկետիպ գիրք գտնելով, ներկայացնում է նրան:
Այս գիրքը կարդալով՝ կայսրը Ստեփանոսին ուղարկում է Հռոմ
քաղաքը, որպեսզի այնտեղից բերի մինևույն բովանդակու-
թյամբ երեք գիրք Էջմարիտ հավատի վերաբերյալ՝ երկիրը
այդ գրքերի բովանդակած կրոնին դարձնելու համար: Իսկ նա
Հռոմից գրքերը վերցնում և ինքնակալի հրամանը անտես
անելով, ուղևորվում է Դվին քաղաքը, որովհետև նա կամենում
էր ամբողջ երկիրը սովորեցնել այն գրքից: Բարգևնի ու Քուր-
դուի խնդիրքով սա ձեռնադրվում է Մյունեաց եպիսկոպոս:
Մի տարի եպիսկոպոսութուն անելով՝ Մոզ²⁶⁸ գավառում
սպանվում է: Ասում են, թե անբարոյական կանայք են սպանել
նրան: Նրա մարմինը բերին Հարկազյան²⁶⁹ սենյակը, այնտե-
ղի: Դիտեցին Քանահատները²⁷⁰ վանքը թաղելու համար:
Սրբ երանելի Ստեփանոսը արքերը Հռոմից բերեց, հայոց

եպիսկոպոսութեան երրորդ դասի մեջ կարգվեց Սյունիքի եպիսկոպոսութիւնը: Իսկ Նոյ անունով մի մենակյաց երազում տեսնում է, որ Ստեփանոսը, զոգը արլունով լի բռնած փրկչի առաջ, ասում է. «Տե՛ս, տեր, այս, որովհետև քո դատաստանները արդար են»²⁷¹: Եվ իմացնելով գավառին, որ բարկութիւն է գալու, պահանջում է աղոթք անել: Եվ ի վերուստ անտեսանելի մի խավար պատեց Մոզի սահմանները, ու բառասուն օր այդ վայրը շարժվեց երկրաշարժով. մոտ սասար հազար հոգի կենդանի-կենդանի թաղվեցին. այդ պատճառով Վայոց Ձոր անվանվեց²⁷¹:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը

Ի Լ Ի Ո Ն Ք Ա Ղ Ա Ք Ի Ա Վ Ե Ր Մ Ա Ն Ե Վ Հ Ո Ւ Մ Ի Կ Ա Թ Ո Ւ Ց Մ Ա Ն Մ Ա Ս Ի Ն.
Ա Յ Ս Պ Ա Տ Մ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ե Ը Ք Տ Ե Վ Ե Ց Մ Յ Յ Ո Ւ Ե Ց Ա Ց Ե Թ Ի Ս Վ Պ Ո Ս Ս Ե Ց Փ Ա Ն Ո Ս Ի
Դ Ր Ք Ե Ր Ի Մ Ե Զ

Արդան դատավորի ժամանակներում Իլիոնը²⁷² գրավվեց հետևյալ ձևով. այս քաղաքը պատկանում էր աքայացիների երկրին, որ մոտ էր Պողոպանիս²⁷³ երկրին՝ եվրոպական Մակեդոնիայի արևմուտքում: Այդ ժամանակ հույները թագավոր չունեին, այլ միայն իշխաններն էին տիրում ամբողջ երկրին: Իլիոնը մի մեծ քաղաք էր, որին հավասար քաղաք աշխարհում չկար: Այդ ժամանակներում քաղաքի երիտասարդ իշխաններից մեկը զբոսանքի նպատակով գալիս է Մակեդոնիայի արևելքում գտնվող Թեսալոնիկ քաղաքը: Քաղաքի մեծամեծների կողմից լավ ընդունելություն է գտնում. բայց տոփական ցանկություններ է լցվում մի մեծ մարդու դատեր նկատմամբ, որին հրապուրելով տանում է Իլիոն քաղաքը: Մնողները որոնելով իմանում են, որ հիշյալ երիտասարդն է հափշտակել. նամակ են գրում Իլիոնացիներին և ստանում են շատ խիստ պատասխան: Աղջկա հայրը ի լուր իր ժողովրդի կարողում է նամակը. այդտեղ բոլորը լցվում են վրեժխնդրություններ ու ամ-

բողջ շրջակայքի ժողովուրդներին օգնություն կոչ են անում: Հավաքելով անթիվ զորքեր Իլիոնի դեմ՝ տասնհինգ տարի պատերազմ են մղում՝ ոչնչացնելով ամբողջ երկիրը: Դրանից հետո այլ միտք են հղանում. հաշտություն առաջարկ են ուղարկում քաղաքացիներին, ասելով, թե՛ «Իլիոնի աստվածները մեծ են, այդ պատճառով թուլացավ մեր զորությունը. սրանից հետո դադարեցնենք պատերազմը, միմյանց հետ բարեկամություն հաստատենք և Իլիոնի աստվածներին ընծաներով պատվենք»: Նրանք այս առաջարկությունը համաձայնվում են: Արանք պատրաստում են փայտյա ձիեր, որոնք ունենում են երկու հազար փոք, ներսում լցնում են թվով քառասուն հազար մարտիկներ իրենց զենքերով. ձիերը ոսկով, արծաթով զօծած դնում են սայլերի վրա և կործանարար պարզկները տանում են քաղաքադուռը. մուկնտիկը աղաղակում է. «Ահա սրանք են Իլիոնի աստվածների ընծաները»: Եվ որովհետև ձիերի բարձրությունը քսան կանգուն էր, չէին կարող քաղաքադռնից ներս մտցնել, պարսպի մի մասը քանդում են. և նախապես պայմանավորված՝ ելնելու ժամին բացված խրամով զորքերի բազմությունը ներս է խուժում, ու քաղաքը ծեր թի երեխա սրի է մատնվում: Նրանց կանանց գերելով լցնում են նավերը, որպեսզի վերադառնան Ասիա, բայց մի ուժգին քամի արևելքից գալով նավերը թշուր է երկու հազար հինգ հարյուր մյուս և գուրս է գցում մի օտար երկիր, որ կոչվում է Իսալիա: Այդտեղից երկրորդ անգամ կամենում են նավարկել իրենց երկիրը, սակայն գերված կանայք կես գիշերին այնպես են հրգեհում նավերը, որ ոչ մի հատ չի մնում, որպեսզի իրենք չգնան ստրկություն: Տղամարդիկ, տեսնելով կատարված փաստը, սկամա մնում են այդ երկրում և ամուսնանում գերված կանանց հետ: Երկար ժամանակ անցնելուց հետո ժողովրդի միջից Հոռմելոս անունով մեկին իրենց համար առաջնորդ են դարձնում, որը ծովից ափելի քան քսանհինգ մղոն հեռու իր անունով շինում է Հոռմ քաղաքը: Ահա հոռմեացիները սրանք են: Այս բանը տեղի ունեցավ Իլիոնը գրավելուց չորս հարյուր քառասունմեկ տարի հետո: Մրանից քառասունչորս տարի հետո Հոռմում թագավոր նստեց Փիլիպոսը: Երբ Հոռմի կա-

* Մաղձ, ձժԸ, 39:

ուսցման հազար տարին լրացավ, Կոստանդիանոսը այնտեղից
թագավորութիւնը Բյուզանդիա փոխադրեց, որ այժմ կոչ-
վում է Կոստանդնուպոլիս:

Պ Լ Ո Ւ խ Յ Թ

ԱՅՆ ԳՈՐԾԵՐԸ, ՈՐ ԿԱՏԱՐՎԵՑԻՆ ԱՂՎԱՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ՀԱՅՈՑ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՔՎԱԿԱՆԻՑ ԱՅՍ ԿՈՂՄ

Այդ ժամանակնհարում աշխարհի շորս կողմը սփռվեց,
տարածվեց հարավային ազգի (արաբների) դաժան ու մոր-
մորեցնող ռանակալութիւնը, որը, ինչպես հուր, լափեց մարդ-
կանց ամբողջ վայելչութիւնն ու փառքը. և ըստ սուրբ Պողո-
սի խոսքի, այն ապստամբութեան հայտնի ժամանակը եղավ,
թե՛ գատավորը հասել է դառն մոտ և մերձ է ահարկու ժամը՝
չարի անաշուօ օրը: Այսպես իմայիլյան գազազած հագարա-
ցիք իրենց համար գրավեցին աշխարհի առատութիւնը. թե՛
ծով, թե՛ ցամաք հնադանգիւնցին Նեաի կարապետներին՝
կորստյան դավակներին: Այս մեծ զրկանք եղավ Աղվանքի
համար, որովհետև Պարտավ մայրաքաղաքը արաբները խլե-
ցին Աղվանքի իշխաններից՝ համաձայն իրենց անառակ ազգա-
պղծութեան: Ինչպես իրենց իշխանութեան առաջին աթոռը
հաստատեցին Ասորիքի Դամասկոսում, նույն ձևով այստեղ
Աղվանքում՝ Պարտավում նստեցրին փոխարքա՝ կողոպտելու
այս երկրի բարեքները, արքունի մարդկանցից մեկը եկավ
բնակվեց Պարտավում: Իսկ հայերը իրենց երկրի հոգսերի
համար իրենց կաթողիկոս տեր Ծառայուն եպիսկոպոսների հետ
միասին ուղարկեցին նրա մոտ. Հայրապետի գալուստը իմա-
նալով՝ Վարդանուհի տիկինը խիստ խոցվել էր ասածու գատա-
տանից: Ընդառաջ է գնում, որպեսզի հայրապետը կարեկից
լինի իրեն հանած ահավոր աշխատների համար, որը տիրոջ
ձեռքից խմեց դառը բաժակը, ըստ վերևում նկարագրածի:
Եվ հայոց երանելի հայրապետը խոնարհվեց այդ կնոջ արտա-
սուքների առջև ու օթեանելով նրա մոտ, գիշերահսկումով
մաղթանքներ էր մատուցում աստծուն՝ լուծելու համար առա-

ջին հայրապետների անեծքները: Միաժամանակ և Աղվանքի
կաթողիկոս տեր Սողոմոնը խորհրդակցեց իր եպիսկոպոսների
հետ, նա էլ լուծեց իր աթոռակալների կապանքները, բայց
ամեն մեկի խնդրանքից մի հետք մնաց վշտահար տիկնոջը՝
Եվ Վարագմանի որդի Վարազ-Տրդատին աստված կյանք
շնորհեց, իսկ նրա որդի Ստեփանոսը վաղաժամ մեռավ. նրա
եղբայր Վարագմանը սխալվելով ընկղմվեց Կուր գետը, որը
եղավ նրա գերեզմանը: Իսկ ժառանգ մնաց նրա եղբայր Զվան-
չերիկը: Այսքանը մինչև այստեղ:

Իսկ երբ լրացավ հայոց երկու հարյուր յոթանասուն թիվը,
Պարտավից գաղտնի դուրս եկան արաբ ընտիր մարդիկ, ավարի
ենթարկեցին Ամարաս գավառը, և, մոտ հազար հոգի գերեվարե-
լով, ամրացան Մեծիրանքի սահմանում մի տեղ, որ կոչվում է
Շիկաքար: Այդ ժամանակ քաջ ու շքեղատեսք Սահդի Ամբա-
յան Եռանշահիկ իշխանը և իր քաջազոր եղբայրները՝ իրենց
զորքերով լուսադեմին վրա տվին, նրանց բոլորին միասին
գիւթավալ արին, ցիրուցան դարձրին և, ինչպես առյուծի
ժանիքներից, գերիններին խլեցին: Նույն տարին Հայաստան
ասպատակեց աշխարհավեր արաբ Սևադան, որ հայտնի էր
Ավառանշան անունով. սա ավարի ենթարկեց ամբողջ Աղվան-
քը, գնաց Մյունիք և ամրացավ Շաղատ²⁷⁵ ավանի Քերդատե-
ղում, որը Մղիկք գավառում է: Մյունյաց իշխան Վասակը
Բարանին բերեց Պարսկաստանից, կոտորեց նրանց և փախըս-
տական դարձրեց: Նույն տարին էլ վախճանվեց Մյունիքի իշխա-
նը, և նույն ժամանակ Բարանը ամուսնացավ Մյունիքի իշխան
Վասակի դստեր հետ: Նույն տարին Փղիսյան Ներսէս իշխանը
սպանեց Վարազ-Տրդատ Ստեփանոսյանին և նրա որդուն մոր-
թեցին մոր զոգում, ու նրա ամբողջ ունեցվածքը հափշտակեցին:
Այս Վարազ-Տրդատը Միհրական տոհմից էր. որոնք որդեց-
որդի առնելով ժառանգեցին Աղվանքը: Սա Աղվանքի առաջին
իշխան Վարազ-Գրիգորից սկսած ութերորդն էր: Սրանից
հետո Բաղաց²⁷⁶ գավառը շենթարկվեց անօրեն Բարանին.
Իսկ նա եկավ Պարսկաստանից, գրավեց ու ավերեց երկիրը,
սրածեց Բաղաց գավառի կանանց ու մանուկներին: Այդտեղից
Բարանը հաջորդ տարին անցավ Գեղարքունի գավառը ու
բնակիչներից մոտ տասնհինգ հոգար հոգու սրի քաշեց և այ-

րեց Ճաքենացիների մեծ մայրաքաղաքը. բացի շրաղացից ոչ մի բան չմնաց. այս ժամանակ հայոց երկու հարյուր յոթանասունվեց թվականն էր:

Երկու տարի հետո Բաբանը սպանեց Տավուսիներն և հալածական դարձրեց մոտ հարյուր հիսուն հազար մարդ: Մյուս տարին Բաբանը սպանեց Ղեթի որդի Աբրահամին: Նույն տարին սիրո և խաղաղության դավաճանները, որոնց անուններն էին Գավոն և Շապուհ, սպանեցին Աբլասադ կոչված Ստեփանոսին, որը բերեց Բաբանին և կոտորեց բազակացիներին, որոնք նիզակներով ու սրերով կոտորեցին Բերձոր²⁷⁶ գավառն ու Ուռիքի²⁷⁷ ավանները՝ Կառնակաշը, Հակարին և Տափատը: Եվ Բաբանից ապստամբվածները նահանջելով դիմադրական պատերազմով ամրացան Գորոզ²⁷⁸ բերդում ու տասներկու տարի տիրեցին Վերին Վալկունքը, Բերձոր, Սիսական, Հաբանդ-Ամարաս, Պազկանք, Մխանք և Տրի²⁷⁹ գավառներին: Դրանից հետո Աբլասադի սպանողներին նրա մերձավորները բռնեցին ու շարաշար կերպով սպանեցին: Հիսալի անվանված Աբու Մուսեհն՝ Աբլասադի քեռորդին, որ մի խաղաղասեր մարդ էր, գրավեց հիշյալ գավառները ու իշխեց բոլորի վրա: Նույն տարին Բաբանը Պարսկաստանից եկավ, անցավ Արաքս գետից այս կողմ և բնակվեց Ամարաս գավառում. սկսեց խաղաղության բանակցություն վարել, որպեսզի հնազանդվեն իրեն. ոմանք ժամանակավոր զղջումով հնազանդվեցին և հետո դավելով անհնազանդ դարձան: Այդտեղից Բաբանը վերադարձավ իր երկիրը՝ Պարսկաստանի Ատրպատական, իր տեղը թողեց ինչ-որ Ռոստոմ անունով մի զորավար գործի հետ միասին և նրան պատվիրեց շարտերազմել բերդի դեմ, այլ սիրով գրավել, որպեսզի հնազանդվին: Իսկ Ռոստոմը անտեսեց Բաբանի պատվերը, դուրս եկավ պատերազմելու բերդում ամրացվածների դեմ: Այն ժամանակ բերդեցիներն ապավինեցին Քրիստոսի զորությունը և խաչերն ու սրբերի մասունքները դիմացները բռնելով, ծանր հարվածներով շարդեցին պարսկական զորքը: Ազատվելով նրանից՝ գոհանալով փառաբանում էին Քրիստոսին:

Նաև ասում են, թե նույն ժամանակ ոմն Սերոբ, լինելով Ամարասի եպիսկոպոս, գնում է Բյուզանդիա և թագավորից

խնդրում է սրբերի մասունքներից ինչ-որ մաս. թագավորը շնորհում է նրան այդ, որի մասին ասում են՝ որպես թե սուրբ Գրիգորի աչ բազուկն է, որով օրհնության յուզն են խնկարկում բոլոր գրքերից դուրս (այսինքն՝ ոչ մի գրքով չի օրհնականացված այդ բանը): Բայց զարմանալին ու սուսկալին այն է, որ ասում են, թե սուրբ Գրիգորը Կեսարիայում սովորեց յուզ օրհնելու կարգ ու կանոնը, որը հոռմեական հայրապետների տնօրինության տակ է, իսկ ինքը շկարողացավ ձեթ օրհնել, այլ հայերը մինչև Քաղկեդոնի ժողովը Կեսարիայից էին ձեթ առնում: Ապա հերձվածի ուժեղանալու պատճառով իրենք շատ հակառակություններով ու ինչ-որ հնարներով յուզի օրհնության կարգը հաստատեցին՝ նրանցից բաժանվելով. բայց սա հալվելվածներից առնված ինչ-որ տեղեկություն է և ոչ թե օրինականացված և ուղիղ կարգ. դա խոտորում է ու հերձվածողական գործ:

Գ Լ ու խ Թ

ԱՐԱՐՆԵՐԻ ՄԱՍՈՒՆ ԻՇԽԱՆԻ ՌԱԶՄԵԲԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱ ԵՎ ԱՅՆՏԵՂ ԵՐԱ ՄՍՀԸ. ՄՈՒԺԱՄԱՆԱԿ ԶԱՆԵԶԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՐՃԱՌՈՏ ԽՈՍ ՔԵՐՈՎ

Հայոց երկու հարյուր ութսուն թվականն էր, երբ արաբ Մամունը կամեցավ արշավել Բյուզանդիա: Նա հարյուր նավ է պատրաստում և նավերը լցնում է մոտ հարյուր հազար ուժեղ մարդիկ ու դուրս բերելով ծով՝ կամենում է պաշարել Կոստանդնուպոլիս մեծ քաղաքը: Այդ ժամանակ իմաց է տրվում բյուզանդացիներին, որոնք խկուշն դուրս են գալիս ծովի մի այլ կողմով ցամաքից շրջապատելով պաշարում են Քրիստոսի խաչի թշնամիներին և կործանիչ հարվածով խույտ ոչնչացնում են նրանց: Հենց իրեն՝ Մամունին, սպանելով՝ մեղտեղից վերացնում են: Նույն հաղթությունը առաջ րեթանալով ժողով՝ նավերի մեջ գտնված բազմությունը սրի ու զրի ճարակ են դարձնում այնպես, որ նրանցից ոչ մի մարդ չի մնում: Այս Քրիստոսի կենարար խաչի զորությունը ծանր հարված եղավ արաբների համար:

Իսկ երեք տարի հետո մի ոմն Բաղդդի ամիրա արաբների ամիրմումնի կողմած իշխանի հրամանով եկավ հասավ Նախնափան քաղաքը. այստեղ նրա կողմից Հոհան անունով մի պատանի է բռնվում և, զեպի Քրիստոս ունեցած հարկատի պատճառով ծանր տանջանքների կրելով, նահատկվում է սուրբ քառասունքին, սուրբ պասի օրվա մոտերքը: Սրա մասունքները լուսաճաճանչ փայլումով զարմացնում էին թշնամիներին, նրանք, տեսնելով այդ բանը, գիշերը անհայտացրին ու քրիստոնյաներից ոչ-որ շիմացավ՝ ի՛նչ արին. նրան պսակողին է միայն հայանի մնում: Իսկ մյուս տարին քառասուն օր տեղատարափ անձրևներ լինելու պատճառով ծովը ափեափ լցվեց և իր սահմաններից դուրս գալով մասնհինգ հրասախ ցամաքում ծով կապեց: Աշխարհով մեկ տարածված կասպից ծովից հայտնվեց լեռան նման մի հսկա վիշապաձուկ, որ ձկնորանների ձկները իր որովայնն էր լցնում, ուստի որսորդները մնում էին ատանց վաստակի: Այստեղ նավորդները ինչ-որ բան են հնարում և հավաքվելով միասեղ պոչի կողմից սրով մաս-մաս կտրատում են այն, մինչև սատկում է, և կուր գետը տանում է այն, որտեղից եկել էր: Իբրանից հետո որսորդները դյուրությամբ էին ձկներ որսում, որովհետև կարծես թե ձկները բանտից ազատված գալիս էին:

Նույն տարին վախճանվեց հայոց կաթողիկոս տեր Գավիթը և անիծեց սուրբ Գրիգորին հողից հափշտակողներին, որոնք հետևյալներն էին. Ջահարի որդի Աբդլ Մելիքը սրով սպանվեց, Հարժի որդի Աբդլ Ասուրը և Աբու Ջավիր Արածացին բերվեցին Պարտավ, և երկուսն էլ կենդանի-կենդանի տիկ հանվեցին: Եվ ամիրմումնի Գարապաթի մասին այս սովորեցինք, թե դուան աչ կողմը նստում է Շուրտայաց ավազը, որ բոլոր դահնապետներից մեծ ավազ է, իսկ ձախ կողմը՝ դատավորն ու գանձի ամիրան, որոնք դատում էին և հալաքում ամբողջ աշխարհի հարկային վճարումները: Օրվա իններորդ ժամին ներկայանում էին և վաղորդայնին պատվեր էին ստանում ու մարդկանց համար օգտակար դործեր էին կատարում:

Հայոց երկու հարյուր ութսունվեց թվականին տասներկու հազար հեծյալներ, հանկարծահաս լինելով Բաղդադից, արշավում են Աղվանք: Այդտեղ հոգ է տանում Սահլի Սմբա-

յանը, որ զարմիրհական արքաների տոհմից էր. նա իրեն գործակից է վերցնում մեծ նահատակ Կեորգիտան, վրա է տալիս, ինչպես որ արժիվը խոչանում է տկար թուղունների մեջ, ցաք ու ցրիվ է անում այս ու այն կողմ, դիատապաստ փոռում է դաշտերը և հա շարտում: Նույն տարին միևնույն իշխան Սահլի Սմբատյանը ձերբակալում է ապստամբ Բարանին, որը մարդախողտող, աշխարհավեր, սրբունարբու գազան էր, և հանձնում է ամիրմումնիի ձեռքը: Իր վաստակները դիմաց արքունիքից մեծ վարձատրություն է ստանում: Իրավունք է ստանում Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի վրա՝ բոլորին տիրելու արքայական իշխանությամբ:

Բայց հայոց երկու հարյուր ութսունյոթ թվականին Արահամ ամիրմումնին մեծ զորքով գնում է Բյուզանդիա և սրով ու զերություն գրավում է Ջեմոպրիա՝ մեծ քաղաքը, այնտեղից դառնում է իր բնակավայրը: Սա Աբու Սահակն է: Սույն սարում իշխանաց իշխան Հովհաննեսը, որ տեր դարձավ Հայաստանին, Վրաստանին ու Աղվանքին, արքունիքից կրկին անգամ խրեկից երեք երկրները՝ Բուզարը, Խոյտան, Փատգոսը²⁵⁰:

Այլ տարին Խազիրքի կողմերից մորեխներ եկան, որ զարմանալի կերպով ավելի մեծ էին, բան ճնճողուկը, և Աղվանքի մի մասի բուսականությունը ոչնչացրին:

Երկու տարի հետո սարսափելի ծանր ձմեռ եղավ, տանյալից կոտորած թերեց բազմաթիվ անասունների ու հովիտների: Այդ օրերում եկան քաղականացիներ և մեծ վնաս հասցրին Մխավան, Տրի ու Ամարաս գավառներին: Եսայի կողմած Արու Մուսնն դուրս եկավ նրանց դեմ ու կոտորեց:

Սրանից ևս երկու տարի անց եկավ խաղր Փատգոսը, որը մի մոլեգին ու անողորմ մարդ էր, բայց նույն տարին մեռավ, իսկ նրա որդին եկավ ու գրավեց Աղվանքը սրով ու զերություն և բազմաթիվ եկեղեցիներ այրեց ու գնաց Բաղդադ: Սպա այնտեղից արքունի հրամանով վերադարձավ և փողով Արշակային գավառում 295 թվականին կառուցեց Գանձակ քաղաքը:

²⁵⁰ Պետք է լինի «Ջեմոպրիա» Եփրատ գետի ափին. բյուզանդական ամրոց քաղաք է, որ կառուցել է Ջենոբիա կայսրուհին. այժմ այդտեղ Ջեյի իշխույթն է (տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, Երևան, 1957 թ., էջ 181, ծան. 17):

Մրանից հետո արշավում է Մյունխիք, գրավում է Բաղայ սահմանները, գալիս իջնում է Աղահեջ²⁸¹ գավառը, Արքուզետ կոչված մի ավան և խկուչն հրամայում է այրել եկեղեցին, որ անվանադրված էր սուրբ Գրիգորի անունով: Այդ ժամանակ աստծու պրոտեկցիանը հասնում է. ճերմակ ձիով մի հեծյալ դուրս է գալիս եկեղեցուց բոլորի աչքի առջև և ընթանում է դեպի բանակը: Այդ անօրին մարդուն շփոթության մեջ է դրում բանակով հանդերձ և փախուստի է մատնում դեպի Նյույուր հողի կոչվող սարը. այստեղ մի դաժան փոթորիկ մրրկելով շրջապատում է նրանց, և միայն ձիերին ապավինած՝ փախչում ազատվում են. իսկ բռնավորվածներն ու ավարը լեռների վրա անհայտացան, և գերվածները աստծուն փառք տալով հանգիստ մնացին:

Հայոց թվականության երեք հարյուր տարելիցին հայոց և աղվանից հավատացյալ իշխանների մեղքերի տուգանքները լրացան. այս տարում նրանք բռնվեցին արաբների ձեռքով և կապված շղթաված տարագրվեցին իրենց տներից, բռնի կերպով գնացին Բաղդադ: Այնտեղ անօրենները տանջելով ստիպում էին հրաժարվել իրենց հավատից: Գրանից շատերը մեռան անմահ մահով՝ թողնելով սուրբ հավատի անկողնուտեղի գանձը: Իսկ ոմն երանելի Շապուհ Արծրունի և հայոց ազնվականներից մի այլ ընտիր մարդ ընտրեցին նահատակությանը և ոչ թե փուշ կլանքը: Այդ ժամանակ արաբների բռնակալը հրաման տվեց երկաթյա կապանքներով նրանց ողջ-ողջ նետել Եփրատ գետը: Երկար ժամանակ լույսի բազմաթիվ ջահեր էին երևում գետի վրա: Ամիրմուռնին նախանձում է դրա վրա և հրամայում է, որպեսզի մարդիկ իջնեն գետը, դուրս բերեն ոսկորները ու այրեն: Երբ ջրսուզակները մտնում էին, լույսը աներևութանում էր, իսկ երբ նրանք որոնված ջրերից դուրս էին գալիս, միևնույն լույսը ջրերի առատության մեջ նորից էր լինում: Ապա ամիրմուռնին կանչում է ասորիների եպիսկոպոս Չափրին և նրան հրամայում է որոնել նրանց մասունքները: Եպիսկոպոսը գալիս է Եփրատ գետի հզերքը և ջրսուզակներ է իջեցնում. երանելիների ոսկորները գտնում, տանում է իր եկեղեցին և գրավոր կերպով նրանց հիշատակը տոն է նշանակում:

Այս նույն տարին անձրևների շատությունը Մեծիրանք գավառում տեղատարափ է դառնում և հեղեղի հոսանքը հասնում է Գաստակերտ գյուղը: Գեաներին միանալու տեղում խաշնարածների ութ հարյուր վրաններ տարավ, որոնք ամռանը եկել էին Կովկասից անասնաբուսու: Նույն տարում Վայոց ձորում վախճանվեց տեր Սուփանը: Հաջորդ տարին Հայաստան եկավ Բուզան, Տփղիս քաղաքում սպանվեց Իսմայիլյան Սահակը, և Բուզան երեք տարի իշխեց Հայաստանի վրա, մինչև որ իշխաններին ազնվական կանանց հետ քշեց Բաղդադ: Ապա շորրորդ տարում եկավ խաղթի որդի Մահմադը, և մեռավ իշխան Վասակ Գաբուր:

Հայոց երեք հարյուր տասնութ թվականին տեղի ունեցավ Կվինի անասելի ու շղեպուցիչ երկրաշարժը, որը մի ամբողջ տարի ցնցելով անդունդ տարավ մոտ տասներկու բյուր մարդիկ: Ահա ինչու է ասվում, թե մարդը խոտի է նման:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ս

ՊԱՐՏԱՎԻ ՊԱՇՏԱՐՈՒԹՅՈՒ ՇԵՆԻ ՈՐԴՈՒ, ՀԱՅՈՑ ԵՎ ԱՂՎԱՆԻՑ
ԶՈՐՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ, ՍԱՄՎԵԼԻ ԻՆՔՆԱԳՂՈՒՑ ԶԵՌՆԱԳՐՎԵԼ ԵՎ
ԴՎԻՆ ԳՆՈՒԸ

Այն խոտվոթյան ժամանակ, որ տեղի ունեցավ Շեխի որդի իսայու և իր կառավարիչ Մահմեդի որդի Եմեմիկ կոչված Արվազդի միջև, Աշոտ իշխանի համաձայնությունով գործողով է անում Շեխի որդին Ասորեստանում, որպեսզի Աշոտը նույնպես աղվանից իշխանների հետ հավաքի իր զորքերը, և գնան ոչնչացնեն Պարտավի ամբողջ զորքերը. նրանք քաղաքար զիմադրեցին տասներեք ամիս: Այդ օրերում վախճանվեց Աղվանքի Հովսեփի կաթողիկոսը. Աղվանքի իշխանները ժամանակ չունեին նոր հայրապետ ընտրելու: Մեծկողմանքի Սամվել եպիսկոպոսը իմաստասեր կոչված Միսայել քահանայի հետ խոսքը մեկ արած խորհրդակցում է և առանց ծայրապուշի աջի իր եպիսկոպոսությունը տալիս է Միսայելին, իսկ ինքը՝ Սամվելը, անօրինական ձեռնադրություն է ստանում իր

նպիսկոպոսից: Այս լուրը բանակն է հասնում, և Աղվանքի իշխանները սարսափելի զրգուվում են: Այդ ժամանակ միաբանության կողմից այս բանը զեկուցում են հայոց կաթողիկոս տեր Գևորգին, իսկ սա կանոնական սահմանադրությամբ գրում է հայոց իշխաններին և պահանջում է միջամտել այդ գործին ու խաղաղությունը վերականգնել: Բայց Սամվելը խելամիտ կերպով համաձայնեցնում է Աղվանքի գլխավորներին ու իշխաններին և խաղաղություն է հաստատում նրանց միջև: Սակայն նրանք արժանանում են հայերի նզովքին: Իսկ հայոց Աշոտ իշխանը պահանջում էր սուրբ Գրիգորի դրած կարգ ու կանոնով վարվել և ձեռնադրություն: Հայաստանից ստանալ. նրանք միառժամանակ համաձայնվեցին Սամվելի ու Միսայելի պղտորման հետ, որի մասին հայոց մեծ իշխանը գրում է Գևորգ հայրապետին և ամբողջ Աղվանքի ցանկությամբ համաձայնեցնում է Սամվելին: Ինքնահավան Սամվելը ակամա մեկնում է Գվին և երկրորդ ձեռնադրությունը առնում հայոց Գևորգ կաթողիկոսից հայոց իշխան Աշոտի օրերում՝ հայոց երեք հարյուր քանակից թվականին:

Հայոց նույն իշխան Աշոտը, որպես իմաստուն մարդ, Սողոմոն նպիսկոպոսի և Գևորգ հայրապետի հետ միասին վերստին նորոգում է Սյունիքի վաղուց ի վեր դադարեցրած ժամերգությունը:

Այս նույն ժամանակներում՝ 336 (887) թվականին, հաջողվեց Աշոտ Բագրատունուն Հայաստանում բարձրացնել իր թագավորական գահը, երբ երկար ժամանակ թագավորությունը վերացված էր Քորգոմյան տանից (Հայաստանից): Իսկ արարների Հայաստան գալը, երկիրը գրավելն ու ստրկական հարկեր տակ դնելը տեղի ունեցավ հայոց երեք հարյուր քառասուն երկու թվականին: Դրանք բռնեցին հայոց Գևորգ հայրապետի և երկաթյա կապանքներով պատած բերին Պարտավ: Այդ բարեպաշտ Համամը, որը եղավ նաև Աղվանքի թագավոր նույնպես Աղվանքի կործանված թագավորությունը վերականգնեց, ինչպես որ Աշոտ Բագրատունին նորոգեց հայոց թագավորությունը: Սրանք միևնույն ժամանակ կատարվեցին նույն ինքը՝ Համամը, աստծու նկատմամբ գործած մեծամեծ հանցանքների պատճառով, սրբ այս փուլ կյանքի համար ի

նպատար այստեղ իր վրա էր առել, ուրախությամբ ու տերնդհատ մեծամեծ բարեգործություններ կատարեց եկեղեցու բոլոր կարոտյալների ու չթափոքների հանդեպ. նաև հայոց մեծ հայրապետ Գևորգին ազատել տվեց անօրեն արարների բանտից, մեծ գանձեր նվիրելով և նրան բազմաթիվ մեծարանքներ ցույց տալով՝ ողջ-առողջ Հայաստան ուղարկեց: Իսկ շորս տարի հետո, երբ տարեմուտը համընկնում է սուրբ պատեքի օրվան, իր հարազատ Սմբատի կողմից սպանվեց Աղվանքի իշխան Ապու Ալի Հայկազունին, որ մեծ սուգ պատճառեց իր տոհմին: Նույն տարում Աշոտ Բագրատունու որդի հայոց Սմբատ թագավորը զորածողով է անում և ասպատակ սփռելով անցնում է Ասորիք: Այստեղ նրա դեմ դուրս են գալիս արաբական զորքերը ու փախուստով նրան վերադարձնում են Հայաստան՝ ամեն ինչ թափուր և ունայն դարձնելով: Այդտեղ մեռնում են Հայկազն Աշոտ իշխանը և սակավաքանակ զորքեր: Միևնույն ժամանակ Վասպուրականի մեծ իշխան Ապու Մրվանը սպանվում է իր զորքի կողմից: Նույն տարին անօրեն արաբը երկրորդ անգամ գալիս է Հայաստան և սրա հրամանով Պարտավի արքունիքից դուրս է գալիս ներքինին Հայաստան գալու: Սա լիքը ու անաստված մի մարդ էր, ուր որ նրա ոտքը ընկնում էր, ավերում, քանդում էր աստծու եկեղեցիները. որտեղ Քրիստոսի խաչը տեսնում էր, փոշու նման մանրացնում էր: Երբ նա Հայաստան հասավ, Սմբատը ժամանակավորապես փախստական դարձավ: Նա դրավեց Ամրատի ամրոցը, և թագուհուն տիկիներով, սրանց որդիներով, ունեցվածքները, կտակարանները ու սուրբ սպասները, խաչերը, բազմաքանակ գանձերի հետ միասին գերեվարեց: Նույն տարին արշավեց Վրաստան, սրա դեմ դուրս եկան վրաց երկու քաջ զորավարներ՝ Գևորգ իշխանը և սրա Արևես եղբայրը, բայց երկուսն էլ շարաշար կերպով սպանվեցին նրա ձեռքով: Այդ ժամանակ վախճանվում են հայոց մեծ հայրապետ Գևորգը և սյունյաց Աշոտ իշխանը, որոնց վրա ողբերգակ կոտորելի կական բարձրացնելով ասում էին. «Քող այսպիսի տարի չգա ու չլինի աշխարհի վրա, քանի մարդկային ցեղը կա»: Այս ժամանակ հայոց երեք հարյուր քառասունվեց թվականին էր: Բայց այդ բոլորը սկիզբն երկանցն էր այն տազնապի,

որ պատահեց Հայաստանին: Քիչ ժամանակ անցած նույն իրեն՝ մեծ թագավոր Սմբատին, հասավ աստվածային պատուհասը, որ կատարվելու էր սոխարհում: Վերնայինի զորութիւնը նրանից հեռանալու պատճառով նա բռնեց իր և Հայաստանի կործանման հանապարհը: Ներկայացավ արաբական գազանազեմ իշխանին, որը ունէր շան ու շմարգի բարք. սա բռնեց կամավոր եկած թագավորին և խաշափաշտի վրա սպանեց: Ապա պետավոր ձայն հնչեց Քորգոմյան տանը, և ընդհանրապես ավերածութիւն հասավ Հայաստանին, այս ժամանակ հայոց երեք հարյուր վաթսուներեք թվականն էր: Սմբատի սպանութեան վրեժը միայն ստացած առավ, որովհետև այդ անագորույն արաբը Հայաստանից փոխազրկեց, գնաց, անցավ Ասորիք՝ կամենալով տիրել արաբներին. տերը, որ գատում է երկիրը, կաշկանդեց նրան. արաբների տիրակալի ձեռքով բռնվեց ու ողջ-ողջ թաղվելով ոչնչացավ: Այս դեպքերից որոշ ժամանակ անցնելուց հետո արաբների ցեղը հեռանում է ասպարեզից, և հայտնվում է մի այլ ցեղ, որին կոչում են դելիմիկներ²⁰²: Սրանց Սադար անունով մի ինչ-որ գլխավոր եկավ իր իշխանութիւնը համատարած կերպով սփռելով, տիրեց Աղվանքին, Կարսկաստանին ու Հայաստանին, եկավ Պարտավ և անմիջապես տիրացավ:

Միևնույն ժամանակներում հյուսիսային կողմերից հայաբնվում է ալլակրոն, անձանթ մի ցեղ, որին ուղղիկ են անվանում, սրանք ոչ ավելի, քան երեք ժամ ընթանալով՝ մրրկի նման համատարած Կասպից աշխարհածովի ելքով, հանկարծ հասան Աղվանքի Պարտավ մայրաքաղաքը. սա ուժ չունեցող նրանց դիմագրելու, և քաղաքը մատնեցին սրածուխյան, խլեցին ընակիչների ամբողջ ունեցվածքը: Նույն ինքը՝ Սադարը, պաշարեց նրանց, բայց ոչ մի վնաս չկարողացավ տալ, որովհետև ուժի կողմից անհաղթելի էին: Իսկ քաղաքի կանախ հասար մտածելով թույն խմեցրին ուղղիկներին. սրանք իմա-

քան գալազորութիւնը և անխնայ կոտորեցին կանանց ու նրանց մանուկներին: Եվ Պարտավում վեց ամիս մնալով՝ թափուր ու դատարկ թողին, դնացին: Իսկ մնացածները իբրև վախկոտներ բազմատեսակ ալարներով գնացին իրենց երկիրը:

Գ Լ Ո Խ Ի Բ

ՏՐԱՆՍԻԻ ԺԱՌԱՆԳ՝ ԿԱՆ ԶԱՋՈՐԳՈՒԹՅԱՆ ԶԱՄՆ ԲՈՑ ԹՎԱԲՈՒՄԸ

Ստույգ ու ճիշտ խոսքով այսպես իմացանք, որ Հայկազունները խնամիութեամբ կապվեցին Միքհական տոհմի հետ և այս խնամիութեամբ որոշեցին երկուսով տիրել արևելյան կողմերի պետութեանը՝ Աղվանքին: Այն արքաների անունները, որոնք վերևում հիշատակվեցին քաջ Վաչագանից մինչև բարեպաշտ Վաչագանը, տասն են. սրանցից միայն բարեպաշտ Վաչագանը արևելքում տարվա օրերի թվով եկեղեցիներ շինեց: Նրա մահից հետո այդ տոհմը սկսեց նվազել: Եվ Մյուհյանը, որ Սասանյան տոհմից էր, գալով Պարսկաստանից՝ հաստատեց նախարարութիւն: Սրանց անունները որդին հորից սկսելով հետևյալներն են՝ Միրճ, Արմայել, Վարդ, քաջ Վարդան, որը հավատաց Քրիստոսին և ոչ թե Գարդման բերդը շինող Վարդանը, սրա որդի Վարդը, Վարդը սերում է Վարազ-Գրիգորին՝ Աղվանքի առաջին իշխանին, որ սերեց Նրսորդի՝ Վարազ-Պիրոժին, Զվանշիրին, Հեզուտ-Նոսրովին և Վարազմանին:

Սրանցից բոտ կարգի կրերենք ավագ որդուց սերվածներն անունները, որոնք հայտնի են հայերին, իսկ մնացածները կմնան. զրանք են՝ Վարազ-Պիրոժը, Վարազ-Տրդատը, Վարդանը, Ներսէհ-Գծնդակը, որ մարդկանց զլիւի մագերը հանում և ճաղատ էր դարձնում: Եվ տառապալսների ոտքերը երկաթյա շղթաներով կապվեցին: Դրա պատճառով շատերը խորշակահար ու շնչահեղձ մեռան: Միևնույն նպատակով գնում է Ներսէհը, անցնում է Հացիվ գոլով և մտնում է Ասորիք. այդ օրը կիրակի էր: Նա բաժանվելով ընկերներից միայնակ մեկուղարձավ սուրբ խաչի սպասավոր հոգևոր հայր Միմոնի մոտ

²⁰² Թեագրում՝ «... ասելի Լան յեթո ժամանակս ընթանալով... և աշարի ված... ժամանակս ուղղիկ հազարս Աղվանքի ուղղումը հիմա լուսնի ժամանակ այստեղ ժամ է նշանակում: Ուղում է ասել շատ արագ անցան:

և թաքցնելով իր անունը՝ ուրիշների հետ աղոթում էր: Իսկ երանելի Սիմոնը նրան ձայն տալով ասում է. «Մ՛յ էս դու տեր աստված հայտնեց քո աշխարհակործան անօրինությունը, և քո որդիներից ոմանք քո անլուր շարունջունը կիրառում են իբրև տառապալանների կործանման գավազան: Չէ՞ որ դու ներսեհես ես, որ Քրիստոսի տանիքներով զնում ես՝ նույն շարունջունը գործադրելու արևելյան եկեղեցիների վրա: Այժմ զնում ես քո երկիրը, բայց բաց աչքով շես տեսնի քո հայրերի երկիրը: Իսկ ներսեհը ընկավ ծերունու ոտքերը, բայց վերջինից ոչ մի պատասխան չսեց. միայն երբ ճանապարհ էր զնում, մեռավ և ըստ հայր Սիմոնի խոսքի միայն անշնչացած մարմինը բերվեց իր հողը: Ներսեհի որդին էր Գազիկը, Գազիկի որդին՝ Ստեփանոսը, իսկ սրա բույրն էր Ապրսամիկը: Այս վարազ Տրդատին և իր որդի Ստեփանին սրանց ազգական ներսեհ Փիլիպպանը միևնույն ժամին խորաձորում սպանեց, որ կոչվում է Դադոյի վանք²⁸³: Ապա այն ազնուներից՝ սպանվածի կինը զինվում է այրական քաջությունով, վերցնում է իր ողջ մնացած զուտար Ապրամին, գիշերալին տաժանելի ճամփորդությունով գնում է հաշենի բերդը: Իր տան մասին բարիք մտածելով Ապրամին ամուսնացնում է Սահլի որդի Ատրներսեհի հետ. Սահլը Հայկի տոհմից էր և Այունիքի տերը. սա բունությունով գրավել էր Գեղամա գավառը, սրա որդի Ատրներսեհը հանդիպեց զգաստ կնոջ, որոնք (Ապրամը և իր մայրը) երկուզած էին աստծու հանդեպ, բարեպաշտ կյանք էին վարում և սիրելի էին ամբողջ երկրում:

Այս Ատրներսեհը շինում է Հանդի բերդը²⁸⁴ և ապարանք է կառուցում վալկունիք²⁸⁵ դուրդում, որտեղ կա արքունական բաղանիք: Ատրներսեհին այլ իշխանների հետ տարան Պարսկաստան. այնտեղ նա մնաց շատ տարիներ. բայց տիկին Ապրամը ավելի էր բազմացնում իր բարեգործությունները. սա մեծածախս տենչանքով Սոթք²⁸⁶ գավառում ամենափառահեղ զարդերով կառուցում է նորավանքը. նույն ժամանակ Ատրներսեհը գուրս է պրծնում արարների կողմերից և գալիս է. միառժամանակ խաղաղ կերպով ապրում և ապա մեռնում է: Սա ունենում է Գրիգոր և Ապուսեհ անուններով որդիներ: Գրիգորը կառուցում է Հավախաղացի²⁸⁷ բերդը և իր իշխանու-

թյան ձեռքը մեկնում է այն կողմը: Գրիգորը սեննում է հինգ գավակ, որոնցից ավագ որդի Ապուլին սպանվում է իր ազգակից Սմբատից, իսկ մյուս որդին՝ Սահակը, որ կոչվեց նաև Սեազա, մի քաջ ու խելացի մարդ էր: Սա միառժամանակ տիրեց Գարզմանին, Քոսս և Փառնա²⁸⁸ գանձանների, այլև ամբողջ Ձորոզեոի²⁸⁹ ավազակապետների իշխանը դարձավ ու հետամուտ եղավ զբազիտություն և իր տան մեջ ուսուցիչներ նշանակեց: Սրա դեմ մեծ ջանքերով ու հնարներով պայքարեց հայոց Սմբատ թագավորը, բայց նրան չկարողացավ շեղել իր մտադրություններից: Սեազան սերում է երկու որդի՝ Գրիգոր և Դավիթ անուններով: Գրիգորը սերում է Աևադային, որը իշխան անունով էր կոչվում, և Ատրներսեհին: Իշխան անունով սերում է չորս զավակ՝ Հովհաննես, Գրիգոր, Ատրներսեհ և Փիլիպպե: Բարձրյալի աջը Հովհաննեսին ընտրեց, որը և Սենեքերիմ կոչվեց, բարձրացնելով թագավորական զան: Ամենակալ տերը սրա միջոցով վաղուց ի վեր իստիանված թագավորությունը վերականգնեց: Պարսից թագավորը շատ մեծամեծ զարդերով զարդարեց նրան, տվեց իր հոր թագը և երիվարը: Նույն տարում Դավիթ անունով մեկը, որ հունաց մագիստրոս էր, մի շքնաղ թագ և արքայական ծիրանի ուղարկեց այդ աստվածահաջող մարդուն իբրև պատիվ ու զովեստ, որը հայրապետական աշով թագավորական օծում ստացավ ի փառս Քրիստոսի:

Գ Լ Ո Ւ Խ Ի Գ

ԱՂՎԱՆՔԻ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ, ՏԱՐՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԸ

Հայրապետական անունների վերարերյալ պատշաճ կլիներ ստույգը գրությունով հիշատակել: Բայց քանի որ հին ժամանակներից անցած նախակարապետ առաջնորդների պորձերը, ժամանակները և անունները հրկիզվել են անօրհնների կողմից, իսկ կտակարանները, սպասքները և նրանց գտնվելու տեղերը մեղ անհայտ են, այնուամենայնիվ լսելով չէ, որ ներկայացնում

ենք, ալ փոքր ի շատե ցույց տալով բացահայտեցինք, որ պեսզի նրանք, որոնք հետաքրքրվում են այս հարցով, իմանան:

Արդ՝ մեր մեջ լուսավորութեան առաջին տարածողը եղավ սուրբ առաքյալ Քաղեոսի աշակերտ սուրբ Եղիշան, որ ձեռնադրվեց Երուսաղեմում սուրբ Հակոբի ձեռքով: Սա եկավ և լուսավորիչ դարձավ երեք երկրների՝ Չողի, Լփինքի, Աղվանքի, ուր և վախճանվեց նահատակութեամբ: Այս տեղ սուրբ Գրիգորիս Պահլավիկը՝ հայոց լուսավորիչ Մեծ Գրիգորի թոռը՝ եղավ հայրապետ, որը երկու տեսակ փառքով մնաց նույն աթոռի վրա: Հետո Երուսաղեմից եկած Աղվանքի կաթողիկոս սուրբ Շուփապիշոն, տեղի Մատթեոսը, տեղի Սահակը, տեղի Մովսեսը, տեղի Պանդը, տեղի Ղազարը, տեղի Գրիգորը, տեղի Զարարիան, տեղի Գավթիթը, սուրբ Հովհանն, որը նաև եղավ հոների տեղի հայրապետական շնորհով, բայց ինչպես լինելը չգիտենք: Տեղի Երեմիան՝ սրա ժամանակ երանելի Մեսրոպը գիր ստեղծեց Աղվանքի համար. սա մեծ ջանքով գիր ստեղծեց նաև հայերի ու վրացիների համար: Տեղի Աբասը, որ հայոց թվականութեան սկզբից հայրապետական աթոռը Չողից փոխադրեց Պարտավ՝ իշխելով քառասունչորս տարի Մեծիքանք կոչված եպիսկոպոսութեանում: Սրա ժամանակ սովորութեան դարձրին հանձնարարական թղթում անվանել Աղվանքի, Լփինքի և Չողի կաթողիկոս: Այս առթիվ Գվինի ժողովից գրեցին, որպեսզի ասվի, թե մարդկային և աստվածային էությունը մեկ է, և «սուրբ աստված» կապակցությունը ավելացվի «անմահ և խաչվեցիր»: Որովհետև նրանք սովորեցին Կոստանդնուպոլսի հայրապետ Պրոկղի առաջարկից, որ Եփեսոսի ժողովի երկու հարյուր սուրբ հայրերը միացրին սուրբ երրորդությունը: Եվ Ալեքսանդրիայի հայրապետ Տիմոթեոսից ու Պետրոս Անտիոքացուց հետո, երբ սրանք եկան Անաստաս կայսեր մոտ, Միջագետքի եպիսկոպոս Հակոբի ձեռքով ավելացվեց, և վերոհիշյալ հայրապետներն էլ սահմանեցին, որ ուղղափառները ասեն. «անմահ որ խաչվեցիր» ինչպես որ իսկ և իսկ կա: Աբաս հայրապետը չէր սահմանել այս աստու, որովհետև սովորություն չկար, և ոչ էլ երկրում հերձվածներ կային, չնայած որ սրա քննություն անհրաժեշտությունը կար: Այսպես հետո եզր կաթողիկոսի ժամանակ Գարգամանի

եպիսկոպոս Ստեփանոսը գնաց Եղրի մոտ, բանակեց նրա հետ, և Գարգամանն ու Աբգաիւր ընդունեցին այս ավանդութեանը, որը մինչև այժմ բոլորս պահպանում ենք:

Տեղի Վիրոն իշխեց Երեսունչորս տարի: Սա հայոց, վրաց և աղվանից գերիներին ազատեց Շաթ իսպրից. սա իսպրով արքայից խնդրեց երկրի կուսակալների գրությունների վրա իբրև Գարգամանի պատիվ գրել «տեղի և իշխան Աղվանքի», որը մինչև այժմ էլ գրում են:

Տեղի Զաքարիա, մի սուրբ մարդ էր, որ իշխեց տասնհինգ տարի. սա երաշխավորեց Պարտավ մեծ քաղաքի համար և իր աղոթքներով գերությունից ազատեց բաղամթիվ մարդիկ: Մյուսների համար եպիսկոպոս ձեռնադրեց Վրթանես անունով մեկին առանց հայերի համաձայնություն:

Տեղի Հովհան, սա իշխեց քսանհինգ տարի, հայրապետական աթոռ կանչվեց Ամարասի եպիսկոպոսությունից:

Տեղի Ուխտանես, իշխեց տասներկու տարի, սա ազգապարտության համար անիծեց Աղվանքի նախարարներին, որոնք ոչնչացան:

Տեղի Եղիազար, իշխեց վեց տարի. հայրապետական աթոռ կոչվեց Շաբի եպիսկոպոսությունից: Սուրբ Մեսրոպի կողմից Գիս գյուղում թաղված խաչը սա գտավ և նույն կենսատու փայտից մի մաս առավ, գրեց հարյուր քսան դահեկանանոց ոսկու մեջ և վրան գրեց. «Եղիազարինն է»: Նաև կարգ սահմանեց Գիսում խաչի օրը տոնել:

Ներսես, Գարգամանի եպիսկոպոսությունից, իշխեց տասնյոթ տարի: Սա խելթը թոցրեց, կամեցավ իր սեփական Աղվանքի տունը տակն ու վրա անել՝ թեթևելով քաղկեդոնական ազանդի կողմը. սակայն մարմնով և հոգով կապվեց և աղվանից ու հայոց կողմից անհեծքով մերժվեց աստծու որդու փոքրից՝ իր համար իբրև բաժին առնելով այն, ինչ որ հերձվածողներն առան:

Տեղի Սիմոն, իշխեց մեկ ու կես տարի, սա աթոռի սարկափաղապետ էր, որը ներսեսի խառնակչությունը վերացրեց երկրից՝ զնելով յոթ տուն կանոններ:

Տեղի Միքայել, իշխեց երեսունհինգ տարի, սա սարկափաղապետ էր Շաբից և իր մոտ կանչեց մաքենացիների վանահայր Սո-

զումոնին ու անիծեց Ալվանքի իշխաններին, որոնք ամուսնացել էին իրենց եռապորտ ազգականների հետ, և որոնց անմիջապես պատիժ վրա հասավ, ու ոչնչացան: Սրանց հետ նզովեցին նաև վրաց Քալիլե առաջնորդին, որովհետև անօրեն ամուսնութեան հրաման էր տալիս:

Տեր Անաստաս, իշխեց շորս տարի:

Տեր Հովսեփ՝ տասնյոթ տարի. սրա հինգերորդ տարում լրացավ հայոց երկու հարյուր թվականը: Սա հայրապետական աթոռ եկավ Ամարասի եպիսկոպոսութեանից:

Տեր Դավիթ, իշխեց շորս տարի: Սա էլ հայրապետական աթոռ նստեց Ամարասի եպիսկոպոսութեանից, ազատեց սբրբութեանների հողերն ու սպաները, դավադիրների ձեռքով մահացու դեղ խմելով վախճանվեց:

Տեր Դավիթ, իշխեց ինը տարի, Մեծկվյանքի եպիսկոպոսութեանից էր. սա վաճառեց Մադրինքի դաստակերտը, սահմանը խաչ դրեց:

Տեր Մատթեոս, իշխեց մեկուկես տարի. Կապաղակի եպիսկոպոսութեանից էր, սա էլ վախճանվեց թուշնով՝ դավոդների ձեռքից:

Տեր Մովսես, իշխեց երկու տարի: Տեր Ահարոն՝ երկու տարի: Տեր Սողոմոն՝ կես տարի: Տեր Թեոդորոս՝ շորս տարի: Սա Գարդմանի եպիսկոպոսութեանից էր եկել: Տեր Սողոմոն՝ տասնմեկ տարի: Տեր Հովհաննես՝ քսանհինգ տարի: Սա կաթողիկոսարանը փոխադրեց Բերդակ²⁹⁰, որ իրենց ամառանոցավայրն էր, եբբ Պարտավից դուրս բերվեց: Տեր Մովսես՝ կես տարի: Տեր Դավիթ, իշխեց քսանութ տարի, Կապաղակի եպիսկոպոսութեանից էր: Սա օրհնեց Շաքիի իշխանի անօրեն ամուսնութեանը: Այս իշխանի աշխարհական եղբայրը հարցունելով ասում է նրան. «Տե՛ր, որտեղի՞ց ևս գալիս»: Նա պատասխանում է. «Քո եղբոր տնից»: Իսկ իշխանը Դավթին ասում է. «Այդ լեզուդ, որ օրհնեց, թող լավվի, իսկ աջդ թող շորանա»: Անմիջապես այսպես էլ եղավ, և շրուժվեց մինչև նրա մահը:

Տեր Հովսեփ, իշխեց քսանհինգ տարի, հայրապետական աթոռ եկավ Մեծկվյանքի եպիսկոպոսութեանից. սրա հայրա-

պետութեան երրորդ տարում լրացավ հայոց երեք հարյուր թվականը:

Տեր Սամվել, իշխեց տասնյոթ տարի, Մեծկվյանքի եպիսկոպոսութեանից էր: Սա ինքնապուխ է հաչքապետ դառնում, հետո կարգաթող է արվում և ապա երկրորդ անգամ Դվինում ձեռնադրվում է հայոց Գեորգ կաթողիկոսից:

Տեր Հունան, իշխում է ութ ու կես տարի: Սա Դվինի հայոց եպիսկոպոս էր, առանց Գեորգ կաթողիկոսի թուշնովութեան գալիս է Աղվանք և ձեռնադրվում հայրապետ: Սրան էլ է նույն Գեորգը կրկին ձեռնադրում:

Տեր Սիմոն, իշխում է քսանմեկ տարի. սա սուրբ աթոռի դուան եպիսկոպոս էր, որը սպասներով է՛լ ավելի զարգարեց սուրբ խաչը:

Տեր Դավիթ, իշխեց վեց տարի, եկավ Փառխոսի վանքի առաջնորդութեանից:

Տեր Սահակ, իշխեց տասնութ տարի, եկավ Մեծկվյանքի եպիսկոպոսութեանից:

Տեր Գագիկ, իշխեց տասնչորս տարի, եկավ Գարդմանի եպիսկոպոսութեանից: Սրա հայրապետութեան շորրորդ տարում լրացավ հայոց շորս հարյուր թվականը:

Տեր Դավիթ, իշխեց յոթ տարի, եկավ Կապաղակի եպիսկոպոսութեանից:

Տեր Դավիթ, իշխեց վեց տարի, Փառխոսի²⁹¹ վանքի առաջնորդն էր, սա ձեռնադրվեց հայոց կաթողիկոս Անանիայի ձեռքով:

Տեր Պետրոս, իշխեց տասնութ տարի, եկավ Գարդմանի եպիսկոպոսութեանից:

Տեր Մովսես, իշխեց վեց տարի, եկավ Փառխոսի վանքի առաջնորդութեանից:

1. Մառառտանի կամ Մեղիան իրանական ջեղերից մեկի պետությունն էր, որ գոյութիւն ուներ մեր թվականութիւններից առաջ ? — մ.թ. դարերում և գտնվում էր Սրանի սարահարթի արևմտյան մասում, հարավ-արևելքից սահմանակից էր Հայաստանին: Մայրաքաղաքն էր Սիրատանը՝ աժմ՝ Համազան: (էջ 2):

2. Գաղիռոնը համարվում է այժմյան Կաղիքար, որն ամբողջ է Խաղանիւսում: Չիբրալթարի մաս: (էջ 2):

3. Կիլասը Տիգրիս գետի սեմական անունն է: Գետն սկիզբ է առնում Հալիական Տափրոսից: (էջ 2):

4. Գամիրները ապրում էին Գամիրքում (ասորեստանյան՝ Գիմիրա Գամիրա): Այսպես էին կոչվում անտիկ ժամանակաշրջանի Կողպուզկիլասում հաստատված կիմերական ջեղերը: Սրանց անունով հայերը կրկիբր կույսն Գամիրը: Գլխավոր քաղաքն էր Կեսարիան: (էջ 2):

